ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
Թողարկողի ֆիրմային անվանումը

բաց բաժնետիրական ընկերություն
Կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 2501, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Հեռ. (+374) 22 646427
Էլ.-փոստ՝ asce@asce.am
Կայք՝ www.asce.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար; 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	**Արտարժութային պարտատոմսերի դեպքում՝** 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար **Դրամային պարտատոմսերի դեպքում՝** 15,000,000,000 (տասնհինգ միլիարդ) ՀՀ դրամ
Արժեկտրոնը՝	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ժամկետը՝	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 6
ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 7
1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ 7
1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները 7
1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը 8
1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը 8
1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը 9
1.1.5 Թողարկողի կազմակերպական կառուցվածքը 11
1.1.6 Թողարկողի խմբի կառուցվածքը 11
1.1.7 Ակտիվների որակը 11
1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը 11
1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 11
1.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 13
1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 14
1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ 15
1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը 15
1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները 16
1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը 17
1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը 17
1.8.1 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 18
1.8.2 Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 19
1.8.3 Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 20
1.8.4 Ամփոփ ֆինանսական գործակիցներ 21
ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 23
2.1. Ռիսկային գործոններ 23
2.2. Հիմնական տեղեկատվություն 24
2.3. Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ 24
2.3.1. Արժեթղթերի տեսակը և դասը 24

2.3.2. Երկիրը 24
2.3.3. Արժեթղթերի ձևը 24
2.3.4. Արժեթղթի անվանական արժեքը և քանակը 24
2.3.5. Թողարկման արժույթը 25
2.3.6. Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն 25
2.3.7. Արժեթղթերից բխող իրավունքները 25
2.3.8. Առաջարկի ժամկետները և պայմանները 26
2.3.9. Տեղաբաշխման պլանը 31
2.3.10. Առաջարկի գինը 31
2.3.11. Տեղաբաշխումը 32
2.4. Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը 33
2.5. Նոր թողարկման մասին տեղեկատվություն 33
2.6. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը 34
2.4. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 36
2.4.1. Առևտրին թույլտվությունը 36
2.4.2. Շուկաները 37
2.4.3. Շուկա ստեղծողները 37
2.5. Անվանական տոկոսադրույքը և այդ տոկոսների վճարման պայմանները 37
2.6. Պարտատոմսերի մարում 39
2.7. Աուդիտորական եզրակացությունը 40
3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 41
3.1. Անկախ աուդիտորներ 41
3.2. Ռիսկային գործոններ 41
3.2.1. Աշխարհաքաղաքական ռիսկեր 41
3.2.2. Մակրոտնտեսական ռիսկեր 41
3.2.3. Ֆինանսական ռիսկեր 42
3.2.4. Գործառնական ռիսկեր 44
3.2.5. Կարգավորման դաշտի ռիսկ 45
3.3. Տեղեկատվություն թողարկողի մասին 46
3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը 46
3.3.2. Ներդրումները 47
3.4. Բիզնեսի նկարագիրը 47
3.4.1. Ոլորտի նկարագիր 47
3.4.2. Հիմնական գործունեությունը 48

3.4.3. Արժեքի հիմնական գործոններ 49
3.4.4. Թողարկողի արտադրական գործընթացը 52
3.4.5. Հիմնական շուկաները 53
3.5. Թողարկողի կառուցվածքը 53
3.5.1. Խմբի կառուցվածքը 53
3.5.2. Վերահսկող բաժնետերեր 53
3.6. Թողարկողի հիմնական միջոցները 54
3.7. Զարգացման վերջին միտումները 54
3.8. Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը 54
3.9. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 57
3.9.1. Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը 57
3.9.2. Կառավարման մարմինների իրավասությունները 57
3.9.3. Թողարկողի կառավարման մարմինների անդամները 66
3.9.4. Շահերի բախումը 82
3.9.5. Վարձատրությունները և պարգևավճարները 82
3.10. Կառավարման մարմինների գործունեությունը 83
3.11. Աշխատակիցները 83
3.12. Հսկող անձինք 84
3.13. Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 84
3.13.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն 84
3.13.2. Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները 84
3.13.3. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն 84
3.13.4. Հարկային արտոնությունները 85
3.14. Լրացուցիչ տեղեկատվություն 85
3.14.1. Կանոնադրական կապիտալը 85
3.14.2. Կանոնադրությունը 85
3.15. Էական պայմանագրերը 87
3.16. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցրած տեղեկատվությունը 87
3.17. Այլ տեղեկատվություն 87
3.18. Խորհրդատուներ 87
3.19. Թողարկողի վարկանիշը 87

4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 88
ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/ 88
2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 93
2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 94
2.3. ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/ 96
2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 101
2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 102
2.3. ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը . 104
ՀԱՎԵԼՎԱԾ 4: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը 106
2.4. ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման վերջնական պայմաններ 107
ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ 112
ՀԱՎԵԼՎԱԾ 7: Ընկերության կանոնադրություն 113

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Միխաիլ Հարությունյան	**Խորհրդի նախագահ**		16.08.2024
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Խաչատուր Անտոնյան	**Խորհրդի անդամ**		16.08.2024
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Վազգեն Նիկոլյան	**Խորհրդի անդամ**		16.08.2024
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Դավիթ Յավրոյան	**Խորհրդի անդամ**		16.08.2024
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Կարինե Մամիկոնյան	**Ֆինանսական տնօրեն**		16.08.2024
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**

Ստորագրությունները հավաստում եմ՝

Հրաչյա Մուրադյան	**Տնօրեն**		16.08.2024
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՆՈՒՅՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:
Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ծրագրային Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերն թղթային տարբերակով «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն» կամ «Թողարկող») գտնվելու վայրում, իսկ էլեկտրոնային պատճենը՝ Ընկերության ինտերնետային կայքում՝ www.asce.am:

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերություն

Ռուսերեն՝ Открытое Акционерное общество “АСКЕ ГРУП ”

Անգլերեն՝ “ASCE GROUP” Open Joint Stock Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

Ռուսերեն՝ «АСКЕ ГРУП» ОАО

Անգլերեն՝ «ASCE GROUP » Open J-S Company

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝	ՀՀ , Կոտայքի մարզ, 2501, ք. Չարենցավան, Երևանյան 2
Թողարկողի պետական գրանցման համարն է՝	39.120.00360
Թողարկողի գործունեության վայրն է	ՀՀ, 2501,Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Կապի միջոցները՝	Հեռախոս՝(+ 374) 226 46427 Էլ. փոստ՝ asce@asce.am ինտերնետային կայք՝ www.asce.am

Թողարկողին առնչվող հարցերի դեպքում կարելի է դիմել Ընկերության տնօրեն Հրաչյա Մուրադյանին (հեռախոս (+374) 226 46427, էլ փոստ՝ asce@asce.am), Ընկերության ֆինանսական տնօրեն՝ Կարինե Մամիկոնյանին (հեռախոս (+374) 226 46427, էլ փոստ՝ mamikonyan@asce.am):

1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

Ընկերությունը (նախկինում «ԹՈՒՋԵՁՈՒԼ» ԲԲԸ) հիմնադրվել է ՀՀ կառավարության 1998թ.-ի սեպտեմբերի 4-ի թիվ 550 որոշման համաձայն «ՀԱՅՁՈՒԼ» ՓԲԸ-ի (նախկինում «Ավտոձուլ» պետական ձեռնարկության) պետական բաժնետոմսերը մրցույթով մասնավորեցման ճանապարհով բաց բաժնետիրական ընկերության վերակազմակերպման արդյունքում:

Ընկերությունը հանդիսանում է «Հայձուլ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցման) պահից:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 62,923,840 սովորական բաժնետոմսից՝ 155 դրամ անվանական արժեքով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 62,923,840 բաժնետոմսից՝ 150 դրամ անվանական արժեքով):

Ընկերությունը Հայաստանում խոշոր պողպատի արտադրող է, որը արտադրում է պողպատե ամրան և մանրեցման գնդեր՝ վերամշակելով տեղական մետաղի ջարդոնը: Ընկերության արտադրանքը սպառվում է բացառապես տեղական շուկայում:

2022 թվականի վերջի դրությամբ այն արտադրել է մոտավորապես 113,000 տոննա արտադրանք՝ իսկ EBITDA ցուցանիշը կազմել է 13.3 միլիարդ դրամ: 2023թ. արտադրանքի ծավալը կազմել է մոտ 109,000 տոննա, իսկ EBITDA ցուցանիշը կազմել է 10.8 միլիարդ դրամ: Ընկերությունն ունի մեկ էլեկտրական աղեղային վառարան՝ 300 000 տոննա հզորությամբ և գլոցման արտադրամաս 175,000 տոննա հզորությամբ:

Ընկերությունը 2020-2024թթ. կատարել է ներդրումներ արտադրության հետագա ընդլայնման մեջ՝ ավելացնելով կարողությունները մինչև 250,000 տոննա՝ հիմնելով մետաղալարի արտադրություն, բացի ամրաններից և մանրեցնող գնդերից:

Ընկերության գործունեության ռազմավարական ուղղությունն է որակյալ արտադրանքի ներկայացումը ինչպես ՀՀ ներքին, այնպես էլ արտաքին շուկայում, արտադրանքի ծավալների ընդլայնումը ի հաշիվ գործող շուկայում պահանջարկի մեծացման՝ որակի և ցածր ինքնարժեքի հաշվին, ինչպես նաև արտադրության արդյունավետության բարձրացումը: Այսպես, 2024թ. Ընկերությունը նախատեսում է ավարտել և շահագործման հանձնել սեփական կարիքների համար 15 մեգավատ հզորությամբ արևային կայան:

1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը առ 23.02.2024թ. կազմում է 10,067,814 հազ. դրամ: 2024թ. փետրվարի 23-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջությամբ վճարված

բաժնետիրական կապիտալը բաղկացած է 62,923,840 սովորական բաժնետոմսից՝ 160 դրամ անվանական արժեքով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 62,923,840 բաժնետոմսից՝ 155 դրամ անվանական արժեքով):

1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը

Թողարկողը հայաստանյան խոշոր պողպատաձուլական ձեռնարկություն է, որն իր արտադրական և ռազմավարական ճիշտ քաղաքականության շնորհիվ շատ կարճ ժամանակահատվածում հաստատուն քայլերով ամրապնդեց դիրքերը շուկայում, վերազինվեց, ավելացրեց նոր աշխատատեղեր և ընդլայնեց արտադրանքի տեսականին: Մետաղագործության այս ճյուղը Հայաստանի համար բավական խոստումնալից է, որի զարգացումը կապահովի նոր հեռանկարներ և հնարավորություններ:

1.1.4.1 *Ընկերության արտադրանքը և արտադրության գործընթացը*

Ընկերությունը զբաղվում է սև մետաղի՝ պողպատի ձուլմամբ և պողպատե արտադրատեսակների՝ ամրանի և մանրեցման գնդերի արտադրությամբ :

Արտադրական հումքը մետաղի ջարդոնն է, որը բազմակի վերամշակման փուլեր անցնելուց հետո վերածվում է շինարարության համար անփոխարինելի բաղադրիչի՝ ամրանի: Իր որակի, հուսալիության, ամրության և գնի շնորհիվ այս ամրանները մրցունակ են նաև արտերկրի շուկաներում: Այսօր Ընկերության արտադրանքը ծածկում է հայկական շուկայի պահանջարկի մեծ մասը: Ընկերության արտադրական հզորությունները թույլ են տալիս թողարկել տարեկան մոտ 300,000 տոննա նախապատրաստվածք և 175,000 տոննա ամրան: Բացի ամրանից, Թողարկողը արտադրում է նաև պողպատե մանրեցման գնդեր, որոնք օգտագործվում են տարատեսակ հանքաքարի, կրաքարի, ածուխի աղացման համար: Այն կարելի է կիրառել ինչպես չոր, այնպես էլ խոնավ հումքի դեպքում: Հանքանյութերն այս մեթոդով մանրացնելու տարբերակը լայն տարածում ունի աշխարհի բազմաթիվ երկրներում և ունի մի շարք առավելություններ: Մանրեցման այս գնդերը հնարավորություն են տալիս 2-8 անգամ բարձրացնել արտադրողականությունը և 10-15% նվազեցնել կորուստը:

Մինչև արտադրական գործընթացի մեկնարկը, նախապատրաստվածքը ենթարկվում է մանրակրկիտ վերահսկողության, այնուհետև գլոցման վառարաններում ջերմային մշակման: Լիարժեք կարծրության ապահովման համար ջերմամշակման ընթացքում ավելացվում են համապատասխան քիմիական նյութեր: Հումքի որոշ տեսակների մանրացման համար նախատեսված գնդերը ենթարկվում են կրկնակի ջերմային մշակման: Մանրեցման գնդերը թողարկվում են 40 մմ-ից մինչև 120 մմ տրամաչափի և ենթարկվում են մանրակրկիտ ջերմամշակման, որակյալ հումքի օգտագործման և տեխնիկական բարձր հագեցվածության շնորհիվ: Արտադրանքը ենթարկվում է բազմաստիճան լաբորատոր փորձաքննության, ստուգվում է մետաղի ամրությունը, քիմիական կազմը, այլ մետաղների հետ շփման ազդեցությունը:

Պատրաստի արտադրանքը փաթեթավորվում է հատուկ պայուսակներում 1-2 տոննա տարողությամբ: Ըստ պատվիրատուի ցանկության՝ կարելի է արտադրանքը պահեստավորել փայտյա կամ մետաղյա տարաներում: Շնորհիվ մանրակրկիտ ջերմամշակման, որակյալ հումքի, տեխնիկական բարձր հագեցվածության, լավագույն մասնագետների՝ պողպատյա գնդերը ծառայում են երկար, ունեն մաշվածության շատ ցածր ցուցանիշ և չեն քայքայվում տարբեր մետաղական շփումներից: Ընկերության արտադրական հզորությունները թույլ են տալիս թողարկել տարեկան մոտ 20,000 տոննա մանրեցման գնդեր:

Վերազինված Ընկերությունն այսօր պատրաստ է նաև արտահանման, քանի որ ընկերության արտադրանքը համապատասխանում է միջազգային բոլոր ստանդարտներին և որակի ամենաբարձր չափանիշներին:

1.1.4.2 *Արդիականացում և արտադրական հզորություններ*

Թողարկողը 2011 թվականից համագործակցում է ավստրիական Siemens VAI ընկերության հետ՝ գործարանի պարբերական վերազինման և նոր հզորությունների ներդրման նպատակով: Ընկերությունը տարեկան թողարկում է մոտ 300,000 տոննա նախապատրաստվածք և 175,000 տոննա ամրան: 2023-2024 թվականներին ընկերությունը ներդրել է ավելի քան 12 միլիարդ դրամ՝ արտադրությունը մոդեռնիզացնելու, նոր մետաղական ամրալարի արտադրության հիմնելու, մանրեցման գնդերի արտադրական հզորությունը մեծացնելու համար, ինչպես նաև սեփական կարիքների համար 15 մվտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար:

1.1.4.3 *Ընկերության արտադրամասերը*

Ընկերության հիմնական արտադրամասներն են՝

1. Հալման արտադրամասը,
2. Անընդհատ ձուլման արտադրամասը,
3. Գլոցման արտադրամասը:

1.1.4.4 *Ընկերության մասնաճյուղերը*

Ընկերությունը չունի մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, հիմնակներ: Ընկերությունը ունի դուստր ընկերություն՝ «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» ՍՊԸ, որը այս պահին գործունեություն չի իրականացնում:

1.1.4.5 *Էներգետիկա և կայունություն*

Թողարկողը նաև 2023-2024թթ. սկսել է 15 մեգավատ հզորությամբ արեւային ֆոտովոլտային (PV) կայանի շինարարությունը, որի արտադրած էլեկտրաէներգիան կօգտագործվի սեփական կարիքների համար: Սա կարևոր քայլ է ընկերության էներգետիկ ինքնաբավության և կայունության բարձրացման ուղղությամբ:

1.1.4.6 *Անկախություն և ֆինանսական կայունություն*

Թողարկողը անկախ ձեռնարկություն է: Թողարկողն անդամակցում է Հայաստանի Հանքագործների և մետալուրգների միությանը: Թողարկողի ֆինանսական ցուցանիշները կայուն են, և S&P Global Ratings-ը հաստատել է ընկերության «B-» վարկանիշը, ինչը արտացոլում է ընկերության ֆինանսական պարտավորությունները կառավարելու և զարգացման տեմպերը պահելու ունակությունը:

(https://disclosure.spglobal.com/ratings/en/regulatory/article/-/view/sourceId/12370750):

1.1.5 Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է **Հավելված 4-ում**:

1.1.6 Թողարկողի խմբի կառուցվածքը

Թողարկողը չի հանդիսանում որևէ խմբի անդամ:

1.1.7 Ակտիվների որակը

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը, կազմել է 63,892,255 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 0.45:

1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը

Գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք հատուկ են Ընկերությանը և նրա գործունեության ոլորտին և ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են բացասական ազդեցություն ունենալ թողարկողի և նրա պարտատոմսերի գնի վրա:

Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթը և դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել Ընկերության գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը:

1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Շուկայական ռիսկ: Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա զգալիորեն ազդում են միջազգային շուկայական գների տատանումները: Պատմականորեն այս գներն ունեցել են տատանման լայն տիրույթ, որը պայմանավորված է Ընկերության վերահսկողությունից դուրս բազմաթիվ գործոններով: Բացի այդ Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փափոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան

ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Պարտքային ռիսկ: Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում , երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունն առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

Արտարժութային ռիսկ: Այս ռիսկի ազդեցությունը մեծանում է միայն օտարերկրյա ընկերություններից սարքավորումների և հումքի ձեռք բերման շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման և Ընկերության կողմից ստացված արժութային վարկերի մարման և սպասարկման ժամանակահատվածում կատարվող վճարումներով, որոնք արտահայտված են արտարժույթով: Ընկերության արտադրանքի ինքնարժեքում արտարժույթով արտահայտված հումքի տեսակարար կշիռը կազմում է մոտ 20-25%. Բացի այդ, Ընկերության ցուցանիշների վրա զգալի ազդեցություն է ունենում դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ, որի արդյունքում Ընկերության ապրանքը, որի գինը կապված են արտարժույթով ներկայացված հենանիշերի (benchmark) հետ, վաճառվում են ավելի էժան՝ ՀՀ դրամով: Նշված վերջին ռիսկը շատ բացահայտ է եղել վերջին տարիներին, մասնավորապես՝ ՀՀ դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ հանգեցնում է ներմուծվող նման արտադրանքի ավելի բարենպաստ գներին, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում Ընկերության արտադրանքի գների վրա: Նման ռիսկի երկարաժամկետ ազդեցությունը կարող է Ընկերության արտադրանքը դարձնել գնային առումով ոչ մրցունակ և դրդել գների նվազեցման: Սա էլ իր հերթին կարող է այլ ֆինանսական ռիսկերի հանգեցնել:

Ներդրումային կապիտալի մատչելիության ռիսկ: Ընկերությունը գործում է ծանր արդյունաբերության ոլորտում, որը կապիտալ ներդրումների առումով տնտեսության ամենաինտենսիվ ճյուղերից մեկն է և պահանջում է շարունակական խոշոր ներդրումներ:

Շինարարության ոլորտ: Ընկերության արտադրանքը հիմնականում սպառվում է շինարարության ոլորտում, այդ պատճառով Ընկերության վաճառքի ցուցանիշները կախված են շինարարության ոլորտի ակտիվությունից: Ուստի՝ Ընկերության գործունեության վրա ազդեցություն ունեն նաև շինարարության ոլորտում տեղի ունեցող խոշոր իրադարձությունները:

Էներգակիրների գներ: Ընկերության գործունեության համար պահանջվում է էլեկտրաէներգիայի, գազի և այլ ռեսուրսների զգալի ծավալ, որի արդյունքում Ընկերության գործունեությունը կախվածության մեջ է այդ էներգակիրների սակագներից:

Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու ռիսկ (ֆորս-մաժոր): Ընկերության գործունեության վրա ուղղակի բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև ֆորս-մաժորային ռիսկերը, որոնք դուրս են Ընկերության վերահսկողությունից: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, համաճարակային պանդեմիան, ռազմական և արտակարգ դրությունը երկրում, քաղաքական հուզումները, գործադուլները և այլն:

Տեխնոլոգիական պրոցեսներ: Սարքավորումների շարքից դուրս գալը, աշխատանքային խափանումները, տեխնոլոգիական ցանկացած էական վթար կարող է առաջացնել

արտադրության գործընթացի տևական դադար, արտադրանքի ծավալի կրճատում, և արդյունքում բացասաբար անդրադառնալ Ընկերության վաճառքի և շահութաբերության վրա:

Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության վերահսկողությունից դուրս են, այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

Կարգավորման դաշտ: Օրենսդրական դաշտի փոփոխությունը կարող է զգալի ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա: Մասնավորապես՝ կարևորում ենք մետաղի ջարդոնի արտահանման պետական տուրքի առկայությունը, և ՀՀ կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» որոշման ընդունումը, որը լիովին սահմանափակում է ջարդոնի ՀՀ-ից արտահանումը: Սա թույլ է տալիս Ընկերությանը անխափան համալրել հումքային բազան ֆինանսական տեսանկյունից շահավետ պայմաններով: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով արտահանման լիցենզիայի պետական տուրքեր են սահմանվել սև մետաղներից պատրաստված առանձին ծածկագրերին դասվող արտադրատեսակների (նախապատրաստվածքների) արտահանման համար (ուժի մեջ է մտնելու 2025 թվականի հունվարի 1-ից): Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող հավաստիացնել, որ ապագայում տուրքի կամ արտահանման արգելքի փոփոխություններ չեն լինի:

1.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկ: Շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումը, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել՝ ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Վերաներդրման ռիսկը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ

իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները, ԱՄՆ դոլարով կամ ՀՀ դրամով պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերության տնօրենների խորհրդի կատարված դիտարկումների համաձայն ներկա պահին էական ազդեցության գործոններ, որոնք կարող են ազդել Ընկերության ֆինանսական վիճակի վրա չկան: Ընկերության ֆինանսական վիճակի փոփոխության միտումներ առաջիկա տարիներին չեն դիտարկվում:

Ստորև ներկայացված են Ընկերության շահույթի կանխատեսումները՝ 2024-2028 թթ.-երի համար:

Նկարագրությունը	Միավոր	2024	2025	2026	2027	2028
Արտադրության ընդհանուր ծավալը	Տոննա/տարի	122,000	154,869	189,935	220,000	230,000
Ամրան	Տոննա/տարի	115,000	126,536	138,268	150,000	150,000
Պողպատե գնդեր	Տոննա/տարի	7,000	23,333	36,667	50,000	50,000
Մետաղական ամրան	Տոննա/տարի	-	5,000	15,000	20,000	30,000
Ընդհանուր եկամուտ	Միլիոն դրամ	35,489	47,226	59,592	76,838	81,537
Արտադրանքի ինքնարժեք	Միլիոն դրամ	(21,761)	(26,871)	(33,495)	(39,562)	(42,130)
Համախառն շահույթ	**Միլիոն դրամ**	13,728	20,355	26,097	37,276	39,406
Համախառն շահույթի մարժա	%	39%	43%	44%	49%	48%
Շահույթ մինչև հարկումը (EBIT)	Միլիոն դրամ	10,247	16,210	21,534	32,314	34,291
Շահույթ մինչև հարկումը մարժա	%	29%	34%	36%	42%	42%
EBITDA	Միլիոն դրամ	12,926	19,521	25,230	36,374	38,468
EBITDA մարժա	%	36%	41%	42%	47%	47%

Ընկերության գործունեությունը գտնվում է վերջինիս կառավարման մարմինների վերահսկողության ներքո, որոնք մշտապես փնտրում են արդյունավետության բարձրացման հնարավորություններ:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

2019 թվականից սկսած Ընկերության ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտն իրականացնում է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ 002, տրված 10.04.2002թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից):

Հասցե՝ Հայաստան, 0010, Երևան Վազգեն Սարգսյան փող., 26/1 շենք, «Էրեբունի-Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

Հեռախոս՝ +374 (10) 595999

Վեբ կայք՝ https://kpmg.com/am/en/home.html

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

Ընկերության կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ Ընդհանուր Ժողով), Խորհուրդը և գործադիր մարմինը՝ տնօրենը, վերստուգող հանձնաժողովը, ֆինանսական տնօրենը:

Ընկերության հիմնական բաժնետերերն են՝ «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը (49.35%), Միխայիլ Հարությունյանը (16.53%), Տիգրան Հարությունյանը (16.53%) և Վահան Հարությունյանը (16.30%):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի վերջնական հսկող անձն է Միխայիլ Հարությունյանը՝ որպես «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»-ի խոշոր բաժնետեր և որպես Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերության բաժնետեր:

Թողարկողի Խորհուրդը կազմված է 4 անդամներից.

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Միխաիլ Հարությունյան Գեորգիի	Խորհրդի նախագահ	24 տարի
Խաչատուր Անտոնյան	Խորհրդի անդամ	24 տարի
Վազգեն Նիկոլյան	Խորհրդի անդամ	24 տարի
Դավիթ Յավրույան	Խորհրդի անդամ	7 տարի

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Հրաչյա Մուրադյան	Տնօրեն	2 տարի
Կարինե Մամիկոնյան	Ֆինանսական տնօրեն	26 տարի
Վազգեն Նիկոլյան	Գլխավոր ճարտարագետ	24 տարի

Թողարկողի վերստուգող հանձնաժողովը՝

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Վոլոդյա Ադամյան	Հանձնաժողովի նախագահ	16 տարի
Սերժիկ Մելիքյան	Հանձնաժողովի անդամ	19 տարի
Նազիկ Ավագյան	Հանձնաժողովի անդամ	31 տարի

Թողարկողի Ժողովի քարտուղար՝

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Նազիկ Ավագյան	Ժողովի քարտուղար	31 տարի

Ընկերության աշխատակիցները

Ընկերության աշխատակիցների ընդհանուր թիվը 31.12.2023թ դրությամբ կազմել է 699:

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են և ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն:

Թողարկվող պարտատոմսերի դիմաց տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների տեսքով:

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում, շրջանառվում և մարվում են ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերը՝ ՀՀ դրամով: ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնային վճարումները կատարվելու են ԱՄՆ դոլարով:

Դոլարային պարտատոմսերի թողարկման դեպքում թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ 15,000,000,000 (տասնհինգ միլիարդ) ՀՀ դրամ:

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տարեկան արժեկտրոնի մեծությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը: Եթե պարտատոմսերի ամբողջ ծավալը տեղաբաշխվում է սահմանված ժամկետից շուտ, ապա տեղաբաշխումը համարվում է ավարտված:

Ընկերության կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակը միջոցների ներգրավումն է, որոնք ուղղվելու են Ընկերության առկա պարտավորությունների մարմանը: Պարտատոմսերի թողարկմամբ միջոցների ներգրավման արդյունքում ընկերությունը կապահովի իր պարտավորությունների կառավարման արդյունավետության բարձրացում և ներգրավված միջոցների աղբյուրների տարատեսականացում (դիվերսիֆիկացիա):

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են հաստատման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ներկայացվում են ՀՀ ԿԲ և հրապարակվում են հերթական տեղաբաշխումից առնվազն 5 օր առաջ:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

1.8.1 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

հազ. Դրամ	**2023թ.**	**2022թ.**	**2021թ.**
Հասույթ	30,940,005	34,288,753	33,560,326
Վաճառքի ինքնարժեք	(21,128,269)	(21,887,057)	(16,774,399)
Համախառն շահույթ	**9,811,736**	**12,401,696**	**16,785,927**
Այլ եկամուտ	96,315	82,796	24,171
Իրացման ծախսեր	(1,190)	(156,078)	(174,718)
Վարչական ծախսեր	(782,335)	(599,785)	(447,749)
Այլ ծախսեր	(160,322)	(103,438)	(226,811)
Գործառնական գործունեության արդյունքներ	**8,964,204**	**11,625,191**	**15,960,820**
Ֆինանսական եկամուտ	491,552	907,190	973,290
Ֆինանսական ծախսեր	(3,367,918)	(2,292,200)	(1,780,021)
Զուտ ֆինանսական ծախսեր	**(2,876,366)**	**(1,385,010)**	**(806,731)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**6,087,838**	**10,240,181**	**15,154,089**
Շահութահարկի գծով ծախս	(802,717)	(1,322,337)	(2,648,172)
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	**5,285,121**	**8,917,844**	**12,505,917**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (ՀՀ դրամ)	84	142	371

1.8.2 Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	38,950,596	33,682,440	29,393,981
Ներդրումային գույք	1,072,520	1,094,811	1,117,043
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	189,429	2,045,761	112,868
Այլ ակտիվներ	4,938	5,610	6,282
Ոչ ընթացիկ ակտիվներ	**40,217,483**	**36,828,622**	**30,630,174**
Պաշարներ	12,279,756	9,531,117	7,042,321
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	8,704,360	9,411,754	3,439,089
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	2,690,656	479,600	1,143,052
Ընթացիկ ակտիվներ	**23,674,772**	**19,422,471**	**11,624,462**
Ընդամենը ակտիվներ	**63,892,255**	**56,251,093**	**42,254,636**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	9,753,195	9,438,576	9,438,576
Չբաշխված շահույթ	18,898,626	13,928,124	13,010,280
Ընդամենը սեփական կապիտալ	**28,651,821**	**23,366,700**	22,448,856
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	6,425,763	5,131,726	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	3,733,969	3,822,660	3,446,647
Թողարկված պարտատոմսեր	21,071,850	20,903,550	13,471,555
Ոչ ընթացիկ պարտավորություններ	**31,231,582**	**29,857,936**	**16,918,202**
Վարկեր և փոխառություններ	2,151,081	1,330,096	105,500
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	1,462,070	1,244,798	807,460
Թողարկված պարտատոմսեր	124,967	124,306	91,907
Ընթացիկ հարկային պարտավորություն	270,734	327,257	1,882,711
Ընթացիկ պարտավորություններ	**4,008,852**	**3,026,457**	**2,887,578**

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ընդամենը պարտավորություններ	**35,240,434**	**32,884,393**	**19,805,780**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**63,892,255**	**56,251,093**	42,254,636

1.8.3 Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

հազ. դրամ	2023թ.	2022թ.	2021թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված գումարներ	37,776,191	35,960,657	37,416,014
Աշխատակիցներին վճարված գումարներ	(1,996,389)	(1,560,535)	(1,317,683)
Մատակարարներին վճարված գումարներ	(22,308,412)	(24,900,791)	(18,541,442)
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(5,586,844)	(4,307,355)	(4,961,190)
Այլ վճարումներ	(152,116)	(183,010)	(58,020)
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ մինչև շահութահարկի և տոկոսների վճարումը	**7,732,430**	**5,008,966**	12,537,679
Վճարված տոկոսներ	(2,413,506)	(2,315,241)	(4,928,923)
Վճարված շահութահարկ	(947,930)	(2,474,368)	(716,244)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**4,370,994**	**219,357**	**6,892,512**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում	(4,145,278)	(7,890,242)	(2,415,025)
Մուտքեր ոչ ընթացիկ վաճառքից	6,188	19,189	44,939
Տրամադրված փոխառություններ	-	(4,270,725)	-
Մուտքեր տրամադրված փոխառությունների մարումից	-	4,270,725	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(4,139,090)**	**(7,871,053)**	**(3,487,129)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր վարկերից և փոխառություններից	4,103,353	9,448,681	540,109
Վարկերի և փոխառությունների մարում	(2,125,585)	(2,758,461)	(16,033,342)
Մուտքեր թողարկված պարտատոմսերի վաճառքից	-	8,467,525	-
Վճարված շահաբաժիններ	-	(8,000,000)	-

հազ. դրամ	2023թ.	2022թ.	2021թ.
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**1,977,768**	**7,157,745**	**(1,452,466)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	**2,209,672**	**(493,951)**	**1,952,917**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	479,600	1,143,052	73,216
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,384	(169,501)	(883,081)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**2,690,656**	**479,600**	**1,143,052**

1.8.4 Ամփոփ ֆինանսական գործակիցներ

Ցուցանիշի անվանումը		2021 (Աուդիտ անցած)	2022 (Աուդիտ անցած)	2023 (Աուդիտ անցած)
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)		198	142	84
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)		111%	39%	20%
Ակտիվների շահութաբերություն (ROA)		49%	17%	9%
Զուտ շահույթի մարժա (NPM)		37%	26%	17%
Կապիտալի համարժեքության գործակից		0.44	0.42	0.45
Ֆինանսական կախվածության գործակից		1.27	1.41	1.23
Բացարձակ իրացվելիության գործակից		0.42	0.30	1.55
Ընթացիկ իրացվելիության գործակից		1.70	6.28	6.58
Ընդհանուր իրացվելիության գործակից		7.57	12.34	13.66
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից		19.49	5.33	3.42
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով		18.73	68.50	106.86
Պաշարների շրջանառելիության գործակից		4.80	2.64	1.94
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով		76.04	138.52	188.03
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից		52.62	27.93	20.42
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով		6.94	13.07	17.87

* Ներկայացված ցուցանիշները միջինացված են

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Ռիսկային գործոններ

Տոկոսադրույքի ռիսկ: Երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների բարձրացումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը: Ներդրողները պետք է իրազեկված լինեն այս ռիսկի գոյության մասին:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածներում) նվազել՝ ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են տատանվել և ժամանակի ընթացքում կարող են իջնել կամ բարձրանալ: Միաժամանակ, ներդրողը պետք է հաշվի առնի, որ, անկախ շուկայում գների փոփոխություններից և սպասումներից, Թողարկողի կողմից վճարվող արժեկտրոնների և պարտատոմսի մարման գումարային մեծություններն, արտահայտված թողարկման արժույթով, չեն փոփոխվում:

Վերաներդրման ռիսկ: Բոլոր այն ներդրողները, որոնք Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն մինչև մարման պահման կամ ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերության ապահովման և ստացման նպատակով, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային / դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժութային ռիսկ: Թողարկվող պարտատոմսերն արտահայտված են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով, հետևաբար ներդրումները և ներդրումների հետ ստացումը (պարտատոմսերի ձեռք բերման/մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են համապատասխանաբար ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: Ուստի՝ այս իմաստով արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, որոնք իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով պետք է փոխարկեն մի արժույթից այլ արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով (պարբերական արժեկտրոնային վճարումներ, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և առևտրին թույտվություն կարգավորվող շուկայում, ինչպես նաև շուկա ստեղծող ընկերության կամ ընկերությունների հետ համապատասխան պայմանագրի /պայմանագրերի կնքման բանակցությունների վարում): Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ

պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

2.2. Հիմնական տեղեկատվություն

Ընկերության կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակը միջոցների ներգրավումն է, որոնք ուղղվելու են Ընկերության առկա պարտավորությունների մարմանը: Պարտատոմսերի թողարկմամբ միջոցների ներգրավման արդյունքում ընկերությունը կապահովի իր պարտավորությունների կառավարման արդյունավետության բարձրացում և ներգրավված միջոցների աղբյուրների տարատեսականացում (դիվերսիֆիկացիա):

2.3. Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ

2.3.1. Արժեթղթերի տեսակը և դասը

Թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

2.3.2. Երկիրը

Պարտատոմսերը թողարկվել են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

2.3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկված պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1 5-րդ հարկ, հեռ.՝ (+374) 60 615555)՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) համապատասխան կանոնների, ընթացակարգերի:

2.3.4. Արժեթղթի անվանական արժեքը և քանակը

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում կազմում է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով թողարկումների դեպքում՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար: Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը կհաշվարկվի Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

2.3.5. Թողարկման արժույթը

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է և ԱՄՆ դոլարը:

2.3.6. Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

1) առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորությունների մասով պարտատերերի պահանջները.

2) երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.

3) երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.

4) չորրորդ հերթին մարվում է պետական բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.

5) հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.

6) վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին:

2.3.7. Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքներն են.

1) ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ծրագրային Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվելու է ներդրողի բանկային հաշվին համաձայն Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի հետ կնքվելիք Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ պայմանագրի (այսուհետ՝ եռակողմ Պայմանագիր), ինչպես նաև ներդրողի և իր արժեթղթերի պահառուի միջև կնքված համապատասխան պայմանագրի,

2) Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,

3) Գրավադրել պարտատոմսերը օրենսդրությամբ սահմանված կարգով,

4) Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ տեքստում՝ Օրենք) սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր,

5) Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

2.3.8. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.3.8.1. Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը, ինչպես նաև տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկողն ինքն է տեղաբաշխումը կազմակերպում՝ ֆոնդային բորսայից դուրս:

Տեղաբաշխման ընթացքում գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով, ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման օրվա 16:30-ը: Եթե համապատասխան գումարները վճարվում են պարտատոմսերի ձեռքբերման օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված հատուկ այդ նպատակով Թողարկողի կողմից բացված բանկային հաշվեհամարին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարականները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ Թողարկողի կողմից բացված բանկային հաշվեհամարին վրա մնալը մինչև պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում (մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30) համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$V=P*Q$ *, որտեղ՝*

- *V-ն պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է:*
- *P-ն պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է Ազդագրի 2.3.10.1 բաժնի համաձայն:*
- *Q-ն պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:*

2.3.8.2. Առաջարկի ընդհանուր ծավալը

Դոլարային պարտատոմսերի թողարկման դեպքում թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ 15,000,000,000 (տասնհինգ միլիարդ) ՀՀ դրամ: Տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.3.8.3. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս-մաժոր):

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն:

Թողարկողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Թողարկողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.3.8.4. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում ներդրում կատարելու համար պետք է կատարել հետևյալ քայլերը.

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Թողարկողին ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Թողարկողին առաքումից հետո, սակայն ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով բացված Թողարկողի կողմից բացված բանկային հաշվեհամարին ին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց՝ վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Թողարկողի կողմից բացված բանկային հաշվեհամարին ին դրամական միջոցների սպացումից անմիջապես հետո Թողարկողը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր, որով արժեթղթերը հաշվեգրվում են ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո Թողարկողի կողմից բացված բանկային հաշվեհամարին ին սպացված գումարները ենթակա են եր վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից սպացման ժամկետից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ--հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Թողարկողին, եթե այն առաքվել է Թողարկողի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Թողարկողի գրասենյակ այցելելով) և սպացվել է հասցեատիրոջ կողմից առաքման սպացման հաստատում:

Թողարկողի հետ կապի միջոցներն են՝

- ***Հասցե՝** ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2*

  կամ

- ***Էլեկտրոնային փոստ***: asce@asce.am

  կամ

- *այցելելով «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ և համապատասխան աշխատակիցների միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը*

*Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է **Հավելված 1**-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է **Հավելված 2**-ում:*

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտ-հանձնարարականի վավերականությունն ապահովելու համար:

Հայտ-հանձնարարականում նշված «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը» դաշտում ներդրողները պետք է նշեն «Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ» դաշտում ամրագրված թվի և «Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը» դաշտում ամրագրված թվի արտադրյալը:

2.3.8.5. Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն կարող է նախատեսվել Թողարկողի կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տեղաբաշխման ընթացքում տեղաբաշխման կարգով պայմանավորված՝ հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ հայտ-հանձնարարականում նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակը գերազանցում է հայտ-հանձնարարականը ներկայացնելու պահին առկա տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը:

Միաժամանակ ներկայացված հայտ-հանձնարարականների դեպքում, եթե հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ հայտ-հանձնարարականները բավարարվում են համամասնորեն՝ ըստ հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր հայտ-հանձնարարականով նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

2.3.8.6. Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Տեղաբաշխման ընթացքում հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում (մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30) համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Թողարկողի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող հետ կանչել:

2.3.8.7. Նվազագույն և առավելագույն գումարները

Թողարկման ընթացքում կարող են լինել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ, եթե նման որոշում կայացվի Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.3.8.8. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը

Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են *Թողարկողի կողմից բացված բանկային հաշվեհամարին* ին: Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

2.3.8.9. Առաջարկի արդյունքների հրապարակումը

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն տեղաբաշխման ավարտից անմիջապես հետո Թողարկողի պաշտոնական կայքում:

2.3.8.10. Նախապատվության իրավունքը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման

հերթականության, այսինքն՝ առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը թողարկման նպատակով Թողարկողի կողմից բացված բանկային հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

2.3.9. Տեղաբաշխման պլանը

2.3.9.1. Ներդրողների խմբերը

Առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի:

2.3.9.2. Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ներդրողները Թողարկողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման կամ չբավարարման մասին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման կամ չբավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Թողարկողին է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը կամ ներդրողի կողմից նախանշված նախընտրելի եղանակով:

2.3.10. Առաջարկի գինը

2.3.10.1. Արժեթղթերի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կհրապարակվի Թողարկողի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

2.3.11. Տեղաբաշխումը

2.3.11.1. Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Ազդագրի հրապարակման պահին երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու մասին պայմանագիր որևէ տեղաբաշխողի հետ կնքված չէ:

2.3.11.2. Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ տեղաբաշխումը երաշխավորված չէ և.

- չերաշխավորված տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման ավարտին պարտատոմսերի՝ հայտարարված տեղաբաշխման ծավալը կարող է ամբողջությամբ չտեղաբաշխվել, այսինքն կարող է տեղի ունենալ թերտեղաբաշխում,
- անկախ տեղաբաշխման ավարտին պարտատոմսերի փաստացի տեղաբաշխված ծավալից՝ տեղաբաշխումը համարվում է կայացած:

2.3.11.3. Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

2.3.11.4. Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով բացված սպասարկող բանկի կամ «Հաշվի օպերատորի» բանկային տարանցիկ հաշվեհամարին: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ (հեռ.՝ (+374) 60 615555):

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատորը «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ն է:

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ, ստանալ հաշվեհամարի առկայության վերաբերյալ հստակ տեղեկատվություն:

2.4. Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Արժեթղթերի եկամտաբերությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ սույն Ազդագրի 2.3.10.1 մասում բերված բանաձևի համաձայն:

2.5. Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման/առաջարկի ծրագրի վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի Խորհրդի որոշմամբ: Որոշմամբ ամրագրվել է այն ծավալը, որի շրջանակում Թողարկողի առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացվել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ): Պարտատոմսերի տեղաբաշխումներին վերաբերող վերջնական պայմանները հաստատվում են Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.6. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնելով արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի և/կամ եզրահանգումների վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

2.6.1.1. Պարտատոմսերից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգը և նկարագիրը

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲ-ի: ՀՀ Հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Հարկային օրենսգիրք) ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը հանդիսանում է ՀՀ-ն:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 (տասնութ) տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց

գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած պասիվ եկամտից վճարման աղբյուրի մոտ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 10 (տասը) տոկոս դրույքաչափով, շահաբաժինների մասով՝ հինգ տոկոս, արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով՝ զրո տոկոս, ՀՀ աղբյուրներից ստացվող՝ այլ եկամուտների մասով՝ 20 տոկոս:

Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝ ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով.

2.6.1.2. Պարտատոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում, Հարկային օրենսգրքի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, եթե ՀՀ-ում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Տոկոսագումարների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսագումարների յուրաքանչյուր վճարման դեպքում:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ֆիզիկական անձանց համար նվազեցվող եկամուտ է համարվում ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

Ոչ ռեզիդենտների և ֆիզիկական անձանց շահութահարկի և համապատասխանաբար եկամտահարկի արտոնությունները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

2.4. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.4.1. Առևտրին թույլտվությունը

Սույն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Թողարկողը պարտադիր դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար: Ընդ որում՝ պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու հայտը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Պարտատոմսերի՝ առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ:

Պարտատոմսերը, «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից ցուցակելուց և առևտրին թույլտվություն ստանալուց հետո, շրջանառվելու են բացառապես կարգավորվող շուկայում (ֆոնդային բորսա)՝ ազատ շրջանառության իրավունքով: Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել իրենց պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ ֆոնդային բորսայից դուրս՝ օրենքով սահմանված կարգով:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթերը՝ բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի հոդված 129-ի 4-րդ կետով սահմանված դեպքերի:

2.4.2. Շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային Ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

2.4.3. Շուկա ստեղծողները

Թողարկողը նախատեսում է ունենալ առնվազն մեկ շուկա ստեղծող և այդ նպատակով պլանավորում է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից ցուցակվելու և առևտրին թույլատրվելու դեպքում Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց (Բորսայի անդամ) հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո՝ ողջամիտ ժամկետում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հրապարակել պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ տեղեկատվություն:

2.5. Անվանական տոկոսադրույքը և այդ տոկոսների վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային անվանական եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու է համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով: ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնային վճարումները կատարվելու են ԱՄՆ դոլարով:

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնը վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ պարտատոմսերի

սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը պարտավոր է, համաձայն եռակողմ Պայմանագրի, մինչև արժեկտրոնների վճարման օրվա ժամը 12:00-ը Հաշվի օպերատորի Դեպոզիտարիայում վարվող դրամային հաշվին ապահովել արժեկտրոնների վճարման ենթակա ամբողջ գումարը:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0.1 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Թողարկողը արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ համաձայն Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ պայմանագրի: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում գրանցված բակային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ Հաշվի օպերատորի կողմից կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն եռակողմ Պայմանագրի, Դեպոզիտարիան՝ արժեկտրոնի գումարների վճարման հիմքով, մինչև արժեկտրոնների վճարման օրվա 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն պարտատոմսի արժեկտրոնների վճարման փաստի մասին:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

ԱԳ = (FV x C) / k,

որտեղ՝

ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,

FV- մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C- տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4):

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

- AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
- FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
- C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը, (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4),
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում
    - DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1];
    - DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1];
    - D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է;
    - D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է;
    - D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

2.6. Պարտատոմսերի մարում

Պարտատոմսերի շրջանառության ժամկետը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Պաարտատոմսերի մարման գումար ստացողները ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսերի մարման գումարները իրավունք ունեն ստանալու համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսերի սեփականատերերի և(կամ) անվանատերերի ռեեստրում նախորդող աշխատանքային օրը գրանցված անձինք: Հաշվի առնելով պարտատոմսի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցման անրաժեշտությունը, պարտատոմսի սեփականատերերը անհրաժեշտ է գիտակցեն միջբանկային փոխանցմամբ պայմանավորված միջնորդավճարների ծախսերը, հետևաբար նաև մարման գումարները պահումներով ստանալու փոաստը:

Թողարկողը պարտատոմսերի մարման գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ համաձայն Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ պայմանագրի: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում գրանցված բակային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ Հաշվի օպերատորի կողմից կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Թողարկողը պարտատոմսերի մասնակի կամ վաղաժամկետ մարում չի նախատեսում:

2.7. Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2021-2023թթ. թվականների համար), որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Հավելված 6-ում:

3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Անկախ աուդիտորներ

2019 թվականից սկսած Ընկերության ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտն իրականացնում է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ 002, տրված 10.04.2002թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից):

Հասցե՝ Հայաստան, 0010, Երևան Վազգեն Սարգսյան փող., 26/1 շենք, «Էրեբունի-Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

Հեռախոս՝ +374 (10) 595999

Վեբ կայք՝ https://kpmg.com/am/en/home.html

3.2. Ռիսկային գործոններ

Ցանկացած ներդրող մինչև Թողարկողի պարտատոմսերում ներդրում անելը պետք է ամբողջությամբ ուսումնասիրի Թողարկողի գործունեությանը հատուկ հետևյալ ռիսկային գործոնները:

3.2.1. Աշխարհաքաղաքական ռիսկեր

3.2.1.1. Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու ռիսկ(Ֆորս-մաժոր)

Ընկերության գործունեության ուղղակի բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև ֆորս-մաժորային ռիսկերը: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը պատերազմը, համաճարակային պանդեմիան, որոնց արդյունքում ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները և այլն, որոնք դուրս են Ընկերության վերահսկողությունից:

3.2.2.Մակրոտնտեսական ռիսկեր

3.2.2.1. Շուկայի կոնյուկտուրա

Թողարկողի արտադրանքի նկատմամբ պահանջարկի մակարդակի փոփոխությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական արդյունքների ու վիճակի վրա: Թողարկողի ֆինանսական արդյունքները կարող են էականորեն տատանվել՝ պայմանավորված իր արտադրանքի նկատմամբ արդյունաբերական և սպառողական պահանջարկի մակարդակի փոփոխությամբ, ինչպես նաև գլոբալ տնտեսական ցնցումներով, աճի դանդաղեցմամբ կամ ռեցեսիայով:

Ի հավելումն վերոնշյալի՝ տեխնոլոգիական և արդյունաբերական գործընթացների փոփոխությունները, արդյունաբերական միջանկյալ սպառման կամ սպառողական

սովորությունների փոփոխությունները, կարող են ազդել պահանջարկի մակարդակի վրա այնքանով, որքանով դրանք կարող են ավելացնել կամ նվազեցնել Թողարկողի արտադրանքի անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով որ ընկերության արտադրանք հիմնականում սպառվում է շինարարության ոլորտում, ապա Ընկերության վաճառքի ցուցանիշները կախված են շինարարության ոլորտի ակտիվությունից:

3.2.3. Ֆինանսական ռիսկեր

3.2.3.1. Շուկայական ռիսկ (արտադրանքի գներ)

Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա զգալիորեն ազդում են միջազգային շուկայական գների տատանումները: Պատմականորեն այս գներն ունեցել են տատանման լայն տիրույթ, որը պայմանավորված է Ընկերության վերահսկողությունից դուրս բազմաթիվ գործոններով: Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փափոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Կանխատեսվում է, որ 2024 թվականին պողպատի միջին գները կնվազեն մոտ 5%-ով՝ դառնալով 548 ԱՄՆ դոլար/տոննա, իսկ 2025 թվականին կհասնի 606 ԱՄՆ դոլար/տոննա, աճելով ավելի քան 10%-ով: Այս վերականգնումը պայմանավորված կլինի պահանջարկի աճով, հատկապես Ասիայում: Պողպատի միջին գները 2023 թվականին նվազեցին մոտ 15%-ով՝ հասնելով չորս տարվա նվազագույնի:


Չինաստանը պողպատի գլոբալ շուկայի զարգացումների հիմնական շարժիչ ուժն է, քանի որ երկիրը հանդիսանում է տարեկան արտադրության և սպառման ավելի քան կեսը: 2023 թվականին Չինաստանում բնակելի անշարժ գույքի շուկայի անկումը բացասական ազդեցություն է ունեցել նաև պողպատի նկատմամբ պահանջարկի վրա : Չնայած այն հանգամանքին, որ բնակելի անշարժ գույքի շուկան դեռ աճի միտումներ չունի, պողպատի նկատմամբ պահանջարկը դեռ կմնա կայուն արտադրության և ենթակառուցվածքների ոլորտում ներդրումների շնորհիվ: Այնուամենայնիվ,, Չինաստանում պողպատի տարեկան պահանջարկը, հավանական է, որ 2024 և 2025 թվականներին կմնա 2021 թվականի մակարդակից ցածր :

Այլ տնտեսություններումտնտեսական աճը և պողպատի նկատմամբ պահանջարկը 2023 թվականին նվազել են հիմնականում խոշոր տնտեսություններում տոկոսադրույքների բարձրացման պատճառով, ինչն էլ իր հերթին դանդաղեցրել է պողպատի վրա հիմնված շինարարության և արտադրության ծավալները:

Եվրոպայում և ԱՄՆ-ում գնաճը ներկայումս մոտ է կենտրոնական բանկերի սահմանած նպատակներին, ինչը ենթադրում է, որ 2024 թվականի երկրորդ կեսին դրամավարկային քաղաքականությունները եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում կլինի ավելի ընդլայնող, ինչն էլ ժամանակի ընթացքում դրական ազդեցություն կունենա նաև պողպատի վրա հիմնված այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են շինարարությունն ու արտադրությունը:

Կանխատեսվում է, որ գլոբալ իրական ՀՆԱ-ն կաճի 3.1%-ով 2024 թվականին և 3.3%-ով 2025 թվականին, 2023 թվականի 3.2%-ի աճից հետո:

Աղյուսակ 1: Պողպատի միջազգային գին



Աղբյուրը: Consensus Economics

Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող ճշգրիտ կանխատեսել, թե արդյոք մետաղների գները կբարձրանան կամ կիջնեն ապագայում: Մետաղների միջազգային գների անկումը կարող է էական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

3.2.3.2. Արտարժութային ռիսկ

Այս ռիսկի ազդեցությունը մեծանում է միայն օտարերկրյա ընկերություններից սարքավորումների և հումքի ձեռք բերման շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման և Ընկերության կողմից ստացված բանկային վարկերի մարման և սպասարկման ժամանակահատվածում կատարվող վճարումներով, որոնք արտահայտված են արտարժույթով: Արդյունքում Թողարկողի պարագայում արտարժութային ռիսկն առկա է միայն այն դեպքում, երբ տեղի է ունենում ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեվորում (փոխարժեքի աճ): Ընդ որում, Ընկերության արտադրանքի ինքնարժեքում արտարժույթով արտահայտված հումքի տեսակարար կշիռը կազմում է մոտ 20-25%.

Նշված վերջին ռիսկը շատ բացահայտ է եղել վերջին տարիներին, մասնավորապես՝ ՀՀ դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ հանգեցնում է ներմուծվող նման արտադրանքի ավելի բարենպաստ գներին, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում Ընկերության արտադրանքի գների վրա: Նման ռիսկի երկարաժամկետ ազդեցությունը կարող է Ընկերության արտադրանքը դարձնել գնային առումով ոչ մրցունակ և դրդել գների նվազեցման: Սա էլ իր հերթին կարող է այլ ֆինանսական ռիսկերի հանգեցնել:

Ապագայում ՀՀ դրամի փոխարժեքի երկարատև արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կարող է բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական արդյունքների և վիճակի վրա:

3.2.3.3. Ներդրումային կապիտալի մատչելիության ռիսկ

Թողարկողը գործում է ծանր արդյունաբերության ոլորտում, որը կապիտալ ներդրումների առումով տնտեսության ամենաինտենսիվ ճյուղերից մեկն է և պահանջում է շարունակական խոշոր կապիտալ ներդրումներ:

Թողարկողը չի կարող հավաստիացնել, որ իր գործունեության արդյունքում կստեղծվի բավարար ազատ կանխիկ սեփական միջոցներ կամ երկարաժամկետ կապիտալի շուկաները մատչելի կլինեն Թողարկողի կապիտալ ծախսերը ֆինանսավորելու համար, կամ Թողարկողն անվերապահորեն կկարողանա պահպանել իր արտադրական հզորությունները և ծավալները, որպեսզի շարունակի իր գործունեությունն առկա կամ ավելի մեծ ծավալների մակարդակում:

Վերոնշյալը վերաբերում է զարգացման/աճին ուղղված կապիտալ ներդրումների (development capex) համար անհրաժեշտ ներդրումային կապիտալի մատչելիության ռիսկին: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ արտադրական հզորությունների պահպանման համար անհրաժեշտ ընթացիկ կապիտալ ծախսերի (sustaining capex) ֆինանսավորման համար Ընկերությունն ունակ է ստեղծել բավարար ֆինանսական արդյունք և կանխիկի հոսքեր, և դրա հետ կապված ռիսկը ոչ էական է:

3.2.3.4. Պարտքային բեռի ռիսկ

Թողարկողը կարող է որոշում կայացնել հետագայում լրացուցիչ պարտք ներգրավել (այն դեպքում, երբ չի սահմանափակվում Թողարկողին պարտադրված պայմաններով), ներառյալ ապահովված պարտք: Ազդագիրը չի պարունակում սահմանափակումներ Թողարկողի կողմից լրացուցիչ պարտք վերցնելու ունակությունը սահմանափակելու վերաբերյալ: Եթե նոր պարտք, մասնավորապես՝ ապահովված պարտք, ավելացվի Թողարկողի ընթացիկ պարտքի մակարդակին, դա կարող է բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի կողմից պարտատոմսերի սպասարկման ունակության վրա:

2023թ. պարտք/EBITDA ցուցանիշի (debt-to-EBITDA) միջին մեծությունը կազմել է **2.8x**:

Պարտքային ռիսկն նաև առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

3.2.4. Գործառնական ռիսկեր

3.2.4.1. Էներգակիրների գներ

Թողարկողի գործողությունների համար պահանջվում են վառելիքի, էլեկտրաէներգիայի, ջրի և այլ ռեսուրսների զգալի ծավալ:

Թողարկողի մոտ վառելիքի, գազի և էլեկտրաէներգիայի ծախսերը կազմում են արտադրանքի ինքնարժեքի մոտավորապես **20**%-ը:

Թողարկողը էներգակիրների մատակարարման գործընթացում կախվածության մեջ է այդ էներգակիրները մատակարարող երրորդ կողմ հանդիսացող անձանցից: Էներգակիրների մատչելիությունը, անխափան մատակարարումը և դրանց գները կարող են ժամանակի ընթացքում փոփոխվել կամ կրճատվել: Բացի այդ, Թողարկողը էլեկտրաէներգիան գնում է

ազատ շուկայում: Նման զարգացումները կարող են լինել տարբեր գործոնների արդյունք, ի թիվս այլոց՝ նոր օրենքներ կամ նորմատիվ ակտերի ընդունում, նոր հարկերի ներդրում, նոր սակագների սահմանում, մատակարարների մոտ արտադրական գործընթացների խափանում, համաշխարհային գների մակարդակի փոփոխություն և շուկայական պայմանների վատթարացում:

3.2.4.2. Տեխնոլոգիական պրոցեսներ

Սարքավորումների շարքից դուրս գալը, աշխատանքային խափանումները, ձախողումները, տեխնոլոգիական պրոցեսի ցանկացած վթար կարող է առաջացնել արտադրության գործընթացի տևական դադար, արտադրանքի ծավալի կրճատում, և արդյունքում բացասաբար անդրադառնալ Թողարկողի վաճառքի և շահութաբերության վրա:

Բացի այդ, Թողարկողի արտադրական համալիրը և մեքենա-սարքավորումները նույնպես ենթակա են այնպիսի ռիսկերի ինչպիսին են՝ հրդեհները, պայթյունները և այլ պատահարները: Այդ իրադարձություններից որևէ մեկի ի հայտ գալու արդյունքում Թողարկողի ֆինանսական վիճակը ու արդյունքները կարող են վատթարանալ և արդյունքում Թողարկողի վճարունակությունը կարող է ռիսկի ենթարկվել:

Տեխնոլոգիական գործընթացների ընդհատման ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով Թողարկողը հնարավորինս ապահովել է արտադրական պահուստային հզորությունների առկայությունը: Այս պահին Թողարկողի գնահատմամբ Ընկերությունն ունի անհրաժեշտ պահուստային արտադրական հզորություններ արտադրության առկա ծավալների անխափան ապահովման համար:

3.2.5. Կարգավորման դաշտի ռիսկ

3.2.5.1. Սև մետաղի ջարդոնի արտահանման պետական տուրք

Ընկերության արտադրանքի հիմնական հումքը մետաղի ջարդոն է: ՀՀ Կառավարությունը արգելել է մետաղի ջարդոնի արտահանումը: Այնուամենայնիվ Թողարկողը չի կարող հավաստիացնել, որ ապագայում արգելքի վերանայում չի լինի, որը կարող է զգալի ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա:

3.3. Տեղեկատվություն թողարկողի մասին

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

3.3.1.1. Թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը

Թողարկողի անվանումն է՝

	Լրիվ ֆիրմային անվանումը	Կրճատ անվանումը
հայերեն՝	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերություն	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ
ռուսերեն՝	Открытое Акционерное Общество ,,АСКЕ ГРУП”	«АСКЕ ГРУП» ОАО
անգլերեն՝	,,ASCE GROUP’’ Open Joint-stock Company	ASCE GROUP OJSC

3.3.1.2. Թողարկողի պետական գրանցումը և գործունեության վայրը

Թողարկողի հիմնադրման երկիրն է՝	Հայաստանի Հանրապետությունը
Թողարկողի պետական գրանցման վայրն է՝	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Թողարկողի պետական գրանցման համարն է՝	39.120.00360
Թողարկողի պետական գրանցման ամսաթիվն է՝	04.09.1998 թ.
Թողարկողի գործունեության վայրն է՝	ՀՀ, 2501,Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Կապի միջոցները՝	Հեռախոս՝+ 374 226 46427 Էլ. փոստ՝ asce@asce.am ինտերնետային կայք՝ www.asce.am

3.3.2. Ներդրումները

Ստորև ներկայացվում են 31.12.2019թ-ից 31.12.2023թ. ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից կատարված ներդրումները:

Անվանում	Ներդրումների ծավալները /ՀՀ դրամ/ 2018-2019	Ներդրումների ծավալները /ՀՀ դրամ/ 2020-2023
Շենքեր, շինություններ	4,454,549,946	2,414,485,130
Կառուցվածքներ	17,767,640	50,961,186
Փոխանցող հարմարանքներ	51,493,602	189,160,465
Մեքենա սարքավորումներ	5,739,046,675	1,365,634,311
Հոսքային գծեր և ռոբոտատեխնիկա	251,451,663	1,348,383,562
Տրանսպորտային միջոցներ	167,367,212	5,905,068,280
Արտադրական, տնտեսական գույք և այլ հիմնական միջոցներ	110,743,483	417,837,480
Ընդամենը	**10,792,420,221**	11,691,530,414

3.4. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Ոլորտի նկարագիր

2020 և 2021 թվականներին պողպատե արդյունաբերությունը զգաց համավարակի և տարածաշրջանային կոնֆլիկտների ազդեցությունը: 2020 թվականի COVID-19 համավարակի և տարածաշրջանային հակամարտությունների ազդեցությունը զգալի էր, ինչը բերեց ընդհանուր տնտեսության անկմանը և պողպատե արտադրության կրճատմանը:

2022 թվականին պողպատե արտադրությունը որոշակի վերականգնում ունեցավ՝ ընդհանուր տնտեսական վերականգնման ֆոնին: 2023 թվականին պողպատե արտադրությունը համեմատաբար ավելի կայուն էր և մասամբ վերականգնվել:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2023 թվականին պողպատե արտադրությունը կազմել է Հայաստանի ՀՆԱ-ի 0.12%-ը: Պողպատե արտադրանքի ներմուծումը զգալիորեն գերազանցում է տեղական արտադրությանը: 2020-2024 թվականների ընթացքում պողպատե արտադրանքի ներմուծումը շարունակել է մեծանալ, հիմնականում Ռուսաստանից և Իրանից:

Այնուամենայնիվ, Թողարկողը Հայաստանի խոշորագույն պողպատ արտադրողն է: 2023 թվականին Թողարկողը ապահովել է երկրի ընդհանուր պողպատե արտադրության մոտ 60%-ը:

3.4.2. Հիմնական գործունեությունը

Ընկերությունը (նախկինում «ԹՈՒՔԵՁՈՒԼ» ԲԲԸ) հիմնադրվել է ՀՀ կառավարության 1998թ.-ի սեպտեմբերի 4-ի թիվ 550 որոշման համաձայն «ՀԱՅՁՈՒԼ» ՓԲԸ-ի (նախկինում «Ավտոձուլ» պետական ձեռնարկության) պետական բաժնետոմսերը մրցույթով մասնավորեցման ճանապարհով բաց բաժնետիրական ընկերության վերակազմակերպման արդյունքում:

Ընկերությունը հանդիսանում է «Հայձուլ » ՓԲԸ-ի իրավահաջորդը:

Ընկերությունը հայկական խոշոր պողպատաձուլական գործարան է, որն իր ճիշտ քաղաքականության արդյունքում շատ կարճ ժամանակահատվածում հաստատուն քայլերով ամրապնդեց դիրքերը շուկայում, վերազինվեց, ավելացրեց նոր աշխատատեղեր, ընդլայնեց թողարկվող արտադրատեսականին: Ընկերությունը զբաղվում է սև մետաղի՝ պողպատի ձուլմամբ և պողպատե արտադրատեսակների՝ ամրանի և մանրեցման գնդերի արտադրությամբ:

2011 թվականից սկսած Ընկերությունը վերազինվել է ու կարճ ժամանակ անց գործարանը սկսել է աշխատել նոր հզորություններով ու թողարկել հայրենական արտադրության ամրաններ:

Ընկերության արտադրանքը թողարկվում է «Siemens VAI» ավստրիական ընկերության տեխնոլոգիայով: «Siemens VAI»-ի հետ ստորագրած համաձայնագրի շրջանակներում պարբերաբար կատարվում է գործարանի վերազինում: Ընկերության տեխնիկական հագեցվածությունն այսօր ամենաբարձր մակարդակի վրա է:

Արտադրական հումքը մետաղի ջարդոնն է, որը բազմակի վերամշակման փուլեր անցնելուց հետո վերածվում է շինարարության համար անփոխարինելի բաղադրիչի՝ ամրանի: Իր որակի, հուսալիության, ամրության և ինչու ոչ՝ նաև գնի շնորհիվ այս ամրանները մրցունակ են նաև արտերկրի շուկաներում: Այսօր Ընկերության արտադրանքը ծածկում է հայկական շուկայի ողջ պահանջարկը:

Ընկերության արտադրական հզորությունները թույլ են տալիս թողարկել **տարեկան մոտ 300 հազար տոննա նախապատրաստվածք և 175 հազար տոննա ամրան**: Վերազինված գործարանն այսօր պատրաստ է նաև արտահանման: Ժամանակն ապացուցեց, որ մետաղագործական այս ճյուղը մեր երկրում բավականին խոստումնալից է, որի զարգացումն ապահովում է նոր հեռանկարներ այս ոլորտի համար:

Պողպատե աղացման գնդեր՝ Ընկերության կողմից թողարկվող այս նոր արտադրանքը կիրառվում է ամենատարբեր հանքաքարերի, կրաքարի, աճուխի աղացման, մանրացման համար: Այն կարելի է կիրառել ինչպես չոր, այնպես էլ խոնավ հումքի դեպքում: Հանքանյութերն այս մեթոդով մանրացնելու տարբերակը լայն տարածում ունի աշխարհի բազմաթիվ զարգացած երկրներում և ունի մի շարք առավելություններ: Աղացման այս գնդերը հնարավորություն են տալիս 2-8 անգամ բարձրացնել արտադրողականությունը և 10-15% նվազեցնել կորուստը: Մինչև արտադրական գործընթացի մեկնարկը, հումքը ենթարկվում է մանրակրկիտ վերահսկողության, այնուհետև գլոցման վառարաններում ջերմային մշակման: Լիարժեք կարծրություն ապահովելու նպատակով ջերմամշակման ընթացքում ավելացվում են

համապատասխան քիմիական նյութեր: Կախված, թե ինչ հումքի մանրացման համար են նախատեսված գնդերը՝ ստացված զանգվածը ենթարկվում է կրկնակի ջերմային մշակման: Ըստ ցանկության թողարկվում է 25 մմ-ից մինչև 125 մմ տրամաչափի պողպատե գնդեր: Այստեղ որակի վերահսկման մակարդակը ամենաբարձր նշաձողի վրա է: **Ընկերության արտադրական հզորությունները թույլ են տալիս թողարկել տարեկան մոտ 20 հազար տոննա մանրեցման գնդեր:**

Ընկերության թողարկած արտադրանքը համապատասխանում է միջազգային բոլոր ստանդարտներին և որակի ամենաբարձր չափանիշներին: Արտադրանքը ենթարկվում է բազմաստիճան լաբորատոր փորձաքննության, ստուգվում է մետաղի ամրությունը, քիմիական կազմը, այլ մետաղների հետ շփման ազդեցությունը: Պատրաստի արտադրանքը փաթեթավորվում է հատուկ պայուսակներում 1-2 տոննա տարողությամբ: Ըստ պատվիրատուի ցանկության՝ կարելի է արտադրանքը պահեստավորել փայտե կամ մետաղե տարաներում: Շնորհիվ մանրակրկիտ ջերմամշակման, որակյալ հումքի, տեխնիկական բարձր հագեցվածության, լավագույն մասնագետների՝ այս պողպատե գնդերը ծառայում են երկար, ունեն մաշվածության շատ ցածր ցուցանիշ և չեն քայքայվում տարբեր մետաղական շփումներից:

Ընկերության հիմնական արտադրամասերն են՝ Հալման արտադրամասը, Անընդհատ ձուլման արտադրամասը և Գլոցման արտադրամասը:

ՀՀ-ում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, հիմնարկներ: Ընկերությունն ունի դուստր ընկերություն «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» ՍՊԸ, որն այս պահին ակտիվ գործունեություն չի ծավալում: Ընկերությունն անդամակցում է Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությանը::

3.4.3. Արժեքի հիմնական գործոններ

Գրավիչ շուկա

Պողպատե արտադրանքի կայուն ներքին պահանջարկը ապահովվում է հարակից արդյունաբերության ճյուղերի աճով (շինարարության, հանքարդյունաբերության և տրանսպորտի արդյունաբերության):

Ընկերության գործունեությունը եզակի է Հայաստանի տնտեսության համար: Ընկերության գործարանը երկրում միակ գործարանն է, որը մասնագիտացած է սև մետաղների երկրորդային վերամշակման և ձուլվածքի արտադրության մեջ:

Ընկերության արտադրական կարողությունները լիովին բավարարում են ամրանների և պողպատե մանրեցման գնդերի Հայաստանի ներքին պահանջարկը և ունեն արտահանման ներուժ:



Շահավետ դիրք, հիմնական ռեսուրսներով ապահովվածություն

Արտադրությունը գտնվում է Երևանից մոտ 25 կմ հեռավորության վրա, ինչն ապահովում է դրա հասանելիությունը գործարանի արտադրանքի հիմնական գնորդներին:

Գործարանը ունի կայուն հումքի բազա (մետաղի ջարդոնի կայուն մատակարարների առկայություն) և ֆերոձուլվածքների և հրակայուն նյութերի ձեռքբերման մշակված համակարգ:

Գործարանն ամբողջությամբ ապահովված է ռեսուրսներով (էլեկտրականություն, բնական գազ, ջրամատակարարում):

Արդյունավետ արտադրական գործընթաց

Siemens VAI և CVS Technologies ընկերությունների ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարքավորումներ:

Արտադրության գործընթացը հիմնված է էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների օգտագործման վրա:

«Խելացի» արտադրություն և արդի տեխնոլոգիաներ

«Siemens» և CVS ընկերությունների տեխնոլոգիական լուծումների օգտագործման շնորհիվ ՝ Ընկերության արտադրությունը բավարարում է շրջակա միջավայրի պաշտպանության բոլոր ժամանակակից պահանջները:

Էներգիա և ռեսուրսների արդյունավետություն. Ընկերությունում տեղադրված Siemens VAI շարժակազմային սարքավորումները (Ավստրիա) թույլ են տալիս արդյունավետ օգտագործել էներգետիկ ռեսուրսները, ինչպիսիք են գազը և էլեկտրականությունը, և օգնում է նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը: Բացի այդ, նոր էլեկտրական աղեղային աղեղային վառարանը, որը շահագործման է հանձնվել 2016թ. IV եռամսյակի վերջում էլ ավելի է կրճատել էներգետիկ ծախսերը (մոտ 56% -ով):

Թափոնների կառավարում. Էլեկտրական աղեղային վառարաններից, փոխարկիչներից և շարժակազմերից թափոնները (փոշի, փշրանք, խարամ, ածխաթթու գազի արտանետումներ) օգտագործվում են արտադրության գործընթացում՝ ավելացնելով դրա արդյունավետությունն ու նվազեցնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությանը:

Իր գործունեության մեջ Ընկերությունը առաջնորդվում է շրջակա միջավայրի պահպանության ստանդարտներին համապատասխանության ոլորտի հիմնական սկզբունքներով:

Արտադրությունը բավարարում է էկոլոգիայի, աշխատուժի պաշտպանության և արդյունաբերական անվտանգության բնագավառում ազգային և միջազգային օրենսդրության պահանջներին:

Կարգավորող դաշտ

Մետաղի ջարդոնի և նախապատրաստվածքի արտահանման արգելք. Մետաղի ջարդոնի արտահանման պետական տուրքի առկայությունը, և ՀՀ կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» որոշման ընդունումը որը լիովին սահմանափակում է ջարդոնի ՀՀ-ից արտահանումը: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով արտահանման լիցենզիայի պետական տուրքեր են սահմանվել սև մետաղներից պատրաստված առանձին ծածկագրերին դասվող արտադրատեսակների (նախապատրաստվածքների) արտահանման համար (ուժի մեջ է մտնելու 2025 թվականի հունվարի 1-ից): Սա թույլ է տալիս Ընկերությանը անխափան համալրել հումքային բազան ֆինանսական տեսանկյունից շահավետ պայմաններով:

Ցածր մրցակցություն

Վերջնական արտադրանքի ինքնարժեքում տրանսպորտային ծախսերի մեծ տեսակարար կշիռ. Հայկական շուկան համեմատաբար փոքր է: Ընկերություն իրականացնում է լայնածավալ ամրանի և մանրեցման գնդերի արտադրություն: Հումքը (մետաղի ջարդոն) հավաքվում է ընկերության մատակարարի կողմից: Մրցակցային դաշտը բնութագրվում է բացառապես նմանատիպ արտադրանք ներմուծող ընկերությունների կողմից, որոնք արտադրող չեն հանդիսանում և կրում են տրանսպորտային լրացուցիչ ծախսեր:

Շուկան կախված է պողպատի միջազգային գներից, և խաղացողների մեծամասնությունը զգայուն է արտադրանքի գների նկատմամբ, ինչը կարող է հանգեցնել դրանց դուրս գալուն շուկա՝ դրանով իսկ հաճախորդների բազան զիջելով ամենաուժեղ և խոշոր խաղացողներին:


Ընկերությունը ունի կայուն թվով հաստատված գործընկերներ և հաճախորդներ գների նկատմամբ զգայուն շուկայում:

3.4.4. Թողարկողի արտադրական գործընթացը

Արտադրական գործընթացը բաղկացած է երկու հիմնական փուլից՝ ձուլում և գլոցում:

Փուլ 1. Ձուլում: Ձուլման ընթացքում բովախառնուրդը (ջարդոն և ֆերոձուլվածքներ) բեռնվում են էլէկտրոաղեղնային վառարանի մեջ և տաքացվում են մինչև հալման ջերմաստիճանը: Հեղուկ մետաղը դատարկվում է հատուկ շերեփի մեջ և շերեփ-վառարանում ավելացվում են ֆեռոձուլվածքներ, հավելանյութեր, հանվում է խարամը՝ ստանալով անհրաժեշտ քիմիական բաղադրությամբ համաձուլվածք:

Ստացված հեղուկ մետաղը տեղափոխվում է անընդհատ ձուլման հոսքագիծ, որտեղ ստացվում է նախապատրաստվածքը: Նախապատրաստվածքը սառեցվում է և կտրատվում է:



Փուլ 2. Գլոցում: Նախապատրաստվածքը տաքացվում է մինչև 1,200 աստիճան, որից հետո շիկագլոցման միջոցով ստացվում է համապատասխան արտադրանքը (ամրան և մանրեցման գնդեր):

Պատրաստի արտադրանքը մակնշվում է, փաթեթավորվում և հանձնվում պատրաստի արտադրանքի պահեստ:

Պատրաստի արտադրանք.

Ամրան 10 - 32 մմ A500C (2013 թվականից):

Մանրեցման գնդեր 40 մմ, 60 մմ, 65 մմ, 80 մմ, 100 մմ, 120 մմ (2014 թվականից)

3.4.5. Հիմնական շուկաները

Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է ներքին շուկայում:

Ընկերության կողմից թողարկվող արտադրանքի տեսակներն են՝ ամրան և պողպատյա գնդեր:

Ներկա պահին ՀՀ-ում Ընկերությունը ծանր արդյունաբերության խոշորագույն կազմակերպություն է, որ ՀՀ-ում մետաղի ջարդոնից ձուլում և շուկայի պահանջներին համապատասխան ստանում և իրացնում է բարձրորակ ամրան և պողպատյա գունդ:

3.5. Թողարկողի կառուցվածքը

3.5.1. Խմբի կառուցվածքը

Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում ծանր արդյունաբերության խոշորագույն կազմակերպություն է:

Ընկերությունը անդամակցում է «Հայաստանի Հանքագործների և մետալուրգների միությանը»:

ՀՀ-ում և նրանից դուրս չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ: ՀՀ-ում Ընկերությունը ունի դուստր ընկերություն, որը այս պահին ակտիվ գործունեություն չի իրականացնում:

3.5.2. Վերահսկող բաժնետերեր

Թողարկողի խոշոր բաժնետերերն են՝

Բաժնետեր	Բաժնետոմսերի քանակը (հատ)	Բաժնեչափ (%)
MORACO HOLDING LIMITED	31,035,064	49.3502367
Միխաիլ Հարությունյան Գեորգիի	10,400,000	16.527917
Տիգրան Հարությունյան Միխաիլի	10,400,000	16.527917
Վահան Հարությունյան Միխաիլի	10,259,404	16.304479

MORACO HOLDING LIMITED ընկերության հասցեն՝ Arch Malkariou III. 284, FORTUNA COURT, Block B, 3rd floor, office 32, 3105 Limassol, Cyprus

Ընկերության հսկող անձ է համարվում՝

- **Միխայիլ Հարությունյանը՝ որպես «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»-ի խոշոր բաժնետեր և որպես Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերության բաժնետեր**

3.6. Թողարկողի հիմնական միջոցները

Հիմնական միջոցներն առ 31.12.23թ.	Զուտ հաշվեկշռային արժեքը (հազար ՀՀ դրամ)
Շենքեր	11,890,626
Մեքենաներ և սարքավորումներ	23,021,065
Տրանսպորտային միջոցներ	6,007,200
Անավարտ շինություններ	5,275,791
Այլ հիմնական միջոցներ	441,394
Ընդամենը	**46,636,077**

Ընկերության պլանավորվող հիմնական միջոցների ձեռք բերումն ու կառուցումն պայմանավորված են լինելու Ընկերությանն տվյալ պահին անհրաժեշտ արտադրական հզորությունները մեծացնելու համար՝ կապիտալ ներդրումներով:

3.7. Զարգացման վերջին միտումները

Վերջին հաշվետու ֆինանսական տարվա ավարտից մինչև Ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածում Ընկերության գործունեության/արտադրանքի ծավալների, ինքնարժեքի, վաճառքի գների/ վրա ազդող էական միտումներ տեղի չեն ունեցել, որոնք ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշում կայացնելիս:

3.8. Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքները չեն կարող երաշխավորել ապագա ցուցանիշների ստացումը/ձեռք բերումը: Թողարկողի կողմից արված շահույթի կանխատեսումը չպետք է դիտվի որպես ցուցումներ, հավաստիացում կամ համարվի հիմք նման հավաստիացման համար: Թողարկողը իր շահույթի կանխատեսումներ անելիս հիմնվել է մակրոտնտեսական կանխատեսումների վրա, որոնք ստացվել են հրապարակային և վիճակագրական տվյալների շտեմարաններից, ինչպես նաև կոնկրետ ոլորտին և շուկային վերաբերող տեղեկությունները ստացվել են ըստ Թողարկողի համոզմամբ հավաստի աղբյուրներից: Այդուհանդերձ, Թողարկողը չի ստուգել և ըստ այդմ չի երաշխավորում այդ տեղեկությունների ճշտությունը և արժանահավատությունը: Թողարկողը չի հավաստիացնում Ընկերության կողմից կանխատեսվող ֆինանսական արդյունքների ստացումը, քանի որ ծրագրված ֆինանսական արդյունքների ստացումը կախված է բազմաթիվ գործոններից, որոնք ամբողջությամբ վերահսկելի չեն Թողարկողի կողմից:

Թողարկողի կանխատեսումները հիմնված են այն ենթադրության վրա, որ Ընկերության ղեկավարության փորձի և արդյունավետության մակարդակը առնվազն կմնա անփոփոխ, իսկ Ընկերության գործունեության բնույթը, վաճառքի ամբողջականությունը կամ կառուցվածքը հետագայում էապես չի փոխվի:

Սույն Ազդագրում որոշ արտահայտություններ պատմական փաստերի ներկայացումներ չեն այլ՝ հետագա կանխատեսումների որակումներ: Այդ որակումները ներառում են այնպիսի արտահայտություններ ինչպիսիք են պլաններ, նպատակներ, թիրախ, ռազմավարություններ,

հետագա իրադարձություններ կամ ապագա կատարողականի վերաբերյալ ենթադրություններ, ընդունելով այն, որ դրանք պատմական փաստերը նկարագրող որակումներ չեն: «Հավատում», «ակնկալում», «կանխատեսում», «մտադրություն», «նախագիծ», «գնահատական», «ցանկություն», «կարող», «պետք» և նմանատիպ արտահայտություններն հետագա կանխատեսումների որակումներ են, բայց ներհատուկ ու բացառիկ չեն նման արտահայտությունների որակման համար: Իրենց բնույթով հետագա կանխատեսումների որակումները ներառում են բնորոշ ռիսկեր և անորոշություններ, ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ, և կա հավանականություն, որ այդ կանխատեսումները, ենթադրությունները, գնահատականները և այլ որակումները չեն իրականանա կամ ձեռք բերվի:

Հնարավոր ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ մի շարք գործոններ կարող են հանգեցնել այնպիսի իրավիճակի, որ փաստացի արդյունքները զգալիորեն տարբերվեն ծրագրված, նպատակադրված, թիրախավորված, ակնկալվող, կանխատեսվող ու մտադրված արդյունքներից: Նման գործոնները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալներով՝

- մետաղի, մետաղի ջարդոնի գների փոփոխություններ,
- գործառնական ծախսերի փոփոխություններ,
- իրացվելիություն, կապիտալ ռեսուրսներ և կապիտալ ծախսեր,
- Օրենքների, կանոնակարգերի և պետական քաղաքականության փոփոխություններ,
- մետաղի ջարդոնի արտահանման պետական տուրքի փոփոխություն (նվազում)
- գնաճ, տոկոսադրույք և փոխարժեքի տատանումներ,
- ՀՀ քաղաքական, սոցիալական, իրավական կամ տնտեսական պայմանների փոփոխություններ,
- միջազգային քաղաքական իրադարձություններ,
- Թողարկողի ֆինանսական պայմանագրերում առկա սահմանափակող ֆինանսական և այլ նախապայմաններ:

Հարկ է նշել որ կարևոր գործոնների այս ցանկը սպառիչ չէ: Հնարավոր ներդրողը որևէ հետագա կանխատեսումների որակումներ և հայտարարություններ կարդալիս պետք է ուշադիր քննի այն գործոնները և անորոշությունները, որոնց ներքո տրված են նման որակումները, հատկապես հաշվի առնելով քաղաքական, տնտեսական, սոցիալական և իրավական միջավայրը որում գործում է Թողարկողը:

Իրականացված կանխատեսումները հիմնված են բազային սցենարի հիման վրա, որը ենթադրում է հավանական քաղաքական և տնտեսական գործոնների չափավոր ազդեցությունը ընկերության եկամուտների վրա:

Հետագա կանխատեսումների նմանատիպ որակումները և հայտարարությունները կատարվում են և վերաբերում են հենց այդ որակումների և հայտարարությունների տրման պահին, այդ պահից հետո վերոնշյալ գործոնների փոփոխությունները կարող են հանգեցնել այդ որակումների անհամապատասխանության և հանգեցնել դրանց վերանայման:

Հետևաբար, Թողարկողը որևէ պարտավորություն չունի (եթե նման պահանջ չի պարտադրված օրենքով ու կանոնակարգով) վերանայելու որևէ որակում, անկախ այն բանից, թե արդյոք նոր տեղեկատվության, իրադարձությունների կամ հանգամանքներում նման վերանայման կարիք կա կամ չկա:


2019–2028թթ համար Թողարկողի կանխատեսումն իր եկամուտ/ծախսերի կառուցվածքի վերաբերյալ ներկայացված է ստորև՝

Նկարագրությունը	Միավոր	2024	2025	2026	2027	2028
Արտադրության ընդհանուր ծավալը	Տոննա/տարի	122,000	154,869	189,935	220,000	230,000
Ամրան	Տոննա/տարի	115,000	126,536	138,268	150,000	150,000
Պողպատե գնդեր	Տոննա/տարի	7,000	23,333	36,667	50,000	50,000
Մետաղական ամրան	Տոննա/տարի	-	5,000	15,000	20,000	30,000
Ընդհանուր եկամուտ	Միլիոն դրամ	35,489	47,226	59,592	76,838	81,537
Արտադրանքի ինքնարժեք	Միլիոն դրամ	(21,761)	(26,871)	(33,495)	(39,562)	(42,130)
Համախառն շահույթ	**Միլիոն դրամ**	13,728	20,355	26,097	37,276	39,406
Համախառն շահույթի մարժա	%	39%	43%	44%	49%	48%
Շահույթ մինչև հարկումը (EBIT)	Միլիոն դրամ	10,247	16,210	21,534	32,314	34,291
Շահույթ մինչև հարկումը մարժա	%	29%	34%	36%	42%	42%
EBITDA	Միլիոն դրամ	12,926	19,521	25,230	36,374	38,468
EBITDA մարժա	%	36%	41%	42%	47%	47%

Աղբյուրը՝ Թողարկողի ֆինանսական մոդել, 2024 – 2028թթ կանխատեսմամբ

3.9. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.9.1. Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը



Ընկերության կառավարման մարմիններն են Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետև Ժողով), Տնօրենների խորհուրդը (այսուհետև Խորհուրդ) Վերստուգող հանձնաժողովը, Ժողովի քարտուղարը, Տնօրենը, Ֆինանսական տնօրենը: Կառավարման մարմինների իրավասություններն ու պարտականությունները սահմանվում են Ընկերության Կանոնադրությամբ:

3.9.2. Կառավարման մարմինների իրավասությունները

3.9.2.1. Բաժնեփերերի ընդհանուր ժողով

Բաժնետերերի ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան ժողով: Կանոնադրության համաձայն տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար: Արտահերթ ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, ընկերության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ Ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ պահանջով:

3.9.2.2. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

1. Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
2. Ընկերության վերակազմակերպումը.
3. Ընկերության լուծարումը.
4. Ընկերության ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
5. Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և անդամների լիազորության վաղաժամկետ դադարեցումը.
6. Խորհրդի նախագահի կամ անդամի աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
7. Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը
8. Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերման, ինչպես նաև ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը
9. Հաստատել աշխատակցի բաժնետոմսերի տեղաբաշխումը, դրանց բաժնետոմսերի համար վճարելու պայմանները և սեփականատերերի իրավունքները
10. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը
11. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը
12. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը
13. Ընկերության բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով
14. Ժողովի վարման կարգը և Խորհրդի կանոնակարգը
15. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը
16. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով
17. Շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում
18. Ընկերության գույքի ձեռք բերման և օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում

19. Բաժնետոմսերի համախմբումը, բաժանումը

Ժողովն իրավունք ունի քննարկել և որոշում ընդունել նաև Օրենքով ու կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջը:

Վերը նշված որոշումների ընդունումը հանդիսանում է Ժողովի բացառիկ իրավասությունը և չի կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին և Խորհրդին:

Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք Օրենքով չեն սահմանվել որպես ժողովի իրավասություն: Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի վերը նշված 1,2,3,4,7,8 և 18 կետերով սահմանված հարցերի, որոնց մասին որոշումներն ընդունվում են ժողովի կողմից ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, սակայն 3-րդ և 8-րդ կետերով սահմանված հարցերի շուրջ նաև ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:

Վերը նշված 2,13,16,17,18,19 կետերով թվարկված հարցերով որոշումներն ընդունվում են բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից՝ միայն Խորհրդի ներկայացմամբ:

Ժողովն իրավունք չունի փոփոխել Ընդհանուր Ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

Արտահերթ ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող կամ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ պահանջով:

Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

Եթե Օրենքով և կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում տարեկան ժողով չի գումարվել, Ընկերության արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ Ժողովի իրավասությանը պատկանող հարցերը քննարկելու համար:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեն

- Ընկերության սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը, իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով
- Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը, իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով

- Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները
- Ընկերության աուդիտն իրականացնող անձը

Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող՝ Խորհրդի և Գործադիր մարմնի անդամները:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը ծանուցվում են Հայաստանի հանրապետություն օրաթերթում, www.azdarar.amկայքում կամ www.asce.am Ընկերության պաշտոնական կայքում հրապարակելու միջոցով:

Ընկերությունը պարտավոր է ժողովի գումարման մասին իր բաժնետերերին ծանուցել Օրենքին համապատասխան՝ առնվազն 21 օր առաջ:

3.9.2.3. Տնօրենների խորհուրդ

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Խորհուրդը: Խորհրդի անդամները ընտրվում են տարեկան ընդհանուր ժողովի կամ անդամների լիազորությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից:

Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, բայց չի կարող պակաս լինել 3 անդամից: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Ընկերության այն բաժնետերերը, որոնք Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին; Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին: Խորհրդի անդամ կարող է լինել բաժնետեր չհանդիսացող անձը: Յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

3.9.2.4. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը

1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը

2. Տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքով և կանոնադրությամբ նախատեսված դեպքերի

3. Ժողովի օրակարգի հաստատումը

4. Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ:

5. Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը:

6. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը

7. Գույքի շուկայական արժեքի որոշումը՝ Օրենքով սահմանված կարգով

8. Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում և հետգնումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում

9. Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրեն, վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները

10. Ընկերության վերստուգող հանձնաժողովի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը

11. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը:

12. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը

13. Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը:

14. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը

15. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը

16. Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը: Ընկերության դուստր կամ կախյալ ընկերություններում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

17. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը

18. Այլ կազմակերպություններին մասնակցության մսին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում

19. Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը կանոնադրությամբ նախատեսված դեպքերում

20. Շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում

21. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը

22. Ընկերության հաստիքացուցակի հաստատումը

23. Հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը և մասնակցությունը

24. Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ հարցերի լուծումը:

Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

3.9.2.5. Խորհրդի նախագահը՝

- Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները
- Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք
- Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը
- Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ կնքում է պայմանագիր
- Նախագահում է ժողովներում

Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կողմից , Խորհրդի անդամների կազմից , Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ ՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների 2/3-ով:

Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում Խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել:

Բացառությամբ սույն կետում նախատեսված դեպքերից, Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

3.9.2.6. Խորհրդի նիստերը

- Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության միանձնյա

գործադիր մարմնի, ինչպես նաև սույն կանոնադրությամբ սահմանված այլ անձանց պահանջով.

- Խորհրդի նիստերի քվորումը չի կարող խորհրդի անդամներ կեսից պակաս լինել.
- Խորհրդի որոշումները ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ , բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի.
- Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:
- Խորհրդի նախագահը ձայների հավասարության դեպքում ունի որոշիչ ձայնի իրավունք:
- Խորհրդի անդամների թիվը ժողովի որոշված քանակը կեսից նվազելու դեպքում, Ընկերությունը գումարում է արտահերթ ժողով՝ Խորհրդի որոշմամբ, Խորհրդի կազմը լրացնելու նպատակով:
- Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

3.9.2.7. Տնօրենը

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը, մանսավորապես՝

- Լուծում է Ընկերության ընթացիկ գործունեության վերաբերվող բոլոր հարցերը, բացի կանոնադրությամբ սահմանված Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից
- Կազմակերպում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և իրավունք չունի ինչպես Ժողովի, այնպես էլ Խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու
- Գործում է բարեխղճորեն և ողջամիտ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության:

Խորհրդի նախագահը Տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Խորհրդի նախագահի և Տնօրենի պաշտոնների համատեղման դեպքում, Տնօրենի հետ պայմանագիրը կնքում է Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամներից մեկը:

Տնօրենը կանոնադրությամբ և Խորհրդի նախագահի հետ կնքված պայմանագրով իրեն վերապահած լիազորությունների սահմաններում՝

- Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից
- Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում
- Գործում է առանց լիազորագրի
- Տալիս է լիազորագրեր

- Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային
- Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության հաստիքացուցակը, վարչակազմակերպական կառուցվածքը
- Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը
- Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին
- Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Խորհրդի անդամները, Ընկերության Տնօրենը և Օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար Օրենքով սահմանված կարգով:

3.9.2.8. Վերստուգող Հանձնաժողով

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ժողովն ընտրում է Ընկերության Վերստուգող հանձնաժողով:

Վերստուգող հանձնաժողովի իրավասությունները և ստուգումների իրականացման կարգը սահմանվում են Օրենսդրությամբ, Օրենքով և Կանոնադրությամբ:

- ✓ Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության Կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն Օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:
- ✓ Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ պահանջով:
- ✓ Վերստուգող հանձնաժողովը իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ Օրենքի պահանջներին համապատասխան:
- ✓ Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:
- ✓ Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են բացառապես տարեկան ժողովներում: Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցը

արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

- ✓ Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են ժողովի կողմից 3 տարի ժամկետով:
- ✓ Վերստուգող հանձնաժողովը հաշվետու է Ժողովին:
- ✓ Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և/կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:
- ✓ Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, բայց չի կարող պակաս լինել 3 հոգուց:
- ✓ Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- ✓ Վերստուգող հանձնաժողովն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ:
- ✓ Վերստուգող հանձնաժողովը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան Ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:
- ✓ Ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի իրավասություն կարող է դրվել վերստուգողի վրա:

3.9.2.9. Ժողովի քարտուղար

Ժողովի քարտուղարը ապահովում է Ժողովի նախապատրաստումն ու անցկացումը, Խորհրդի, Խորհրդի հանձնաժողովների աշխատանքը, իրականացնում է Ընկերության վերաբերյալ տեղեկությունների պահպանումը և բացահայտումը, կազմակերպում է Ընկերության և Բաժնետերերի, կառավարման այլ մարմինների և Ընկերության պաշտոնատար անձանց միջև օպերատիվ համագործակցություն, ինչպես նաև իրականացնում է այլ գործառույթներ քարտուղարի մասին կանոնակարգին համապատասխան:

Կառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների, կազմավորման և գործունեության իրականացման կարգի և այլ սկզբունքային հարցերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ Ընկերության կանոնադրության, ինչպես նաև Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կարգավորող ներքին կանոնակարգերից:

Ստորև ներկայացվում են կառավարման մարմինների անդամների վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, զբաղեցրած պաշտոնը,

իրավասություններն ու պարտականությունները, նրանցից յուրաքանչյուրի ծավալած գործունեությունը Ընկերությունում և դրանից դուրս և այլն:

3.9.3. Թողարկողի կառավարման մարմինների անդամները

Թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ	
Տնօրենների խորհուրդ	
Խորհրդի նախագահ՝ Միխաիլ Գեորգիի Հարությունյան	
Անուն, ազգանուն	Միխաիլ Գեորգիի Հարությունյան
Բնակության վայր	Ք. Երևան
Զբաղեցրած պաշտոնը	Ընկերության Տնօրենների Խորհրդի նախագահ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Ընկերության Տնօրենների Խորհրդի նախագահ՝ 27.10.2010թ մինչ օրս
Իրավասությունները և պարտականությունները	Խորհրդի նախագահը՝ • Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները • Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք • Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը • Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ կնքում է պայմանագիր • Նախագահում է ժողովներում Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կողմից , Խորհրդի անդամների կազմից , Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների 2/3-ով: Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում Խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել: Բացառությամբ սույն կետում նախատեսված դեպքերից, Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:
Ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս	Մետէքսիմ ՍՊԸ՝ հիմնադիրների խորհրդի նախագահ Միկմետալ ՓԲԸ՝ հիմնադիրների խորհրդի անդամ
Մասնագիտությունը	Ռադիոֆիզիկ
Նախորդ հինգ տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	Մետէքսիմ ՍՊԸ՝ հիմնադիրների խորհրդի նախագահ Միկմետալ ՓԲԸ՝ հիմնադիրների խորհրդի անդամ

Նախորդող 5 տարիների ընթացքում դատվածություն, սնանկության, լուծարման գործընթացների հետ առնչություն	Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի: Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող/վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել
Խորհրդի անդամ՝ Խաչատուր Արշակի Անտոնյան	
Անուն, ազգանուն	Խաչատուր Արշակի Անտոնյան
Բնակության վայր	Ք. Երևան
Զբաղեցրած պաշտոնը	Ընկերության Խորհրդի անդամ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Ընկերության խորհրդի անդամ՝07.10.2004թ –ից մինչ օրս
Իրավասությունները և պարտականությունները	Խորհրդի անդամ՝ Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո, սակայն Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Խորհրդի անդամների իրավասությունները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ: Խորհրդի անդամն իրավունք ունի՝ • Ընկերության պաշտոնատար անձանցից և աշխատակիցներից պահանջել Ընկերության գործունեությանը վերաբերվող ցանկացած տեղեկատվություն , փաստաթղթեր և նյութեր • Ծանոթանալ Խորհրդի և Ընկերության այլ կոլեգիալ մարմնի նիստերի արձանագրություններին և ստանալ դրանց պատճենները • Պահանջել Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի և ընդունված որոշումների վերաբերյալ իր հատուկ կարծիքը ներառումը Խորհրդի նիստի արձանագրության մեջ • Մասնակցել Ընկերության կոլեգիալ գործադիր մարմինների նիստերին Խորհրդի անդամը պարտավոր է ՝ • Գործել Խորհրդի նպատակներից և խնդիրներից բխող իր իրավունքների սահմաններում • Գործել խելամտորեն և բարեխղճորեն ՝ ելնել Ընկերության շահերից, այսինքն՝ ցուցաբերել հոգատարություն և

	շրջահայացություն , որոնք կարելի է սպասել լավագույն ղեկավարից, և իր պարտականությունների պատշաճ կատարման նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցները • Չհրապարակել Ընկերության գործունեության մասին իրեն հայտնի դարձած գաղտնի տեղեկությունները • Անհետաձգելի հարցերի լուծման համար նախաձեռնել Խորհրդի նիստի գումարում • Ներկա գտնվել Խորհրդի նիստերին • Մասնակցել Խորհրդի կողմից որոշումների ընդունմանը՝ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ քվեարկելու միջոցով • Ընդունել հիմնավորված որոշումներ, որի համար պարտավոր է ուսումնասիրել բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (նյութերը) , ընդունվող որոշմանն առնչվող տեղեկությունների քննություն անցկացնել և իրազեկել Խորհրդի մյուս անդամներին • Որոշումների ընդունման ժամանակ գնահատել ռիսկերը և բացասական հետևանքները • Ժամանակին հաղորդել Ընկերությանն իր հետ փոխկապված անձանց և նրանց կազմում տեղի ունեցած փոփոխությունների մասին • Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որտեղ նա ինքնուրույն կամ իր փոխկապակցված անձանց հետ համատեղ տիրապետում է քվեարկող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի 10 և ավելի տոկոսին • Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նա զբաղեցնում է պաշտոններ • Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն գործարքների մասին, որոնցում նա կարող է ճանաչվել որպես շահագրգիռ անձ • Ձեռնպահ մնալ այն որոշումներից ընդունման ժամանակ անցկացվող քվեարկություններից, որոնցում նա ունի անձնական շահագրգռվածություն • Գրավոր ծանուցել Խորհրդին Ընկերության արժեթղթերով (բաժնետոմսերով) գործարքներ կատարել իր մտադրությունների մասին, ինչպես նաև բացահայտել

	այդ արժեթղթերով կատարված գործարքների մասին տեղեկություններ • Մասնակցել Խորհրդի կողմից առաջարկվող ծրագրերի և նախագծերի փորձաքննության անցկացմանը • Խորհրդի հանձնարարությամբ պատրաստել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության բարելավման առաջարկներ • Խորհրդի անդամներին իրազեկել իրեն հայտնի դարձած Ընկերության աշխատակիցների, այդ թվում՝ պաշտոնատար անձանց կողմից օրենսդրության, Ընկերության կանոնադրության և ներքին այլ իրավական ակտերի պահանջների խախտումների փաստերի մասին • Պատրաստել իր իրավասության պատկանող հարցեր և ներկայացնել Խորհրդի քննարկմանը • Ձևավորել իր կարծիքը Ընկերության տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ • Ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել ժողովի մասնակիցների հարցերին
Ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս	-
Մասնագիտությունը	Ճարտարագետ
Նախորդ հինգ տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	-
Նախորդող 5 տարիների ընթացքում դատվածություն, սնանկության, լուծարման գործընթացների հետ առնչություն	Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի: Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող/վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել
Խորհրդի անդամ՝ Վազգեն Հովհաննեսի Նիկոլյան	
Անուն, ազգանուն	Վազգեն Հովհաննեսի Նիկոլյան
Բնակության վայր	Ք. Չարենցավան
Զբաղեցրած պաշտոնը	Ընկերության Խորհրդի անդամ Գլխավոր ճարտարագետ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Ընկերության խորհրդի անդամ՝ 01.08.2002թ –ից մինչ օրս Գլխավոր ճարտարագետ 01.08.2002թ-ից մինչ օրս

Իրավասությունները և պարտականությունները	Խորհրդի անդամ՝ Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո, սակայն Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Խորհրդի անդամների իրավասությունները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ: Խորհրդի անդամն իրավունք ունի՝ • Ընկերության պաշտոնատար անձանցից և աշխատակիցներից պահանջել Ընկերության գործունեությանը վերաբերվող ցանկացած տեղեկատվություն , փաստաթղթեր և նյութեր • Ծանոթանալ Խորհրդի և Ընկերության այլ կոլեգիալ մարմնի նիստերի արձանագրություններին և ստանալ դրանց պատճենները • Պահանջել Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի և ընդունված որոշումների վերաբերյալ իր հատուկ կարծիքը ներառումը Խորհրդի նիստի արձանագրության մեջ • Մասնակցել Ընկերության կոլեգիալ գործադիր մարմինների նիստերին Խորհրդի անդամը պարտավոր է ՝ • Գործել Խորհրդի նպատակներից և խնդիրներից բխող իր իրավունքների սահմաններում • Գործել խելամտորեն և բարեխղճորեն ՝ ելնել Ընկերության շահերից, այսինքն՝ ցուցաբերել հոգատարություն և շրջահայացություն , որոնք կարելի է սպասել լավագույն ղեկավարից, և իր պարտականությունների պատշաճ կատարման նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցները • Չհրապարակել Ընկերության գործունեության մասին իրեն հայտնի դարձած գաղտնի տեղեկությունները • Անհետաձգելի հարցերի լուծման համար նախաձեռնել Խորհրդի նիստի գումարում • Ներկա գտնվել Խորհրդի նիստերին • Մասնակցել Խորհրդի կողմից որոշումների ընդունմանը ՝ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ քվեարկելու միջոցով • Ընդունել հիմնավորված որոշումներ, որի համար պարտավոր է ուսումնասիրել բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (նյութերը) , ընդունվող որոշմանն

	առնչվող տեղեկությունների քննություն անցկացնել և իրազեկել Խորհրդի մյուս անդամներին • Որոշումների ընդունման ժամանակ գնահատել ռիսկերը և բացասական հետևանքները • Ժամանակին հաղորդել Ընկերությանն իր հետ փոխկապված անձանց և նրանց կազմում տեղի ունեցած փոփոխությունների մասին • Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որտեղ նա ինքնուրույն կամ իր փոխկապակցված անձանց հետ համատեղ տիրապետում է քվեարկող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի 10 և ավելի տոկոսին • Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նա զբաղեցնում է պաշտոններ • Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն գործարքների մասին, որոնցում նա կարող է ճանաչվել որպես շահագրգիռ անձ • Ձեռնպահ մնալ այն որոշումներից ընդունման ժամանակ անցկացվող քվեարկություններից, որոնցում նա ունի անձնական շահագրգռվածություն • Գրավոր ծանուցել Խորհրդին Ընկերության արժեթղթերով (բաժնետոմսերով) գործարքներ կատարել իր մտադրությունների մասին, ինչպես նաև բացահայտել այդ արժեթղթերով կատարված գործարքների մասին տեղեկություններ • Մասնակցել Խորհրդի կողմից առաջարկվող ծրագրերի և նախագծերի փորձաքննության անցկացմանը • Խորհրդի հանձնարարությամբ պատրաստել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության բարելավման առաջարկներ • Խորհրդի անդամներին իրազեկել իրեն հայտնի դարձած Ընկերության աշխատակիցների, այդ թվում՝ պաշտոնատար անձանց կողմից օրենսդրության, Ընկերության կանոնադրության և ներքին այլ իրավական ակտերի պահանջների խախտումների փաստերի մասին • Պատրաստել իր իրավասության պատկանող հարցեր և ներկայացնել Խորհրդի քննարկմանը

	• Ձևավորել իր կարծիքը Ընկերության տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ • Ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել ժողովի մասնակիցների հարցերին
Ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս	-
Մասնագիտությունը	Ճարտարագետ
Նախորդ հինգ տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	-
Նախորդող 5 տարիների ընթացքում դատվածություն, սնանկության, լուծարման գործընթացների հետ առնչություն	Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի: Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող/վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել
Խորհրդի անդամ՝ Դավիթ Օլեգի Յավրույան	
Անուն, ազգանուն	Դավիթ Օլեգի Յավրույան
Բնակության վայր	Ք. Երևան
Զբաղեցրած պաշտոնը	Ընկերության Խորհրդի անկախ անդամ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Ընկերության խորհրդի անկախ անդամ՝ 21.07.2019թ –ից մինչ օրս
Իրավասությունները և պարտականությունները	Խորհրդի անկախ անդամ՝ Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո, սակայն Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Խորհրդի անդամների իրավասությունները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ: Խորհրդի անդամն իրավունք ունի՝ • Ընկերության պաշտոնատար անձանցից և աշխատակիցներից պահանջել Ընկերության գործունեությանը վերաբերվող ցանկացած տեղեկատվություն , փաստաթղթեր և նյութեր

	• Ծանոթանալ Խորհրդի և Ընկերության այլ կոլեգիալ մարմնի նիստերի արձանագրություններին և ստանալ դրանց պատճենները • Պահանջել Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի և ընդունված որոշումների վերաբերյալ իր հատուկ կարծիքը ներառումը Խորհրդի նիստի արձանագրության մեջ • Մասնակցել Ընկերության կոլեգիալ գործադիր մարմինների նիստերին Խորհրդի անդամը պարտավոր է՝ • Գործել Խորհրդի նպատակներից և խնդիրներից բխող իր իրավունքների սահմաններում • Գործել խելամտորեն և բարեխղճորեն՝ ելնել Ընկերության շահերից, այսինքն՝ ցուցաբերել հոգատարություն և շրջահայացություն , որոնք կարելի է սպասել լավագույն ղեկավարից, և իր պարտականությունների պատշաճ կատարման նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցները • Չհրապարակել Ընկերության գործունեության մասին իրեն հայտնի դարձած գաղտնի տեղեկությունները • Անհետաձգելի հարցերի լուծման համար նախաձեռնել Խորհրդի նիստի գումարում • Ներկա գտնվել Խորհրդի նիստերին • Մասնակցել Խորհրդի կողմից որոշումների ընդունմանը՝ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ քվեարկելու միջոցով • Ընդունել հիմնավորված որոշումներ, որի համար պարտավոր է ուսումնասիրել բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (նյութերը) , ընդունվող որոշմանն առնչվող տեղեկությունների քննություն անցկացնել և իրազեկել Խորհրդի մյուս անդամներին • Որոշումների ընդունման ժամանակ գնահատել ռիսկերը և բացասական հետևանքները • Ժամանակին հաղորդել Ընկերությանն իր հետ փոխկապված անձանց և նրանց կազմում տեղի ունեցած փոփոխությունների մասին • Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որտեղ նա ինքնուրույն կամ իր փոխկապակցված անձանց հետ համատեղ տիրապետում է քվեարկող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի 10 և ավելի տոկոսին

	• Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նա զբաղեցնում է պաշտոններ • Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն գործարքների մասին, որոնցում նա կարող է ճանաչվել որպես շահագրգիռ անձ • Ձեռնպահ մնալ այն որոշումներից ընդունման ժամանակ անցկացվող քվեարկություններից, որոնցում նա ունի անձնական շահագրգռվածություն • Գրավոր ծանուցել Խորհրդին Ընկերության արժեթղթերով (բաժնետոմսերով) գործարքներ կատարել իր մտադրությունների մասին, ինչպես նաև բացահայտել այդ արժեթղթերով կատարված գործարքների մասին տեղեկություններ • Մասնակցել Խորհրդի կողմից առաջարկվող ծրագրերի և նախագծերի փորձաքննության անցկացմանը • Խորհրդի հանձնարարությամբ պատրաստել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության բարելավման առաջարկներ • Խորհրդի անդամներին իրազեկել իրեն հայտնի դարձած Ընկերության աշխատակիցների, այդ թվում՝ պաշտոնատար անձանց կողմից օրենսդրության, Ընկերության կանոնադրության և ներքին այլ իրավական ակտերի պահանջների խախտումների փաստերի մասին • Պատրաստել իր իրավասության պատկանող հարցեր և ներկայացնել Խորհրդի քննարկմանը • Ձևավորել իր կարծիքը Ընկերության տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ • Ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել ժողովի մասնակիցների հարցերին
Ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս	Եմեկսավտո ՍՊԸ՝ Տնօրեն 2019թ օգոստոս-ից մինչ օրս
Մասնագիտությունը	Ինժեներ-տնտեսագետ
Նախորդ հինգ տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	ՌԴ Մոսկվա Տոդոկառ ՍՊԸ՝ Գլխավոր տնօրեն 2015թհունվար - 2019թ մայիս
Նախորդող 5 տարիների ընթացքում դատվածություն, սնանկության, լուծարման գործընթացների հետ առնչություն	Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի:

	Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող/վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել
Տնօրեն՝ Հրաչյա Արամի Մուրադյան	
Անուն, ազգանուն	Հրաչյա Արամի Մուրադյան
Բնակության վայր	Ք. Երևան
Զբաղեցրած պաշտոնը	Ընկերության տնօրեն
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Ընկերության տնօրեն՝ 02.2023թ –ից մինչ օրս
Իրավասությունները և պարտականությունները	Տնօրեն՝ • Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից • Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում • Գործում է առանց լիազորագրի • Տալիս է լիազորագրեր • Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային • Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ • Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության հաստիքացուցակը, վարչակազմակերպական կառուցվածքը • Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը • Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին • Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
Ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս	-
Մասնագիտությունը	Տնտեսագետ
Նախորդ հինգ տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	ՀՀ պետական եկամուտների կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն «Գալաքսի կոնցեռն» «Թաքս Սոլուշնս ԼԱԲ» ՍՊԸ
Նախորդող 5 տարիների ընթացքում դատվածություն, սնանկության,	Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի:

լուծարման գործընթացների հետ առնչություն	Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող/վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել
Ֆինանսական տնօրեն՝ Կարինե Վիկտորի Մամիկոնյան	
Անուն, ազգանուն	Կարինե Վիկտորի Մամիկոնյան
Բնակության վայր	Ք. Չարենցավան
Զբաղեցրած պաշտոնը	Ֆինանսական տնօրեն
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Ընկերության գլխավոր հաշվապահ՝ 04.09.2000թ –ից մինչ օրս
Իրավասությունները և պարտականությունները	Գլխավոր հաշվապահը գտնվում է Ընկերության տնօրենի ենթակայության տակ և պատասխանատու է ՝ • Ընկերությունում հաշվապահական հաշվառում պատշաճ վարելու համար • Ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար • ՀՀ օրենսդրական դաշտին համապատասխան հաշվապահական փաստաթղթերի ձևակերպման համար • Ապահովում է կազմակերպության ակտիվների և պարտավորությունների վերահսկողությունը
Ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս	« Դիզակ »ՍՊԸ գրավատուն հաշվապահ
Մասնագիտությունը	Հաշվապահ աուդիտ
Նախորդ հինգ տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	01.09.2010 թ-ից մինչ այսօր « Դիզակ »ՍՊԸ գրավատուն
Նախորդող 5 տարիների ընթացքում դատվածություն, սնանկության, լուծարման գործընթացների հետ առնչություն	Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի: Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող/վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել
Վերստուգող հանձնաժողով	
Վերստուգող հանձնաժողովի նախագահ՝ Վոլոդյա Ցոլակի Ադամյան	

Անուն, ազգանուն	Վոլոդյա Ցոլակի Ադամյան
Բնակության վայր	Ք. Չարենցավան
Զբաղեցրած պաշտոնը	Վերստուգող հանձնաժողովի նախագահ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Վերստուգող հանձնաժողովի նախագահ 27.10.2010թ-ից մինչ օրս
Իրավասությունները և պարտականությունները	Վերստուգող հանձնաժողովի նախագահ Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության Կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն Օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը: Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ պահանջով: Վերստուգող հանձնաժողովը իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ Օրենքի պահանջներին համապատասխան: Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները: Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են բացառապես տարեկան ժողովներում: Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցը արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին: Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են ժողովի կողմից 3 տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովը հաշվետու է Ժողովին: Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և/կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ: Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, Բայց չի կարող պակաս լինել 3 հոգուց:

	Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Վերստուգող հանձնաժողովն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ: Վերստուգող հանձնաժողովը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան Ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:
Ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս	-
Մասնագիտությունը	-
Նախորդ հինգ տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	-
Նախորդող 5 տարիների ընթացքում դատվածություն, սնանկության, լուծարման գործընթացների հետ առնչություն	Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի: Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող/վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել
Վերստուգող հանձնաժողովի անդամ՝ Սերժիկ Վալոդի Մելիքյան	
Անուն, ազգանուն	Սերժիկ Վալոդի Մելիքյան
Բնակության վայր	Ք. Չարենցավան
Զբաղեցրած պաշտոնը	Վերստուգող հանձնաժողովի անդամ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Վերստուգող հանձնաժողովի անդամ 30.06.2007թ-ից մինչ օրս
Իրավասությունները և պարտականությունները	Վերստուգող հանձնաժողովի անդամ Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության Կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն Օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը: Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական

	նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ պահանջով: Վերստուգող հանձնաժողովը իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ Օրենքի պահանջներին համապատասխան: Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները: Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են բացառապես տարեկան ժողովներում: Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցը արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին: Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են ժողովի կողմից 3 տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովը հաշվետու է Ժողովին: Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և/կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ: Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, Բայց չի կարող պակաս լինել 3 հոգուց: Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Վերստուգող հանձնաժողովն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ: Վերստուգող հանձնաժողովը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան Ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:
Ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս	-
Մասնագիտությունը	Ճարտարագետ
Նախորդ հինգ տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	-

Նախորդող 5 տարիների ընթացքում դատվածություն, սնանկության, լուծարման գործընթացների հետ առնչություն	Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի: Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող/վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել
Վերստուգող հանձնաժողովի անդամ, ժողովի քարտուղար՝ Նազիկ Սարգսի Ավագյան	
Անուն, ազգանուն	Նազիկ Սարգսի Ավագյան
Բնակության վայր	Ք. Չարենցավան
Զբաղեցրած պաշտոնը	Վերստուգող հանձնաժողովի անդամ Ժողովի քարտուղար Գլխավոր մետալուրգ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Վերստուգող հանձնաժողովի անդամ 25.09.2002թ-ից մինչ օրս Ժողովի քարտուղար 31.07.1995թ-ից մինչ օրս
Իրավասությունները և պարտականությունները	Վերստուգող հանձնաժողովի անդամ Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության Կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն Օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը: Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ պահանջով: Վերստուգող հանձնաժողովը իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ Օրենքի պահանջներին համապատասխան: Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները: Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են բացառապես տարեկան ժողովներում: Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցը արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ նրա

	առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին: Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են ժողովի կողմից 3 տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովը հաշվետու է Ժողովին: Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և/կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ: Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, Բայց չի կարող պակաս լինել 3 հոգուց: Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Վերստուգող հանձնաժողովն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ: Վերստուգող հանձնաժողովը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան Ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է: **Ժողովի քարտուղար** Ժողովի քարտուղարը ապահովում է Ժողովի նախապատրաստումն ու անցկացումը, Խորհրդի, Խորհրդի հանձնաժողովների աշխատանքը, իրականացնում է Ընկերության վերաբերյալ տեղեկությունների պահպանումը և բացահայտումը, կազմակերպում է Ընկերության և Բաժնետերերի, կառավարման այլ մարմինների և Ընկերության պաշտոնատար անձանց միջև օպերատիվ համագործակցություն, ինչպես նաև իրականացնում է այլ գործառույթներ քարտուղարի մասին կանոնակարգին համապատասխան:
Ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս	-
Մասնագիտությունը	Ճարտարագետ
Նախորդ հինգ տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	Ձուլակենտրոն ԲԲԸ՝ որպես գլխավոր մետալուրգի տեղակալ
Նախորդող 5 տարիների ընթացքում դատվածություն, սնանկության, լուծարման գործընթացների հետ առնչություն	Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի:

	Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող/վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել

Կառավարման անդամների միջև ազգակցական կապը բացակայում է:

Ընկերության կառավարման մարմինների անդամների միջև գործնական և անձնական շահերի բախում չկա:

Ընկերությունը խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ չունի կառավարման մարմնի անդամ նշանակելու մասին որևէ պայմանավորվածություն, բացառություն:

3.9.4. Շահերի բախումը

Թողարկողի և Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախում առկա չէ:

3.9.5. Վարձատրությունները և պարգևավճարները

Ընկերության կառավարման մարմինների անդամները, բացառության տնօրենի, ֆինանսական տնօրենի և գլխավոր ճարտարագետի, Ընկերության կառավարման մարմիններում իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով՝ առանց վարձատրության: Միաժամանակ, Ընկերության կառավարման մարմինների անդամները 31.12.2023թ. դրությամբ չեն վճարվել պարգևավճարներ և նրանց օգտին չեն կատարվել փոխհատուցումներ:

2023թ. ընթացքում Ընկերության տնօրենը, ֆինանսական տնօրենը և գլխավոր ճարտարագետն Ընկերությունից ստացել են՝

Հազ. դրամ	Աշխատավարձ	Կուտակային կենսաթոշակային վճար
Տնօրեն	40,626	963
Ֆինանսական տնօրեն	27,413	1,062
Գլխավոր ճարտարագետ	10,949	

3.10. Կառավարման մարմինների գործունեությունը

4. Լրավճարների կամ պարգևավճարների վճարման մասին պայմանագրեր Թողարկողի և կառավարման մարմինների միջև առկա չէ:
5. Հաշվի առնելով, որ Ընկերությունը հիմնադրվել է ՀՀ-ում, իսկ ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքները հիմնականում սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով, ուստի Ընկերության կառավարման համակարգը կառուցված է օրենսդրության պահանջների շրջանակում և բավարարում է ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին (կանոնագրքին):
6. Ավելին, Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կարգավորվում է Ընկերության կողմից հաստատված առանձին կանոնակարգերով, որի մշակման հիմքում հաշվի են առնվել ոչ միայն ՀՀ-ում կորպորատիվ կառավարման սկզբունքները, այլ նաև զարգացած արժեթղթերի շուկա ունեցող երկրներում ձևավորված կորպորատիվ կառավարման սկզբունքները և էներգետիկ ոլորտում գործող օտարերկրյա հայտնի ընկերությունների փորձը:

3.11. Աշխատակիցները

Աղյուսակում ներկայացվում է տեղեկատվություն պատմական ֆինանսական ժամանակաշրջանում ընդգրկված յուրաքանչյուր ֆինանսական տարվա կտրվածքով Ընկերության աշխատակիցների միջին տարեկան թվաքանակի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացված է դրանց գործառութային դասակարգումը:

2023թ–ի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների թվաքանակը կազմել է 699 մարդ,:

Ներկայումս Ընկերությունը չունի ծրագրեր՝ կապված աշխատակիցներին Ընկերության կապիտալում մասնակցության հնարավորություն ընձեռնելու հետ. Ընկերության աշխատակիցները ցանկության դեպքում կարող են ձեռք բերել Ընկերության բաժնետոմսերը ֆոնդային բորսայից կամ մասնակցել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը՝ ընդհանուր պայմաններով:

Ընկերության աշխատակիցները			
Ցուցանիշներ	2021	2022	2023
Աշխատակիցների միջին թվաքանակը	457	590	667
Վարչական աշխատակիցներ	67	77	107
Արտադրական սպասարկման ոլորտի աշխատակիցներ	390	513	560

3.12. Հսկող անձինք

Թողարկողի խոշոր բաժնետերերն են՝

Բաժնետեր	Բաժնետոմսերի քանակը (հատ)	Բաժնեչափ (%)
MORACO HOLDING LIMITED	31,035,064	49.3502367
Միխաիլ Հարությունյան Գեորգիի	10,400,000	16.527917
Տիգրան Հարությունյան Միխաիլի	10,400,000	16.527917
Վահան Հարությունյան Միխաիլի	10,259,404	16.304479

MORACO HOLDING LIMITED ընկերության հասցեն՝ Arch Malkariou III. 284, FORTUNA COURT, Block B, 3rd floor, office 32, 3105 Limassol, Cyprus

Ընկերության հսկող անձ է համարվում՝

- **Միխայիլ Գեորգիի Հարությունյանը՝ որպես «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»-ի խոշոր բաժնետեր և որպես Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերության բաժնետեր:**

3.13. Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.13.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2019, 2018 և 2017 թթ. աուդիտորական եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հավելված 6-ում:

3.13.2. Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Ազդագրում ներառված վերջին (ամենաթարմ) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

3.13.3. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ընկերության նկատմամբ նախորդող 12 ամիսների ընթացքում դատական, ինչպես նաև պետական մարմինների կողմից պատասխանատվության միջոցներ /վարչական, քաղաքացիաիրավական/ չեն կիրառվել: Ընկերության դեմ սնանկության/անվճարունակության/ կամ լուծարային վարույթի նախաձեռնություններ չեն կիրառվել:

3.13.4. Հարկային արտոնությունները

Ընկերությունը ներկա պահին աշխատում է հարկման ընդհանուր դաշտում և օգտվում է ՀՀ հարկային օրենսգրքի 127-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 05.10.2017թ. N1235-Ն և ՀՀ կառավարության 15.04.2022թ. N498-Ա որոշումներով սահմանված շահութահարկի նվազեցման արտոնությունից:

3.14. Լրացուցիչ տեղեկատվություն

3.14.1. Կանոնադրական կապիտալը

3.14.1.1. Կանոնադրական կապիտալի մեծությունը

Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2023թ. դրությամբ կազմել է 9,753,195 հազ. դրամ: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 62,923,840 սովորական բաժնետոմսից՝ 155 դրամ անվանական արժեքով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 62,923,840 բաժնետոմսից՝ 150 դրամ անվանական արժեքով):

Տվյալ բաժնետոմսերը թողարկվել են ՀՀ Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքին համաձայն, ոչ փաստաթղթային են և բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը իրականացվում է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ի կողմից՝ Արդշինբանկ ՓԲԸ-ի միջնորդությամբ: Ընկերության արժեթղթերը 30.04.2020թ. թույլատրված են առևտրին «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կանոններին համապատասխան բաժնետոմսերի ազատ (C) շուկայում (ISIN: AMASGRS10ER6).

3.14.1.2. Թողարկված բաժնետոմսերի քանակը

Թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի քանակն է՝ 62,923,840 (վաթսուներկու միլիոն ինն հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ:

Թողարկման արժույթը ՀՀ դրամ է:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի առավելագույն ծավալը կազմում ՝ 8,506,324,480 ՀՀ դրամ՝ 160 ՀՀ դրամ անվանական արժեքով 53,164,528 հատ սովորական անվանական բաժնետոմս:

3.14.1.3. Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը

Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 160 (մեկ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

3.14.2. Կանոնադրությունը

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեության (այդ թվում առևտրային) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացում:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են

- Թուջե, պողպատե և գունավոր մետաղների ձուլում,
- Սև և գունավոր մետաղների, նրանց առաջնային արտադրանքի արտադրություն
- Մետաղե ջարդոնի առք ու վաճառք
- Մեքենաների, մետաղահատ հաստոցների, սարքավորումների և օժանդակ նյութերի մեծածախ առևտուր
- Ձուլման սարքավորումների և հալման ինդուկտիվ վառարանների արտադրություն և մեծածախ առևտուր
- Կենցաղային ապրանքների և պլաստմասսայե իրերի արտադրություն մեծածախ առևտուր
- Առևտրամիջնորդային գործունեություն (ոչ բորսայական)

Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից, այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վար, ապա ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

Ընկերությունը իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որոնք նրան անհրաժեշտ են օրենքով չարգելված ցանկացած գործունեություն իրականացնելու համար: Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանված է ՀՀ Օրենսդրությամբ (այսուհետ ՝ Օրենսդրություն) Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

Ընկերությունը իրավաբանական անձ է, և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն իրավունք ունի՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

Ընկերությունը իրավունք ունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով և իրականացնել դրանց ազատ վաճառքը Օրենքի և այլ իրավական ակտերին համապատասխան:

3.15. Էական պայմանագրերը

Ընկերության կողմից Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին երկու տարվա ընթացքում՝ բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5% առկա չեն:

3.16. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցրած տեղեկատվությունը

Ազդագրում չի օգտագործվել գնահատողի, փորձագետի կամ այլ ցանկացած խորհրդատուի մասնագիտական կարծիք/եզրակացություն, հաշվետվություն, գնահատման ակտ և այլն:

3.17. Այլ տեղեկատվություն

Սույն ազդագրի կիրառման ողջ ընթացքում շահագրգիռ անձինք Ընկերության կանոնադրությանը, Ընկերության ներքին իրավական ակտերին, ինչպես նաև Ընկերության պատվերով պատրաստված փորձագիտական եզրակացություններին կամ հաշվետվություններին, անկախ գնահատումներին և վերլուծական նյութերին առկայության դեպքում կարող են ծանոթանալ Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքից ՝www.asce.am, իսկ թղթային ձևով կարող են ձեռք բերել՝ այցելելով Ընկերության գրասենյակ:

3.18. Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

3.19. Թողարկողի վարկանիշը

S&P Global Ratings-ը Ընկերությանը տրամադրել է **'B-' Կայուն** վարկանիշ՝ (https://disclosure.spglobal.com/ratings/en/regulatory/article/-/view/sourceId/12370750):

4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ Ընկերության թողարկած դոլարային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

(իրավաբանական անձանց համար)

Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը _____
(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետռեգիստրի գրանցման տվյալները _____
(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____ **( )**
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____ **( )**
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը _____

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը	
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Սույն հայտ-հանձնարարականով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ծրագրային Ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ինչպես նաև սույն հայտ-հանձնարարականին կից ներկայացված Տեղեկատվական Թերթիկին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել "ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և "ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ "ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած պարտատոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Թողարկողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ	
Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ	**քանակը թվերով (տառերով)**
Ստորագրություն	
Անուն Ազգանուն	(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները թողարկման նպատակով բացված բանկային հաշվեհամարին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև

(իրավաբանական անձանց համար)

Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____

(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը _____

(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետռեգիստրի գրանցման տվյալները _____

(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____

(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____

(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____ **( )**

քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____

գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____ **( )**

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ծրագրային Ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ինչպես նաև

սույն հայտ-հանձնարարականին կից ներկայացված Տեղեկատվական Թերթիկին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած պարտատոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Թողարկողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

քանակը թվերով (տառերով)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները թողարկման նպատակով բացված բանկային հաշվեհամարին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԾԱՆՈՒՑՈՒՄ: *Սույն Տեղեկատվական Թերթիկը հանդիսանում է հայտ-հանձնարարականի անբաժանելի մասը: Ներդրողները պարտավոր են ծանոթանալ և ստորագրել (կնքել համապատասխանաբար) Տեղեկատվական Թերթիկը: Առանց ստորագրված և համապատասխան կերպով կնքված Տեղեկատվական Թերթիկի ներկայացված հայտ-հանձնարարականը համարվում է **անվավեր**: Տեղեկատվական Թերթիկում զետեղված տեղեկատվության վերաբերյալ առավել մանրամասն կարելի է ծանոթանալ Թողարկողի պարտատոմսերի Ազդագրում:*

1 Տեղեկատվություն Թողարկողի (Տեղաբաշխողի) և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին

Թողարկողն ինքն է կազմակերպելու պարտատոմսերի տեղաբաշխումը:

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկող, Տեղաբաշխող) հետ կապի տվյալներն են.

- հասցե՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2),
- Հեռ. (+374) 22 646427
- Էլ.-փոստ՝ asce@asce.am

Ցանկացած անձ Թողարկողի հետ կարող է կապ հաստատել, ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն վերոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով, ցանկացած բանկային աշխատանքային օրվա ընթացքում Երևանի ժամանակով ժամը 09:30-ից մինչև 16:30-ը: Թողարկողի հետ հաղորդակցությունը կարելի է իրականացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ներդրողները, ովքեր ցանկություն կունենան ձեռք բերելու Թողարկողի կողմից տեղաբաշխվող պարտատոմսերը, պետք է հայտ-հանձնարարականը լրացնելով այն պատշաճ կերպով առաքեն Թողարկողին:

Հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Թողարկողին, եթե այն առաքվել է միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Թողարկողի գրասենյակ այցելելով) և հասցեատիրոջ կողմից ստացվել է առաքման ստացման հաստատում:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Թողարկողին առաքումից հետո, սակայն ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով բացված Թողարկողի կողմից բացված բանկային հաշվեհամարին ին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց՝ վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Թողարկողին հայտ-հանձնարարականի ներկայացման միջոցներն են՝

- հասցե՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2),
- Հեռ. (+374) 22 646427
- Էլ.-փոստ՝ asce@asce.am
- *այցելելով «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ և համապատասխան աշխատակիցների միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը*

2 Տեղեկատվություն պարտատոմսերի և դրանց հետ առնչվող ռիսկերի մասին

Մասնավոր ընկերությունների (կորպորատիվ) պարտատոմսերում ներդրումները սովորաբար կապված են որոշակի ռիսկերի հետ: Այդ ռիսկերի հնարավորինս բացահայտումը, վերլուծությունը, ի հայտ գալու հավանականության և ներդրողի ֆինանսական վիճակի վրա ազդեցության չափի գնահատումը թույլ կտա ներդրողին կատարել արդյունավետ ներդրումային որոշումներ՝ հիմնվելով յուրաքանչյուր ներդրողի համար յուրահատուկ ներդրման ռիսկ-եկամտաբերություն համակցության վրա:

Հետևաբար, ցանկացած պարագայում, ներդրողներին խորհուրդ է տրվում մինչև ներդրումային որոշում կայացնելը հանգամանորեն վերլուծել Թողարկողի պարտատոմսերի ներդրման հետ կապված ռիսկերը, ի լրումն

ազդագրում ներկայացված տեղեկատվության: Թողարկողի պարտատոմսերում ներդրումների հետ կապված որպես էական ռիսկեր դիտարկվում են հետևյալ ռիսկերը, որոնք բաժանվում են երկու մեծ խմբի՝ Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկեր և Թողարկողի պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկեր:

2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Շուկայական ռիսկ: Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա զգալիորեն ազդում են միջազգային շուկայական գների տատանումները: Պատմականորեն այս գներն ունեցել են տատանման լայն տիրույթ, որը պայմանավորված է Ընկերության վերահսկողությունից դուրս բազմաթիվ գործոններով: Բացի այդ Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փափոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Պարտքային ռիսկ: Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում , երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունն առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

Արտարժութային ռիսկ: Այս ռիսկի ազդեցությունը մեծանում է միայն օտարերկրյա ընկերություններից սարքավորումների և հումքի ձեռք բերման շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման և Ընկերության կողմից ստացված արժութըային վարկերի մարման և սպասարկման ժամանակահատվածում կատարվող վճարումներով, որոնք արտահայտված են արտարժույթով: Ընկերության արտադրանքի ինքնարժեքում արտարժույթով արտահայտված հումքի տեսակարար կշիռը կազմում է մոտ 20-25%. Բացի այդ, Ընկերության ցուցանիշների վրա զգալի ազդեցություն է ունենում դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ, որի արդյունքում Ընկերության ապրանքը, որի գինը կապված են արտարժույթով ներկայացված հենանիշերի (benchmark) հետ, վաճառվում են ավելի էժան՝ ՀՀ դրամով: Նշված վերջին ռիսկը շատ բացահայտ է եղել վերջին տարիներին, մասնավորապես՝ ՀՀ դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ հանգեցնում է ներմուծվող նման արտադրանքի ավելի բարենպաստ գներին, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում Ընկերության արտադրանքի գների վրա: : Նման ռիսկի երկարաժամկետ ազդեցությունը կարող է Ընկերության արտադրանքը դարձնել գնային առումով ոչ մրցունակ և դրդել գների նվազեցման: Սա էլ իր հերթին կարող է այլ ֆինանսական ռիսկերի հանգեցնել:

Ներդրումային կապիտալի մատչելիության ռիսկ: Ընկերությունը գործում է ծանր արդյունաբերության ոլորտում, որը կապիտալ ներդրումների առումով տնտեսության ամենաինտենսիվ ճյուղերից մեկն է և պահանջում է շարունակական խոշոր ներդրումներ:

Շինարարության ոլորտ: Ընկերության արտադրանքը հիմնականում սպառվում է շինարարության ոլորտում, այդ պատճառով Ընկերության վաճառքի ցուցանիշները կախված են շինարարության ոլորտի ակտիվությունից: Ուստի՝ Ընկերության գործունեության վրա ազդեցություն ունեն նաև շինարարության ոլորտում տեղի ունեցող խոշոր իրադարձությունները:

Էներգակիրների գներ: Ընկերության գործունեության համար պահանջվում է էլեկտրաէներգիայի, գազի և այլ ռեսուրսների զգալի ծավալ, որի արդյունքում Ընկերության գործունեությունը կախվածության մեջ է այդ էներգակիրների սակագներից:

Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու ռիսկ (ֆորս-մաժոր): Ընկերության գործունեության վրա ուղղակի բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև ֆորս-մաժորային ռիսկերը, որոնք դուրս են Ընկերության վերահսկողությունից: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, համաճարակային պանդեմիան, ռազմական և արտակարգ դրությունը երկրում, քաղաքական հուզումները, գործադուլները և այլն:

Տեխնոլոգիական պրոցեսներ: Սարքավորումների շարքից դուրս գալը, աշխատանքային խափանումները, տեխնոլոգիական ցանկացած էական վթար կարող է առաջացնել արտադրության գործընթացի տևական դադար, արտադրանքի ծավալի կրճատում, և արդյունքում բացասաբար անդրադառնալ Ընկերության վաճառքի և շահութաբերության վրա:

Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության վերահսկողությունից դուրս են, այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

Կարգավորման դաշտ: Օրենսդրական դաշտի փոփոխությունը կարող է զգալի ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա: Մասնավորապես՝ կարևորում ենք մետաղի ջարդոնի արտահանման պետական տուրքի առկայությունը, որը լիովին սահմանափակում է ջարդոնի ՀՀ-ից արտահանումը: Սա թույլ է տալիս Ընկերությանը անխափան համալրել հումքային բազան ֆինանսական տեսանկյունից շահավետ պայմաններով: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող հավաստիացնել, որ ապագայում տուրքի փոփոխություններ չեն լինի:

2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկ: Շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումը, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել՝ ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Վերաներդրման ռիսկը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները, ԱՄՆ դոլարով կամ ՀՀ դրամով պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

2.1 Տեղեկատվություն հրապարակված ազդագրի մասին

Ցանկացած անձ կարող է Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի Ծրագրային Ազդագիրը ստանալ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ գործունեության վայրում (հասցե՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2), իսկ էլեկտրոնային տարբերակը՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ ինտերնետային կայքից (www.asce.am):

2.2 Տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորի մասին

Թողարկողի պարտատոմսերն ապահովված կամ երաշխավորված չեն:

3 Գործարքի կնքման վայրը

Գործարքի կնքման վայր է համարվում Թողարկողի գործունեության իրավաբանական հասցեն:

4 Տեղեկատվություն ծախսերի և միջնորդավճարների մասին

4.1 Պարտատոմսերի դիմաց վճարումը

Ներդրողները պարտատոմսի դիմաց կատարում են վճարումներ համաձայն Թողարկողի կողմից հաստատված Պարտատոմսերի թողարկման պայմանների:

Պարտատոմսի գինը ձեռքբերման օրվա դրությամբ հաշվարկվում է համաձայն Թողարկողի կողմից հաստատված Պարտատոմսերի թողարկման պայմանների:

4.2 Ընդհանուր տեղեկություններ ծախսերի և միջնորդավճարների մասին

Տեղաբաշխման ընթացքում ներդրողները կարող են ունենալ հետևյալ ծախսերը՝

- որևէ առևտրային բանկում բանկային հաշվի բացման հետ կապված ծախսեր՝ համաձայն յուրաքանչյուր առևտրային բանկի գործող սակագների,
- «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կամ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուների մոտ արժեթղթերի հաշվի բացման հետ կապված ծախսեր՝ համաձայն յուրաքանչյուր պահառուի գործող սակագների,
- Հայտ-հանձնարարականի՝ Թողարկողին պատշաճ կերպով առաքման հետ կապված ծախսեր՝ ըստ առաքման ձևի (առձեռն ներկայացնելու հետ կապված ծախսեր, փոստային ծախսեր՝ փոստով առաքելու դեպքում, էլեկտրոնային փոստով առաքելու հետ կապված ծախսեր),
- Հայտ-հանձնարարականի բավարարման արդյունքում թողարկված արժեթղթերի ձեռքբերման և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ամրագրման հետ կապված ծախսեր: Մասնավորապես՝
    - ձեռք բերվող պարտատոմսերի համար Թողարկողի բանկային հաշվին ներդրողի (ձեռք բերողի) բանկային հաշվից համապատասխան գումարի փոխանցման հետ կապված բանկային ծախսեր՝ համաձայն սպասարկող առևտրային բանկի գործող սակագների,
    - ձեռք բերվող պարտատոմսերի համար արժեթղթերի փոխանցման հետ կապված պահառուի ծախսեր՝ համաձայն սպասարկող պահառուի գործող սակագների:

Ներդրողները արժեկտրոնների ստացման, պարտատոմսերի շրջանառության ընթացքում պարտատոմսերով առքուվաճառքի գործարքների իրականացման և մարման արդյունքում կարող են ունենալ նաև հարկային ծախսեր՝ համաձայն իրենց՝ որպես հարկ վճարողի կարգավիճակի (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ, գործող հարկային արտոնությունների առկայություն և այլն): Հետևաբար հնարավոր է, որ Թողարկողը՝ հանդես գալով որպես հարկային գործակալ, իրականացնի օրենսդրությամբ նախատեսված որոշակի հարկային պահումներ: Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման առավել մանրամասն նկարագրությունը ներկայացված է պարտատոմսերի ազդագրում:

2.3. **ՀԱՎԵԼՎԱԾ 2**: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած դոլարային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի

(ֆիզիկական անձանց համար)

Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Հայտ-հանձնարարական ներկայացնողի անվանումը _____
(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի համարը _____
(փաստաթղթի համար)

Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Գրանցման վայրի հասցեն _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ **(** _____ **)**
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը **(** _____ **)**
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը _____

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականով, հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ ծանոթացել եմ պարտատոմսի Ծրագրային Ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ինչպես նաև սույն հայտ-հանձնարարականին կից ներկայացված Տեղեկատվական Թերթիկին, ընդունում և համաձայն եմ դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ եմ ստանձնել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա իմ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած պարտատոմսերի՝ իմ կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Թողարկողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

քանակը թվերով (տառերով)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(ստորագրող անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները թողարկման նպատակով բացված բանկային հաշվեհամարին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև

(ֆիզիկական անձանց համար)

Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Հայտ-հանձնարարական ներկայացնողի անվանումը _____
(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի համարը _____
(փաստաթղթի համար)

Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Գրանցման վայրի հասցեն _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ **( )** _____
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը **( )** _____
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականով, հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ ծանոթացել եմ պարտատոմսի Ծրագրային Ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ինչպես նաև սույն հայտ-հանձնարարականին կից ներկայացված Տեղեկատվական Թերթիկին, ընդունում և համաձայն եմ դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ եմ ստանձնել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա իմ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ թողարկած պարտատոմսերի՝ իմ կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Թողարկողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԴ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

քանակը թվերով (տառերով)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(ստորագրող անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները թողարկման նպատակով բացված բանկային հաշվեհամարին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԾԱՆՈՒՑՈՒՄ: *Սույն Տեղեկատվական Թերթիկը հանդիսանում է հայտ-հանձնարարականի անբաժանելի մասը: Ներդրողները պարտավոր են ծանոթանալ և ստորագրել (կնքել համապատասխանաբար) Տեղեկատվական Թերթիկը: Առանց ստորագրված և համապատասխան կերպով կնքված Տեղեկատվական Թերթիկի ներկայացված հայտ-հանձնարարականը համարվում է **անվավեր**: Տեղեկատվական Թերթիկում զետեղված տեղեկատվության վերաբերյալ առավել մանրամասն կարելի է ծանոթանալ Թողարկողի պարտատոմսերի Ազդագրում:*

1 Տեղեկատվություն Թողարկողի (Տեղաբաշխողի) և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին

Թողարկողն ինքն է կազմակերպելու պարտատոմսերի տեղաբաշխումը:

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկող, Տեղաբաշխող) հետ կապի տվյալներն են.

- հասցե՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2),
- Հեռ. (+374) 22 646427
- Էլ.-փոստ՝ asce@asce.am

Ցանկացած անձ Թողարկողի հետ կարող է կապ հաստատել, ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն վերոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով, ցանկացած բանկային աշխատանքային օրվա ընթացքում Երևանի ժամանակով ժամը 09:30-ից մինչև 16:30-ը: Թողարկողի հետ հաղորդակցությունը կարելի է իրականացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ներդրողները, ովքեր ցանկություն կունենան ձեռք բերելու Թողարկողի կողմից տեղաբաշխվող պարտատոմսերը, պետք է հայտ-հանձնարարականը լրացնելով այն պատշաճ կերպով առաքեն Թողարկողին:

Հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Թողարկողին, եթե այն առաքվել է միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Թողարկողի գրասենյակ այցելելով) և հասցեատիրոջ կողմից ստացվել է առաքման ստացման հաստատում:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Թողարկողին առաքումից հետո, սակայն ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով բացված բանկային հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց՝ վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Թողարկողին հայտ-հանձնարարականի ներկայացման միջոցներն են՝

- հասցե՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2),
- Հեռ. (+374) 22 646427
- Էլ.-փոստ՝ asce@asce.am
- *այցելելով «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ և համապատասխան աշխատակիցների միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը*

2 Տեղեկատվություն պարտատոմսերի և դրանց հետ առնչվող ռիսկերի մասին

Մասնավոր ընկերությունների (կորպորատիվ) պարտատոմսերում ներդրումները սովորաբար կապված են որոշակի ռիսկերի հետ: Այդ ռիսկերի հնարավորինս բացահայտումը, վերլուծությունը, ի հայտ գալու հավանականության և ներդրողի ֆինանսական վիճակի վրա ազդեցության չափի գնահատումը թույլ կտա ներդրողին կատարել արդյունավետ ներդրումային որոշումներ՝ հիմնվելով յուրաքանչյուր ներդրողի համար յուրահատուկ ներդրման ռիսկ-եկամտաբերություն համակցության վրա:

Հետևաբար, ցանկացած պարագայում, ներդրողներին խորհուրդ է տրվում մինչև ներդրումային որոշում կայացնելը հանգամանորեն վերլուծել Թողարկողի պարտատոմսերի ներդրման հետ կապված ռիսկերը, ի լրումն

ազդագրում ներկայացված տեղեկատվության: Թողարկողի պարտատոմսերում ներդրումների հետ կապված որպես էական ռիսկեր դիտարկվում են հետևյալ ռիսկերը, որոնք բաժանվում են երկու մեծ խմբի՝ Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկեր և Թողարկողի պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկեր:

2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Շուկայական ռիսկ: Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա զգալիորեն ազդում են միջազգային շուկայական գների տատանումները: Պատմականորեն այս գներն ունեցել են տատանման լայն տիրույթ, որը պայմանավորված է Ընկերության վերահսկողությունից դուրս բազմաթիվ գործոններով: Բացի այդ Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փափոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Պարտքային ռիսկ: Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում , երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունն առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

Արտարժութային ռիսկ: Այս ռիսկի ազդեցությունը մեծանում է միայն օտարերկրյա ընկերություններից սարքավորումների և հումքի ձեռք բերման շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման և Ընկերության կողմից ստացված արժութըային վարկերի մարման և սպասարկման ժամանակահատվածում կատարվող վճարումներով, որոնք արտահայտված են արտարժույթով: Ընկերության արտադրանքի ինքնարժեքում արտարժույթով արտահայտված հումքի տեսակարար կշիռը կազմում է մոտ 20-25%. Բացի այդ, Ընկերության ցուցանիշների վրա զգալի ազդեցություն է ունենում դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ, որի արդյունքում Ընկերության ապրանքը, որի գինը կապված են արտարժույթով ներկայացված հենանիշերի (benchmark) հետ, վաճառվում են ավելի էժան՝ ՀՀ դրամով: Նշված վերջին ռիսկը շատ բացահայտ է եղել վերջին տարիներին, մասնավորապես՝ ՀՀ դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ հանգեցնում է ներմուծվող նման արտադրանքի ավելի բարենպաստ գներին, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում Ընկերության արտադրանքի գների վրա: Նման ռիսկի երկարաժամկետ ազդեցությունը կարող է Ընկերության արտադրանքը դարձնել գնային առումով ոչ մրցունակ և դրդել գների նվազեցման: Սա էլ իր հերթին կարող է այլ ֆինանսական ռիսկերի հանգեցնել:

Ներդրումային կապիտալի մատչելիության ռիսկ: Ընկերությունը գործում է ծանր արդյունաբերության ոլորտում, որը կապիտալ ներդրումների առումով տնտեսության ամենաինտենսիվ ճյուղերից մեկն է և պահանջում է շարունակական խոշոր ներդրումներ:

Շինարարության ոլորտ: Ընկերության արտադրանքը հիմնականում սպառվում է շինարարության ոլորտում, այդ պատճառով Ընկերության վաճառքի ցուցանիշները կախված են շինարարության ոլորտի ակտիվությունից: Ուստի՝ Ընկերության գործունեության վրա ազդեցություն ունեն նաև շինարարության ոլորտում տեղի ունեցող խոշոր իրադարձությունները:

Էներգակիրների գներ: Ընկերության գործունեության համար պահանջվում է էլեկտրաէներգիայի, գազի և այլ ռեսուրսների զգալի ծավալ, որի արդյունքում Ընկերության գործունեությունը կախվածության մեջ է այդ էներգակիրների սակագներից:

Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու ռիսկ (ֆորս-մաժոր): Ընկերության գործունեության վրա ուղղակի բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև ֆորս-մաժորային ռիսկերը, որոնք դուրս են Ընկերության վերահսկողությունից: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, համաճարակային պանդեմիան, ռազմական և արտակարգ դրությունը երկրում, քաղաքական հուզումները, գործադուլները և այլն:

Տեխնոլոգիական պրոցեսներ: Սարքավորումների շարքից դուրս գալը, աշխատանքային խափանումները, տեխնոլոգիական ցանկացած էական վթար կարող է առաջացնել արտադրության գործընթացի տևական դադար, արտադրանքի ծավալի կրճատում, և արդյունքում բացասաբար անդրադառնալ Ընկերության վաճառքի և շահութաբերության վրա:

Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության վերահսկողությունից դուրս են, այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

Կարգավորման դաշտ: Օրենսդրական դաշտի փոփոխությունը կարող է զգալի ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա: Մասնավորապես՝ կարևորում ենք մետաղի ջարդոնի արտահանման պետական տուրքի առկայությունը, որը լիովին սահմանափակում է ջարդոնի ՀՀ-ից արտահանումը: Սա թույլ է տալիս Ընկերությանը անխափան համալրել հումքային բազան ֆինանսական տեսանկյունից շահավետ պայմաններով: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող հավաստիացնել, որ ապագայում տուրքի փոփոխություններ չեն լինի:

2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկ: Շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումը, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել՝ ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Վերաներդրման ռիսկը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները, ԱՄՆ դոլարով կամ ՀՀ դրամով պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

2.1 Տեղեկատվություն հրապարակված ազդագրի մասին

Ցանկացած անձ կարող է Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի Ծրագրային Ազդագիրը ստանալ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ գործունեության վայրում (հասցե՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2), իսկ էլեկտրոնային տարբերակը՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ ինտերնետային կայքից (www.asce.am):

2.2 Տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորի մասին

Թողարկողի պարտատոմսերն ապահովված կամ երաշխավորված չեն:

3 Գործարքի կնքման վայրը

Գործարքի կնքման վայր է համարվում Թողարկողի գործունեության իրավաբանական հասցեն:

4 Տեղեկատվություն ծախսերի և միջնորդավճարների մասին

4.1 Պարտատոմսերի դիմաց վճարումը

Ներդրողները պարտատոմսի դիմաց կատարում են վճարումներ համաձայն Թողարկողի կողմից հաստատված Պարտատոմսերի թողարկման պայմանների:

Պարտատոմսի գինը ձեռքբերման օրվա դրությամբ հաշվարկվում է համաձայն Թողարկողի կողմից հաստատված Պարտատոմսերի թողարկման պայմանների:

4.2 Ընդհանուր տեղեկություններ ծախսերի և միջնորդավճարների մասին

Տեղաբաշխման ընթացքում ներդրողները կարող են ունենալ հետևյալ ծախսերը՝

- որևէ առևտրային բանկում բանկային հաշվի բացման հետ կապված ծախսեր՝ համաձայն յուրաքանչյուր առևտրային բանկի գործող սակագների,
- «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կամ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուների մոտ արժեթղթերի հաշվի բացման հետ կապված ծախսեր՝ համաձայն յուրաքանչյուր պահառուի գործող սակագների,
- Հայտ-հանձնարարականի՝ Թողարկողին պատշաճ կերպով առաքման հետ կապված ծախսեր՝ ըստ առաքման ձևի (առձեռն ներկայացնելու հետ կապված ծախսեր, փոստային ծախսեր՝ փոստով առաքելու դեպքում, էլեկտրոնային փոստով առաքելու հետ կապված ծախսեր),
- Հայտ-հանձնարարականի բավարարման արդյունքում թողարկված արժեթղթերի ձեռքբերման և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ամրագրման հետ կապված ծախսեր: Մասնավորապես՝
    - ձեռք բերվող պարտատոմսերի համար Թողարկողի բանկային հաշվին ներդրողի (ձեռք բերողի) բանկային հաշվից համապատասխան գումարի փոխանցման հետ կապված բանկային ծախսեր՝ համաձայն սպասարկող առևտրային բանկի գործող սակագների,
    - ձեռք բերվող պարտատոմսերի համար արժեթղթերի փոխանցման հետ կապված պահառուի ծախսեր՝ համաձայն սպասարկող պահառուի գործող սակագների:

Ներդրողները արժեկտրոնների ստացման, պարտատոմսերի շրջանառության ընթացքում պարտատոմսերով առքուվաճառքի գործարքների իրականացման և մարման արդյունքում կարող են ունենալ նաև հարկային ծախսեր՝ համաձայն իրենց՝ որպես հարկ վճարողի կարգավիճակի (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ, գործող հարկային արտոնությունների առկայություն և այլն): Հետևաբար հնարավոր է, որ Թողարկողը՝ հանդես գալով որպես հարկային գործակալ, իրականացնի օրենսդրությամբ նախատեսված որոշակի հարկային պահումներ: Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման առավել մանրամասն նկարագրությունը ներկայացված է պարտատոմսերի ազդագրում:

2.3. ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ակտիվների շահութաբերություն (ROA) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)


Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը):

ՀԱՎԵԼՎԱԾ 4: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը



2.4. ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման վերջնական պայմաններ

…… 202_թ.

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ---- ---------- 202_թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը գտնվում «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ -ում՝ ՀՀ, 2501, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ
2.	Երաշխավորողը	
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է **Ծրագրային Ազդագրի 2.3.6** մասում
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար և ՀՀ դրամ

7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝ $$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$ որտեղ՝ $\tau = \frac{DSN}{DCC}$ DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4- եռամսյակային վճարումների համար), N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, Y - մինչև մարում եկամտաբերություն: Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում
8.	Անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար կամ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	Թողարկողի Խորհրդի 19.07.2024թ -ի 19/07/2024 որոշում
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը

		որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
20.	Ջրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման ժամկետը	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
22.	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար կամ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Ասկե Գրուպ» ԲԲ ընկերություն
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը

		որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի “Հայաստանի ֆոնդային բորսա” ԲԲ ընկերությունը:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**

Ստորագրությունները հավաստում եմ՝

(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2021թ. համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	8
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	10
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	11
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի (Ընկերություն) և վերջինիս դուստր ընկերության (Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության *«Վերապահումով կարծիքի հիմք»* բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համադրելի տվյալների վրա, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք ներկա չենք գտնվել 4,319,780 հազար դրամ հաշվեկշռային արժեքով պաշարների գույքագրմանը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, քանի որ նշանակվել էինք որպես Խմբի աուդիտորներ այդ ամսաթվից հետո: Մենք չենք կարողացել այլընտրանքային միջոցների կիրառմամբ ձեռք բերել համոզմունք այդ պաշարների քանակության հետ կապված: Արդյունքում, մենք չենք կարողացել որոշել արդյոք անհրաժեշտ կլինեին 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունների տարրերի ճշգրտումներ: 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2021թ. մարտի 15-ի մեր կարծիքը համապատասխանաբար ձևափոխված էր: Ընթացիկ տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը նույնպես ձևափոխված է ընթացիկ տարվա տվյալների համադրելիության և համադրելի տվյալների վրա այս հարցի հնարավոր ազդցության պատճառով:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) *(ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք անդրադարձել ենք այս հարցերին համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընդհանուր շրջանակում և վերջիններիս վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք արտահայտում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

Հասույթի ճանաչում

Ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ 5-ում և Ծանոթագրություն 25-ի (ա) կետում:

Աուդիտի առանցքային հարց	Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ապրանքների և ծառայությունների վաճառքից ստացված հասույթը կազմել է 33,560,326 հազար դրամ: Հասույթի ճանաչումը համարվում է աուդիտի առանցքային հարց հետևյալ պատճառներից ելնելով. – գործարքների մեծ ծավալ, – հասույթի նշանակալի աճ 2021թ-ին՝ ի համեմատություն 2020թ., – հաճախորդներին ապրանքների նկատմամբ հսկողության փոխանցման պահի հետ կապված դատողություն:	Հասույթի ճանաչման գնահատման հետ կապված մենք իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը. – Գնահատել ենք հասույթի ճանաչման գործընթացը հսկող հիմնական ներքին համակարգի կառուցվածքը և աշխատանքը: – Վերլուծել ենք Խմբի ապրանքների վաճառքից ստացվող հասույթի ճանաչման հաշվապահական կաշվառման քաղաքականությունը որոշելու համար, թե արդյոք այն ըստ պատշաճի է արտացոլում ՖՀՄՍ 15 *«Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից»* պահանջները, որոնք վերաբերում են կատարման պարտականությունների կատարումից ստացվող հասույթի ճանաչմանը համապատասխան ժամկետում: – Ստուգել ենք վաճառքի պայմանագրերն ընտրանքային կարգով առաքման/մատակարարման պայմանների մասին պատկերացում կազմելու և գնահատելու համար, թե արդյոք հասույթը ճանաչվել է կատարման պարտականությունների կատարումից ստացվող հասույթը համապատասխան ժամկետում ճանաչելու ՖՀՄՍ 15-ի պահանջների համաձայն: – Համեմատել ենք ընտրանքային կարգով տարվա ընթացքում գրանցված առանձին գործարքները, որոնցից հասույթ է ստացվել, հիմք հանդիսացող

	ելակետային/առաջնային փաստաթղթերի հետ: – Ստացել ենք տարվա շրջանառության և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդների հաստատման նամակներ Խմբի հաճախորդներից ընտրանքային կարգով, իսկ հաստատումների համար, որոնք չենք ստացել, իրականացրել ենք այլընտրանքային ընթացակարգեր՝ համեմատելով գործարքի մանրամասները հիմք հանդիսացող ելակետային/առաջնային փաստաթղթերի տվյալների հետ: – Համեմատել ենք ընտրանքային կարգով տարեվերջին մոտ ժամանակահատվածում գրանցված առանձին գործարքները, որոնցից հասույթ է ստացվել, հիմք հանդիսացող ելակետային/առաջնային փաստաթղթերի հետ որոշելու համար, թե արդյոք հասույթն ըստ պատշաճի ճանաչվել է համապատասխան ժամկետում: – Մենք նաև դիտարկել ենք Ծանոթագրություն 5-ում և Ծանոթագրություն 25-ի (ա) կետում Խմբի բացահայտված տեղեկատվության տեղին լինելը:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Խումբը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն և իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

– ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպություններին կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք նաև ներկայացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հաստատում առ այն, որ հետևում ենք էթիկայի համապատասխան պահանջներին և տեղեկացնում ենք նրանց այն բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք խելամիտ կերպով կարող են համարվել որպես մեր անկախության վրա ազդեցություն ունեցող և, կիրառելի լինելու դեպքում, պաշտպանություն ապահովող համապատասխան միջոցների մասին:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տեղեկացված հարցերից մենք ընտրում ենք այն հարցերը, որոնք առավել էական ազդեցություն ունեն ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար և, այդ իսկ պատճառով, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք ներկայացնում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կանոնակարգով չի թույլատրվում հարցի հանրային բացահայտումը, կամ երբ հազվադեպ դեպքերում որոշում ենք, որ հարցը չպետք է ներկայացվի մեր եզրակացությունում, քանի որ ներկայացման բացասական հետևանքներն ըստ ողջամիտ ակնկալիքների կարող են գերակշռել ներկայացման հետ կապված հանրային հետաքրքրվածության առավելությունները:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի անունից

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
25 ապրիլի 2022թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2021թ.

հազ. դրամ	**Ծնթգ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	29,393,981	28,508,420
Ներդրումային գույք	12	1,117,043	-
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		112,868	-
Այլ ակտիվներ		6,282	68
Ոչ ընթացիկ ակտիվներ		**30,630,174**	**28,508,488**
Պաշարներ	13	7,042,321	5,504,640
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	3,439,089	1,573,696
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	15	1,143,052	73,216
Ընթացիկ ակտիվներ		**11,624,462**	**7,151,552**
Ընդամենը ակտիվներ		**42,254,636**	**35,660,040**
Սեփական կապիտալ	16		
Բաժնետիրական կապիտալ		9,438,576	1,179,822
Չբաշխված շահույթ		13,010,280	8,763,117
Ընդամենը սեփական կապիտալ		**22,448,856**	**9,942,939**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	18	-	105,263
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	3,446,647	3,073,245
Ռոդարկված պարտատոմսեր	20	13,471,555	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**16,918,202**	**3,178,508**
Վարկեր և փոխառություններ	18	105,500	20,103,621
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	19	807,460	2,110,787
Ռոդարկված պարտատոմսեր	20	91,907	-
Ընթացիկ հարկային պարտավորություն		1,882,711	324,185
Ընթացիկ պարտավորություններ		**2,887,578**	**22,538,593**
Ընդամենը պարտավորություններ		**19,805,780**	**25,717,101**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**42,254,636**	**35,660,040**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 12-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2021թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2021թ.	2020թ.
Հասույթ	5	33,560,326	13,819,493
Վաճառքի ինքնարժեք	6	(16,774,399)	(8,712,375)
Համախառն շահույթ		**16,785,927**	**5,107,118**
Այլ եկամուտ		24,171	34,646
Իրացման ծախսեր		(174,718)	(61,210)
Վարչական ծախսեր	7	(447,749)	(280,602)
Այլ ծախսեր	8	(226,811)	(154,416)
Գործառնական գործունեության արդյունքներ		**15,960,820**	**4,645,536**
Ֆինանսական եկամուտ	9	973,290	4,157
Ֆինանսական ծախսեր	9	(1,780,021)	(2,143,471)
Զուտ ֆինաննական ծախսեր		**(806,731)**	**(2,139,314)**
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**15,154,089**	**2,506,222**
Շահութահարկի գծով ծախս	10	(2,648,172)	(827,206)
Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**12,505,917**	**1,679,016**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. ապրիլի 25-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Խաչատուր Վանոյան
Տնօրեն

Կարինե Մանուկոնյան
Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2021թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	1,179,822	7,084,101	8,263,923
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
Շահույթ տարվա համար	-	1,679,016	1,679,016
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**-**	**1,679,016**	**1,679,016**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,179,822**	**8,763,117**	**9,942,939**
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	1,179,822	8,763,117	9,942,939
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
Շահույթ տարվա համար	-	12,505,917	12,505,917
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**-**	**12,505,917**	**12,505,917**
Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ			
Չբաշխված շահույթի տեղափոխում բաժնետիրական կապիտալ (Ծնթգ. 16)	8,258,754	(8,258,754)	-
Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ	**8,258,754**	**(8,258,754)**	**-**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**9,438,576**	**13,010,280**	**22,448,856**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 12-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2021թ. համար

հազ. դրամ	2021թ.	2020թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված գումարներ	37,416,014	13,788,319
Աշխատակիցներին վճարված գումարներ	(1,317,683)	(814,066)
Մատակարարներին վճարված գումարներ	(18,541,442)	(7,795,496)
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(4,961,190)	(2,103,746)
Այլ վճարումներ	(58,020)	(20,035)
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը	**12,537,679**	**3,054,976**
Վճարված տոկոսներ	(4,928,923)	(334,720)
Վճարված շահութահարկ	(716,244)	(303,432)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**6,892,512**	**2,416,824**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(2,415,025)	(812,677)
Ներդրումային գույքի ձեռքբերում	(1,117,043)	-
Մուտքեր ոչ ընթացիկ վաճառքից	44,939	86,153
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(3,487,129)**	**(726,524)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	540,109	1,314,237
Վարկերի և փոխառությունների մարում	(16,033,342)	(3,087,776)
Թողարկված պարտատոմսերի ձեռքբերում	(8,738,383)	-
Մուտքեր թողարկված պարտատոմսերի	22,779,150	-
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(1,452,466)**	**(1,773,539)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**1,952,917**	**(83,239)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	73,216	154,692
Արտարժույթի փոխարժեքի տատանումների հետևանքները դրամական միջոցների և դրանց համարժեքների համար	(883,081)	1,763
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**1,143,052**	**73,216**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 12-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2021թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ծանոթագրություն	Էջ
1. Հաշվետու կազմակերպություն	13
2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ	14
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	14
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում	14
5. Հասույթ	15
6. Վաճառքի ինքնարժեք	18
7. Վարչական ծախսեր	19
8. Այլ ծախսեր	20
9. Զուտ ֆինանսական ծախսեր	20
10. Շահութահարկ	20
11. Հիմնական միջոցներ	22
12. Ներդրումային գույք	23
13. Պաշարներ	24
14. Անտրական և այլ դեբիտորական պարտքեր	24
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24
16. Կապիտալ և պահուստներ	25
17. Կապիտալի կառավարում	25
18. Վարկեր և փոխառություններ	26
19. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	27
20. Թողարկված պարտատոմսեր	28
21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	29
22. Պայմանական դեպքեր	35
23. Կապակցված կողմեր	36
24. Չափման հիմունքներ	37
25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր	38
26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	48

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար «ԱՄԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի (Ընկերություն) և վերջինիս դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համար:

«ԱՄԿԵ Գրուպ» ԲԲԸ-ն (Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցված բաց բաժնետիրական ընկերություն է: Ընկերությունը հիմնադրվել է «Հայձուլ» ՓԲԸ-ի (նախկինում՝ «Ավտոձուլ» ՓԲԸ) սեփականաշնորհման արդյունքում՝ որպես բաց բաժնետիրական ընկերություն 1998թ. սեպտեմբերի 4-ին:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան փող. 2:

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության շրջանառության մեջ գտնվող ընդհանուր բաժնետոմսերի ավելի քան 3%-ը պատկանում էր հետևյալ բաժնետերերին.

Մասնակցության % առ 31 դեկտեմբերի	**2021թ.**	**2020թ.**
«Մորակո Հոլդինգ Լիմիթիդ»	49.35%	49.35%
Պրն. Միխայիլ Հարությունյան	-	49.35%
Պրն. Գևորգ Հարությունյան	16.53%	-
Պրն. Տիգրան Հարությունյան	16.53%	-
Պրն. Վահան Հարությունյան	16.53%	-

Մյուս բաժնետերերին անհատապես պատկանում է բաժնետոմսերի 3%-ից պակաս մասնաբաժին:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վերջնական հսկող անձն էր պրն. Միխայիլ Հարությունյանը, ով իրավասու էր ղեկավարել Ընկերության գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մասնակցություններ ուներ Ընկերության հետ առնչություն չունեցող այլ կազմակերպություններում: 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերության հսկող անձն էր պրն. Միխայիլ Հարությունյանը: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

Խմբի հիմնական գործունեությունը Չարենցավանում գտնվող գործարանում ամրանների և մետաղական գնդերի արտադրությունն ու իրացումն է: Խմբի արտադրանքը վաճառվում է Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:

Ստորև ներկայացված է համախմբված դուստր ընկերությունը:

		2021թ.
Դուստր ընկերություն	**Գրանցման երկիր**	**Սեփականության իրավունք/ Ձայնի իրավունք**
«ԱՄԿԵ Թրեյդ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%

Դուստր ընկերության հիմնական գործունեությունը «ԱՄԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերի առքն ու վաճառքն է:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, Լեռնային Ղարաբաղում 2020թ. սեպտեմբերին վերսկսված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, և Covid-19 համավարակն էլ ավելի են մեծացրել գործարար միջավայրում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

Համապատասխանության մասին հավաստում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Խմբի ֆունկցիոնալ և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված են Ծանոթագրություն 25(է)(iii)՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների հետ կապված:

Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահատումներ պահանջում են ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

– *1-ին մակարդակ*. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտվող):
– *2-րդ մակարդակ*. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
– *3-րդ մակարդակ*. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումները Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

5. Հասույթ

(ա) Հասույթի ուղղություններ

Խումբը հասույթը հիմնականում ստանում է ամրանների և մետաղական գնդերի վաճառքից:

հազ. դրամ	**2021թ.**	**2020թ.**
Ապրանքների վաճառք	33,512,709	13,800,159
Հասույթ մատուցված ծառայություններից	47,617	19,334
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**33,560,326**	**13,819,493**

(բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների, հիմնական արտադրատեսակների/ծառայությունների և հասույթի ճանաչման ժամկետների 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

հազ. դրամ	Հանքարդյունա-բերական ընկերություններ	Շինարարական ընկերություններ	Այլ ոլորտների ընկերություններ	Ընդամենը
Հիմնական աշխարհագրական շուկաներ				
Հայաստանի Հանրապետություն	5,635,642	23,224,350	316,002	29,175,994
Արտահանում Վրաստան	-	-	4,384,332	4,384,332
	5,635,642	**23,224,350**	**4,700,334**	**33,560,326**
Հիմնական արտադրատեսակներ/ ծառայություններ				
Ամրաններ	-	23,183,088	5,839	23,188,927
Մետաղական գնդեր	5,635,642	-	252,702	5,888,344
Նախապատրաստվածքներ	-	-	4,436,573	4,436,573
Փոխադրման ծառայություններ	-	41,262	5,221	46,483
	5,635,642	**23,224,350**	**4,700,335**	**33,560,327**
Հասույթի ճանաչման ժամկետներ				
Ժամանակի որոշակի պահին փոխանցված արտադրանք	5,635,642	23,183,088	4,695,114	33,513,844
Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ	-	41,262	5,220	46,482
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**5,635,642**	**23,224,350**	**4,700,334**	**33,560,326**

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների, հիմնական արտադրատեսակների/ծառայությունների և հասույթի ճանաչման ժամկետների 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

հազ. դրամ	**Հանքարդյունա-բերական ընկերություններ**	**Շինարարական ընկերություններ**	**Այլ ոլորտների ընկերություններ**	**Ընդամենը**
Հիմնական աշխարհագրական շուկաներ				
Հայաստանի Հանրապետություն	3,200,939	8,667,618	797,913	12,666,470
Արտահանում Վրաստան	-	-	1,153,023	1,153,023
	3,200,939	**8,667,618**	**1,950,936**	**13,819,493**
Հիմնական արտադրատեսակներ/ ծառայություններ				
Ամրաններ	-	8,653,018	1,161	8,654,179
Մետաղական գնդեր	3,200,939	14,600	796,752	4,012,291
Նախապատրաստվածքներ	-	-	1,133,689	1,133,689
Փոխադրման ծառայություններ	-	-	19,334	19,334
	3,200,939	**8,667,618**	**1,950,936**	**13,819,493**
Հասույթի ճանաչման ժամկետներ				
Ժամանակի որոշակի պահին փոխանցված արտադրանք	3,200,939	8,667,618	1,931,602	13,800,159
Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ	-	-	19,334	19,334
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**3,200,939**	**8,667,618**	**1,950,936**	**13,819,493**

(գ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով պարտավորությունների վերաբերյալ:

հազ. դրամ	**Ծնթգ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
«Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված դեբիտորական պարտքեր	14	2,914,033	1,311,015
Պայմանագրի գծով պարտավորություններ	19	12,656	436,051

Պայմանագրի գծով պարտավորությունները վերաբերում են հաճախորդներից ստացված կանխավճարներին:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրի գծով պարտավորությունների կազմում ճանաչված 436,051 հազար դրամ գումարը ճանաչվել է որպես հասույթ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Չի տրամադրվել տեղեկատվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի կամ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն չկատարված կատարման պարտականությունների վերաբերյալ, որոնց սկզբնապես ակնկալվող տևողությունը կազմում է մեկ տարի կամ ավելի պակաս, ինչպես թույլատրվում է ՖՀՄՍ 15-ով:

(դ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Արտադրանքի/ ծառայության տեսակը	**Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները**	**Հասույթի ճանաչման քաղաքականություն**
Ամրանների, մետաղական գնդերի և նախապատրաստվածքների վաճառք	Հաճախորդներն ապրանքների նկատմամբ հսկողություն են ձեռք բերում, երբ ապրանքներն առաքվում են նշված վայր կամ ուղարկվում են Ընկերության պահեստից՝ առքուվաճառքի պայմանագրերի համաձայն: Հաշիվները դուրս են գրվում ժամանակի որոշակի պահին: Հաշիվները սովորաբար ենթակա են վճարման երկու ամսվա ընթացքում: Ապրանքների համար զեղչեր, կուտակային միավորներ կամ գումարի վերադարձ չեն առաջարկվում:	Հասույթը ճանաչվում է, երբ ապրանքներն առաքվում են նշված վայր կամ ուղարկվում են նշված վայրից՝ պայմանագրի համաձայն:
Փոխադրման ծառայությունների մատուցում	Ընկերությունը նաև մատուցում է հաճախորդներին վաճառված ապրանքների փոխադրման ծառայություններ: Հաշիվները սովորաբար ենթակա են վճարման երկու ամսվա ընթացքում:	Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայության մատուցմանը զուգահեռ:

6. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	**2021թ.**	**2020թ.**
Նյութեր	9,786,578	4,627,756
Կոմունալ ծառայություններ	3,687,864	1,993,936
Աշխատավարձ	1,740,818	812,815
Մաշվածություն	1,465,055	1,244,818
Այլ	94,084	33,050
	16,774,399	**8,712,375**

Ծախսերն ըստ բնույթի

հազ. դրամ	**Ծնթգ.**	**2021թ.**	**2020թ.**
Փոխություններ պատրաստի և անավարտ արտադրանքի պաշարներում	13	1,492,378	(230,276)
Նյութեր	6	8,923,607	4,749,223
Կոմունալ ծառայություններ	6,7	3,397,837	2,060,900
Աշխատավարձ	6,7	1,810,571	997,048
Մաշվածություն	6,7,8,11	1,350,856	1,380,154
Մասնագիտական ծառայություններ	7	73,036	31,063
Ապահովագրություն և բանկային ծառայությունների վճարներ	7	69,154	12,813
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	7	15,479	17,432
Տրված կանխավճարների դուրսգրում	8	3,717	8,379
Անվտանգության ծառայություն	7	6,480	6,480
Այլ ծախսեր	6,7,8	198,114	114,177
		17,341,299	**9,147,393**

7. Վարչական ծախսեր

հազ. դրամ	**2021թ.**	**2020թ.**
Աշխատավարձ*	223,520	142,020
Մասնագիտական ծառայություններ	73,036	31,063
Ապահովագրություն և բանկային ծառայությունների վճարներ	69,154	12,813
Գրասենյակային և կոմունալ ծառայություններ	35,166	16,354
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	15,479	17,432
Մաշվածություն	14,796	10,549
Անվտանգության ծառայություն	6,480	6,480
Այլ ծախսեր	10,118	43,890
	447,749	**280,602**

* 2021թ. համար աշխատակիցների հատուցումների ընդհանուր գումարը կազմել է 1,802,995 հազար դրամ (2020թ-ին՝ 1,084,055 հազար դրամ):

8. Այլ ծախսեր

հազ. դրամ	**2021թ.**	**2020թ.**
Գովազդային ծախսեր	108,333	-
Պաշարների դուրսգրում	71,624	-
Տույժեր և տուգանքներ	4,158	10,232
Տրված կանխավճարների դուրսգրում	3,717	8,379
Մաշվածություն պարապուրդից	191	93,063
Այլ	38,788	42,741
	226,811	**154,416**

9. Զուտ ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	**2021թ.**	**2020թ.**
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով	21,599	4,157
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	951,691	-
Ֆինանսական եկամուտ	**973,290**	**4,157**
Զուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից	-	(1,350,761)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ – տոկոսային ծախս	(1,780,021)	(783,815)
Երկարաժամկետ կրեդիտորական պարտքերի գծով զեղչի ծախսագրում	-	(8,895)
Տոկոսային ծախսեր	**(1,780,021)**	**(2,143,471)**
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր	**(806,731)**	**(2,139,314)**

10. Շահութահարկ

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 18% դրույքաչափով (2020թ-ին՝ 18%):

հազ. դրամ	**2021թ.**	**2020թ.**
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	2,216,956	491,879
Պակաս հաշվեգրված նախորդ տարիներում	57,814	-
	2,274,770	**491,879**
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	373,402	335,327
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**2,648,172**	**827,206**

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում

	2021թ.		2020թ.	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Շահույթը նախքան հարկումը	15,154,089	100%	2,506,222	100%
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	2,727,736	18%	451,120	18%
Պակաս հաշվեգրված նախորդ տարիներում	57,814	0.4%	-	-
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր	(137,378)	(1)%	376,086	15%
	2,648,172	**17%**	**827,206**	**33%**

(բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Հիմնական միջոցներ	-	-	3,506,282	3,092,133	3,506,282	3,092,133
Պաշարներ	-	-	20,738	39,862	20,738	39,862
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(80,373)	(52,384)	-	-	(80,373)	(52,384)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	(6,366)	-	-	-	(6,366)
Վարկեր և փոխառություններ	-	-	-	-	-	-
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	**(80,373)**	**(58,750)**	**3,527,020**	**3,131,995**	**3,446,647**	**3,073,245**

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2019թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2019թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2019թ.**
Հիմնական միջոցներ	-	-	3,092,133	2,804,963	3,092,133	2,804,963
Պաշարներ	-	(27,087)	39,862	-	39,862	(27,087)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(52,384)	(22,148)	-	-	(52,384)	(22,148)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(6,366)	(22,640)	-	-	(6,366)	(22,640)
Վարկեր և փոխառություններ	-	-	-	4,830	-	4,830
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	**(58,750)**	**(71,875)**	**3,131,995**	**2,809,793**	**3,073,245**	**2,737,918**

(գ) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ

Հետաձգված հարկի մնացորդների բոլոր փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

11. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Շենքեր, շինություններ և կառույցներ	Մեքենաներ և սարքավո-րումներ	Փոխադրա-միջոցներ	Այլ	Անավարտ շինարարու-թյուն	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	10,513,397	19,571,662	163,826	126,431	128,168	30,503,484
Ավելացումներ	34,486	449,675	48,227	25,441	254,848	812,677
Տեղափոխումներ	(2)	151,583	4	(80,336)	(71,249)	-
Օտարումներ	-	(527)	(85,000)	(626)	-	(86,153)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**10,547,881**	**20,172,393**	**127,057**	**70,910**	**311,767**	**31,230,008**
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	10,547,881	20,172,393	127,057	70,910	311,767	31,230,008
Ավելացումներ	64,772	557,115	1,267,782	72,262	340,226	2,302,157
Տեղափոխումներ	-	331,391	-	(3,342)	(328,049)	-
Օտարումներ	-	(58,922)	(24,926)	(5,810)	-	(89,658)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**10,612,653**	**21,001,977**	**1,369,913**	**134,020**	**323,944**	**33,442,507**
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	(286,550)	(1,054,573)	(3,676)	(4,912)	-	(1,349,711)
Տեղափոխումներ	-	4,946	(4,946)	-	-	-
Տարվա մաշվածություն	(289,989)	(1,077,043)	(7,817)	(5,304)	-	(1,380,153)
Օտարումներ	-	527	7,515	234	-	8,276
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**(576,539)**	**(2,126,143)**	**(8,924)**	**(9,982)**	**-**	**(2,721,588)**
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	(576,540)	(2,126,143)	(8,925)	(9,981)	-	(2,721,589)
Տեղափոխումներ	-	(21)	-	21	-	-
Տարվա մաշվածություն	(290,893)	(1,014,873)	(34,301)	(7,156)	-	(1,347,223)
Օտարումներ	-	19,907	90	289	-	20,286
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(867,433)**	**(3,121,130)**	**(43,136)**	**(16,827)**	**-**	**(4,048,526)**
Հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2020թ.	10,226,847	18,517,089	160,151	121,519	128,168	29,153,774
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	9,971,342	18,046,250	118,133	60,928	311,767	28,508,420
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**9,745,220**	**17,880,847**	**1,326,777**	**117,193**	**323,944**	**29,393,981**

1,332,236 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2020թ-ին՝ 1,276,541 հազար դրամ) ներկայացվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 14,796 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2020թ-ին՝ 10,549 հազար դրամ)՝ վարչական ծախսերի կազմում և 191 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2020թ-ին՝ 93,063 հազար դրամ)՝ այլ ծախսերի կազմում

Ապահովություն

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 26,213,660 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 27,021,905 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները գրավադրված են բանկային վարկի դիմաց (Ծանոթագրություն 18(ա)):

12. Ներդրումային գույք

(ա) Հաշվեկշռային արժեքի համադրում

հազ. դրամ	**2021թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	-
Ձեռքերումներ	1,117,043
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,117,043**

2021թ. դեկտեմբերի 2-ին ձեռքբերված ներդրումային գույքը ներառում է հիմնականում առևտրային նպատակների համար նախատեսված գույքը, որը պահվում է կապիտալի աճի կամ վարձակալությունից եկամուտ վաստակելու համար, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, և չորոշված ապագա նպատակով գույքը:

Ներդրումային գույքը վարձակալության է հանձնված կապակցված կողմին անորոշ ժամկետով:

Ձեռքբերված ներդրումային գույքի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջինիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Իրական արժեքի չափում

(i) Իրական արժեքի հիերարխիա

Ղեկավարությունը չի ներգրավել արտաքին գնահատողի ներդրումային գույքի գնահատման համար 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ղեկավարության գնահատմամբ հաշվետու ամսաթվի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրա հաշվեկշռային արժեքին:

Ներդրումային գույքի իրական արժեքը չափելու համար կիրառվել են ստորև ներկայացված գնահատման մեթոդը և նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները:

- Շուկայական համեմատական մոտեցում. Շուկայական համեմատական մոտեցման համաձայն՝ գույքի իրական արժեքը գնահատվում է համադրելի գործարքների հիման վրա: Հիմնական ենթադրությունները վերաբերում են որպես համեմատական միավորներ օգտագործվող շենքերի վիճակին, որակին և գտնվելու վայրին: Շուկայական համեմատական մոտեցումը հիմնված է փոխարինման սկզբունքի վրա, որի համաձայն պոտենցիալ գնորդը չի վճարի ավելի շատ գումար գույքի համար, քան այն գումարը, որով նա կարող է գնել համադրելի փոխարինող գույք:

  Ստորև ներկայացված են մոտեցման նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները, որոնք կիրառվել են 2021թ. դեկտեմբերի 31-ին:

  - Գտնվելու վայրը՝ -20%-ից +20%
  - Չափը՝ -30%-ից +25%
  - Ներքին/արտաքին վիճակը և վերանորոգումը՝ 70 հազար – 100 հազար դրամ մեկ քառ.մ. համար

13. Պաշարներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Հումք	5,524,444	2,340,189
Անավարտ արտադրություն	726,656	1,913,752
Պատրաստի արտադրանք	340,694	645,976
Պահեստամասեր	255,796	373,336
Հումքը ճանապարհին	115,208	170,448
Վառելիք և սպառողական նյութեր	72,629	47,071
Այլ	6,894	13,868
	7,042,321	**5,504,640**

2021թ-ին որպես վաճառքի ինքնարժեք ճանաչած հումքը, սպառողական նյութերը, անավարտ արտադրանքի և անավարտ արտադրության փոփոխությունները կազմել են 9,786,578 հազար դրամ (2020թ-ին՝ 4,627,756 հազար դրամ):

14. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր	2,914,033	1,311,015
Այլ դեբիտորական պարտքեր	27,568	17,833
Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	(17,753)	(9,608)
Փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասում ներառված առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	**2,923,848**	**1,319,240**
Ստացվելիք հարկեր	29,879	48,526
Տրված կանխավճարներ	485,362	205,930
Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	**3,439,089**	**1,573,696**

Պարտքային և արժութային ռիսկերին Խմբի ենթարկվածության և առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Կանխիկը դրամարկղում	15,987	4,698
Բանկային հաշիվների մնացորդներ	1,127,066	68,518
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում	**1,143,052**	**73,216**

Տոկոսադրույքի ռիսկին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 21-ում: uity

16. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 62,923,840 սովորական բաժնետոմսից՝ 150 դրամ անվանական արժեքով (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,865,480 բաժնետոմսից՝ 150 դրամ անվանական արժեքով):

Բոլոր սովորական բաժնետոմսերի սեփականատերերն ունեն հավասար իրավունքներ Խմբի մնացորդային ակտիվների նկատմամբ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետոմսերի 98.7%-ը (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 98.7%) գրավադրված էր բանկային վարկի դիմաց (Ծանոթագրություն 18(ա)):

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ	**Սովորական բաժնետոմսեր**	
	2021թ.	**2020թ.**
Թողարկված առ 1 հունվարի	7,865,480	7,865,480
Թողարկված և ամբողջությամբ վճարված (չբաշխված շահույթից տեղափոխման միջոցով)	55,058,360	-
Թողարկված առ 31 դեկտեմբերի, ամբողջությամբ վճարված	**62,923,840**	**7,865,480**
Հայտարարված բաժնետոմսեր – անվանական արժեք (հազ. դրամ)	9,438,576	1,179,822

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Խմբի բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(ա) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Խմբի բաշխման ենթակա պահուստները որոշվում են Խմբի ՖՀՄՍ համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա: 2021թ. և 2020թ. ընթացքում շահաբաժինների չեն հայտարարվել և չեն վճարվել:

17. Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Խմբի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու և շուկայի մասնակիցների վստահությունն ապահովելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Խմբի հասույթի և շահույթի շարունակական հսկողության, Խմբի գործառնական գործունեությունից ստացվող դրամական հոսքերի հաշվին հիմնականում ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի և վարկերի ու փոխառությունների միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը Խումբը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Խմբի մոտեցումը չի փոխվել:

Խմբի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների պահանջներ:

18. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	105,500	105,263
	105,500	**105,263**
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	-	4,375,676
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերերից	-	4,724,526
Գրավով չապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից	-	11,003,419
	-	**20,103,621**

(ա) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառություններ պայմանները:

				31 դեկտեմբերի 2021թ.		**31 դեկտեմբերի 2020թ.**	
հազ. դրամ	**Արժույթ**	**Անվանակ. տոկոսադր.**	**Մարման տարի**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	6.0%	2021	-	-	3,807,106	3,807,106
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	6.50%	2022	-	-	423,298	423,298
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	11.0%	2022	105,500	105,500	250,535	250,535
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերերից	ՀՀ դրամ	0.0%	Ցպահանջ	-	-	2,738,938	2,738,938
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերերից	ԱՄՆ դոլար	0.0%	Ցպահանջ	-	-	1,812,342	1,812,342
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերերից	Եվրո	3.35%	Ցպահանջ	-	-	173,246	173,246
Գրավով չապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից	ԱՄՆ դոլար	7.0%	2021	-	-	9,737,817	9,737,817
Գրավով չապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից	ԱՄՆ դոլար	0.0%	Ցպահանջ	-	-	1,140,586	1,140,586
Գրավով չապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից	Եվրո	0.0%	Ցպահանջ	-	-	125,016	125,016
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ				**105,500**	**105,500**	**20,208,884**	**20,208,884**

Բանկային վարկերի դիմաց գրավադրված են.

- 26,213,660 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 27,021,905 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (տես Ծանոթագրություն 11(բ)),
- Խմբի 98.7% բաժնետոմսերը 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (տես Ծանոթագրություն 16(ա)):

(բ) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում

հազ. դրամ	**Պարտավորություններ**	
	Վարկեր և փոխառություններ	
	2021թ.	**2020թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	20,208,884	19,992,330
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	540,109	1,314,237
Վարկերի և փոխառությունների մարում	(16,033,342)	(3,087,776)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**(15,493,233)**	**(1,773,539)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	**(1,335,927)**	**1,413,124**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս (դրամական հոսքեր գործառնական գործունեությունից)	495,304	783,815
Վճարված տոկոսներ	(3,769,528)	(334,720)
Տեղափոխումներ կրեդիտորական պարտքերի կազմից՝ ցեսիայի պայմանագրերի հիման վրա	-	127,874
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	**(3,274,224)**	**576,969**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**105,500**	**20,208,884**

19. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Առևտրական կրեդիտորական պարտքեր	522,750	1,331,350
Աշխատավարձ	119,731	73,082
Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտքեր ընթացիկ առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	**642,481**	**1,404,432**
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	12,656	436,051
Վճարվելիք այլ հարկեր	88,695	234,942
Արձակուրդային վճարների գծով պահուստ	63,628	35,362
Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	**807,460**	**2,110,787**

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

20. Թողարկված պարտատոմսեր

հազ. դրամ	**Արժույթ**	**Անվանական տոկոսադրույք**	**Մարման ամսաթիվ**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Թողարկված տեղական պարտատոմսեր	ՀՀ դրամ	12%	11.06.2031	13,304,156
Թողարկված տեղական պարտատոմսեր	ԱՄՆ դոլար	7%	11.06.2031	259,306
				13,563,462

2021թ. հունիսի 11-ին Խումբը թողարկել և տեղաբաշխել ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքային արժեթղթեր՝ համապատասխանաբար 15,000 միլիոն ՀՀ դրամ և 15 միլոն ԱՄՆ դոլար անվանական արժեքով: ՀՀ դրամով արտահայտված պարտքային արժեթղթերի շուրջ 80%-ը պահվում է բաժնետերերի կողմից, իսկ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքային արժեթղթերի 30%-ը՝ կապակցված կողմերի կողմից:

Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում

	2021
Մնացորդը առ 1 հունվարի	-
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	
Մուտքեր թողարկումից	22,779,150
Թողարկված պարտատոմսերի ձեռքբերում	(8,738,383)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**14,040,767**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	**(602,627)**
Այլ փոփոխություններ	
Տոկոսային ծախս	1,284,717
Վճարված տոկոսներ	(1,159,395)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**13,563,462**

21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին՝ հիմնականում դրանց կարճաժամկետայնության պատճառով:

(բ) Իրական արժեքի չափում

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Տեսակը	Գնահատման մեթոդը	Նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները
Վարկեր և փոխառություններ	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Այլ ֆինանսական պարտավորություններ*	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն

* Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են գրավով ապահովված և չապահովված բանկային վարկերը, ստացված փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(գ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (տես Ծանոթագրություն 21(գ)(ii)),
- իրացվելիության ռիսկ (տես Ծանոթագրություն 21(գ)(iii)),
- շուկայական ռիսկ (տես Ծանոթագրություն 21(գ)(iv)):

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի հետ կապված:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի բնութագրերից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ իր հաճախորդների բազայի պարտքային ռիսկի վրա, այդ թվում՝ այն ոլորտին և երկրին բնորոշ պարտազանցման ռիսկը, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները: Հասույթի կենտրոնացման մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 5-ում:

Խմբում չի գործում հաճախորդների հետ կապված պարտքային ռիսկի հարցերը կարգավորող հատուկ քաղաքականություն, այնուամենայնիվ, Խմբի հասույթի մոտ 98%-ը վերագրելի է երկու խոշոր հաճախորդների հետ իրականացվող վաճառքի գործարքներին, որոնցից մեկը կապակցված կողմ է (2020թ-ին՝ երկու հաճախորդների հետ իրականացվող վաճառքի գործարքներին, որոնցից մեկը կապակցված կողմ էր): Այս հաճախորդներից ոչ մեկի պարտքերի մնացորդները դուրս գրված չեն կամ պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրութամբ:

Առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին իր ենթարկվածությունը սահմանափակելու համար Խումբը հաճախորդների համար վճարման առավելագույն ժամկետ է սահմանել երկու ամիսը:

Խումբը չի պահանջում գրավ առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի երկու ամենախոշոր հաճախորդների («Moody's» վարկանիշային գործակալության B2 արտաքին վարկանիշով հանքարդյունաբերական ընկերություն և մեծածախ առևտրով զբաղվող միջազգային ընկերություն, որի վարկանիշը ղեկավարության գնահատմամբ մոտավորապես համապատասխանում է «Moody's» վարկանիշային գործակալության B3 վարկանիշին՝ հիմք ընդունելով այդ ընկերություն գործունեության երկրի վարկանիշը) հաշվեկշռային արժեքը կազմում էր 2,658,655 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,266,525 հազար դրամ):

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում հաճախորդների համար

Խումբը պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ այն տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են կորստի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշեր, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ, կառավարչական հաշվետվություններ, դրամական հոսքերի կանխատեսումներ և հաճախորդների մասին մամուլում հրապարակված տեղեկատվություն), և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտազանցման ռիսկի մասին և համընկնում են այնպիսի գործակալությունների արտաքին վարկանշավորման սահմանումներին ինչպիսին «Moody's Investor Services»-ն է:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության, առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների և հաճախորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2021թ. հազ. դրամ	**Կորստի միջին կշռված մակարդակ**	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Արժեզրկումից կորուստների գծով պահուստ**	**Պարտքային առումով արժեզրկված**
Առևտրական դեբիտորական պարտքեր և պայմանագրի գծով ակտիվներ				
Ցածր ռիսկ	0.6%	2,914,033	(17,753)	Ոչ
Կասկածելի պարտք	0.0%	-	-	Ոչ
		2,914,033	**(17,753)**	

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության, առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների և հաճախորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2020թ. **հազ. դրամ**	**Կորստի միջին կշռված մակարդակ**	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Արժեզրկումից կորուստների գծով պահուստ**	**Պարտքային առումով արժեզրկված**
Առևտրական դեբիտորական պարտքեր և պայմանագրի գծով ակտիվներ				
Ցածր ռիսկ	0.38%	1,266,525	(4,813)	Ոչ
Կասկածելի պարտք	10.78%	44,490	(4,795)	Այո
		1,311,015	**(9,608)**	

Խումբը ցածր ռիսկը սահմանում է հետևյալ կերպ.

Ցածր ռիսկ. հաճախորդը մոտ ապագայում ունի պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու կայուն հնարավորություն, իսկ ավելի երկար ժամկետում տնտեսական և առևտրային պայմանների անբարենպաստ փոփոխությունները քիչ հավանական է, որ նվազեցնեն պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու փոխառուի կարողությունը:

Կասկածելի պարտք. հաճախորդի պարտքի ամբողջական մարումը կասկածելի է և անորոշ: Գումարի մարման չափը տատանվում է ամբողջական կորստից մինչև անորոշ կորուստը, եթե չձեռնարկվեն հարցի կարգավորմանն ուղղված միջոցառումներ: Կասկածելի պարտք ունեցող հաճախորդները սովորաբար իրենցից ներկայացնում են պարտականությունները չկատարող հաճախորդներ, որոնց համար պարտքի մնացորդի ամբողջական հավաքագրումը ռիսկային է:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների արժեզրկման գծով պահուստի փոփոխություններ

Ստորև ներկայացված են առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխությունները տարվա ընթացքում:

հազ. դրամ	**2021թ.**	**2020թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	(9,608)	(9,608)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(8,145)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(17,753)**	**(9,608)**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 1,127,066 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 68,518 հազար դրամ), որոնք իրենցից ներկայացնում են առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված:

Բանկային հաշիվների մնացորդները (ընթացիկ հաշիվները) պահվում են «Moody's» վարկանիշային գործակալության B3 վարկանիշով Հայաստանի խոշոր բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Խմբի գնահատմամբ բանկերում պահվող ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետայնության պատճառով:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Ենթարկվածություն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մնացած մարման ժամկետները 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

31 դեկտեմբերի 2021թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Ցպահանջ**	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**	**2-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ֆինանսական պարտավորություններ								
Գրավով ապահովված բանկային վարկեր	105,500	109,154	-	-	109,154	-	-	-
Թողարկված պարտատոմսեր	13,563,462	28,718,666	-	272,503	1,331,762	1,604,265	8,030,114	17,480,022
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	642,481	642,481	320,313	322,168	-	-	-	-
	14,311,443	**29,470,301**	**320,313**	**594,671**	**1,440,916**	**1,604,265**	**8,030,114**	**17,480,022**

31 դեկտեմբերի 2020թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Ցպահանջ**	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**
Ֆինանսական պարտավորություններ						
Գրավով ապահովված բանկային վարկեր	4,480,939	4,605,869	-	667,665	3,832,941	105,263
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերերից	4,724,526	4,724,526	4,724,526	-	-	-
Գրավով չապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից	11,003,419	11,003,419	11,003,419	-	-	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	1,404,432	1,404,432	861,229	395,171	148,032	-
	21,613,316	**21,738,246**	**16,589,174**	**1,062,836**	**3,980,973**	**105,263**

Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական հոսքերը կարող են առաջանալ նշվածից նշանակալիորեն ավելի վաղ կամ նշանակալիորեն տարբեր գումարներով:

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արժութային ռիսկ

Խումբը ենթարկվում է արժութային ռիսկին այնքանով, որքանով արժույթները, որոնցով արտահայտված են վաճառքի ու գնումների գործառնությունները և փոխառությունները, չեն համապատասխանում Խմբի ֆունկցիոնալ արժույթին: Այս գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Ենթարկվածություն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արժութային ռիսկին:

հազ. դրամ	**ԱՄՆ դոլարով արտահայտված 31 դեկտեմբերի 2021թ.**	**Եվրոյով արտահայտված 31 դեկտեմբերի 2021թ.**	**ԱՄՆ դոլարով արտահայտված 31 դեկտեմբերի 2020թ.**	**Եվրոյով արտահայտված 31 դեկտեմբերի 2020թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր	-	-	815,183	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	504,335	1,280	6,201	-
Առևտրական կրեդիտորական պարտքեր	35	-	-	(22,439)
Վարկեր և փոխառություններ	-	-	(16,921,150)	(298,261)
Թողարկված պարտատոմսեր	(259,306)	-	-	-
Զուտ ենթարկվածություն	**245,064**	**1,280**	**(16,099,766)**	**(320,700)**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	**Միջին փոխարժեք**	**Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ**	
	2021թ.	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
1 ԱՄՆ դոլար	503.19	480.14	522.59
1 եվրո	595.17	542.61	641.11

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) այլ արտարժույթների նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	**Աճ**	**Նվազում**
	Շահույթ կամ վնաս	**Շահույթ կամ վնաս**
31 դեկտեմբերի 2021թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	24,506	(24,506)
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ	128	(128)
31 դեկտեմբերի 2020թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	1,609,977	(1,609,977)
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ	32,070	(32,070)

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե որ տոկոսադրույքը՝ հաստատունը թե փոփոխունը, ավելի բարենպաստ կլինի Խմբի համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	
	31 դեկտեմբերի 2021թ.	**31 դեկտեմբերի 2020թ.**
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	13,668,962	14,392,002
	13,668,962	**14,392,002**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական պարտավորությունները ներառում են 13,563,462 հազար դրամ ընդհանուր գումարով հաստատուն տոկոսադրույքով թողարկված պարտատոմսերը և 105,500 հազար դրամ գումարով գրավով ապահովված բանկային վարկերը:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական պարտավորությունները ներառում են 4,480,939 հազար դրամ ընդհանուր գումարով հաստատուն տոկոսադրույքով բանկային վարկերը, որոնց հետ կապված բանկերը հնարավորություն ունեն վերանայել տոկոսադրույքը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում, և Խումբը հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի:

Իրական արժեքի զգայնության վերլուծություն հաստատուն տոկոսադրույքով գործիքների համար

Խումբը չի հաշվառում հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ վաճառքի համար մատչելի: Ուստի, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

22. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբն ամբողջովին չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է նշանակալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում կամ այլ հայցերում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀՋԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար, սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը հարկային տարում.

- միջսահմանային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջսահմանային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ վերջիններիս կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունն այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Վերը նշված հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

23. Կապակցված կողմեր

(ա) Մայր կազմակերպություն և վերջնական հսկող կողմ

Ընկերության հիմնական բաժնետերերն են՝ «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը (49.35%), Գևորգ Հարությունյանը (16.52%), Տիգրան Հարությունյանը (16.52%) և Վահան Հարությունյանը (16.52%): «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվությունները:

Խումբը չունի վերջնական հսկող կողմ:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է աշխատակիցների հատուցումների գծով ծախսերում (տես Ծանոթագրություն 7):

հազ. դրամ	**2021թ.**	**2020թ.**
Աշխատավարձ և պարգևավճարներ	**51,058**	**35,452**

(ii) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված են առանցքային ղեկավար անձնակազմի և այն կազմակերպությունների հետ գործարքների ընդհանուր գումարը և մնացորդները, որոնց նկատմամբ առանցքային ղեկավար անձնակազմն ունի հսկողություն կամ նշանակալի ազդեցություն:

հազ. դրամ	**Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**		**Մնացորդը առ 31 դեկտեմբերի**	
	2021թ.	**2020թ.**	**2021թ.**	**2020թ.**
Փոխադրամիջոցների վարձակալություն	720	720	270	160

(գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2021թ.	**2020թ.**	**2021թ.**	**2020թ.**
Ապրանքներ և ծառայությունների վաճառք				
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	22,812,620	8,836,081	2,245,319	(350,000)
Ապրանքներ և ծառայությունների գնում				
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	(3,694,142)	(1,082,139)	(25,640)	(433,064)
Ստացված փոխառություններ				
Բաժնետերեր	(4,510,284)	149,500	-	(4,724,526)
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	(10,481,011)	242,830	-	(11,003,419)
Թողարկված պարտատոմսեր				
Բաժնետերեր	(10,197,426)	-	(10,197,426)	-
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	(75,141)	-	(75,141)	-

Կապակցված կողմերի և բաժնետերերի հետ գործարքների բոլոր մնացորդները (բացառությամբ թողարկված պարտատոմսերի) ենթակա են մարման կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետ վեց ամսվա ընթացքում: Գործարքների մնացորդները գրավով ապահովված չեն: Ընթացիկ կամ նախորդ տարում չեն ճանաչվել անհուսալի կամ կասկածելի պարտքերի գծով ծախսեր կապակցված կողմերի պարտքերի հետ կապված:

Կապակցված կողմերից ստացված փոխառությունների գծով տոկոսային ծախսը կազմում է 358,304 հազար դրամ (2020թ-ին՝ 458,122 հազար դրամ): Թողարկված պարտատոմսերի գծով տոկոսային ծախսը կազմում է 1,284,717 հազար դրամ:

24. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հիմնական միջոցների ելակետային արժեքի, որն իրենից ներկայացնում է հիմնական միջոցների իրական արժեքը 2020թ. հունվարի 1-ի՝ ՖՀՄՍ անցման ամսաթվի դրությամբ:

25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

(բ) Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Այնուամենայնիվ, այն ֆինանսական ակտիվների համար, որոնք պարտքային առումով արժեզրկված են դարձել սկզբնական ճանաչումից հետո, տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամուտը կրկին սկսվում է հաշվարկվել համախառն հիմունքով:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի փոփոխությունը՝ զուտ շահույթի, թե՝ զուտ վնասի:

(գ) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Խմբի ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(դ) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար կամ շահույթի բաշխումների պլանի շրջանակում, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(ե) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբը տվյալ պահին ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

(զ) Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Հումքի և պահեստամասերի ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով, իսկ պատրաստի և անավարտ արտադրանքի ինքնարժեքը որոշվում է միջին կշռված արժեքի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում, ինքնարժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

(է) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի գծով ծախսումները, նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած այլ ծախսումները, հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև դրանց զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում: Վերագնահատված ակտիվների վաճառքի դեպքում, վերագնահատման պահուստի կազմում որպես վերագնահատումից աճ ներառված համապատասխան գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը զուգընթաց:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

2021թ-ից հալեցման և ձուլման գործընթացում օգտագործվող հիմնական սարքավորումների մաշվածությունը հաշվարկվում է արտադրության միավորի մեթոդով: Այլ միավորների գծով մաշվածությունըանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Ստորև ներկայացված են հիմնական միջոցների նշանակալի մասերի օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- Շենքեր և շինություններ 50-70 տարի,
- Հոսքագծեր 20-25 տարի,
- Մեքենաներ և սարքավորումներ 15-25 տարի,
- Փոխադրամիջոցներ 3-5 տարի:

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ը) Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով՝ ներառյալ գործարքի գծով ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ներդումային գույքի օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 25 տարի:

Ներդումային գույքի օտարումից ստացված ցանկացած օգուտը կամ կորուստը (որը հաշվարկվում է որպես օտարումից զուտ մուտքերի և միավորի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(թ) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել

ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ստանալ պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտը, ապահովել տոկոսադրույքների որոշակի կառուցվածքը, ֆինանսական ակտիվների ժամկետները համապատասխանեցնել համապատասխան ֆինանսական պարտավորությունների ժամկետներին կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- պայմանները, որոնք կարող են ճշգրտել պայմանագրային արժեկտրոնային տոկոսադրույքը, այդ թվում՝ փոփոխական տոկոսադրույքի պայմանները
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել

պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի նկատմամբ զեղչով կամ հավելագնով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարով, որն ըստ էության իրենից ներկայացնում է պայմանագրային անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսը (որը կարող է ներառել լրացուցիչ ողջամիտ փոխհատուցումը պայմանագրի վաղաժամ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման հատկանիշի իրական արժեքն աննշան է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Խումբն իր ֆինանսական ակտիվները դասում է ամորտիզացված արժեքով չափվող գործիքների դասին: Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախորոշված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ օգուտը և կորուստները, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտում շահույթում կամ վնասում՝ փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ: Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները՝ հանած ստացված վճարները, որոնք զեղչված են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված պարտավորության մնացած ժամանակահատվածում:

(iv) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(ժ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոններին թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(ի) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Առևտրական դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Խմբի անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Խմբին հասանելիք դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերություն):

Ակնկալվող պարտքային կորուստները զեղչվում ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ հաճախորդը կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Խումբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար Խումբը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքի դուրսգրման քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան 180 օր ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գծով գումարների փոխհատուցման անցյալ ժամանակաշրջանների փորձը: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար Խումբն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի առանձին գնահատում՝ ելնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Խումբը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները: Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին կամ դրամաստեղծ միավորին հատուկ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով արժեզրկումից կորուստը բաշխվում է համամասնորեն:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու համար, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(լ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2021թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները, որոնք, ինչպես ակնկալվում է, նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(ա) Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՄ 37 փոփոխություններ)

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Խումբը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար: Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ փոփոխությունների կիրառման կուտակային հետևանքը ճանաչվում է որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների սկզբնական մնացորդի ճշգրտում՝ ըստ կիրառելիության: Համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվները պարբերաբար նվազեցվում են արժեզրկումից կորուստների չափով (առկայության դեպքում) և ճշգրտվում են վարձակալության գծով պարտավորությունների որոշ ճշգրտումների մասով: Խումբը որոշել է, որ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա բոլոր պայմանագրերը կավարտվեն մինչ փոփոխությունների ուժի մեջ մտնելը:

(բ) Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում. Փուլ 2 (ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 39, ՖՀՄՄ 7, ՖՀՄՄ 4 և ՖՀՄՄ 16 փոփոխություններ)

Փոփոխություններն անդրադառնում են այն հարցերին, որոնք կարող են ազդեցություն ունենալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում, ներառյալ փոփոխությունների ազդեցությունը պայմանագրային դրամական հոսքերի կամ հեջավորման հարաբերությունների վրա՝ ուղենիշային տոկոսադրույքն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքով փոխարինելու դեպքում: Փոփոխությունները նախատեսում եմ ազատում ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 39, ՖՀՄՄ 7, ՖՀՄՄ 4 և ՖՀՄՄ 16 որոշակի պահանջներից, որոնք վերաբերում են.

- ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություններին և
- հեջի հաշվառմանը:

(i) Դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն

Փոփոխությունները Խմբից կպահանջեն հաշվառել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունը, որը պահանջվում է ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումով, վերանայելով ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի LIBOR տոկոսադրույքով գրավով ապահովված բանկային վարկեր, որոնք ենթակա են բարեփոխման IBOR տոկոսադրույքով:

(ii) Հեջի հաշվառում

Փոփոխությունները նախատեսում են բացառություններ հեջի հաշվառման պահանջների հետ կապված հետևյալ ոլորտներում.

- Թույլ տալ փոփոխություն հեջավորման հարաբերության նախորոշման հետ կապված բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար:
- Բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար դրամական հոսքերի հեջում հեջավորված հոդվածի գծով փոփոխություն կատարելիս՝ դրամական հոսքերի հեջի պահուստում կուտակված գումարը կդիտարկվի որպես հիմնված այն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքի վրա, որով որոշվում են հեջավորված ապագա դրամական հոսքերը:
- Երբ հոդվածների խումբը նախորոշվում է որպես հեջավորված հոդված, և խմբի հոդվածի հետ կապված կատարվում է փոփոխություն բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար, հեջավորված հոդվածները բաշխվում են ենթախմբերի հեջավորվող ուղենիշային տոկոսադրույքների հիման վրա:
- Եթե Խումբը ողջամտորեն ակնկալում է, որ այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքն առանձին նույնականացվող է 24 ամսվա ընթացքում, ապա չի արգելվում տոկոսադրույքը նախորոշել որպես պայմանագրորեն չհատկորոշված ռիսկային բաղադրիչ, եթե այն առանձին նույնականացվող չէ նախնական ամսաթվի դրությամբ:

Հեջի հաշվառման բացակայության հետևանքով Խումբն չի ակնկալում որևէ ազդեցություն IBOR-ի անցման հետ կապված:

(iii) Բացահայտում

Փոփոխությունները Խմբից կպահանջեն բացահայտել լրացուցիչ տեղեկատվություն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում առաջացող ռիսկերին Խմբի ենթարկվածության և ռիսկերի կառավարման համար իրականացվող համապատասխան գործունեության վերաբերյալ:

(iv) Անցում

Խումբը մտադիր է կիրառել փոփոխությունները 2021թ. հունվարի 1-ից: Փոփոխությունների կիրառումն ազդեցություն չի ունենա 2021թ. կամ նախորդ ժամանակաշրջանների համար ներկայացված գումարների վրա:

(գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Covid-19 հետ կապված զիջումներ վարձակալության գծով (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* և ՖՀՄՍ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2022թ. համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի (Ընկերություն) և վերջինիս դուստր ընկերության (Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ. և նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք անդրադարձել ենք այդ հարցերին համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն և համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք տրամադրում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Հասույթի ճանաչում	
Ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ 5-ում և Ծանոթագրություն 25-ի (ա) կետում:	
Աուդիտի առանցքային հարց	**Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր**
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ապրանքների և ծառայությունների վաճառքից ստացված հասույթը կազմել է 34,288,753 հազար դրամ: Հասույթի ճանաչումը համարվում է աուդիտի առանցքային հարց ելնելով հետևյալ պատճառներից՝ – գործարքների մեծ ծավալ, – ապրանքների նկատմամբ հսկողությունը հաճախորդներին փոխանցելու պահի հետ կապված դատողություն:	Հասույթի ճանաչման գնահատման հետ կապված մենք իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը. – Գնահատել ենք հասույթի ճանաչման գործընթացը հսկող հիմնական ներքին համակարգի կառուցվածքը և աշխատանքը: – Վերլուծել ենք Խմբի ապրանքների վաճառքից ստացվող հասույթի ճանաչման հաշվապահական կաշվառման քաղաքականությունը որոշելու համար, թե արդյոք այն ըստ պատշաճի է արտացոլում ՖՀՄՍ 15 *«Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից»* պահանջները, որոնք վերաբերում են կատարման պարտականությունների կատարումից ստացվող հասույթի ճանաչմանը համապատասխան ժամկետում: – Ստուգել ենք վաճառքի պայմանագրերն ընտրանքային կարգով առաքման պայմանների մասին պատկերացում կազմելու և գնահատելու համար, թե արդյոք հասույթը ճանաչվել է կատարման պարտականությունների կատարումից ստացվող հասույթը համապատասխան ժամկետում ճանաչելու ՖՀՄՍ 15-ի պահանջների համաձայն: – Համեմատել ենք ընտրանքային կարգով տարվա ընթացքում գրանցված առանձին գործարքները, որոնցից հասույթ է ստացվել, հիմք հանդիսացող առաջնային փաստաթղթերի հետ: – Ստացել ենք տարվա շրջանառության և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդների հաստատման նամակներ Խմբի հաճախորդներից ընտրանքային կարգով, իսկ հաստատումների համար, որոնք չենք ստանցել, իրականացրել ենք այլընտրանքային ընթացակարգեր՝ համեմատելով գործարքի մանրամասները հիմք հանդիսացող առաջնային փաստաթղթերի տվյալների հետ: – Համեմատել ենք ընտրանքային կարգով տարեվերջին մոտակա ժամանակահատվածում գրանցված առանձին գործարքները հիմք հանդիսացող առաջնային փաստաթղթերի հետ որոշելու համար, թե արդյոք հասույթն ըստ պատշաճի ճանաչվել է համապատասխան ժամկետում: - Դիտարկել ենք նաև Ծանոթագրություն 5-ում և Ծանոթագրություն 25-ի (ա) կետում Խմբի բացահայտված տեղեկատվության տեղին լինելը:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

– եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:

– գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

– ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Դավիթ Շամշյան
Աուդիտորական առաջադրանքի գործընկեր

Իրինա Ավետյան
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
29 ապրիլի 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2022թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	33,682,440	29,393,981
Ներդրումային գույք	12	1,094,811	1,117,043
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		2,045,761	112,868
Այլ ակտիվներ		5,610	6,282
Ոչ ընթացիկ ակտիվներ		**36,828,622**	**30,630,174**
Պաշարներ	13	9,531,117	7,042,321
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	9,411,754	3,439,089
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	15	479,600	1,143,052
Ընթացիկ ակտիվներ		**19,422,471**	**11,624,462**
Ընդամենը ակտիվներ		**56,251,093**	**42,254,636**
Սեփական կապիտալ	16		
Բաժնետիրական կապիտալ		9,438,576	9,438,576
Չբաշխված շահույթ		13,928,124	13,010,280
Ընդամենը սեփական կապիտալ		**23,366,700**	**22,448,856**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	18	5,131,726	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	3,822,660	3,446,647
Ռոդարկված պարտատոմսեր	20	20,903,550	13,471,555
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**29,857,936**	**16,918,202**
Վարկեր և փոխառություններ	18	1,330,096	105,500
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	19	1,244,798	807,460
Ռոդարկված պարտատոմսեր	20	124,306	91,907
Ընթացիկ հարկային պարտավորություն		327,257	1,882,711
Ընթացիկ պարտավորություններ		**3,026,457**	**2,887,578**
Ընդամենը պարտավորություններ		**32,884,393**	**19,805,780**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**56,251,093**	**42,254,636**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	**Ծնթգ.**	**2022թ.**	**2021թ.**
Հասույթ	5	34,288,753	33,560,326
Վաճառքի ինքնարժեք	6	(21,887,057)	(16,774,399)
Համախառն շահույթ		**12,401,696**	**16,785,927**
Այլ եկամուտ		82,796	24,171
Իրացման ծախսեր		(156,078)	(174,718)
Վարչական ծախսեր	7	(599,785)	(447,749)
Այլ ծախսեր	8	(103,438)	(226,811)
Գործառնական գործունեության արդյունքներ		**11,625,191**	**15,960,820**
Ֆինանսական եկամուտ	9	907,190	973,290
Ֆինանսական ծախսեր	9	(2,292,200)	(1,780,021)
Զուտ ֆինանսական ծախսեր		**(1,385,010)**	**(806,731)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**10,240,181**	**15,154,089**
Շահութահարկի գծով ծախս	10	(1,322,337)	(2,648,172)
Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**8,917,844**	**12,505,917**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (ՀՀ դրամ)	16(գ)	142	371

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2023թ. ապրիլի 29-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հրայր Մուրադյան
Տնօրեն

Կարինե Մանուկյան
Ֆինանսական տնօրեն

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	1,179,822	8,763,117	9,942,939
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
Շահույթ տարվա համար	-	12,505,917	12,505,917
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**-**	**12,505,917**	**12,505,917**
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ			
Չբաշխված շահույթի տեղափոխում բաժնետիրական կապիտալ (Ծնթգ. 16)	8,258,754	(8,258,754)	-
Ընդամենը գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ	**8,258,754**	**(8,258,754)**	**-**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**9,438,576**	**13,010,280**	**22,448,856**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	9,438,576	13,010,280	22,448,856
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
Շահույթ տարվա համար		8,917,844	8,917,844
Վճարված շահաբաժիններ		(8,000,000)	(8,000,000)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**-**	**8,917,844**	**8,917,844**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**9,438,576**	**13,928,124**	**23,366,700**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված գումարներ	35,960,657	37,416,014
Աշխատակիցներին վճարված գումարներ	(1,560,535)	(1,317,683)
Մատակարարներին վճարված գումարներ	(24,900,791)	(18,541,442)
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(4,307,355)	(4,961,190)
Այլ վճարումներ	(183,010)	(58,020)
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ մինչև շահութահարկի և տոկոսների վճարումը	**5,008,966**	**12,537,679**
Վճարված տոկոսներ	(2,315,241)	(4,928,923)
Վճարված շահութահարկ	(2,474,368)	(716,244)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**219,357**	**6,892,512**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(7,890,242)	(2,415,025)
Ներդրումային գույքի ձեռքբերում	-	(1,117,043)
Մուտքեր ոչ ընթացիկ վաճառքից	19,189	44,939
Տրամադրված փոխառություններ	(4,270,725)	-
Մուտքեր տրամադրված փոխառությունների մարումից	4,270,725	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(7,871,053)**	**(3,487,129)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	9,448,681	540,109
Վարկերի և փոխառությունների մարում	(2,758,461)	(16,033,342)
Թողարկված պարտատոմսերի ձեռքբերում	-	(8,738,383)
Մուտքեր թողարկված պարտատոմսերի վաճառքից	8,467,525	-
Մուտքեր թողարկված պարտատոմսերից	-	22,779,150
Վճարված շահաբաժիններ	(8,000,000)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**7,157,745**	**(1,452,466)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(493,951)**	**1,952,917**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	1,143,052	73,216
Արտարժույթի փոխարժեքի տատանումների հետևանքները դրամական միջոցների և դրանց համարժեքների համար	(169,501)	(883,081)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**479,600**	**1,143,052**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2022թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ծանոթագրություն	Էջ
1. Հաշվետու կազմակերպություն	12
2. Պատրաստման հիմունքներ	13
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	13
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում	13
5. Հասույթ	14
6. Վաճառքի ինքնարժեք	17
7. Վարչական ծախսեր	17
8. Այլ ծախսեր	18
9. Զուտ ֆինանսական ծախսեր	18
10. Շահութահարկ	19
11. Հիմնական միջոցներ	21
12. Ներդրումային գույք	22
13. Պաշարներ	23
14. Ավտրական և այլ դեբիտորական պարտքեր	23
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	23
16. Կապիտալ և պահուստներ	24
17. Կապիտալի կառավարում	25
18. Վարկեր և փոխառություններ	25
19. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	26
20. Թողարկված պարտատոմսեր	27
21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	28
22. Պայմանական դեպքեր	33
23. Կապակցված կողմեր	34
24. Չափման հիմունքներ	36
25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր	36
26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	47

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար «ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի (Ընկերություն) և վերջինիս դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համար:

«ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ն (Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցված բաց բաժնետիրական ընկերություն է: Ընկերությունը հիմնադրվել է «Հայձուլ» ՓԲԸ-ի (նախկինում՝ «Ավտոձուլ» ՓԲԸ) սեփականաշնորհման արդյունքում՝ որպես բաց բաժնետիրական ընկերություն 1998թ. սեպտեմբերի 4-ին:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան փող. 2:

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության շրջանառության մեջ գտնվող ընդհանուր բաժնետոմսերի ավելի քան 3%-ը պատկանում էր հետևյալ բաժնետերերին.

Մասնակցության % առ 31 դեկտեմբերի	**2022թ.**	**2021թ.**
«Մորակո Հոլդինգ Լիմիթիդ»	49.35%	49.35%
Պրն. Գևորգ Հարությունյան	16.53%	16.53%
Պրն. Տիգրան Հարությունյան	16.53%	16.53%
Պրն. Վահան Հարությունյան	16.29%	16.29%

Մյուս բաժնետերերին անհատապես պատկանում է բաժնետոմսերի 3%-ից պակաս մասնաբաժին:

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ»-ի հսկող անձն է Միխայիլ Հարությունյանը: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի վերջնական հսկող կողմ: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

Խմբի հիմնական գործունեությունը Չարենցավանում գտնվող գործարանում ամրանների և մետաղական գնդերի արտադրությունն ու իրացումն է: Խմբի արտադրանքը վաճառվում է Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:

Ստորև ներկայացված է համախմբված դուստր ընկերությունը:

		2022թ.	**2021թ.**
Դուստր ընկերություն	**Գրանցման երկիր**	**Սեփականության իրավունք/ Ձայնի իրավունք**	**Սեփականության իրավունք/ Ձայնի իրավունք**
«ԱՍԿԵ Թրեյդ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%

Դուստր ընկերության հիմնական գործունեությունը «ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերի առքն ու վաճառքն է:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին

հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել են սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը բիզնես միջավայրում:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության հավաստում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Խմբի ֆունկցիոնալ և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված են Ծանոթագրություն 25(է)(iii)՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների հետ կապված:

Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ*. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտվող):
- *2-րդ մակարդակ*. 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- *3-րդ մակարդակ*. ակտիվի կամ պարտավորության ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումները Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը: Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

5. Հասույթ

(ա) Հասույթի ուղղություններ

Խումբը հասույթը հիմնականում ստանում է ամրանների և մետաղական գնդերի վաճառքից:

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ապրանքների վաճառք	34,238,588	33,512,709
Հասույթ մատուցված ծառայություններից	50,165	47,617
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**34,288,753**	**33,560,326**

(բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների, հիմնական արտադրատեսակների/ծառայությունների և հասույթի ճանաչման ժամկետների 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

հազ. դրամ	Հանքարդյունա-բերական ընկերություններ	Շինարարական ընկերություններ	Այլ ոլորտների ընկերություններ	Ընդամենը
Հիմնական աշխարհագրական շուկաներ				
Հայաստանի Հանրապետություն	4,005,530	26,245,833	223,182	30,474,545
Արտահանում Վրաստան	-	-	3,814,208	3,814,208
	4,005,530	**26,245,833**	**4,037,390**	**34,288,753**
Հիմնական արտադրատեսակներ/ ծառայություններ				
Ամրաններ	-	26,226,022	4,209	26,230,231
Մետաղական գնդեր	4,005,530	-	183,126	4,188,656
Նախապատրաստվածքներ	-	-	3,819,701	3,819,701
Փոխադրման ծառայություններ	-	19,811	30,354	50,165
	4,005,530	**26,245,833**	**4,037,390**	**34,288,753**
Հասույթի ճանաչման ժամկետներ				
Ժամանակի որոշակի պահին փոխանցված արտադրանք	4,005,530	26,226,022	4,007,036	34,238,588
Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ	-	19,811	30,354	50,165
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**4,005,530**	**26,245,833**	**4,037,390**	**34,288,753**

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների, հիմնական արտադրատեսակների/ծառայությունների և հասույթի ճանաչման ժամկետների 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

հազ. դրամ	Հանքարդյունա-բերական ընկերություններ	Շինարարական ընկերություններ	Այլ ոլորտների ընկերություններ	Ընդամենը
Հիմնական աշխարհագրական շուկաներ				
Հայաստանի Հանրապետություն	5,635,642	23,224,350	316,002	29,175,994
Արտահանում Վրաստան	-	-	4,384,332	4,384,332
	5,635,642	**23,224,350**	**4,700,334**	**33,560,326**
Հիմնական արտադրատեսակներ/ ծառայություններ				
Ամրաններ	-	23,183,088	5,839	23,188,927
Մետաղական գնդեր	5,635,642	-	252,702	5,888,344
Նախապատրաստվածքներ	-	-	4,436,573	4,436,573
Փոխադրման ծառայություններ	-	41,262	5,220	46,482
	5,635,642	**23,224,350**	**4,700,334**	**33,560,326**
Հասույթի ճանաչման ժամկետներ				
Ժամանակի որոշակի պահին փոխանցված արտադրանք	5,635,642	23,183,088	4,695,114	33,513,844
Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ	-	41,262	5,220	46,482
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**5,635,642**	**23,224,350**	**4,700,334**	**33,560,326**

(գ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով պարտավորությունների վերաբերյալ:

հազ. դրամ	**Ծնթգ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
«Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված դեբիտորական պարտքեր	14	7,382,392	2,914,033
Պայմանագրի գծով պարտավորություններ	19	-	12,656

Պայմանագրի գծով պարտավորությունները վերաբերում են հաճախորդներից ստացված կանխավճարներին:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրի գծով պարտավորությունների կազմում ճանաչված 12,656 հազար դրամ գումարը ճանաչվել է որպես հասույթ 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

(դ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Արտադրանքի/ ծառայության տեսակը	**Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները**	**Հասույթի ճանաչման քաղաքականություն**
Ամրանների, մետաղական գնդերի և նախապատրաստվածքների վաճառք	Հաճախորդներն ապրանքների նկատմամբ հսկողություն են ձեռք բերում, երբ ապրանքներն առաքվում են նշված վայր կամ ուղարկվում են Խմբի պահեստից՝ առքուվաճառքի պայմանագրերի համաձայն: Հաշիվները դուրս են գրվում ժամանակի որոշակի պահին: Հաշիվները սովորաբար ենթակա են վճարման երկու ամսվա ընթացքում: Ապրանքների համար զեղչեր, կուտակային միավորներ կամ գումարի վերադարձ չեն առաջարկվում:	Հասույթը ճանաչվում է, երբ ապրանքներն առաքվում են նշված վայր կամ ուղարկվում են նշված վայրից՝ պայմանագրի համաձայն:
Փոխադրման ծառայությունների մատուցում	Խումբը նաև մատուցում է հաճախորդներին վաճառված ապրանքների փոխադրման ծառայություններ: Հաշիվները սովորաբար ենթակա են վճարման երկու ամսվա ընթացքում:	Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայության մատուցմանը զուգահեռ:

6. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Նյութեր	14,116,468	9,786,578
Կոմունալ ծառայություններ	4,254,349	3,687,864
Աշխատավարձ	1,842,920	1,740,818
Մաշվածություն	1,592,945	1,465,055
Այլ	80,375	94,084
	21,887,057	**16,774,399**

Ծախսերն ըստ բնույթի

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Փոխություններ պատրաստի և անավարտ արտադրանքի պաշարներում	(825,854)	1,492,378
Նյութեր	14,650,837	8,923,607
Կոմունալ ծառայություններ	4,457,484	3,397,837
Աշխատավարձ	2,146,063	1,810,571
Մաշվածություն	1,689,821	1,350,856
Ապահովագրության և բանկային ծառայությունների վճարներ	164,235	69,154
Մասնագիտական ծառայություններ	85,650	73,036
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	19,808	15,479
Անվտանգության ծառայություն	6,480	6,480
Տրված կանխավճարների դուրսգրում	3,764	3,717
Այլ ծախսեր	191,992	305,580
	22,590,280	**17,448,695**

7. Վարչական ծախսեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Աշխատավարձ*	233,380	223,520
Ապահովագրության և բանկային ծառայությունների վճարներ	164,235	69,154
Մասնագիտական ծառայություններ	85,650	73,036
Գրասենյակային և կոմունալ ծառայություններ	42,089	35,166
Մաշվածություն	36,576	14,796
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	19,808	15,479
Անվտանգության ծառայություն	6,480	6,480
Այլ	11,567	10,118
	599,785	**447,749**

* 2022թ. համար աշխատակիցների հատուցումների ընդհանուր գումարը կազմել է 2,146,063 հազար դրամ (2021թ-ին՝ 1,810,571 հազար դրամ):

8. Այլ ծախսեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Արձակուրդի պահուստ	36,036	28,266
Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստներ	34,818	8,145
Նվիրատվություններ	12,120	108,453
Ապրանքների դուրսգրում	5,532	71,624
Տրված կանխավճարների դուրսգրում	3,764	3,717
Տույժեր և տուգանքներ	1,666	4,158
Մաշվածություն պարապուրդից	-	191
Այլ	9,502	2,257
	103,438	**226,811**

9. Զուտ ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով	11,314	21,599
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	739,379	951,691
Ֆինանսական եկամուտ	**750,693**	**973,290**
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ – տոկոսային ծախս	(2,135,703)	(1,780,021)
Ֆինանսական ծախսեր	**(2,135,703)**	**(1,780,021)**
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր	**(1,385,010)**	**(806,731)**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսերը ներկայացված են զուտ՝ առանց ՀՀ կառավարությունից ստացված սուբսիդիաների:

10. Շահութահարկ

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 18% դրույքաչափով (2021թ-ին՝ 18%):

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	946,324	2,216,956
Պակաս հաշվարկված նախորդ տարիներում	-	57,814
	946,324	**2,274,770**
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	376,013	373,402
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**1,322,337**	**2,648,172**

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում

	2022թ.		**2021թ.**	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Շահույթը մինչև հարկումը	10,240,181	100%	15,154,089	100%
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	1,843,233	18%	2,727,736	18%
Պակաս հաշվարկված նախորդ տարիներում	-	0%	57,814	0.4%
Հարկային արտոնություն*	(390,123)	(4)%		
Չհարկվող եկամուտ	(130,773)	(1)%	(137,378)	(1)%
	1,322,337	**13%**	**2,648,172**	**17%**

* Համաձայն ՀՀ կառավարության 2022թ. ապրիլի 15-ի թիվ 498-Ա որոշման, որը գործում է 2022թ. ապրիլի 30-ից, հաջորդ հինգ տարիներում աշխատանքի ընդունված աշխատողների աշխատավարձերը նվազեցվում են Խմբի համապատասխան տարվա շահութահարկից: Նվազեցման առավելագույն սահմանաչափը կազմում է Խմբի շահութահարկի 30%-ը:

(բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Հիմնական միջոցներ	-	-	3,853,820	3,506,282	3,853,820	3,506,282
Պաշարներ	-	-	55,272	20,738	55,272	20,738
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(68,492)	(80,373)	-	-	(68,492)	(80,373)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(17,940)	-	-	-	(17,940)	-
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	**(86,432)**	**(80,373)**	**3,909,092**	**3,527,020**	**3,822,660**	**3,446,647**

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Հիմնական միջոցներ	-	-	3,506,282	3,092,133	3,506,282	3,092,133
Պաշարներ	-	-	20,738	39,862	20,738	39,862
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(80,373)	(52,384)	-	-	(80,373)	(52,384)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	(6,366)	-	-	-	(6,366)
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	**(80,373)**	**(58,750)**	**3,527,020**	**3,131,995**	**3,446,647**	**3,073,245**

(գ) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ

Հետաձգված հարկի մնացորդների բոլոր փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

11. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Շենքեր, շինություններ և կառույցներ	Մեքենաներ և սարքավո-րումներ	Փոխադրա-միջոցներ	Այլ	Անավարտ շինարարու-թյուն	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	10,547,881	20,172,393	127,057	70,910	311,767	31,230,008
Ավելացումներ	64,772	557,115	1,267,782	72,262	340,226	2,302,157
Տեղափոխումներ	-	331,391	-	(3,342)	(328,049)	-
Օտարումներ	-	(58,922)	(24,926)	(5,810)	-	(89,658)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**10,612,653**	**21,001,977**	**1,369,913**	**134,020**	**323,944**	**33,442,507**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	10,612,653	21,001,977	1,369,913	134,020	323,944	33,442,508
Ավելացումներ	579,250	1,065,160	4,223,553	42,754	37,224	5,947,941
Տեղափոխումներ	-	(97,107)	178,531	135,024	(216,448)	-
Օտարումներ	(1,500)	-	-	-	-	(1,500)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**11,190,403**	**21,970,030**	**5,771,997**	**311,798**	**144,720**	**39,388,949**
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	(576,540)	(2,126,143)	(8,925)	(9,981)	-	(2,721,589)
Տեղափոխումներ	-	(21)	-	21	-	-
Տարվա մաշվածություն	(290,893)	(1,014,873)	(34,301)	(7,156)	-	(1,347,223)
Օտարումներ	-	19,907	90	289	-	20,286
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(867,433)**	**(3,121,130)**	**(43,136)**	**(16,827)**	**-**	**(4,048,526)**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	(867,435)	(3,121,130)	(43,136)	(16,827)	-	(4,048,527)
Տեղափոխումներ	-	3,112	-	(3,112)	-	-
Տարվա մաշվածություն	(296,269)	(1,155,359)	(181,000)	(25,354)	-	(1,657,982)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**(1,163,704)**	**(4,273,377)**	**(224,136)**	**(45,293)**	**-**	**(5,706,509)**
Հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2021թ.	9,971,342	18,046,250	118,133	60,928	311,767	28,508,420
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	9,745,220	17,880,847	1,326,777	117,193	323,944	29,393,981
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**10,026,700**	**17,696,653**	**5,547,862**	**266,505**	**144,720**	**33,682,440**

1,644,309 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2021թ-ին՝ 1,332,236 հազար դրամ) ներկայացվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 13,673 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2021թ-ին՝ 14,796 հազար դրամ)՝ վարչական ծախսերի կազմում, այլ ծախսերի կազմում մաշվածության ծախս չի ներկայացվել (2021թ-ին՝ 191 հազար դրամ):

Ապահովություն

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 25,536,307 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 26,213,660 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները գրավադրված են բանկային վարկի դիմաց (Ծանոթագրություն 18(ա)):

12. Ներդրումային գույք

(ա) Հաշվեկշռային արժեքի համադրում

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	1,117,043	-
Ձեռբերումներ	-	1,117,043
Տարվա մաշվածություն	(22,232)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,094,811**	**1,117,043**

2021թ. դեկտեմբերի 2-ին ձեռքբերված ներդրումային գույքը ներառում է հիմնականում առևտրային նպատակների համար նախատեսված գույքը, որը պահվում է կապիտալի աճի կամ վարձակալությունից եկամուտ վաստակելու համար, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, և չորոշված ապագա նպատակով գույքը:

Ներդրումային գույքը վարձակալության է հանձնված կապակցված կողմին անորոշ ժամկետով:

Ձեռքբերված ներդրումային գույքի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջինիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Իրական արժեքի չափում

(i) Իրական արժեքի հիերարխիա

Ղեկավարությունը չի ներգրավել արտաքին գնահատողի ներդրումային գույքի գնահատման համար 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ղեկավարության գնահատմամբ հաշվետու ամսաթվի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրա հաշվեկշռային արժեքին:

Ներդրումային գույքի իրական արժեքը չափելու համար կիրառվել են ստորև ներկայացված գնահատման մեթոդը և նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները:

- Շուկայական համեմատական մոտեցում. Շուկայական համեմատական մոտեցման համաձայն՝ գույքի իրական արժեքը գնահատվում է համադրելի գործարքների հիման վրա: Հիմնական ենթադրությունները վերաբերում են որպես համեմատական միավորներ օգտագործվող շենքերի վիճակին, որակին և գտնվելու վայրին: Շուկայական համեմատական մոտեցումը հիմնված է փոխարինման սկզբունքի վրա, որի համաձայն պոտենցիալ գնորդը չի վճարի ավելի շատ գումար գույքի համար, քան այն գումարը, որով նա կարող է գնել համադրելի փոխարինող գույք:

  Ստորև ներկայացված են մոտեցման նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները, որոնք կիրառվել են 2021թ. դեկտեմբերի 31-ին:

  - Գտնվելու վայրը՝ -20%-ից +20%
  - Չափը՝ -30%-ից +25%
  - Ներքին/արտաքին վիճակը և վերանորոգումը՝ 70 հազար – 100 հազար դրամ մեկ քառ.մ. համար

13. Պաշարներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Հումք	6,926,805	5,524,444
Անավարտ արտադրություն	1,525,050	726,656
Պատրաստի արտադրանք	368,154	340,694
Պահեստամասեր	315,743	255,796
Հումքը ճանապարհին	307,069	115,208
Վառելիք և սպառողական նյութեր	69,606	72,629
Այլ	18,690	6,894
	9,531,117	**7,042,321**

14. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր	7,382,392	2,914,033
Այլ դեբիտորական պարտքեր	23,775	27,568
Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	(52,571)	(17,753)
Փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասում ներառված առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	**7,353,596**	**2,923,848**
Ստացվելիք հարկեր	21,648	29,879
Տրված կանխավճարներ	2,036,510	485,362
Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	**9,411,754**	**3,439,089**

Պարտքային և արժութային ռիսկերին Խմբի ենթարկվածության և առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Կանխիկը դրամարկղում	6,676	15,987
Բանկային հաշիվների մնացորդներ	472,924	1,127,066
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում	**479,600**	**1,143,052**

Տոկոսադրույքային ռիսկին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

16. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 62,923,840 սովորական բաժնետոմսից՝ 150 դրամ անվանական արժեքով (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 62,923,840 բաժնետոմսից՝ 150 դրամ անվանական արժեքով):

Բոլոր սովորական բաժնետոմսերի սեփականատերերն ունեն հավասար իրավունքներ Խմբի մնացորդային ակտիվների նկատմամբ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետոմսերի 98.7%-ը (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 98.7%) գրավադրված էր բանկային վարկի դիմաց (Ծանոթագրություն 18(ա)):

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	**Սովորական բաժնետոմսեր**	
	2022թ.	**2021թ.**
Թողարկված առ 1 հունվարի	62,923,840	7,865,480
Թողարկված և ամբողջությամբ վճարված (չբաշխված շահույթից տեղափոխման միջոցով)	-	55,058,360
Թողարկված առ 31 դեկտեմբերի, ամբողջությամբ վճարված	**62,923,840**	**62,923,840**
Սովորական բաժնետոմսերի անվանական արժեք, ՀՀ դրամ	150	150

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Խմբի բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Խմբի բաշխման ենթակա պահուստները որոշվում են Խմբի ՖՀՄՍ համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա: 2022թ. ընթացքում Խումբը հայտարարել և ամբողջությամբ վճարել է 8,000,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2021թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել): Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը 2022թ. համար կազմում է 127 դրամ (2021թ-ին՝ զրո):

(գ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվել է սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող 8,917,844 հազար դրամ (2021թ-ին՝ 12,505,917 հազար դրամ) շահույթի և շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվի՝ 62,923,840 (2021թ-ին՝ 33,724,592) հիման վրա, ինչպես ներկայացված է ստորև: Խումբը չունի նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսեր:

	2022թ.	**2021թ.**
Թողարկված բաժնետոմսերը առ 1 հունվարի	62,923,840	7,865,480
Հունիսի 14-ին թողարկված բաժնետոմսերի ազդեցությունը	-	55,058,360
Բաժնետոմսերի կշռված միջին թիվը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	**62,923,840**	**33,724,592**

17. Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Խմբի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու և շուկայի մասնակիցների վստահությունն ապահովելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Խմբի հասույթի և շահույթի շարունակական հսկողության, Խմբի գործառնական գործունեությունից ստացվող դրամական հոսքերի հաշվին հիմնականում ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի և վարկերի ու փոխառությունների միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը Խումբը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Խմբի մոտեցումը չի փոխվել:

Խմբի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների պահանջներ:

18. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	5,131,726	-
	5,131,726	**-**
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	1,330,096	105,500
	1,330,096	**105,500**

(ա) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառություններ պայմանները:

				31 դեկտեմբերի 2022թ.		**31 դեկտեմբերի 2021թ.**	
հազ. դրամ	**Արժույթ**	**Անվանական տոկոսադրույք***	**Մարման տարի**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	11.0%	2022	-	-	105,500	105,500
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	6.50%	2025	590,995	590,995	-	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	12.0%	2025	1,069,212	1,069,212	-	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7.25%	2025	688,891	688,891	-	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7.25%	2029	4,112,724	4,112,724	-	-
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ				**6,461,822**	**6,461,822**	**105,500**	**105,500**

* Գրավով ապահովված բանկային վարկերի անվանական տոկոսադրույքները մոտավորապես համապատասխանում են շուկայական տոկոսադրույքերին:

Բանկային վարկերի դիմաց գրավադրված են.

- 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 25,536,307 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 26,213,660 հազար դրամ) (տես Ծանոթագրություն 11),
- 98.7% բաժնետոմսերը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 98.7%) (տես Ծանոթագրություն 16(ա)):

(բ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	**Պարտավորություններ**	
	Վարկեր և փոխառություններ	
	2022թ.	**2021թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	**105,500**	**20,208,884**
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	9,448,681	540,109
Վարկերի և փոխառությունների մարում	(2,758,461)	(16,033,342)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**6,690,220**	**(15,493,233)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	**(336,986)**	**(1,335,927)**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	217,257	495,304
Վճարված տոկոսներ (դրամական հոսքեր գործառնական գործունեությունից)	(57,672)	(3,769,528)
Սուբսիդավորված տոկոս վարկի գծով	(156,497)	-
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	**3,088**	**(3,274,224)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**6,461,822**	**105,500**

19. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Առևտրական կրեդիտորական պարտքեր	789,686	522,750
Աշխատավարձ	131,247	119,731
Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտքեր ընթացիկ առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	**920,933**	**642,481**
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	-	12,656
Վճարվելիք այլ հարկեր	224,201	88,695
Արձակուրդային վճարների գծով պահուստ	99,664	63,628
Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	**1,244,789**	**807,460**

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

20. Թողարկված պարտատոմսեր

հազ. դրամ	Արժույթ	Անվանական տոկոսադրույք	Մարման տարի	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Թողարկված տեղական պարտատոմսեր	ՀՀ դրամ	12%	11.06.2031	15,100,530	13,304,156
Թողարկված տեղական պարտատոմսեր	ԱՄՆ դոլար	7%	11.06.2031	5,927,326	259,306
				21,027,856	**13,563,462**

2021թ. հունիսի 11-ին Խումբը թողարկել և տեղաբաշխել ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքային արժեթղթեր՝ համապատասխանաբար 15,000 միլիոն ՀՀ դրամ և 15 միլոն ԱՄՆ դոլար անվանական արժեքով: ՀՀ դրամով արտահայտված պարտքային արժեթղթերի շուրջ 60%-ը պահվում է բաժնետերերի կողմից, իսկ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքային արժեթղթերի 90%-ը՝ կապակցված կողմերի կողմից: 2022թ. ընթացքում դուստր ընկերությունը վաճառել է 8,468 միլիոն դրամ ընդհանուր գումարով պարտատոմսեր:

Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2022թ.	2021թ.
Մնացորդը առ 1 հունվարի	13,563,462	-
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Մուտքեր թողարկումից	-	22,779,150
Թողարկված պարտատոմսերի ձեռքբերում	-	(8,738,383)
Մուտքեր թողարկված պարտատոմսերի վաճառքից	8,467,525	
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**8,467,525**	**14,040,767**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	**(820,506)**	**(602,627)**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	2,074,943	1,284,717
Վճարված տոկոսներ (դրամական հոսքեր գործառնական գործունեությունից)	(2,257,569)	(1,159,395)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**21,027,856**	**13,563,462**

21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Իրական արժեքի չափում

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Տեսակը	Գնահատման մեթոդը	Նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները
Վարկեր և փոխառություններ	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Այլ ֆինանսական պարտավորություններ*	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն

* Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են գրավով ապահովված և չապահովված բանկային վարկերը, ստացված փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(գ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (տես Ծանոթագրություն 21(գ)(ii)),
- իրացվելիության ռիսկ (տես Ծանոթագրություն 21(գ)(iii)),
- շուկայական ռիսկ (տես Ծանոթագրություն 21(գ)(iv)):

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի հետ կապված:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

հազ. դրամ		**Հաշվեկշռային արժեք**	
	Ծնթգ.	**2022թ.**	**2021թ.**
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	7,353,596	2,923,848
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	479,600	1,143,052
		7,833,196	**4,066,900**

Առևտրական դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի բնութագրերից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ իր հաճախորդների բազայի պարտքային ռիսկի վրա, այդ թվում՝ այն ոլորտին և երկրին բնորոշ պարտազանցման ռիսկը, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները: Հասույթի կենտրոնացման մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 5-ում:

Խմբում չի գործում հաճախորդների հետ կապված պարտքային ռիսկի հարցերը կարգավորող հատուկ քաղաքականություն, այնուամենայնիվ, Խմբի հասույթի մոտ 95%-ը վերագրելի է երկու խոշոր հաճախորդների հետ իրականացվող վաճառքի գործարքներին, որոնցից մեկը կապակցված կողմ է (2021թ-ին՝ երեք հաճախորդների հետ իրականացվող վաճառքի գործարքներին, որոնցից մեկը կապակցված կողմ էր): Այս հաճախորդներից ոչ մեկի պարտքերի մնացորդները դուրս գրված չեն կամ պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ: Խմբի հաճախորդների ավելի քան 90%-ը Խմբի հետ համագործակցում է ավելի քան չորս տարի:

Առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին իր ենթարկվածությունը սահմանափակելու համար Խումբը հաճախորդների համար վճարման առավելագույն ժամկետ է սահմանել երկու ամիսը:

Խումբը չի պահանջում գրավ առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի երկու ամենախոշոր հաճախորդների («Moody's» վարկանիշային գործակալության B2 արտաքին վարկանիշով հանքարդյունաբերական ընկերություն և մեծածախ առևտրով զբաղվող միջազգային ընկերություն, որի վարկանիշը ղեկավարության գնահատմամբ մոտավորապես համապատասխանում է «Moody's» վարկանիշային գործակալության B3 վարկանիշին՝ հիմք ընդունելով այդ ընկերություն գործունեության երկրի վարկանիշը) հաշվեկշռային արժեքը կազմում էր 7,136,824 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,658,655 հազար դրամ):

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում հաճախորդների համար

Խումբը պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ այն տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են կորստի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշեր, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ, կառավարչական հաշվետվություններ, դրամական հոսքերի կանխատեսումներ և հաճախորդների մասին մամուլում հրապարակված տեղեկատվություն), և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտազանցման ռիսկի մասին և համընկնում են այնպիսի գործակալությունների արտաքին վարկանշավորման սահմանումներին ինչպիսին «Moody's Investor Services»-ն է:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության, առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների և հաճախորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2022թ. հազ. դրամ	**Կորստի միջին կշռված մակարդակ**	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Արժեզրկումից կորուստների գծով պահուստ**	**Պարտքային առումով արժեզրկված**
Առևտրական դեբիտորական պարտքեր և պայմանագրի գծով ակտիվներ				
Ցածր ռիսկ	0.7%	7,382,392	(52,571)	Ոչ
Կասկածելի պարտք	0.0%	-	-	Այո
		7,382,392	**(52,571)**	

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության, առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների և հաճախորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2021թ. հազ. դրամ	**Կորստի միջին կշռված մակարդակ**	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Արժեզրկումից կորուստների գծով պահուստ**	**Պարտքային առումով արժեզրկված**
Առևտրական դեբիտորական պարտքեր և պայմանագրի գծով ակտիվներ				
Ցածր ռիսկ	0.6%	2,914,033	(17,753)	Ոչ
Կասկածելի պարտք	0.0%	-	-	Այո
		2,914,033	**(17,753)**	

Խումբը ցածր ռիսկը սահմանում է հետևյալ կերպ.

Ցածր ռիսկ. հաճախորդը մոտ ապագայում ունի պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու կայուն հնարավորություն, իսկ ավելի երկար ժամկետում տնտեսական և առևտրային պայմանների անբարենպաստ փոփոխությունները քիչ հավանական է, որ նվազեցնեն պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու փոխառուի կարողությունը:

Կասկածելի պարտք. հաճախորդի պարտքի ամբողջական մարումը կասկածելի է և անորոշ: Գումարի մարման չափը տատանվում է ամբողջական կորստից մինչև անորոշ կորուստը, եթե չձեռնարկվեն հարցի կարգավորմանն ուղղված միջոցառումներ: Կասկածելի պարտք ունեցող հաճախորդները սովորաբար իրենցից ներկայացնում են պարտականությունները չկատարող հաճախորդներ, որոնց համար պարտքի մնացորդի ամբողջական հավաքագրումը ռիսկային է:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների արժեզրկման գծով պահուստի փոփոխություններ

Ստորև ներկայացված են առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխությունները տարվա ընթացքում:

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	(17,753)	(9,608)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(34,818)	(8,145)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(52,571)**	**(17,753)**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 472,924 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,127,066 հազար դրամ), որոնք իրենցից ներկայացնում են առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված:

Բանկային հաշիվների մնացորդները (ընթացիկ հաշիվները) պահվում են «Moody's» վարկանիշային գործակալության B3 վարկանիշով Հայաստանի խոշոր բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Խմբի գնահատմամբ բանկերում պահվող ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետայնության պատճառով:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Ենթարկվածություն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մնացած մարման ժամկետները 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ներկայացված են ընդհանուր և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսային վճարումները և չեն ներառում հաշվանցման պայմանագրերի ազդեցությունը:

31 դեկտեմբերի 2022թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Ցպահանջ**	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**	**2-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ֆինանսական պարտավորություններ								
Գրավով ապահովված բանկային վարկեր	6,461,822	7,113,361	-	89,450	1,353,999	975,956	3,449,879	1,244,076
Թողարկված պարտատոմսեր	21,027,856	36,371,189	-	338,405	1,506,957	1,820,281	5,445,927	27,259,618
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	920,930	920,930	-	920,930	-	-	-	-
	28,410,608	**44,405,480**	**-**	**1,348,785**	**2,860,956**	**2,796,237**	**8,895,806**	**28,503,694**

31 դեկտեմբերի 2021թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Ցպահանջ**	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**	**2-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ֆինանսական պարտավորություններ								
Գրավով ապահովված բանկային վարկեր	105,500	109,154	-	-	109,154	-	-	-
Թողարկված պարտատոմսեր	13,563,462	28,718,666	-	272,503	1,331,762	1,604,265	8,030,114	17,480,022
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	642,481	642,481	-	642,481	-	-	-	-
	14,311,443	**29,470,301**	**-**	**914,984**	**1,440,916**	**1,604,265**	**8,030,114**	**17,480,022**

Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական հոսքերը կարող են առաջանալ նշվածից նշանակալիորեն ավելի վաղ կամ նշվածներից նշանակալիորեն տարբեր գումարներով:

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արժութային ռիսկ

Խումբը ենթարկվում է արժութային ռիսկին այնքանով, որքանով արժույթները, որոնցով արտահայտված են վաճառքի ու գնումների գործառնությունները և փոխառությունները, չեն համապատասխանում Խմբի ֆունկցիոնալ արժույթին: Այս գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Ենթարկվածություն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արժութային ռիսկին:

հազ. դրամ	**ԱՄՆ դոլարով արտահայտված 31 դեկտեմբերի 2022թ.**	**ԱՄՆ դոլարով արտահայտված 31 դեկտեմբերի 2021թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,526	504,335
Առևտրական կրեդիտորական պարտքեր	(112)	(35)
Վարկեր և փոխառություններ	(5,392,610)	-
Թողարկված պարտատոմսեր	(5,927,326)	(259,306)
Զուտ ենթարկվածություն	**(11,315,522)**	**244,994**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	**Միջին փոխարժեք**	**Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ**	
	2022թ.	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
1 ԱՄՆ դոլար	434.86	393.57	480.14

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) այլ արտարժույթների նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և մինչև հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	**Աճ**	**Նվազում**
	Շահույթ կամ վնաս	**Շահույթ կամ վնաս**
31 դեկտեմբերի 2022թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	1,131,552	(1,131,552)
31 դեկտեմբերի 2021թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	24,499	(24,499)

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե որ տոկոսադրույքը՝ հաստատունը թե փոփոխունը, ավելի բարենպաստ կլինի Խմբի համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

Ենթարկվածությունը տոկոսադրույքային ռիսկին

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	
	31 դեկտեմբերի 2022թ.	**31 դեկտեմբերի 2021թ.**
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	27,489,677	13,668,962
	27,489,677	**13,668,962**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական պարտավորությունները ներառում են 21,027,856 հազար դրամ ընդհանուր գումարով հաստատուն տոկոսադրույքով թողարկված պարտատոմսերը և 6,461,822 հազար դրամ գումարով գրավով ապահովված բանկային վարկերը:

Իրական արժեքի զգայնության վերլուծություն հաստատուն տոկոսադրույքով գործիքների համար

Խումբը չի հաշվառում հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող: Ուստի, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

22. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբն ամբողջությամբ չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է նշանակալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում կամ այլ հայցերում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար, սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը հարկային տարում.

- միջպետական գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջպետական գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ վերջիններիս կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունն այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Վերը նշված հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

23. Կապակցված կողմեր

(ա) Մայր կազմակերպություն և վերջնական հսկող կողմ

Ընկերության հիմնական բաժնետերերն են՝ «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը (49.35%), Գևորգ Հարությունյանը (16.52%), Տիգրան Հարությունյանը (16.52%) և Վահան Հարությունյանը (16.52%): «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվությունները:

Խումբը չունի վերջնական հսկող կողմ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է աշխատակիցների հատուցումների գծով ծախսերում (տես Ծանոթագրություն 7):

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Աշխատավարձ և պարգևավճարներ	**56,657**	**51,058**

(ii) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված են առանցքային ղեկավար անձնակազմի և այն կազմակերպությունների հետ գործարքների ընդհանուր գումարը և մնացորդները, որոնց նկատմամբ առանցքային ղեկավար անձնակազմն ունի հսկողություն կամ նշանակալի ազդեցություն:

հազ. դրամ	**Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**		**Մնացորդը առ 31 դեկտեմբերի**	
	2022թ.	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**
Փոխադրամիջոցների վարձակալություն	720	720	54	270

(գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	**Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**		**Մնացորդը առ 31 դեկտեմբերի**	
	2022թ.	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**
Ապրանքներ և ծառայությունների վաճառք				
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	26,096,256	22,812,620	7,339,761	2,245,319
Ապրանքներ և ծառայությունների գնում				
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	(1,769,210)	(3,694,142)	(84,007)	(25,640)
Ստացված փոխառություններ				
Բաժնետերեր	-	(4,510,284)	-	-
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	-	(10,481,011)	-	-
Թողարկված պարտատոմսեր				
Բաժնետերեր	(9,477,596)	(10,197,426)	(9,477,596)	(10,197,426)
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	(5,480,564)	(75,141)	(5,480,564)	(75,141)
Տրամադրված փոխառություններ				
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	4,270,725	-	-	-

Կապակցված կողմերի և բաժնետերերի հետ գործարքների բոլոր մնացորդները (բացառությամբ թողարկված պարտատոմսերի) ենթակա են մարման կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետ վեց ամսվա ընթացքում: Գործարքների մնացորդները գրավով ապահովված չեն: Ընթացիկ կամ նախորդ տարում չեն ճանաչվել անհուսալի կամ կասկածելի պարտքերի գծով ծախսեր կապակցված կողմերի պարտքերի հետ կապված:

Կապակցված կողմերից ստացված փոխառությունների գծով տոկոսային ծախս չի գրանցվել 358,304 հազար դրամ (2021թ-ին՝ 358,304 հազար դրամ): Թողարկված պարտատոմսերի գծով տոկոսային ծախսը կազմում է 1,547,169 հազար դրամ (2021թ-ին՝ 768,379 հազար դրամ):

24. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների և կազմակերպությունների համար:

(ա) Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

(բ) Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Այնուամենայնիվ, այն ֆինանսական ակտիվների համար, որոնք պարտքային առումով արժեզրկված են դարձել սկզբնական ճանաչումից հետո, տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամուտը կրկին սկսվում է հաշվարկվել համախառն հիմունքով:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի փոփոխությունը՝ զուտ շահույթի, թե՝ զուտ վնասի:

(գ) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Խմբի ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(դ) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար կամ շահույթի բաշխումների պլանի շրջանակում, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(ե) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբը տվյալ պահին ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

(զ) Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Հումքի և պահեստամասերի ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով, իսկ պատրաստի և անավարտ արտադրանքի ինքնարժեքը որոշվում է միջին կշռված արժեքի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում, ինքնարժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

(է) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի գծով ծախսումները, նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած այլ ծախսումները, հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև դրանց զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում: Վերագնահատված ակտիվների վաճառքի դեպքում, վերագնահատման պահուստի կազմում որպես վերագնահատումից աճ ներառված համապատասխան գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը զուգընթաց:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

2021թ-ից հալեցման և ձուլման գործընթացում օգտագործվող հիմնական սարքավորումների մաշվածությունը հաշվարկվում է արտադրության միավորի մեթոդով: Այլ միավորների գծով մաշվածությունըանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Ստորև ներկայացված են հիմնական միջոցների նշանակալի մասերի օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- Շենքեր և շինություններ 50-70 տարի,
- Հոսքագծեր 20-25 տարի,
- Մեքենաներ և սարքավորումներ 15-25 տարի,
- Փոխադրամիջոցներ 3-5 տարի:

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ը) Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով՝ ներառյալ գործարքի գծով ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով ներդրումային գույքի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ներդումային գույքի օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 25 տարի:

Ներդումային գույքի օտարումից ստացված ցանկացած օգուտը կամ կորուստը (որը հաշվարկվում է որպես օտարումից զուտ մուտքերի և միավորի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(թ) Պետական շնորհներ

Պետական շնորհները սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ իրական արժեքով, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ շնորհները ստացվելու են և որ Խումբը բավարարելու է դրանց կցված պայմանները: Պետական շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ սիստեմատիկ հիմունքով ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Շնորհները, որոնք հատուցում են Խմբին կատարված ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, երբ ճանաչվում են ծախսերը, բացառությամբ այն դեպքերի, երբ շնորհ ստանալու պայմանները բավարարվում են համապատասխան ծախսերը ճանաչելուց հետո: Այդ դեպքում շնորհը ճանաչվում է այն ժամանակ, երբ դառնում է ստացման ենթակա:

Բանկերից ստացված վարկերի տոկոսային ծախսերի Կառավարության սուբսիդավորման տեսքով շնորհները սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում, քանի որ Խումբը որպես ծախս ճանաչում է այն ծախսումները, որոնց հատուցման համար նախատեսված են շնորհները:

(ժ) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ստանալ պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտը, ապահովել տոկոսադրույքների որոշակի կառուցվածքը, ֆինանսական ակտիվների ժամկետները համապատասխանեցնել համապատասխան ֆինանսական պարտավորությունների

ժամկետներին կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- պայմանները, որոնք կարող են ճշգրտել պայմանագրային արժեկտրոնային տոկոսադրույքը, այդ թվում՝ փոփոխական տոկոսադրույքի պայմանները
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի նկատմամբ զեղչով կամ հավելագնով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարով, որն ըստ էության իրենից ներկայացնում է պայմանագրային անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսը (որը կարող է ներառել լրացուցիչ ողջամիտ փոխհատուցումը պայմանագրի վաղաժամ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման հատկանիշի իրական արժեքն աննշան է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Խումբն իր ֆինանսական ակտիվները դասում է ամորտիզացված արժեքով չափվող գործիքների դասին: Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախորոշված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ օգուտը և կորուստները, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտում շահույթում կամ վնասում՝ փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ: Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները՝ հանած ստացված վճարները, որոնք զեղչված են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված պարտավորության մնացած ժամանակահատվածում:

(iv) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(h) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոններին թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(l) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Առևտրական դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Խմբի անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Խմբին հասանելիք դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերություն):

Ակնկալվող պարտքային կորուստները զեղչվում ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ հաճախորդը կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Խումբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար Խումբը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքի դուրսգրման քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան 180 օր ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գծով գումարների փոխհատուցման անցյալ ժամանակաշրջանների փորձը: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար Խումբն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի առանձին գնահատում՝ ելնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Խումբը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները: Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին կամ դրամաստեղծ միավորին հատուկ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով արժեզրկումից կորուստը բաշխվում է համամասնորեն:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու համար, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(խ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(ծ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Խմբի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Խմբի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից, քանի որ Խմբի խորհուրդը վերահսկում է Խմբի գործառնական արդյունքները որպես մեկ բիզնես միավոր: Գլխավոր տնօրենը համարվում է Խմբի գլխավոր գործառնական որոշում կայացնողը՝ ռեսուրսների բաշխման և կատարողականի գնահատման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով:

26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(ա) Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)

Փոփոխությունները սահմանափակում են սկզբնական ճանաչման ժամանակ կիրառվող բացառության շրջանակը՝ բացառելու համար այն գործարքները, որոնք առաջացնում են հավասար և հաշվանցվող ժամանակավոր տարբերություններ, օրինակ՝ վարձակալության և ապագործարկման պարտավորությունների դեպքում: Փոփոխությունները գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վարձակալությանը և ապագործարկման պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է ճանաչվեն ներկայացված ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբից՝ ցանկացած կուտակային հետևանքը ճանաչելով որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների ճշգրտում այդ ամսաթվի դրությամբ: Մյուս բոլոր գործարքների համար փոփոխությունները կիրառվում են այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից հետո:

Փոփոխությունների կիրառումն ազդեցություն չի ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(բ) Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

2020թ-ին հրապարակված փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանել պարտավորության ընթացիկ կամ ոչ ընթացիկ լինելը որոշելու պահանջները և կիրառելի են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Այնուամենայնիվ, ՀՀՄՄԽ-ն հետագայում առաջարկել է ՀՀՄՍ 1-ի լրացուցիչ փոփոխություններ և 2020թ. փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետի հետաձգում մինչև 2024թ. հունվարի 1-ը: Այս շարունակական զարգացումների պատճառով Խումբը չի կարող որոշել այդ փոփոխությունների ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակաշրջանում: Խումբը հետևում է զարգացումներին:

(գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՍ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* և ՖՀՄՍ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2 փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2023թ. համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի (Ընկերություն) և վերջինիս դուստր ընկերության (Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՄԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:

– գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

– ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Դավիթ Շամշյան
Առաջադրանքի համար
պատասխանատու գործընկեր

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 ապրիլի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2023թ.

հազ. դրամ	**Ծնթգ.**	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	38,950,596	33,682,440
Ներդրումային գույք	12	1,072,520	1,094,811
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		189,429	2,045,761
Այլ ակտիվներ		4,938	5,610
Ոչ ընթացիկ ակտիվներ		**40,217,483**	**36,828,622**
Պաշարներ	13	12,279,756	9,531,117
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	8,704,360	9,411,754
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	15	2,690,656	479,600
Ընթացիկ ակտիվներ		**23,674,772**	**19,422,471**
Ընդամենը ակտիվներ		**63,892,255**	**56,251,093**
Սեփական կապիտալ	16		
Բաժնետիրական կապիտալ		9,753,195	9,438,576
Չբաշխված շահույթ		18,898,626	13,928,124
Ընդամենը սեփական կապիտալ		**28,651,821**	**23,366,700**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	18	6,425,763	5,131,726
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	3,733,969	3,822,660
Ռոդարկված պարտատոմսեր	20	21,071,850	20,903,550
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**31,231,582**	**29,857,936**
Վարկեր և փոխառություններ	18	2,151,081	1,330,096
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	19	1,462,070	1,244,798
Ռոդարկված պարտատոմսեր	20	124,967	124,306
Ընթացիկ հարկային պարտավորություն		270,734	327,257
Ընթացիկ պարտավորություններ		**4,008,852**	**3,026,457**
Ընդամենը պարտավորություններ		**35,240,434**	**32,884,393**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**63,892,255**	**56,251,093**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2023թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2023թ.	2022թ.
Հասույթ	5	30,940,005	34,288,753
Վաճառքի ինքնարժեք	6	(21,128,269)	(21,887,057)
Համախառն շահույթ		**9,811,736**	**12,401,696**
Այլ եկամուտ		96,315	82,796
Իրացման ծախսեր		(1,190)	(156,078)
Վարչական ծախսեր	7	(782,335)	(599,785)
Այլ ծախսեր	8	(160,322)	(103,438)
Գործառնական գործունեության արդյունքներ		**8,964,204**	**11,625,191**
Ֆինանսական եկամուտ	9	491,552	907,190
Ֆինանսական ծախսեր	9	(3,367,918)	(2,292,200)
Զուտ ֆինանսական ծախսեր		**(2,876,366)**	**(1,385,010)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**6,087,838**	**10,240,181**
Շահութահարկի գծով ծախս	10	(802,717)	(1,322,337)
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**5,285,121**	**8,917,844**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (ՀՀ դրամ)	16 (գ)	84	142

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. ապրիլի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հրայր Մուրադյան
Տնօրեն

Կարինե Մամիկոնյան
Ֆինանսական տնօրեն

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2023թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	9,438,576	13,010,280	22,448,856
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա շահույթ	-	8,917,844	8,917,844
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**8,917,844**	**8,917,844**
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ			
Վճարված շահաբաժիններ	-	(8,000,000)	(8,000,000)
Ընդամենը գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ	**-**	**(8,000,000)**	**(8,000,000)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**9,438,576**	**13,928,124**	**23,366,700**
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	9,438,576	13,928,124	23,366,700
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա շահույթ	-	5,285,121	5,285,121
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	**5,285,121**	**5,285,121**
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ			
Չբաշխված շահույթի փոխանցում բաժնետիրական կապիտալ (Ծնթգ. 16)	314,619	(314,619)	-
Ընդամենը գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ	**314,619**	**(314,619)**	**-**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**9,753,195**	**18,898,626**	**28,651,821**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2023թ. համար

հազ. դրամ	2023թ.	2022թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված գումարներ	37,776,191	35,960,657
Աշխատակիցներին վճարված գումարներ	(1,996,389)	(1,560,535)
Մատակարարներին վճարված գումարներ	(22,308,412)	(24,900,791)
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(5,586,844)	(4,307,355)
Այլ վճարումներ	(152,116)	(183,010)
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ մինչև շահութահարկի և տոկոսների վճարումը	**7,732,430**	**5,008,966**
Վճարված տոկոսներ	(2,413,506)	(2,315,241)
Վճարված շահութահարկ	(947,930)	(2,474,368)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**4,370,994**	**219,357**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(4,145,278)	(7,890,242)
Մուտքեր ոչ ընթացիկ վաճառքից	6,188	19,189
Տրամադրված փոխառություններ	-	(4,270,725)
Մուտքեր տրամադրված փոխառությունների մարումից	-	4,270,725
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(4,139,090)**	**(7,871,053)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	4,103,353	9,448,681
Վարկերի և փոխառությունների մարում	(2,125,585)	(2,758,461)
Մուտքեր թողարկված պարտատոմսերի վաճառքից	-	8,467,525
Վճարված շահաբաժիններ	-	(8,000,000)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**1,977,768**	**7,157,745**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	**2,209,672**	**(493,951)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	479,600	1,143,052
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,384	(169,501)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**2,690,656**	**479,600**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2023թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ծանոթագրություն	Էջ
1. Հաշվետու կազմակերպություն	11
2. Պատրաստման հիմունքներ	12
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	12
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում	12
5. Հասույթ	13
6. Վաճառքի ինքնարժեք	16
7. Վարչական ծախսեր	16
8. Այլ ծախսեր	17
9. Զուտ ֆինանսական ծախսեր	17
10. Շահութահարկ	18
11. Հիմնական միջոցներ	20
12. Ներդրումային գույք	21
13. Պաշարներ	22
14. Անհոտական և այլ դեբիտորական պարտքեր	22
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22
16. Կապիտալ և պահուստներ	23
17. Կապիտալի կառավարում	23
18. Վարկեր և փոխառություններ	24
19. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	25
20. Թողարկված պարտատոմսեր	26
21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	27
22. Պայմանական դեպքեր	32
23. Կապակցված կողմեր	33
24. Չափման հիմունքներ	35
25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր	35
26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	41

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար «ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի (Ընկերություն) և վերջինիս դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համար:

«ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ն (Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցված բաց բաժնետիրական ընկերություն է: Ընկերությունը հիմնադրվել է «Հայձուլ» ՓԲԸ-ի (նախկինում՝ «Ավտոձուլ» ՓԲԸ) սեփականաշնորհման արդյունքում՝ որպես բաց բաժնետիրական ընկերություն 1998թ. սեպտեմբերի 4-ին:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան փող. 2:

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության շրջանառության մեջ գտնվող ընդհանուր բաժնետոմսերի ավելի քան 3%-ը պատկանում էր հետևյալ բաժնետերերին.

Մասնակցության % առ 31 դեկտեմբերի	**2023թ.**	**2022թ.**
«Մորակո Հոլդինգ Լիմիթիդ»	49.35%	49.35%
Պրն. Միխայիլ Հարությունյան	16.53%	-
Պրն. Տիգրան Հարությունյան	16.53%	16.53%
Պրն. Վահան Հարությունյան	16.30%	16.29%
Պրն. Գևորգ Հարությունյան	-	16.53%

Մյուս բաժնետերերին անհատապես պատկանում է բաժնետոմսերի 3%-ից պակաս մասնաբաժին:

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ»-ի հսկող անձն է Միխայիլ Հարությունյանը: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի վերջնական հսկող անձն է Միխայիլ Հարությունյանը:

Կապակցված կողմերի հետ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

Խմբի հիմնական գործունեությունը Չարենցավանում գտնվող գործարանում ամրանների և մետաղական գնդերի արտադրությունն ու իրացումն է: Խմբի արտադրանքը վաճառվում է Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:

Ստորև ներկայացված է համախմբված դուստր ընկերությունը:

Դուստր ընկերություն	**Գրանցման երկիր**	**2023թ. Սեփականության իրավունք/ Ձայնի իրավունք**	**2022թ. Սեփականության իրավունք/ Ձայնի իրավունք**
«ԱՍԿԵ Թրեյդ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%

Դուստր ընկերության հիմնական գործունեությունը «ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերի առքն ու վաճառքն է:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել էին սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել էր անորոշությունը բիզնես միջավայրում: 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական ուժերը սկսեցին նոր ռազմական գործողություն, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ստիպված էր լքել իր բնակավայրը և տեղափոխվել Հայաստան՝ Ադրբեջանին թողնելով հսկողությունը տարածքի նկատմամբ:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության հավաստում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Խմբի ֆունկցիոնալ և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված են Ծանոթագրություն 25(է)(iii)՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների հետ կապված:

Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ*. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտվող):
- *2-րդ մակարդակ*. 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- *3-րդ մակարդակ*. ակտիվի կամ պարտավորության ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումները Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը: Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

5. Հասույթ

(ա) Հասույթի ուղղություններ

Խումբը հասույթը հիմնականում ստանում է ամրանների և մետաղական գնդերի վաճառքից:

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Ապրանքների վաճառք	30,927,254	34,238,588
Հասույթ մատուցված ծառայություններից	12,751	50,165
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**30,940,005**	**34,288,753**

(բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակներում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների, հիմնական արտադրատեսակների/ծառայությունների և հասույթի ճանաչման ժամկետների 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

31 դեկտեմբերի 2023թ. **հազ. դրամ**	**Հանքարդյունա-բերական ընկերություններ**	**Շինարարական ընկերություններ**	**Այլ ոլորտների ընկերություններ**	**Ընդամենը**
Հիմնական աշխարհագրական շուկաներ				
Հայաստանի Հանրապետություն	2,441,085	28,328,412	163,582	30,933,079
Արտահանում Վրաստան	-	-	6,926	6,926
	2,441,085	**28,328,412**	**170,508**	**30,940,005**
Հիմնական արտադրատեսակներ/ ծառայություններ				
Ամրաններ	-	28,316,534	11,810	28,328,344
Մետաղական գնդեր	2,441,085	-	13,386	2,454,471
Նախապատրաստվածքներ	-	-	144,439	144,439
Փոխադրման ծառայություններ	-	11,878	873	12,751
	2,441,085	**28,328,412**	**170,508**	**30,940,005**
Հասույթի ճանաչման ժամկետներ				
Ժամանակի որոշակի պահին փոխանցված արտադրանք	2,441,085	28,316,534	169,635	30,927,254
Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ	-	11,878	873	12,751
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**2,441,085**	**28,328,412**	**170,508**	**30,940,005**

2022թ-ին Վրաստանի գործընկերոջը վաճառվել են 3,814,208 հազար դրամ արժեքով նախապատրաստվածքներ, արտադրության և վաճառքի նոր պատվերներ 2023թ-ին չեն եղել:

31 դեկտեմբերի 2022թ. **հազ. դրամ**	**Հանքարդյունա-բերական ընկերություններ**	**Շինարարական ընկերություններ**	**Այլ ոլորտների ընկերություններ**	**Ընդամենը**
Հիմնական աշխարհագրական շուկաներ				
Հայաստանի Հանրապետություն	4,005,530	26,245,833	223,182	30,474,545
Արտահանում Վրաստան	-	-	3,814,208	3,814,208
	4,005,530	**26,245,833**	**4,037,390**	**34,288,753**
Հիմնական արտադրատեսակներ/ ծառայություններ				
Ամրաններ	-	26,226,022	4,209	26,230,231
Մետաղական գնդեր	4,005,530	-	183,126	4,188,656
Նախապատրաստվածքներ	-	-	3,819,701	3,819,701
Փոխադրման ծառայություններ	-	19,811	30,354	50,165
	4,005,530	**26,245,833**	**4,037,390**	**34,288,753**
Հասույթի ճանաչման ժամկետներ				
Ժամանակի որոշակի պահին փոխանցված արտադրանք	4,005,530	26,226,022	4,007,036	34,238,588
Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ	-	19,811	30,354	50,165
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**4,005,530**	**26,245,833**	**4,037,390**	**34,288,753**

(գ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի վերաբերյալ:

հազ. դրամ	**Ծնթգ.**	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
«Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված դեբիտորական պարտքեր	14	6,851,752	7,382,392

Պայմանագրի գծով պարտավորությունները վերաբերում են հաճախորդներից ստացված կանխավճարներին: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ունեցել պայմանագրի գծով պարտավորություններ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսի պարտավորություններ չեն եղել):

(դ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Արտադրանքի/ ծառայության տեսակը	**Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները**	**Հասույթի ճանաչման քաղաքականություն**
Ամրանների, մետաղական գնդերի և նախապատրաստվածքների վաճառք	Հաճախորդներն ապրանքների նկատմամբ հսկողությունը ձեռք են բերում, երբ ապրանքներն առաքվում են նշված վայր կամ ուղարկվում են Խմբի պահեստից՝ առքուվաճառքի պայմանագրերի համաձայն: Հաշիվները դուրս են գրվում ժամանակի որոշակի պահին: Հաշիվները սովորաբար ենթակա են վճարման երկու ամսվա ընթացքում: Ապրանքների համար զեղչեր, կուտակային միավորներ կամ գումարի վերադարձ չեն առաջարկվում:	Հասույթը ճանաչվում է, երբ ապրանքներն առաքվում են նշված վայր կամ ուղարկվում են նշված վայրից՝ պայմանագրի համաձայն:
Փոխադրման ծառայությունների մատուցում	Խումբը նաև մատուցում է հաճախորդներին վաճառված ապրանքների փոխադրման ծառայություններ: Հաշիվները սովորաբար ենթակա են վճարման երկու ամսվա ընթացքում:	Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայության մատուցմանը զուգահեռ:

6. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Նյութեր	13,200,279	14,116,468
Կոմունալ ծառայություններ	3,815,497	4,254,349
Աշխատավարձ	2,187,795	1,842,920
Մաշվածություն	1,807,518	1,592,945
Այլ	117,181	80,375
	21,128,269	**21,887,057**

Ծախսերն ըստ բնույթի

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Փոխություններ պատրաստի և անավարտ արտադրանքի պաշարներում	(1,433,787)	(825,854)
Նյութեր	14,093,851	14,650,837
Կոմունալ ծառայություններ	4,119,641	4,457,484
Աշխատավարձ	2,793,388	2,146,063
Մաշվածություն	1,969,516	1,689,821
Ապահովագրության և բանկային ծառայությունների վճարներ	137,253	164,235
Մասնագիտական ծառայություններ	64,730	85,650
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	17,016	19,808
Անվտանգության ծառայություն	7,200	6,480
Տրված կանխավճարների դուրսգրում	3,481	3,764
Այլ ծախսեր	298,636	191,992
	22,070,925	**22,590,280**

7. Վարչական ծախսեր

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Աշխատավարձ*	457,494	233,380
Ապահովագրության և բանկային ծառայությունների վճարներ	137,253	164,235
Մասնագիտական ծառայություններ	48,730	69,650
Գրասենյակային և կոմունալ ծառայություններ	45,860	42,089
Մաշվածություն	39,641	36,576
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	17,016	19,808
Աուդիտորական ծառայությունների արժեքը	16,000	16,000
Անվտանգության ծառայություն	7,200	6,480
Այլ	13,141	11,567
	782,335	**599,785**

* 2023թ-ին աշխատակիցների հատուցումների ընդհանուր գումարը կազմել է 2,793,063 հազար դրամ (2022թ-ին՝ 2,146,063 հազար դրամ):

8. Այլ ծախսեր

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Արձակուրդի պահուստ	96,943	36,036
Նվիրատվություններ	32,471	12,120
Ապրանքների դուրսգրում	18,351	5,532
Տրված կանխավճարների դուրսգրում	3,481	3,764
Տույժեր և տուգանքներ	40	1,666
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստներ	-	34,818
Այլ	9,036	9,502
	160,322	**103,438**

9. Զուտ ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով	491,552	167,811
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	-	739,379
Ֆինանսական եկամուտ	**491,552**	**907,190**
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ – տոկոսային ծախս	(2,910,576)	(2,292,200)
Զուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից	(457,342)	-
Ֆինանսական ծախսեր	**(3,367,918)**	**(2,292,200)**
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր	**(2,876,366)**	**(1,385,010)**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսերը ներկայացված են զուտ՝ առանց ՀՀ կառավարությունից ստացված սուբսիդիաների:

10. Շահութահարկ

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 18% դրույքաչափով (2022թ-ին՝ 18%):

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	891,408	946,324
	891,408	**946,324**
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(88,691)	376,013
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**802,717**	**1,322,337**

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում

	2023թ.		**2022թ.**	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Շահույթը մինչև հարկումը	6,087,838	100%	10,240,181	100%
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	1,095,811	18.0%	1,843,233	18%
Հարկային արտոնություն*	(382,032)	(6)%	(390,123)	(4)%
Չնվազեցվող ծախսեր/(Չհարկվող եկամուտ)	88,938	2%	(130,773)	(1)%
	802,717	**13%**	**1,322,337**	**13%**

* ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի N 498-Ա որոշմամբ Ընկերության համար նախատեսվել է հարկային արտոնությունների ծրագիր, համաձայն որի հաստատվել է Ընկերության բիզնես ծրագիրը (ծրագիր) և սկսած 2022 թվականի ապրիլի 30-ից և դրան հաջորդող հինգ հարկային տարիների ընթացքում, ծրագրի աշխատանքների շրջանակում ընդունված նոր աշխատակիցների աշխատավարձերը և դրանց հավասարեցված գումարները նվազեցվում են եկամտահարկի գումարից 100%-ով, բայց ոչ ավել քան Խմբի եկամտահարկի 30%-ի չափով::

(բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Հիմնական միջոցներ	-	-	3,776,342	3,853,820	3,776,342	3,853,820
Պաշարներ	-	-	37,023	55,272	37,023	55,272
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(44,113)	(68,492)	-	-	(44,113)	(68,492)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(35,283)	(17,940)	-	-	(35,283)	(17,940)
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	**(79,396)**	**(86,432)**	**3,813,365**	**3,909,092**	**3,733,969**	**3,822,660**

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Հիմնական միջոցներ	-	-	3,853,820	3,506,282	3,853,820	3,506,282
Պաշարներ	-	-	55,272	20,738	55,272	20,738
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(68,492)	(80,373)	-	-	(68,492)	(80,373)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(17,940)	-	-	-	(17,940)	-
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	**(86,432)**	**(80,373)**	**3,909,092**	**3,527,020**	**3,822,660**	**3,446,647**

(գ) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ

Հետաձգված հարկի մնացորդների բոլոր փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

11. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Շենքեր, շինություններ և կառույցներ	Մեքենաներ և սարքավո-րումներ	Փոխադրա-միջոցներ	Այլ	Անավարտ շինարարու-թյուն	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	10,612,653	21,001,977	1,369,913	134,020	323,944	33,442,508
Ավելացումներ	579,250	1,065,160	4,223,553	42,754	37,224	5,947,941
Տեղափոխումներ	-	(97,107)	178,531	135,024	(216,448)	-
Օտարումներ	(1,500)	-	-	-	-	(1,500)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**11,190,403**	**21,970,030**	**5,771,997**	**311,798**	**144,720**	**39,388,949**
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	11,190,403	21,970,030	5,771,997	311,798	144,720	39,388,949
Ավելացումներ	701,223	1,966,573	214,334	139,946	4,236,719	7,258,795
Տեղափոխումներ	-	(914,671)	20,869	(550)	894,352	-
Օտարումներ	(1,000)	(867)	-	(9,800)	-	(11,667)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**11,890,626**	**23,021,065**	**6,007,200**	**441,394**	**5,275,791**	**46,636,077**
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	(867,435)	(3,121,130)	(43,136)	(16,827)	-	(4,048,527)
Տեղափոխումներ	-	3,112	-	(3,112)	-	-
Տարվա մաշվածություն	(296,269)	(1,155,359)	(181,000)	(25,354)	-	(1,657,982)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**(1,163,704)**	**(4,273,377)**	**(224,136)**	**(45,293)**	**-**	**(5,706,509)**
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	(1,163,704)	(4,273,377)	(224,136)	(45,293)	-	(5,706,509)
Տեղափոխումներ	(308,702)	(1,305,957)	(337,702)	(30,959)	-	(1,983,320)
Տարվա մաշվածություն	9	482	-	3,858		4,349
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**(1,472,397)**	**(5,578,852)**	**(561,838)**	**(72,394)**	**-**	**(7,685,480)**
Հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2022թ.	9,745,220	17,880,847	1,326,777	117,193	323,944	29,393,981
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	10,026,700	17,696,653	5,547,862	266,505	144,720	33,682,440
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**10,418,230**	**17,442,215**	**5,445,362**	**369,000**	**5,275,791**	**38,950,596**

1,929,875 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2022թ-ին՝ 1,332,236 հազար դրամ) ներկայացվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 17,409 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2022թ-ին՝ 13,673 հազար դրամ)՝ վարչական ծախսերի կազմում, այլ ծախսերի կազմում մաշվածության ծախս չի ներկայացվել (2022թ-ին այլ ծախսերի կազմում մաշվածության ծախս չի ներկայացվել): 36,036 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը կապիտալացվել է:

Ապահովություն

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 24,746,080 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 25,536,307 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները գրավադրված են բանկային վարկի դիմաց (Ծանոթագրություն 18(ա)):

12. Ներդրումային գույք

(ա) Հաշվեկշռային արժեքի համադրում

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	1,094,811	1,117,043
Տարվա մաշվածություն	(22,291)	(22,232)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,072,520**	**1,094,811**

Ներդրումային գույքը վարձակալության է հանձնված կապակցված կողմին անորոշ ժամկետով:

Ներդրումային գույքի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջինիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածություն

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի	1,117,043	1,117,043
Կուտակված մաշվածություն	(44,523)	(22,232)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի	**1,072,520**	**1,094,811**

(գ) Իրական արժեքի չափում

(i) Իրական արժեքի հիերարխիա

Ղեկավարությունը չի ներգրավել արտաքին գնահատողի ներդրումային գույքի գնահատման համար 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ղեկավարության գնահատմամբ հաշվետու ամսաթվի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրա հաշվեկշռային արժեքին:

Ներդրումային գույքի իրական արժեքը չափելու համար կիրառվել են ստորև ներկայացված գնահատման մեթոդը և նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները:

- Շուկայական համեմատական մոտեցում. Շուկայական համեմատական մոտեցման համաձայն՝ գույքի իրական արժեքը գնահատվում է համադրելի գործարքների հիման վրա: Հիմնական ենթադրությունները վերաբերում են որպես համեմատական միավորներ օգտագործվող շենքերի վիճակին, որակին և գտնվելու վայրին: Շուկայական համեմատական մոտեցումը հիմնված է փոխարինման սկզբունքի վրա, որի համաձայն պոտենցիալ գնորդը չի վճարի ավելի շատ գումար գույքի համար, քան այն գումարը, որով նա կարող է գնել համադրելի փոխարիող գույք:

  Ստորև ներկայացված են մոտեցման նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները, որոնք կիրառվել են 2021թ. դեկտեմբերի 31-ին:

  - Գտնվելու վայրը՝ -20%-ից +20%
  - Չափը՝ -30%-ից +25%
  - Ներքին/արտաքին վիճակը և վերանորոգումը՝ 70 հազար – 100 հազար դրամ մեկ քառ.մ. համար

13. Պաշարներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Հումք	7,788,777	6,926,805
Անավարտ արտադրություն	2,836,852	1,525,050
Պատրաստի արտադրանք	490,139	368,154
Պահեստամասեր	772,467	315,743
Հումքը ճանապարհին	206,520	307,069
Վառելիք և սպառողական նյութեր	95,218	69,606
Այլ	89,783	18,690
	12,279,756	**9,531,117**

14. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր	6,851,752	7,382,392
Այլ դեբիտորական պարտքեր	22,321	23,775
Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	(39,388)	(52,571)
Փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասում ներառված առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	**6,834,685**	**7,353,596**
Ստացվելիք հարկեր	183,407	21,648
Տրված կանխավճարներ	1,686,268	2,036,510
Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	**8,704,360**	**9,411,754**

Պարտքային և արժութային ռիսկերին Խմբի ենթարկվածության և առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Կանխիկը դրամարկղում	14,548	6,676
Բանկային հաշիվների մնացորդներ	2,676,108	472,924
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում	**2,690,656**	**479,600**

Ակնկալվող պարտքային կորստի չափման նպատակով դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդները դասված են 1-ին փուլ: Ակնկալվող պարտքային կորստի պահուստի գումարը 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ էական չէ:

Տոկոսադրույքային ռիսկին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

16. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 62,923,840 սովորական բաժնետոմսից՝ 155 դրամ անվանական արժեքով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 62,923,840 բաժնետոմսից՝ 150 դրամ անվանական արժեքով):

Բոլոր սովորական բաժնետոմսերի սեփականատերերն ունեն հավասար իրավունքներ Խմբի մնացորդային ակտիվների նկատմամբ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետոմսերի 98.7%-ը (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 98.7%) գրավադրված էր բանկային վարկի դիմաց (Ծանոթագրություն 18(ա)):

Բաժնետիրական կապիտալի աճը տեղի է ունեցել չբաշխված շահույթից տեղի ունեցած փոխանցման միջոցով: Բաժնետոմսերի քանակը չի փոխվել, փոխարենը բարձրացվել է սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը:

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Խմբի բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Խմբի բաշխման ենթակա պահուստները որոշվում են Խմբի ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա: 2023թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել (2022թ-ին Խումբը հայտարարել և ամբողջությամբ վճարել է 8,000,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ): 2022թ-ին մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը կազմում էր 127 դրամ:

(գ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվել է սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող 5,285,118 հազար դրամ (2022թ-ին՝ 8,917,844 հազար դրամ) շահույթի և շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվի՝ 62,923,840 (2022թ-ին՝ 62,923,840) հիման վրա: Խումբը չունի նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսեր:

17. Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Խմբի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու և շուկայի մասնակիցների վստահությունն ապահովելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Խմբի հասույթի և շահույթի շարունակական հսկողության, Խմբի գործառնական գործունեությունից ստացվող դրամական հոսքերի հաշվին հիմնականում ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի և վարկերի ու փոխառությունների միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը Խումբը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Խմբի մոտեցումը չի փոխվել:

Խմբի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների պահանջներ:

18. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	6,425,763	5,131,726
	6,425,763	**5,131,726**
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	2,151,081	1,330,096
	2,151,081	**1,330,096**

(ա) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառություններ պայմանները:

				31 դեկտեմբերի 2023թ.		**31 դեկտեմբերի 2022թ.**	
հազ. դրամ	**Արժույթ**	**Անվանական տոկոսադրույք***	**Մարման տարի**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**	**Անվանակ. արժեք**	**Հաշվեկշռ. արժեք**
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7.00%	2025	607,714	607,714	590,995	590,995
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	12.00%	2025	2,222,351	2,222,351	772,114	772,114
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	12.00%	2025	442,010	442,010	297,098	297,098
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7.25%	2025	625,892	625,892	688,891	688,891
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7.25%	2027	3,709,638	3,709,638	4,112,724	4,112,724
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	12.75%	2029	969,239	969,239	-	-
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ				**8,576,844**	**8,576,844**	**6,461,822**	**6,461,822**

* Գրավով ապահովված բանկային վարկերի անվանական տոկոսադրույքները մոտավորապես համապատասխանում են շուկայական տոկոսադրույքերին:

Բանկային վարկերի դիմաց գրավադրված են.

- 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 24,746,080 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 25,536,307 հազար դրամ) (տես Ծանոթագրություն 11),
- 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 98.7% բաժնետոմսերը (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 98.7%) (տես Ծանոթագրություն 16(ա)):

(բ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	**Պարտավորություններ**	
	Վարկեր և փոխառություններ	
	2023թ.	**2022թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	**6,461,822**	**105,500**
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	4,103,353	9,448,681
Վարկերի և փոխառությունների մարում	(2,125,585)	(2,758,461)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**1,977,768**	**6,690,220**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	**132,737**	**(336,986)**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	698,547	217,257
Վճարված տոկոսներ (դրամական հոսքեր գործառնական գործունեությունից)	(203,150)	(57,672)
Սուբսիդավորված տոկոս վարկի գծով	(490,880)	(156,497)
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	**4,517**	**3,088**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**8,576,844**	**6,461,822**

19. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Առևտրական կրեդիտորական պարտքեր	969,697	789,686
Աշխատավարձ	182,381	131,247
Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտքեր ընթացիկ առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	**1,152,078**	**920,933**
Վճարվելիք այլ հարկեր	113,977	224,201
Արձակուրդային վճարների գծով պահուստ	196,015	99,664
Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	**1,462,070**	**1,244,798**

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

20. Թողարկված պարտատոմսեր

հազ. դրամ	Արժույթ	Անվանական տոկոսադրույք	Մարման տարի	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Թողարկված տեղական պարտատոմսեր	ՀՀ դրամ	12%	11.06.2031	15,101,678	15,100,530
Թողարկված տեղական պարտատոմսեր	ԱՄՆ դոլար	7%	11.06.2031	6,095,139	5,927,326
				21,196,817	**21,027,856**

2021թ. հունիսի 11-ին Խումբը թողարկել և տեղաբաշխել ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքային արժեթղթեր՝ համապատասխանաբար 15,000 միլիոն ՀՀ դրամ և 15 միլոն ԱՄՆ դոլար անվանական արժեքով: ՀՀ դրամով արտահայտված պարտքային արժեթղթերի շուրջ 63%-ը (2022-ին՝ 60%-ը) իսկ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքային արժեթղթերի 92%-ը (2022-ին՝ 90%-ը)՝ պահվում է բաժնետերերի կողմից: 2023թ. ընթացքում դուստր ընկերությունը պարտատոմսեր չի վաճառել (2022թ-ին՝ վաճառել է 8,468 միլիոն դրամ գումարով պարտատոմսեր):

Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2023թ.	**2022թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	21,027,856	13,563,462
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Մուտքեր թողարկված պարտատոմսերի վաճառքից	-	8,467,525
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**-**	**8,467,525**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	**167,289**	**(820,506)**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	2,212,029	2,074,943
Վճարված տոկոսներ (դրամական հոսքեր գործառնական գործունեությունից)	(2,210,357)	(2,257,569)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**21,196,817**	**21,027,856**

21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Իրական արժեքի չափում

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Տեսակը	Գնահատման մեթոդը	Նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները
Վարկեր և փոխառություններ	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Այլ ֆինանսական պարտավորություններ*	Ձեղչված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն

* Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են գրավով ապահովված բանկային վարկերը, թողարկված պարտատոմսերը և առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(գ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (տես Ծանոթագրություն 21(գ)(ii)),
- իրացվելիության ռիսկ (տես Ծանոթագրություն 21(գ)(iii)),
- շուկայական ռիսկ (տես Ծանոթագրություն 21(գ)(iv)):

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի հետ կապված:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

հազ. դրամ		**Հաշվեկշռային արժեք**	
	Ծնթգ.	**2023թ.**	**2022թ.**
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	6,834,685	7,353,596
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	2,676,108	472,924
		9,510,793	**7,826,520**

Առևտրական դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի բնութագրերից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ իր հաճախորդների բազայի պարտքային ռիսկի վրա, այդ թվում՝ այն ոլորտին և երկրին բնորոշ պարտազանցման ռիսկը, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները: Հասույթի կենտրոնացման մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 5-ում:

Խմբում չի գործում հաճախորդների հետ կապված պարտքային ռիսկի հարցերը կարգավորող հատուկ քաղաքականություն, այնուամենայնիվ, Խմբի հասույթի մոտ 95%-ը վերագրելի է երկու խոշոր հաճախորդների հետ իրականացվող վաճառքի գործարքներին, որոնցից մեկը կապակցված կողմ է (2022թ-ին՝ երեք հաճախորդների հետ իրականացվող վաճառքի գործարքներին, որոնցից մեկը կապակցված կողմ էր): Այս հաճախորդներից ոչ մեկի պարտքերի մնացորդները դուրս գրված չեն կամ պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ: Խմբի հաճախորդների ավելի քան 90%-ը Խմբի հետ համագործակցում է ավելի քան չորս տարի:

Առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին իր ենթարկվածությունը սահմանափակելու համար Խումբը հաճախորդների համար վճարման առավելագույն ժամկետ է սահմանել երկու ամիսը:

Խումբը չի պահանջում գրավ առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ամենախոշոր հաճախորդի (մեծածախ առևտրով զբաղվող միջազգային ընկերություն, որի վարկանիշը ղեկավարության գնահատմամբ մոտավորապես համապատասխանում է «Moody's» վարկանիշային գործակալության B3 վարկանիշին՝ հիմք ընդունելով այդ ընկերություն գործունեության երկրի վարկանիշը) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը կազմում էր 6,523,206 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,136,824 հազար դրամ):

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում հաճախորդների համար

Խումբը պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ այն տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են կորստի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշեր, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ, կառավարչական հաշվետվություններ, դրամական հոսքերի կանխատեսումներ և հաճախորդների մասին մամուլում հրապարակված տեղեկատվություն), և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանիշները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտազանցման ռիսկի մասին և համընկնում են այնպիսի գործակալությունների արտաքին վարկանիշների հետ ինչպիսին «Moody's Investor Services»-ն է: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստները միշտ չափվում են այնպիսի գումարով, որը հավասար է ցմահ ակնկալվող վարկային կորուստներին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության, առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների և հաճախորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2023թ. **հազ. դրամ**	**Կորստի միջին կշռված մակարդակ**	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Արժեզրկումից կորուստների գծով պահուստ**	**Պարտքային առումով արժեզրկված**
Առևտրական դեբիտորական պարտքեր և պայմանագրի գծով ակտիվներ				
Ցածր ռիսկ	0.6%	6,851,752	(39,388)	Ոչ
		6,851,752	**(39,388)**	

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության, առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների և հաճախորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2022թ. **հազ. դրամ**	**Կորստի միջին կշռված մակարդակ**	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Արժեզրկումից կորուստների գծով պահուստ**	**Պարտքային առումով արժեզրկված**
Առևտրական դեբիտորական պարտքեր և պայմանագրի գծով ակտիվներ				
Ցածր ռիսկ	0.7%	7,382,392	(52,571)	Ոչ
		7,382,392	**(52,571)**	

Խումբը ցածր ռիսկը սահմանում է հետևյալ կերպ.

Ցածր ռիսկ. հաճախորդը մոտ ապագայում ունի պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու կայուն հնարավորություն, իսկ ավելի երկար ժամկետում տնտեսական և առևտրային պայմանների անբարենպաստ փոփոխությունները քիչ հավանական է, որ նվազեցնեն պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու փոխառուի կարողությունը:

Կասկածելի պարտք. հաճախորդի պարտքի ամբողջական մարումը կասկածելի է և անորոշ: Գումարի մարման չափը տատանվում է ամբողջական կորստից մինչև անորոշ կորուստը, եթե չձեռնարկվեն հարցի կարգավորմանն ուղղված միջոցառումներ: Կասկածելի պարտք ունեցող հաճախորդները սովորաբար իրենցից ներկայացնում են պարտականությունները չկատարող հաճախորդներ, որոնց համար պարտքի մնացորդի ամբողջական հավաքագրումը ռիսկային է:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների արժեզրկման գծով պահուստի փոփոխություններ

Ստորև ներկայացված են առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխությունները տարվա ընթացքում:

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Մնացորդը առ 1 հունվարի	(52,571)	(17,753)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	13,183	(34,818)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(39,388)**	**(52,571)**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 2,676,108 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 472,924 հազար դրամ), որոնք իրենցից ներկայացնում են առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված:

Բանկային հաշիվների մնացորդները (ընթացիկ հաշիվները) պահվում են «Moody's» վարկանիշային գործակալության B3 վարկանիշով Հայաստանի խոշոր բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Խմբի գնահատմամբ բանկերում պահվող ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետայնության պատճառով:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Ենթարկվածություն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մնացած մարման ժամկետները 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ներկայացված են ընդհանուր և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսային վճարումները և չեն ներառում հաշվանցման պայմանագրերի ազդեցությունը:

31 դեկտեմբերի 2023թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Ցպահանջ**	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**	**2-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ֆինանսական պարտավորություններ								
Գրավով ապահովված բանկային վարկեր	8,576,844	10,139,424	-	380,021	2,443,759	3,960,775	2,882,631	472,237
Թողարկված պարտատոմսեր	21,196,817	37,768,715	-	377,950	1,853,175	2,225,030	6,681,184	26,631,376
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	1,152,078	1,152,078	-	1,152,078	-	-	-	-
	30,925,739	**49,060,217**	**-**	**1,910,049**	**4,296,934**	**6,185,805**	**9,563,815**	**27,103,613**

31 դեկտեմբերի 2022թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Ցպահանջ**	**Մինչև 2 ամիս**	**2-12 ամիս**	**1-2 տարի**	**2-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ֆինանսական պարտավորություններ								
Գրավով ապահովված բանկային վարկեր	6,461,822	7,113,361	-	89,450	1,353,999	975,956	3,449,879	1,244,076
Թողարկված պարտատոմսեր	21,027,856	36,371,189	-	338,405	1,506,957	1,820,281	5,445,927	27,259,618
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	920,930	920,930	-	920,930	-	-	-	-
	28,410,608	**44,405,480**	**-**	**1,348,785**	**2,860,956**	**2,796,237**	**8,895,806**	**28,503,694**

Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական հոսքերը կարող են առաջանալ նշվածից նշանակալիորեն ավելի վաղ կամ նշվածներից նշանակալիորեն տարբեր գումարներով:

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արժութային ռիսկ

Խումբը ենթարկվում է արժութային ռիսկին այնքանով, որքանով արժույթը, որով արտահայտված են վաճառքի ու գնումների գործառնությունները և փոխառությունները, չի համապատասխանում Խմբի ֆունկցիոնալ արժույթին: Այս գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով:

Ենթարկվածություն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արժութային ռիսկին:

հազ. դրամ	**ԱՄՆ դոլարով արտահայտված 31 դեկտեմբերի 2023թ.**	**ԱՄՆ դոլարով արտահայտված 31 դեկտեմբերի 2022թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	409,276	4,526
Առևտրական կրեդիտորական պարտքեր	(498,256)	(112)
Վարկեր և փոխառություններ	(4,940,615)	(5,392,610)
Թողարկված պարտատոմսեր	(6,095,722)	(5,927,326)
Զուտ ենթարկվածություն	**(11,125,317)**	**(11,315,522)**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	**Միջին փոխարժեք**		**Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ**	
	2023թ.	**2022թ.**	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
1 ԱՄՆ դոլար	392.54	434.86	404.79	393.57

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) այլ արտարժույթների նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և մինչև հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	**Աճ**	**Նվազում**
	Շահույթ կամ վնաս	**Շահույթ կամ վնաս**
31 դեկտեմբերի 2023թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	1,112,532	(1,112,532)
31 դեկտեմբերի 2022թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	1,131,552	(1,131,552)

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե որ տոկոսադրույքը՝ հաստատունը թե փոփոխունը, ավելի բարենպաստ կլինի Խմբի համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

Ենթարկվածությունը տոկոսադրույքային ռիսկին

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	
	31 դեկտեմբերի 2023թ.	**31 դեկտեմբերի 2022թ.**
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	29,773,661	27,489,677
	29,773,661	**27,489,677**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական պարտավորությունները ներառում են 21,196,817 հազար դրամ ընդհանուր գումարով հաստատուն տոկոսադրույքով թողարկված պարտատոմսերը և 8,576,844 հազար դրամ գումարով գրավով ապահովված բանկային վարկերը:

Իրական արժեքի զգայնության վերլուծություն հաստատուն տոկոսադրույքով գործիքների համար

Խումբը չի հաշվառում հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող: Ուստի, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

22. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբն ամբողջությամբ չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է նշանակալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում կամ այլ հայցերում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար, սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը հարկային տարում.

- միջպետական գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջպետական գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ վերջիններիս կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունն այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Վերը նշված հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

23. Կապակցված կողմեր

(ա) Մայր կազմակերպություն և վերջնական հսկող կողմ

Ընկերության հիմնական բաժնետերերն են՝ «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը (49.35%), Միխայիլ Հարությունյանը (16.53%), Տիգրան Հարությունյանը (16.53%) և Վահան Հարությունյանը (16.30%): «Մորակո Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվությունները:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի վերջնական հսկող անձն է Միխայիլ Հարությունյանը:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է աշխատակիցների հատուցումների գծով ծախսերում (տես Ծանոթագրություն 7):

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Աշխատավարձ և պարգևավճարներ	**230,788**	**51,058**

(ii) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված են առանցքային ղեկավար անձնակազմի և այն կազմակերպությունների հետ գործարքների ընդհանուր գումարները և մնացորդները, որոնք նկատմամբ առանցքային ղեկավար անձնակազմն ունի հսկողություն կամ նշանակալի ազդեցություն:

հազ. դրամ	**Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**		**Մնացորդը առ 31 դեկտեմբերի**	
	2023թ.	**2022թ.**	**2023թ.**	**2022թ.**
Փոխադրամիջոցների վարձակալություն	600	720	600	54

(գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	**Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**		**Մնացորդը առ 31 դեկտեմբերի**	
	2023թ.	**2022թ.**	**2023թ.**	**2022թ.**
Ապրանքներ և ծառայությունների վաճառք				
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	28,326,184	26,116,067	6,534,090	7,339,761
Ապրանքներ և ծառայությունների գնում				
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	(2,777,570)	(5,291,152)	1,259,426	(84,239)
Թողարկված պարտատոմսեր				
Բաժնետերեր	-	(9,477,596)	(15,123,070)	(9,477,596)
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ		(5,480,564)	(292,180)	(5,480,564)
Տրամադրված փոխառություններ				
Համատեղ հսկողության ներքո գտնվող և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	-	4,270,725	-	-

Կապակցված կողմերի և բաժնետերերի հետ գործարքների բոլոր մնացորդները (բացառությամբ թողարկված պարտատոմսերի) ենթակա են մարման կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետ վեց ամսվա ընթացքում: Գործարքների մնացորդները գրավով ապահովված չեն: Ընթացիկ կամ նախորդ տարում չեն ճանաչվել անհուսալի կամ կասկածելի պարտքերի գծով ծախսեր կապակցված կողմերի պարտքերի հետ կապված:

Թողարկված պարտատոմսերի գծով տոկոսային ծախսը կազմում է 1,543,263 հազար դրամ (2022թ-ին՝ 1,547,169 հազար դրամ):

24. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել գործող ստանդարտների որոշ փոփոխություններ, որոնք սակայն նշանակալի ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Խումբը կիրառում է «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումը» (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ) 2023թ. հունվարի 1-ից: Թեև փոփոխությունները չեն հանգեցրել որևէ փոփոխության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում, դրանք ազդեցություն են ունեցել համախմբված ֆինանսական հաշվետվություններում հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ բացահայտված տեղեկատվության վրա:

Փոփոխությունները պահանջում են բացահայտել հաշվապահական հաշվառման «էական», այլ ոչ «նշանակալի» մասերը: Փոփոխությունները ներառում են նաև ուղեցույց հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման հետ կապված էականության հասկացության կիրառման վերաբերյալ՝ օգնելով կազմակերպություններին տրամադրել կազմակերպությանը հատուկ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ օգտակար տեղեկատվություն, որն անհրաժեշտ է օգտագործողներին ֆինանսական հաշվետվություններում ներառված այլ տեղեկատվությունը հասկանալու համար:

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է Խմբի կողմից այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

(բ) Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Այնուամենայնիվ, այն ֆինանսական ակտիվների համար, որոնք պարտքային առումով արժեզրկված են դարձել սկզբնական ճանաչումից հետո, տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամուտը կրկին սկսվում է հաշվարկվել համախառն հիմունքով:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի փոփոխությունը՝ զուտ շահույթի, թե՝ զուտ վնասի:

(գ) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Խմբի ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(դ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբը տվյալ պահին ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

(ե) Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Հումքի և պահեստամասերի ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով, իսկ պատրաստի և անավարտ արտադրանքի ինքնարժեքը որոշվում է միջին կշռված արժեքի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում, ինքնարժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

(զ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի գծով ծախսումները, նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած այլ ծախսումները, հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև դրանց զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում: Վերագնահատված ակտիվների վաճառքի դեպքում, վերագնահատման պահուստի կազմում որպես վերագնահատումից աճ ներառված համապատասխան գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը զուգընթաց:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

2022թ-ից հալեցման և ձուլման գործընթացում օգտագործվող հիմնական սարքավորումների մաշվածությունը հաշվարկվում է արտադրության միավորի մեթոդով: Այլ միավորների գծով մաշվածությունըանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Ստորև ներկայացված են հիմնական միջոցների նշանակալի մասերի օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- Շենքեր և շինություններ 50-70 տարի,
- Հոսքագծեր 20-25 տարի,
- Մեքենաներ և սարքավորումներ 15-25 տարի,
- Փոխադրամիջոցներ 3-5 տարի:

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(է) Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով՝ ներառյալ գործարքի գծով ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով ներդրումային գույքի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ներդումային գույքի օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 35 տարի:

Ներդումային գույքի օտարումից ստացված ցանկացած օգուտը կամ կորուստը (որը հաշվարկվում է որպես օտարումից զուտ մուտքերի և միավորի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(ը) Պետական շնորհներ

Բանկերից ստացված վարկերի տոկոսային ծախսերի Կառավարության սուբսիդավորման տեսքով շնորհները սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում, քանի որ Խումբը որպես ծախս ճանաչում է այն ծախսումները, որոնց հատուցման համար նախատեսված են շնորհները:

(թ) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվող են: Այդ դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե վերափոխումը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է վերափոխման (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում՝ վերափոխման (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ: Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես վերափոխում, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից:

Խումբն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբերվող են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների վերափոխումը հաշվառվում է որպես մարում, ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է

որպես մարումից օգուտի կամ կորուստի մաս: Եթե փոխանակումը կամ վերափոխումը չի հաշվառվում որպես մարում, ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

(iv) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(ժ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոններին թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(ի) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Խմբի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Խմբի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության

արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից, քանի որ Խմբի խորհուրդը վերահսկում է Խմբի գործառնական արդյունքները որպես մեկ բիզնես միավոր: Գլխավոր տնօրենը համարվում է Խմբի գլխավոր գործառնական որոշում կայացնողը՝ ռեսուրսների բաշխման և կատարողականի գնահատման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով:

26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(ա) Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)

2020թ-ին և 2022թ-ին հրապարակված փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանել պարտավորության ընթացիկ կամ ոչ ընթացիկ լինելը որոշելու պահանջները և պահանջում են նոր բացահայտումներ կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորությունների համար: Փոփոխությունները կիրառվում են 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը վարկերի և փոխառությունների գծով պարտավորություններ չունի, հետևաբար փոփոխություններից որևէ ազդեցություն չի ակնկալվում:

(բ) Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 17-ի փոփոխություններ)

Փոփոխություններով պահանջվում են տեղեկատվության նոր բացահայտումներ մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունների վերաբերյալ, որոնք օգնում են ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին գնահատել այդ պայմանավորվածությունների ազդեցությունը Խմբի պարտավորությունների և դրամական հոսքերի և իրացվելիության ռիսկին Խմբի ենթարկվածության վրա: Փոփոխությունները կիրառվում են 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը չունի մատակարարների գծով ֆինանսական պայմանագրեր, հետևաբար փոփոխություններից որևէ ազդեցություն չի ակնկալվում:

(գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Վարձակալության գծով պարտավորությունը վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ)

ՀԱՎԵԼՎԱԾ 7: Ընկերության կանոնադրություն

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՋԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 31.07.1995թ.
Գրանցման թիվ 39.120.00360
Վկայական 01Ա 015155
ՀՎՀՀ 02800538
04.11.2004թ. գրանցված կանոնադրության
Թիվ ___ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
«24» հուլիս 2020թ.
աշխատակից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի
«29» հունիսի 2020թ.
տարեկան ընդհանուր ժողովի
որոշմամբ (արձ. թիվ 1)

Տնօրեն
Խ. Անտոնյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրությամբ)

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, 2020թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1 .«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)՝ համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնց տերերը (այսուհետ՝ Բաժնետերեր) իրավունք ունեն օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց Ընկերության մյուս բաժնետերերի համաձայնության:

Ընկերությունը (նախկինում «ԹՈՒՋԵՋՈՒԼ» ԲԲԸ) հիմնադրվել է ՀՀ կառավարության 1998թ.-ի սեպտեմբերի 4-ի թիվ 550 որոշման համաձայն «ՀԱՅՋՈՒԼ» (Չարենցավանի «Ավտոծուլ») ՓԲԸ-ի (նախկինում «Ավտոծուլ» պետական ձեռնարկության) պետական բաժնետոմսերը մրցույթով մասնավորեցման ճանապարհով բաց բաժնետիրական ընկերության վերակազմակերպման արդյունքում:

Ընկերությունը հանդիսանում է «Հայծուլ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցման) պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու ֆիրմային այլ ռեկվիզիտներ:

1.4. Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենքով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:

1.6. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

1.7. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.8. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.9. Ընկերության իրավական-կազմակերպչական ձևն է բաց բաժնետիրական ընկերություն:

1.10. Ընկերության ֆիրմային անվանումն է.

Հայերեն լրիվ՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

Ռուսերեն լրիվ՝ «АСКЕ ГРУП» Открытое Акционерное Общество
կրճատ՝ «АСКЕ ГРУП» ОАО
Անգլերեն լրիվ «ASCE GROUP» Open Joint-stock Company
կրճատ՝ «ASCE GROUP » Open J-S Company

1.11. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է ՀՀ, Կոտայքի մարզ, 2501, ք. Չարենցավան, Երևանյան 2.

2. Ընկերության գործունեության նպատակը և առարկան

2.1 .Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործնեություն (այդ թվում առևտրային) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ -
Թուջե, պողպատե և գունավոր մետաղների ձուլում,

-Սև և գունավոր մետաղների, նրանց առաջնային արտադրանքի արտադրություն,

-Մետաղե ջարդոնի առք ու վաճառք,

-Մեքենաների, մետաղահատ հաստոցների, սարքավորումների և օժանդակ նյութերի մեծածախ առևտուր,

-Ձուլման սարքավորումների և հալման ինդուկցիոն վառարանների արտադրություն և մեծածախ առևտուր,

- Կենցաղային ապրանքների և պլաստմասայե իրերի արտադրություն և մեծածախ առևտուր,

- Առևտրամիջնորդային գործունեություն (ոչ բորսայական):

Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից, այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.3. Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որոնք նրան անհրաժեշտ են օրենքով չարգելված ցանկացած գործունեություն իրականացնելու համար: Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանված է ՀՀ

Օրենսդրությամբ (այսուհետ՝ Օրենսդրություն) Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

3. Ընկերության իրավական վիճակը, իրավունքներն ու պարտականությունները

3.1. Ընկերությունը իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն իրավունք ունի՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.2. Ընկերությունը իրավունք ունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով և իրականացնել դրանց ազատ վաճառքը Օրենքի և այլ իրավական ակտերին համապատասխան:

3.3. Ընկերությունն իրավունք ունի.

- Ընկերությունը Օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքները,
- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, Օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ Հայաստանի Հանրապետության և այլ պետություններում՝ ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,
- ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին, կազմակերպություններին կամ քաղաքացիներին,
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ,

արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին,

- ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,
- օգտվել Օրենսդրությամբ, Օրենսգրքով,Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.4. Ընկերությունը պարտավոր է՝

- Օրենսդրությամբ,Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն,
- ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, կամ այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանում, Օրենսդրությամբ սահմանված կարգով,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկվող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին,
- կրել Օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. Ընկերության կանոնադրական կապիտալ

4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել բաց Ընկերության համար

Ընկերության պետական գրանցման պահին գործող Օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1.179.822.000(մեկ միլիարդ հարյուր յոթանասունինը միլիոն ութ հարյուր քսաներկու հազար) դրամ, որը կազմում է 7.865.480հատ սովորական անվանական բաժնետոմսեր, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 150դրամ :

Բոլոր 7.865.480 հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

4.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ կարող է փոփոխել կանոնադրական կապիտալի չափը, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց և ձեռնարկությունների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

4.3.1. Կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

.լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի

- լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) և յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի քանակը այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում,
- լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները,այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով

ավելացնել կանոնադրական կապիտալը՝

- շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- Ընկերության կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (զուտ ակտիվները) կամ դրա մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով) կամ Խորհուրդը, եթե սույն կանոնադրությամբ կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդ իրավասությունը :

Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

4.3.2. Կանոնադրական կապիտալի չափի նվազեցում

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել.

.բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ,

- բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում այդ նպատակով Ընկերությանն առաջարկված բաժնետոմսերի ձեռք բերումը ընկերության պարտականությունն է: Եթե ձեռք բերման առաջարկված բաժնետոմսերի քանակը գերազանցում է համապատասխան որոշմամբ սահմանված քանակը, ապա բաժնետերերից բաժնետոմսերը գնվում են նրանց առաջարկներին համամասնորեն:

Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը ավելի կփոքրանա Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն կանոնադրական կապիտալի չափից:

Կանոնադրական կապիտալի չափի նվազեցման դեպքում մեկ տարուց ոչ պակաս ժամկետում բաժնետոմսերի հավաստագիրը փոխանակելու նպատակով կամ համապատասխան գրառում կատարելու համար չդիմելու դեպքում հավաստագրերը համարվում են անվավեր:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Ընկերության

կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված այլ խնդիրները կարգավորվում են Օրենսդրությամբ,Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

4.3.3. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ:

Ընկերության շահույթից մասնահանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն,հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում է շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

4.3.4. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

4.3.5. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, Ընկերությունը պարտավոր է ընդունել որոշում լուծարման մասին:

Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կամ Ընկերության լուծարման որոշումը չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև

պետության կողմից լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:

5. Բաժնետոմսեր և այլ արժեթղթեր

5.1.Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային(տպագրական եղանակով պատրաստված), որը կարող է թողարկել Օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր: Ընդ որում բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:
5.2. Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց և Ընկերության պետական գրանցումից հետո Ընկերությունը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում, ընդ որում Ընկերության կողմից փաստաթղթային ձևով բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու դեպքում բաժնետոմս ձեռք բերած անձին (բաժնետիրոջը) պետք է տրվի բաժնետոմսերի հավաստագիրը:

Բաժնետոմսերի հավաստագիրը անվանական արժեթուղթ է, որը հավաստում է ընկերության մեկ կամ մի քանի բաժնետոմսերի նկատմամբ դրանց տիրապետողի (տիրապետողների) սեփականության իրավունքը:

Բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի համար բաժնետիրոջը տրվում է առանձին հավաստագիր: Հավաստագիրը տրվում է բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո:

Բաժնետոմսերի հավաստագիրը պետք է պարունակի Օրենքով սահմանված ռեկվիզիտներ:

Բաժնետոմսերի հավաստագիրը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

Հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի փոխանցման կամ գրանցված բաժնետիրոջ անվանման (անվան) փոփոխման դեպքում, այդ բաժնետոմսերի հավաստագիրը վերադարձվում է և համարվում է չեղյալ: Նոր տիրապետողի անվանմամբ (անվամբ) տրվում է բաժնետոմսերի նոր հավաստագիր:

Բաժնետոմսերի նոր հավաստագրեր են տրվում նոր և նախկին տիրապետողների անվանումներով՝ հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի մասնակի փոխանցման դեպքում:

Հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի գրանցված բաժնետիրոջ անվանման (անվան) փոփոխման դեպքում բաժնետոմսերի նոր հավաստագիրը տրվում է գրանցված բաժնետիրոջ նոր անվանմամբ (անվամբ):

5.3. Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են

մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

5.4. Ընկերությունը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի ձևի արտոնյալ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսը ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել Օրենսդրությամբ, Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր :

5.5. Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

Ընկերության որոշակի տեսակի ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում թողարկում է հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով, կուտակման, փոխարկելի և այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսեր՝ Օրենքով սահմանված կարգով:

Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (բացառությամբ՝ Ընկերության լուծարման կամ վերակազմակերպման հարցերի մասին քվեարկությունից, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում):

Արտոնյալ բաժնետոմսերը կարող են փոխարկվել սովորական բաժնետոմսերի: Ընդ որում փոխարկելու ժամանակ Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:

5.6. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է լինել գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը, գույքային իրավունքները, մտավոր սեփականությունը:

Լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռք բերման ժամանակ,որոնց դիմաց վճարումները նախատեսված է միայն դրամական միջոցներով, պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25 %-ը:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանք ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

Հրապարակային վաճառքի միջոցով տեղաբաշխվող արժեթղթերի դիմաց վճարումը կատարվում է միայն դրամական միջոցներով՝ լրիվ արժեքով:

Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է հիմնադիրների միջև համաձայնեցմամբ, իսկ բաժնետոմսերի և այլ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում՝ Ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) որոշմամբ և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից (աուդիտի):

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկում:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատում է բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և համապատասխան փոփոխություններ է կատարում կանոնադրությունում:

Ընկերության բաժնետոմսերին վերաբերվող այլ հարցերը կարգավորվում են Օրենսդրությամբ, Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ:

5.7. Ընկերության թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Խորհրդի որոշմամբ՝ Օրենքով սահմանված կարգով:

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Ընկերությունն իրավունք ունի թողարկել՝

- Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.
- երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.
- առանց ապահովման պարտատոմսեր:

Ընկերությունը կարող է թողարկել ինչպես անվանական, այնպես էլ ըստ ներկայացնողի պարտատոմսեր:

Ընկերությունը պարտավոր է վարել իր կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստր: Կորցրած անվանական պարտատոմսը վերականգնվում է Ընկերության կողմից՝ ողջամիտ վճարի դիմաց: Կորցրած ըստ ներկայացնողի պարտատոմսի սեփականատիրոջ իրավունքները վերականգնում է դատարանը:

Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր,որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Ընդ որում Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերը Ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

Ընկերության պարտատոմսերին վերաբերվող այլ հարցերը կարգավորվում են Օրենսդրությամբ,Օրենքով և սույն կանոնադրությամբ:

6. Բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

6.1.Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր

սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը Օրենքի և սույն

կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

- մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբշխվող բաժնետոմսերը,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի
- հանդես գալ առաջարկություններով ժողովներում,
- ժողովներում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,
- հայցով դիմել դատարան ժողովի կողմից ընդունված և գործող Օրենսդրությանը և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
- ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում ներկայացնել

երկուսից ոչ ավելի առաջարկություններ ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,

- Ընկերության միջոցների հաշվին կանոնադրական կապիտալի մեծացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակի սովորական բաժնետոմսեր,
- Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:
- Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի տերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում:
- Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 10% կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերվող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,
- օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
- օգտվել սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից: .

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

6.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերը իրավունք ունեն.

- մասնակցել ընկերության կառավարմանը,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- հայցով դիմել դատարան ժողովի կողմից ընդունված և գործող Օրենսդրությանը և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,
- մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- հանդես գալ առաջարկություններով ժողովում,
- ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:

Վերջին 3 ենթակետերով սահմանված իրենց իրավունքներից արտոնյալ

բաժնետոմսերի սեփականատերերը օգտվում են 5.5. և 7.2. կետերում սահմանված վերապահումներով:
6.3. Ընկերության բաժնետիրոջ բաժնետոմսերը անցնում են նրա ժառանգներին կամ իրավահաջորդներին:

6.4. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող սովորական բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

6.5. Բաժնետերերը պարտավոր են՝

- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

7. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը

7.1.Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից): Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել հատուկ այդ նպատակով ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Խորհրդի կողմից: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50%-ը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավել լինել Խորհրդի առաջարկածից և չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե Ընկերության Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ

շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Ժողովը իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ժողովի շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, որում պետք է ընդգրկվեն՝

.միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

.տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

7.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին շահութաբաժինների վճարման առանձնահատկությունները՝

7.2.1 .Յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը (որը վճարվում է ընկերության լուծարման ժամանակ) սահմանվում են ընդհանուր ժողովի կողմից դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույք արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ:

7.2.2. Եթե ժողովի որոշմամբ թողարկվում և տեղաբաշխվում են երկու կամ ավելի դասերի արտոնյալ բաժնետոմսեր, ապա պետք է սահմանվի նաև շահութաբաժինների և լուծարային արժեքի վճարման հերթականությունը յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմսի համար:

7.2.3. Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

7.3. Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,
- Ընկերության կողմից հետ չեն գնվել բոլոր այն բաժնետոմսերը, որոնք պետք է հետ գնվեն Օրենսդրությանը համապատասխան:
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության

տնտեսական վիճակը համապատասխանում է Օրենսդրությամբ սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

- Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված (հասարակ) սովորական բաժնետոմսերի և այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար սահմանված չէ շահութաբաժնի չափը, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնք վերոհիշյալ արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ շահութաբաժիններ ստանալու առաջնահերթության իրավունք են տալիս:

8. Ընկերության կառավարման մարմինները

8.1. Ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան ժողով: Առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ընկերության տարեկան ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Արտահերթ ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, ընկերության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ(բաժնետերերի) պահանջով:

8.2. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը,

գ) Ընկերության լուծարումը.

դ) Ընկերության ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և անդամների լիազորության վաղաժամկետ դադարեցումը:

զ) Խորհրդի նախագահի կամ անդամի աշխատանքի վարձատրության

պայմանների որոշումը.

է) Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

ը) Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի

ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Հաստատել աշխատակցի բաժնետոմսերի տեղաբաշխումը, դրանց

բաժնետոմսերի համար վճարելու պայմանները և սեփականատերերի իրավունքները.

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժգ) Ընկերության բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

ժդ) Ժողովի վարման կարգը և Խորհրդի կանոնակարգը

ժե) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի

հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության

համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժէ) Բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժը) Շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում.

ժթ) Ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում.

Ժողովն իրավունք ունի քննարկել և որոշում ընդունել նաև Օրենքով ու սույն կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջը:

8.3. Ժողովում ձայնի իրավունքներից օգտվում են՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր

հանդիսացող բաժնետերերը:

բ) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող

բաժնետերերը Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

8.4. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք չեն սահմանվել որպես Ժողովի իրավասություն:

8.5. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7. կետում սահմանված դեպքերից:

8.6. Սույն կանոնադրության 8.2 կետի «ա», «բ», «գ», «դ»,«է», «ը» և «ժթ» ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, սակայն 8.2 կետի «գ» և «ը» ենթակետերով սահմանված հարցերի շուրջ նաև ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:

8.8. Սույն կանոնադրության 8.2 կետի «բ», «ժգ», «ժզ»,«ժէ» «ժը» և «ժթ» ենթակետերով թվարկված հարցերով որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր Ժողովը՝ միայն Խորհրդի ներկայացմամբ:

8.9. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ընդհանուր Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին Ժողովում մասնակցելու համար գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության նոր Ժողովի

գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր Ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Ընկերության բաժնետերերի չկայացած Ժողովի փոխարեն գումարվող նոր Ժողովը իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

8.10. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ Ժողովի կողմից ընդունած որոշումը: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել Ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, թույլ տված խախտումները էական չեն:

8.11. Ժողովի վարման կարգի և Խորհրդի կանոնակարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է Ժողովի կողմից հաստատված Ընկերության ներքին փաստաթղթերով:

8.12. Ժողովի որոշումները (բացի տարեկան ընդհանուր Ժողովի, ինչպես նաև 8.2 կետի «ժբ» ենթակետով նախատեսված հարցերով հրավիրված արտահերթ Ժողովը) կարող են ընդունվել առանց Ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելն ավարտելու պահից 30 օր առաջ:

8.13. Ժողովն իրավունք չունի փոփոխել ընդհանուր Ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

8.14. Արտահերթ Ժողովը գումարվում են Խորհրդի որոշմամբ սեփական նախաձեռնությամբ, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Արտահերթ Ժողովի գումարման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ Ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

8.15. Հաշվիչ հանձնաժողովի կազմը չի կարող 3 հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Խորհրդի անդամները,Ընկերության

վերստուգող հանձնաժողովի անդամները(վերստուգողը),Ընկերության տնօրենը կամ Ընկերության տնօրինության,վարչության անդամները,ինչպես նաև այն անձինք, որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ:

Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը և անդամները, ինչպես նաև նրանց լիազորությունների ժամկետը սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Խորհրդի ներկայացմամբ:

8.16. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

- Ընկերության սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը), իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
- Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը(անվանատերերը), իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
- Ընկերության վերաստուգող հանձնաժողովի անդամները(վերստուգողը).
- Ընկերության աուդիտն իրականացնող անձը(եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ժողովի նյութերում).

Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող՝ Խորհրդի և գործադիր մարմնի անդամները:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան Ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան Ժողովի գումարումից 60 օրից ավելի:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ին:

Ընկերությունը պարտավոր է Ժողովի գումարման մասին իր բաժնետերերին ծանուցել, Ժողովի գումարման օրվանից՝ առնվազն 21 օր առաջ:

Ժողովում քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների միջոցով, եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին քվեաթերթիկները տրվում են Ժողովին մասնակցելու համար գրանցված բաժնետիրոջը, Ժողովի քվորումի առկայության դեպքում,եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Քվեաթերթիկները բաժնետերերին են հանձնվում անձամբ,եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը հաստատվում է Խորհրդի

որոշմամբ:

8.18. Բաժնետերերի մասնակցության կարգը ժողովին՝

- Բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:
- Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է Օրենսգրքի, Օրենքի կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտերի, ինչպես նաև գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա:Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել ժողովին միայն լիազորագրի առկայության դեպքում:
- Նույն բաժնետիրոջ կողմից տրված երկու և ավելի լիազորագրերի առկայության դեպքում ուժի մեջ է համարվում վերջին լիազորագիրը: Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին:

8.19. Քվեարկությունն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

8.20. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Խորհուրդը:

Խորհրդի անդամները ընտրվում են տարեկան ընդհանուր ժողովի կամ անդամների լիազորությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովներում կարող է քննարկվել, եթե արտահերթ ընդհանուր ժոդովը որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 անդամից պակաս լինել:

Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

Խորհրդի ընտրությունները իրականացվում են հասարակ քվերակությամբ:

Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին:

Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը: Յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը:

բ) Տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

գ) Ժողովի օրակարգի հաստատումը:

դ) Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը որոնք կապված են Ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը սույն կանոնադրության դրույթներին համապատասխան:

ե) Սույն կանոնադրության 8.2 կետի «բ», «ժգ», «ժզ» և «ժէ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ժողովների քննարկմանը.

զ) Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ

բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը:

է) Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը:

ը) Գույքի շուկայական արժեքի որոշումը, Օրենքով սահմանված կարգով:

թ) Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում և հետգնումը՝ Օրենքով և/կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

ժ) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրեն (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները.

ժա) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը:

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների

նախապատրաստումը:

ժղ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը:

ժե) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը:

ժզ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը:

ժէ) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը: Ընկերության դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

ժը) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժթ) Այլ կազմակերպություններին մասնակցության մասին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

ի) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը սույն կանոնադրությամբ և/կամ Օրենքով նախատեսված դեպքերում.

իա) շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը, Օրենքով

նախատեսված դեպքերում.

իբ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

իգ) Ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

իդ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իե) այլ կազմակերպությունների միությունների հիմնադրումը և/կամ մասնակցությունը.

իզ) Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ հարցերի լուծումը:

8.21. Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

8.22. Խորհրդի նախագահը՝

1. Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
2. Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
3. Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.
4. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ կնքում է պայմանագիր.
5. Նախագահում է ժողովներում:

Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կողմից Խորհրդի անդամների կազմից, Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների

մեծամասնությամբ:

Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների 2/3-ով:

8.23. Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում Խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են

համատեղվել:

Բացառությամբ սույն կետում նախատեսված դեպքերից, Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

8.24. Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

8.25. Ժողովի որոշմամբ Խորհրդի անդամներին կարող է սահմանվել պարգևավճար կամ փոխհատուցվել նրանց ծախսերը, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ:

Պարգևավճարի կամ փոխհատուցման չափն ու պայմանները սահմանվում են Ժողովի որոշմամբ:

8.26. Խորհրդի նիստերը՝

1. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության միանձնյա գործադիր մարմնի, ինչպես նաև սույն կանոնադրությամբ սահմանված այլ անձանց պահանջով .
2. Խորհրդի նիստերի քվորումը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել.
3. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի.
4. Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ(հարցման միջոցով) ընդունել որոշումներ:

8.27. Խորհրդի նախագահը ձայների հավասարության դեպքում ունի որոշիչ ձայնի իրավունք:

8.28. Խորհրդի անդամների թիվը ժողովի որոշված քանակի կեսից նվազելու դեպքում, Ընկերությունը գումարում է արտահերթ ժողով՝ Խորհրդի որոշմամբ, Խորհրդի կազմը լրացնելու նպատակով:

8.29. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում և արձանագրությունում նշվում են՝

- նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- նիստին ներկա անձինք.
- նիստի օրակարգը.
- քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.
- նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրվում է նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

8.30. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը՝

- լուծում է Ընկերության ընթացիկ գործունեության վերաբերվող բոլոր հարցերը, բացի սույն կանոնադրությամբ սահմանված Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից,
- կազմակերպում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և իրավունք չունի ինչպես Ժողովի, այնպես էլ Խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու,
- գործում է բարեխղճորեն և ողջամիտ, ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության բաժնետերերի պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը, անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով կամ պայմանագրով:

8.31. Խորհրդի նախագահը Տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Խորհրդի նախագահի և Տնօրենի պաշտոնների համատեղման դեպքում, Տնօրենի հետ պայմանագիրը կնքում է Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամներից մեկը :

Տնօրենը սույն կանոնադրությամբ և Խորհրդի նախագահի հետ կնքված պայմանագրով իրեն վերապահած լիազորությունների սահմաններում՝

1. Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
2. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
3. Գործում է առանց լիազորագրի.
4. Տալիս է լիազորագրեր.
5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային. Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
6. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
7. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
8. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

9. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

8.32. Խորհրդի անդամները, Ընկերության Տնօրենը ու Օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար Օրենքով սահմանված կարգով:

9. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկում և աուդիտ

9.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով

(վերստուգող):

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավասությունները և ստուգումների իրականացման կարգը սահմանվում են Օրենսդրությամբ, Օրենքով և սույն կանոնադրությամբ:

Վերստուգող հաձնաժողովը (վերստուգողը) հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն Օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ օրենքի պահանջներին համապատասխան:

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են բացառապես տարեկան ժողովներում: Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցը արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հաշվետու է ժողովին:

Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության և/կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 հոգուց պակաս լինել:

Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Վերստուգող հանձնաժողովն (վերստուգողն) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշիռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պարտադիր է:

9.2. Ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի իրավասությունը կարող է դրվել

վերստուգողի վրա:

Հիսունից ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունենալու դեպքում Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության կամ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցերի քվեարկությանը չեն մասնակցում Խորհրդի անդամներին, ինչպես նաև տնօրենին (գլխավոր տնօրենին) պատկանող բաժնետոմսերը:

9.3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպություն կամ ֆիզիկական անձի), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ:

Ընկերության գործունեության վերստուգումն այն բաժնետերերի պահանջով, որոնց հանրագումար բաժինը կազմում է տասը և ավելի տոկոս, պետք է անցկացվի ցանկացած ժամանակ:Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

9.4. Սույն կանոնադրության 9.3. կետի 2-րդ պարբերությամբ սահմանված դեպքում, Ընկերության աուդիտն իրականացնող անձը ընտրում և նրա հետ պայմանագիր են կնքում ստուգում պահանջող բաժնետերը (բաժնետերերը):

9.5. Ընկերությունում ձևավորվում է խորհրդին կից աուդիտի հանձնաժողով (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով), որը կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ:
9.6. Աուդիտի հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, որը ներգրավված է ընկերության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:
9.7. Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:
9.8. Աուդիտի հանձնաժողովը՝
ա) իրականացնում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում).
բ) իրականացնում է Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և դրանց հաստատման վերաբերյալ խորհրդին առաջարկություններ է ներկայացում.
գ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում.
դ) խորհրդին առաջարկություններ է ներկայացնում Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ.
ե) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն.
զ) տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտորի հետ.
է) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվություն է տրամադրում խորհրդին.
ը) հետևում է Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը.
թ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և հետևում է դրանց ներդրմանը:

10. Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ, հիմնարկներ, դուստր և կախյալ ընկերություններ

10.1. Ընկերությունը իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված

ստորաբաժանումներ՝ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ) ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

10.2. Ընկերության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի ստեղծումը և ներկայացուցչությունների բացումն իրականացվում է մասնաճյուղերի և

ներկայացուցչությունների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան չի նախատեսված:

10.3. Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի

այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

10.4. Ընկերության կողմից օտարերկրյա պետություններում հիմնարկների ստեղծումը իրականացվում է հիմնարկների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

10.5. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրության հիման վրա, իսկ նրանց ղեկավարներին նշանակում է Ընկերությունը:

10.6. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության(այդ թվում՝ դուստր ու կախյալ) ու ընկերակցության հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

10.7. Ընկերությունն իրավունք ունի ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ

ունեցող դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ:

10.8. Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

11. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը

11.1. Ընկերության կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների երեք քառորդով:

11.2. Մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները կարող են մտցվել Ընկերության կանոնադրության մեջ:

11.3. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարելը, ինչպես նաև նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից:

12. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

12.1. Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է Ժողովի որոշմամբ:

Ընկերության վերակազմակերպման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և արտադրական կոոպերատիվի:

12.2. Ընկերությունը լուծարվում է Օրենսգրքով, Օրենքով և Օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն կանոնադրության դրույթների համաձայն:

12.2.1 Ընկերության լուծարումը՝ Ընկերության դադարումն է՝ առանց նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

12.2.2. Ժողովը հաստատում է ամփոփիչ հաշվեկշիռը, ընդունում է որոշումներ՝ Ընկերության լուծարման կարգի և ժամկետների, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգի մասին:

Ընկերության լուծարային հանձնաժողովը լուծարումն իրականացնում է Ժողովում հաստատված ամփոփ հաշվեկշռի հիման վրա և լուծարման նախագծին համապատասխան:

Ընկերության լուծարման նախագիծն ընդգրկում է.

- Ընկերության ամփոփ հաշվեկշիռը.
- լուծարման կարգն ու ժամկետները.
- լուծարային հանձնաժողովի լիազորությունները.
- լուծարման ընթացքում Ընկերության գործունեության կարգը.
- այլ տեղեկություններ՝ Ժողովի հայեցողությամբ:

12.2.3. Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է Ժողովը՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

12.2.4. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները :

Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

12.2.5. Լուծարման հանձնաժողովը պարտավոր է իրականացնել Ընկերության գույքի վերագնահատում, միջոցներ ձեռնարկել Ընկերության պարտատերերի հայտնաբերման, դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Ընկերության լուծարման մասին:

12.2.6. Լուծարվող Ընկերության գույքի օտարմանը կամ պարտքերի մարմանն ուղղված բոլոր գործողությունները կարող են իրականացվել միայն լուծարման հանձնաժողովի համաձայնությամբ:

12.2.7. Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում՝ լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

12.3.Լուծարման հանձնաժողովի անդամները կարող են վարձատրվել ժողովի որոշմամբ սահմանված կարգով:
12.4. Լուծարման ընթացքում Ընկերությունն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ, միայն Ընկերության պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

12.5. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած, պետական գրանցման պահից:

12.6. Լուծարման հանձնաժողովի ստեղծման պահի դրությամբ ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվել լուծարային հանձնաժողովի կազմում կամ նշանակել իրենց լիազոր ներկայացուցչին:

12.7. Պարտատերերի հանդեպ լուծարվող Ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը լուծարման հանձնաժողովը բաշխում է բաժնետերերի միջև գործող Օրենսդրությամբ սահմանված կարգով :

12.8. Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:



Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 31.07.1995թ.
Գրանցման թիվ 39.120.00360
Վկայական 01Ա 015155

Թիվ 05 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Չարենցավանի տարածքային
բաժնի կողմից
«04» 11 2004թ.
Չարենցավանի տարածքային բաժնի պետ
_____ /_____/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի
«07» հոկտեմբերի 2004թ.
արտահերթ ընդհանուր ժողովի
որոշմամբ (արձ. թիվ 2)

Գլխավոր տնօրեն
Տ. ՍԱՐԳՍՅԱՆ /_____/
Կ.Տ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, 2004թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1.«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)՝ համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնց տերերը (այսուհետ՝ Բաժնետերեր) իրավունք ունեն օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց Ընկերության մյուս բաժնետերերի համաձայնության:

Ընկերությունը (նախկինում «ԹՈՒՋԵՋՈՒԼ» ԲԲԸ) հիմնադրվել է ՀՀ կառավարության 1998թ.-ի սեպտեմբերի 4-ի թիվ 550 որոշման համաձայն «ՀԱՅՋՈՒԼ» (Չարենցավանի «Ավտոծուլ») ՓԲԸ-ի (նախկինում «Ավտոծուլ» պետական ձեռնարկության) պետական բաժնետոմսերը մրցույթով մասնավորեցման ճանապարհով բաց բաժնետիրական ընկերության վերակազմակերպման արդյունքում:

Ընկերությունը հանդիսանում է «Հայծուլ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

1.2.Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցման) պահից:

1.3.Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու ֆիրմային այլ ռեկվիզիտներ:

1.4.Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենքով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5.Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:

1.6.Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

1.7.Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.8.Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.9.Ընկերության իրավական-կազմակերպչական ձևն է՝ բաց բաժնետիրական ընկերություն:

1.10. Ընկերության ֆիրմային անվանումն է .

Հայերեն լրիվ՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերություն
կրճատ՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

Ռուսերեն լրիվ՝ «АСКЕ ГРУП» Открытое Акционерное Общество
կրճատ՝ «АСКЕ ГРУП» ОАО

Անգլերեն լրիվ՝ «ASCE GROUP» Open Joint-stock Company
կրճատ՝ «ASCE GROUP » Open J-S Company

1.11. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, 378562, ք. Չարենցավան, Երևանյան 2.

2. Ընկերության գործունեության նպատակը և առարկան

2.1.Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն (այդ թվում առևտրային) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2.Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝
- Թուջե, պողպատե և գունավոր մետաղների ձուլում,
- Սև և գունավոր մետաղների, նրանց առաջնային արտադրանքի արտադրություն,
- Մետաղե ջարդոնի առք ու վաճառք,
- Մեքենաների, մետաղահատ հաստոցների, սարքավորումների և օժանդակ նյութերի մեծածախ առևտուր,
- Ձուլման սարքավորումների և հալման ինդուկտիվ վառարանների արտադրություն և մեծածախ առևտուր,
- Կենցաղային ապրանքների և պլաստմասայե իրերի արտադրություն և մեծածախ առևտուր,
- Առևտրամիջնորդային գործունեություն (ոչ բորսայական):

Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:
Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության (առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից, այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.3.Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որոնք նրան անհրաժեշտ են օրենքով չարգելված ցանկացած գործունեություն իրականացնելու համար: Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանված է ՀՀ Օրենսդրությամբ (այսուհետ՝ Օրենսդրություն) Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

3. Ընկերության իրավական վիճակը, իրավունքներն ու պարտականությունները

3.1. Ընկերությունը իրավաբանական անձ է, և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն իրավունք ունի՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.2.Ընկերությունը իրավունք ունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով և իրականացնել դրանց ազատ վաճառքը Օրենքի և այլ իրավական ակտերին համապատասխան:

3.3. Ընկերությունն իրավունք ունի.

- Ընկերությունը Օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքները,
- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, Օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ Հայաստանի Հանրապետության և այլ պետություններում՝ ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,
- ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին, կազմակերպություններին կամ քաղաքացիներին,
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին,
- ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,
- օգտվել Օրենսդրությամբ, Օրենսգրքով,Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.4. Ընկերությունը պարտավոր է՝

- Օրենսդրությամբ,Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն,
- ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, կամ այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,

- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանում, Օրենսդրությամբ սահմանված կարգով,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկվող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին,
- կրել Օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. Ընկերության կանոնադրական կապիտալ

4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել բաց Ընկերության համար Ընկերության պետական գրանցման պահին գործող Օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

4.2.Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1.179.822.000(մեկ միլիարդ հարյուր յոթանասունինննը միլիոն ութ հարյուր քսաներկու հազար) դրամ, որը կազմում է 7.865.480հատ սովորական անվանական բաժնետոմսեր, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 150դրամ :

Բոլոր 7.865.480 հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի առավելագույն ծավալը կազմում է 996.834.900 (ինը հարյուր իննսունվեց միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր) դրամ՝ 150դրամ անվանական արժեքով 6.645.566(վեց միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր վաթսունվեց) հատ սովորական անվանական բաժնետոմսեր:

4.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ կարող է փոփոխել իր կանոնադրական կապիտալի չափը, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց և ձեռնարկությունների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

4.3.1. Կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝

- լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) և յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի քանակը՝ այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում,

- լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները,այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

- շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- Ընկերության կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (զուտ ակտիվները) կամ դրա մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով) կամ Խորհուրդը, եթե սույն կանոնադրությամբ կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդ իրավասությունը :

Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

4.3.2. Կանոնադրական կապիտալի չափի նվազեցում

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել.

- բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ,
- բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ այդ թվում օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում այդ նպատակով Ընկերությանն առաջարկված բաժնետոմսերի ձեռք բերումը ընկերության պարտականությունն է: Եթե ձեռք բերման առաջարկված բաժնետոմսերի քանակը գերազանցում է համապատասխան որոշմամբ սահմանված քանակը, ապա բաժնետերերից բաժնետոմսերը գնվում են նրանց առաջարկներին համամասնորեն:

Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը ավելի կփոքրանա Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն կանոնադրական կապիտալի չափից:

Կանոնադրական կապիտալի չափի նվազեցման դեպքում մեկ տարուց ոչ պակաս ժամկետում բաժնետոմսերի հավաստագիրը փոխանակելու նպատակով կամ համապատասխան գրառում կատարելու համար չդիմելու դեպքում հավաստագրերը համարվում են անվավեր:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելու մասին

որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված այլ խնդիրները կարգավորվում են Օրենսդրությամբ,Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

4.3.3. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ:
Ընկերության շահույթից մասնահանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն,հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում է շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

4.3.4. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

4.3.5.Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, Ընկերությունը պարտավոր է ընդունել որոշում լուծարման մասին:

Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կամ Ընկերության լուծարման որոշումը չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:

5. Բաժնետոմսեր և այլ արժեթղթեր

5.1.Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային(տպագրական եղանակով պատրաստված), որը կարող է թողարկել Օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր: Ընդ որում բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:

5.2. Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց և Ընկերության պետական գրանցումից հետո Ընկերությունը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում, ընդ որում Ընկերության կողմից փաստաթղթային ձևով բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու դեպքում բաժնետոմս ձեռք բերած անձին (բաժնետիրոջը) պետք է տրվի բաժնետոմսերի հավաստագիրը:

Բաժնետոմսերի հավաստագիրը անվանական արժեթուղթ է, որը հավաստում է ընկերության մեկ կամ մի քանի բաժնետոմսերի նկատմամբ դրանց տիրապետողի (տիրապետողների) սեփականության իրավունքը:

Բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի համար բաժնետիրոջը տրվում է առանձին հավաստագիր: Հավաստագիրը տրվում է բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո:

Բաժնետոմսերի հավաստագիրը պետք է պարունակի Օրենքով սահմանված ռեկվիզիտներ:

Բաժնետոմսերի հավաստագիրը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

Հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի փոխանցման կամ գրանցված բաժնետիրոջ անվանման (անվան) փոփոխման դեպքում, այդ բաժնետոմսերի հավաստագիրը վերադարձվում է և համարվում է չեղյալ: Նոր տիրապետողի անվանմամբ (անվամբ) տրվում է բաժնետոմսերի նոր հավաստագիր:

Բաժնետոմսերի նոր հավաստագրեր են տրվում նոր և նախկին տիրապետողների անվանումներով՝ հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի մասնակի փոխանցման դեպքում:

Հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի գրանցված բաժնետիրոջ անվանման (անվան) փոփոխման դեպքում բաժնետոմսերի նոր հավաստագիրը տրվում է գրանցված բաժնետիրոջ նոր անվանմամբ (անվամբ):

5.3. Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

5.4. Ընկերությունը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի ձևի արտոնյալ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսը ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել Օրենսդրությամբ, Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր :

5.5. Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

Ընկերության որոշակի տեսակի ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում թողարկում է հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով, կուտակման, փոխարկելի և այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսեր՝ Օրենքով սահմանված կարգով:

Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (բացառությամբ՝ Ընկերության լուծարման կամ վերակազմակերպման հարցերի մասին քվեարկությունից, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում):

Արտոնյալ բաժնետոմսերը կարող են փոխարկվել սովորական բաժնետոմսերի: Ընդ որում փոխարկելու ժամանակ Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:

5.6. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է լինել գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը, գույքային իրավունքները, մտավոր սեփականությունը:

Լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռք բերման ժամանակ,որոնց դիմաց վճարումները նախատեսված է միայն դրամական միջոցներով, պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25 %-ը:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանք ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

Հրապարակային վաճառքի միջոցով տեղաբաշխվող արժեթղթերի դիմաց վճարումը կատարվում է միայն դրամական միջոցներով՝ լրիվ արժեքով:

Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է հիմնադիրների միջև համաձայնեցմամբ, իսկ բաժնետոմսերի և այլ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում՝ Ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) որոշմամբ և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից (աուդիտի):

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկում:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատում է բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և համապատասխան փոփոխություններ է կատարում կանոնադրությունում:

Ընկերության բաժնետոմսերին վերաբերվող այլ հարցերը կարգավորվում են Օրենսդրությամբ, Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ:

5.7. Ընկերության թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Խորհրդի որոշմամբ՝ Օրենքով սահմանված կարգով:

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Ընկերությունն իրավունք ունի թողարկել՝

- Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.
- երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.
- առանց ապահովման պարտատոմսեր:

Ընկերությունը կարող է թողարկել ինչպես անվանական, այնպես էլ ըստ ներկայացնողի պարտատոմսեր:

Ընկերությունը պարտավոր է վարել իր կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստր: Կորցրած անվանական պարտատոմսը վերականգնվում է Ընկերության կողմից՝ ողջամիտ վճարի դիմաց: Կորցրած ըստ ներկայացնողի պարտատոմսի սեփականատիրոջ իրավունքները վերականգնում է դատարանը:

Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր,որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Ընդ որում Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերը Ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

Ընկերության պարտատոմսերին վերաբերվող այլ հարցերը կարգավորվում են Օրենսդրությամբ,Օրենքով և սույն կանոնադրությամբ:

6.Բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

6.1.Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը Օրենքի և սույն կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

- մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- Ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

- հանդես գալ առաջարկություններով Ժողովներում,
- Ժողովներում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,
- հայցով դիմել դատարան Ժողովի կողմից ընդունված և գործող Օրենսդրությանը և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
- ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,
- Ընկերության միջոցների հաշվին կանոնադրական կապիտալի մեծացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակի սովորական բաժնետոմսեր,
- Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:
- Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի տերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում:
- Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 10% կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերվող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,
- օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
- օգտվել սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

6.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերը իրավունք ունեն.

- մասնակցել ընկերության կառավարմանը,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- Ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- հայցով դիմել դատարան Ժողովի կողմից ընդունված և գործող Օրենսդրությաը և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,
- մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- հանդես գալ առաջարկություններով Ժողովում,
- ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:

Վերջին 3 ենթակետերով սահմանված իրենց իրավունքներից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը օգտվում են 5.5. և 7.2. կետերում սահմանված վերապահումներով:

6.3.Ընկերության բաժնետիրոջ բաժնետոմսերը անցնում են նրա ժառանգներին կամ իրավահաջորդներին:

6.4. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող սովորական բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

6.5. Բաժնետերերը պարտավոր են՝

- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

7. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը

7.1.Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից): Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել հատուկ այդ նպատակով ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Խորհրդի կողմից: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ժողովի կողմից՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50%-ը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավել լինել Խորհրդի առաջարկածից և չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Եթե Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե Ընկերության Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Ժողովը իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ

վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, որում պետք է ընդգրկվեն՝

- միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.
- տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

7.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին շահութաբաժինների վճարման առանձնահատկությունները՝

7.2.1.Յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը (որը վճարվում է ընկերության լուծարման ժամանակ) սահմանվում են ընդհանուր ժողովի կողմից դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույք արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ:

7.2.2.Եթե ժողովի որոշմամբ թողարկվում և տեղաբաշխվում են երկու կամ ավելի դասերի արտոնյալ բաժնետոմսեր, ապա պետք է սահմանվի նաև շահութաբաժինների և լուծարային արժեքի վճարման հերթականությունը յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմսի համար:

7.2.3. Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

7.3.Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,
- Ընկերության կողմից հետ չեն գնվել բոլոր այն բաժնետոմսերը, որոնք պետք է հետ գնվեն Օրենսդրությանը համապատասխան:
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է Օրենսդրությամբ սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
- Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված (հասարակ) սովորական բաժնետոմսերի և այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար սահմանված չէ շահութաբաժնի չափը, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է, եթե

որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնք վերոհիշյալ արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ շահութաբաժիններ ստանալու առաջնահերթության իրավունք են տալիս:

8. Ընկերության կառավարման մարմինները

8.1. Ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան Ժողով:
Առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ընկերության տարեկան ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Արտահերթ ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, ընկերության գործադիր մարմնի, վերաստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ(բաժնետերերի) պահանջով:

8.2. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) Ընկերության ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և անդամների լիազորության վաղաժամկետ դադարեցումը:

զ) Խորհրդի նախագահի կամ անդամի աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

է) Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

ը) Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Հաստատել աշխատակցի բաժնետոմսերի տեղաբաշխումը, դրանց բաժնետոմսերի համար վճարելու պայմանները և սեփականատերերի իրավունքները.

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժգ) Ընկերության բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

ժդ) Ժողովի վարման կարգը և Խորհրդի կանոնակարգը

ժե) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժէ) Բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժը) Շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում.

ժթ) Ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում.

Ժողովն իրավունք ունի քննարկել և որոշում ընդունել նաև Օրենքով ու սույն կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջը:

8.3. Սույն կանոնադրությամբ 8.2. կետի բոլոր ենթակետերով սահմանված կարգով որոշումների ընդունումը հանդիսանում է Ժողովի բացառիկ իրավասությունը և չի կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին:

Սույն կանոնադրությամբ 8.2. կետի բոլոր ենթակետերով սահմանված կարգով որոշումների ընդունումը հանդիսանում է Ժողովի բացառիկ իրավասությունը և չեն կարող փոխանցվել որոշումն ընդունելու համար Խորհրդին:

8.4. Ժողովում ձայնի իրավունքներից օգտվում են՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

բ) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

8.5. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք Օրենքով չեն սահմանվել որպես Ժողովի իրավասություն:

8.6.Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7. կետում սահմանված դեպքերից:

8.7. Սույն կանոնադրության 8.2 կետի «ա», «բ», «գ», «դ»,«է», «ը» և «ժբ» ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, սակայն 8.2 կետի «գ» և «ը»

ենթակետերով սահմանված հարցերի շուրջ նաև ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:

8.8. Սույն կանոնադրության 8.2 կետի «բ», «ժգ», «ժզ»,«ժէ» «ժը» և «ժթ» ենթակետերով թվարկված հարցերով որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ միայն Խորհրդի ներկայացմամբ:

8.9. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին ժողովում մասնակցելու համար գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Ընկերության բաժնետերերի չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովը իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

8.10. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ Ժողովի կողմից ընդունած որոշումը: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել Ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, թույլ տված խախտումները էական չեն:

8.11.Ժողովի վարման կարգի և Խորհրդի կանոնակարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է Ժողովի կողմից հաստատված Ընկերության ներքին փաստաթղթերով:

8.12.Ժողովի որոշումները (բացի տարեկան ընդհանուր ժողովի, ինչպես նաև 8.2 կետի «ժբ» ենթակետով նախատեսված հարցերով հրավիրված արտահերթ ժողովը) կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելն ավարտելու պահից 30 օր առաջ:

8.13. Ժողովն իրավունք չունի փոփոխել ընդհանուր ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

8.14. Արտահերթ Ժողովը գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, վերաստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

8.15.Եթե Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում տարեկան ժողով տեղի չի ունեցել, Ընկերության արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ 8.2 կետի «ժբ» ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր չեն կարող քննարկվել, բացառությամբ 8.2 կետի «ժբ» ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմնավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի:

8.16.Հաշվիչ հանձնաժողովի կազմը չի կարող 3 հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Խորհրդի անդամները,Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները(վերստուգողը),Ընկերության տնօրենը կամ Ընկերության տնօրինության,վարչության անդամները,ինչպես նաև այն անձինք որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ:

Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը և անդամները, ինչպես նաև նրանց լիազորությունների ժամկետը սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Խորհրդի ներկայացմամբ:

8.17. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

- Ընկերության սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը), իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
- Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը(անվանատերերը), իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
- Ընկերության վերաստուգող հանձնաժողովի անդամները(վերստուգողը).
- Ընկերության աուդիտն իրականացնող անձը(եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում).

Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող՝ Խորհրդի և գործադիր մարմնի անդամները:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան Ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան Ժողովի գումարումից 60 օրից ավելի:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը ծանուցվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակելու միջոցով:

Ընկերությունը պարտավոր է Ժողովի գումարման մասին իր բաժնետերերին ծանուցել, Ժողովի գումարման օրվանից՝ առնվազն 15 օր առաջ:

Ժողովում քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների միջոցով, եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին քվեաթերթիկները տրվում են Ժողովին մասնակցելու համար գրանցված բաժնետիրոջը, ժողովի քվորումի առկայության դեպքում,եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Քվեաթերթիկները բաժնետերերին են հանձնվում անձամբ,եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը հաստատվում է Խորհրդի որոշմամբ:

6.18. Բաժնետերերի մասնակցության կարգը Ժողովին՝

- Բաժնետերը Ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:
- Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է Օրենսգրքի, Օրենքի կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտերի, ինչպես նաև գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա:Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել Ժողովին միայն լիազորագրի առկայության դեպքում:
- Նույն բաժնետիրոջ կողմից տրված երկու և ավելի լիազորագրերի առկայության դեպքում ուժի մեջ է համարվում վերջին լիազորագիրը: Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել Ժողովին:

6.19. Քվեարկությունն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

6.20.Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Խորհուրդը:

Խորհրդի անդամները ընտրվում են տարեկան ընդհանուր ժողովի կամ անդամների լիազորությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովներում կարող է քննարկվել, եթե արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 անդամից պակաս լինել:

Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

Խորհրդի ընտրությունները իրականացվում են հասարակ քվերակությամբ:

Ընկերության այն բաժնետերերը, որոնք Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին:

Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը:

Յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը:

բ) Տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

գ) Ժողովի օրակարգի հաստատումը:

դ) Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը սույն կանոնադրության դրույթներին համապատասխան:

ե) Սույն կանոնադրության 8.2 կետի «բ», «ժգ», «ժզ» և «ժէ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը:

է) Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը:

ը) Գույքի շուկայական արժեքի որոշումը, Օրենքով սահմանված կարգով:

թ) Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում և հետգնումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում:

ժ) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրեն (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները.

ժա) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը:

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:

ժդ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը:

ժե) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը:

ժզ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը:

ժէ) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը: Ընկերության դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

ժը) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժթ) Այլ կազմակերպություններին մասնակցության մասին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

ի) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.

իա) շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը, Օրենքով նախատեսված դեպքերում.

իբ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

իգ) Ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իդ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իե) Հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը և մասնակցությունը.

իզ) Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ հարցերի լուծումը:

8.21. Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

8.22. Խորհրդի նախագահը՝

1. Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
2. Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
3. Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.
4. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ կնքում է պայմանագիր.
5. Նախագահում է ժողովներում:

Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կողմից Խորհրդի անդամների կազմից, Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների 2/3-ով:

8.23. Մինչև 500բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում Խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել:

Բացառությամբ սույն կետում նախատեսված դեպքերից, Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

8.24.Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

8.25. Ժողովի որոշմամբ Խորհրդի անդամներին կարող է սահմանվել պարգևավճար կամ փոխհատուցվել նրանց ծախսերը, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ:

Պարգևավճարի կամ փոխհատուցման չափն ու պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ:

8.26. Խորհրդի նիստերը՝

1. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, Խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության միանձնյա գործադիր մարմնի, ինչպես նաև սույն կանոնադրությամբ սահմանված այլ անձանց պահանջով .

2. Խորհրդի նիստերի քվորումը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել.
3. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի.
4. Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ(հարցման միջոցով) ընդունել որոշումներ:

8.27. Խորհրդի նախագահը ձայների հավասարության դեպքում ունի որոշիչ ձայնի իրավունք:

8.28. Խորհրդի անդամների թիվը ժողովի որոշված քանակի կեսից նվազելու դեպքում, Ընկերությունը գումարում է արտահերթ ժողով՝ Խորհրդի որոշմամբ, Խորհրդի կազմը լրացնելու նպատակով:

8.29.Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում և արձանագրությունում նշվում են՝

- նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- նիստին ներկա անձինք.
- նիստի օրակարգը.
- քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.
- նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրվում է նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

8.30.Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը՝

- լուծում է Ընկերության ընթացիկ գործունեության վերաբերվող բոլոր հարցերը, բացի սույն կանոնադրությամբ սահմանված Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից,
- կազմակերպում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և իրավունք չունի ինչպես Ժողովի այնպես էլ Խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու,
- գործում է բարեխղճորեն և ողջամիտ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության բաժնետերերի պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը, անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով կամ պայմանագրով:

8.31. Խորհրդի նախագահը Տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Խորհրդի նախագահի և Տնօրենի պաշտոնների համատեղման դեպքում, Տնօրենի հետ պայմանագիրը կնքում է Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամներից մեկը :

Տնօրենը սույն կանոնադրությամբ և Խորհրդի նախագահի հետ կնքված պայմանագրով իրեն վերապահած լիազորությունների սահմաններում՝

1. Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
2. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
3. Գործում է առանց լիազորագրի.
4. Տալիս է լիազորագրեր.
5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6. Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
7. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
8. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
9. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
10. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

8.32. Խորհրդի անդամները, Ընկերության Տնօրենը ու Օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար Օրենքով սահմանված կարգով:

9.Ընկերության ֆինասատնտեսական գործունեության վերահսկում

9.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող):

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավասությունները և ստուգումների իրականացման կարգը սահմանվում են Օրենսդրությամբ, Օրենքով և սույն կանոնադրությամբ:

Վերստուգող հաձնաժողովը (վերստուգողը) հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն Օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի պահանջել արտահերթ Ժողովի գումարում՝ օրենքի պահանջներին համապատասխան:

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են բացառապես տարեկան ժողովներում: Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցը արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են Ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հաշվետու է Ժողովին:

Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության և/կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 հոգուց պակաս լինել:

Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշիռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պարտադիր է:

9.2.Ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի իրավասությունը կարող է դրվել վերստուգողի վրա:

Հիսունից ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատե) ունենալու դեպքում Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության կամ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցերի քվեարկությանը չեն մասնակցում Խորհրդի անդամներին, ինչպես նաև տնօրենին (գլխավոր տնօրենին) պատկանող բաժնետոմսերը:

9.3.Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպություն կամ ֆիզիկական անձի), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ:

Ընկերության գործունեության վերստուգումն այն բաժնետերերի պահանջով, որոնց հանրագումար բաժինը կազմում է տասը և ավելի տոկոս, պետք է անցկացվի ցանկացած ժամանակ:Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

9.4. Սույն կանոնադրության 9.3. կետի 2-րդ պարբերությամբ սահմանված դեպքում, Ընկերության աուդիտն իրականացնող անձը ընտրում և նրա հետ պայմանագիր են կնքում ստուգում պահանջող բաժնետերը (բաժնետերերը):

10.Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ, հիմնարկներ, դուստր և կախյալ ընկերություններ

10.1. Ընկերությունը իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ) ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

10.2. Ընկերության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի ստեղծումը և ներկայացուցչությունների բացումն իրականացվում է մասնաճյուղերի և

ներկայացուցչությունների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան չի նախատեսված:

10.3. Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

10.4. Ընկերության կողմից օտարերկրյա պետություններում հիմնարկների ստեղծումը իրականացվում է հիմնարկների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

10.5. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրության հիման վրա, իսկ նրանց ղեկավարներին նշանակում է Ընկերությունը:

10.6. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության(այդ թվում՝ դուստր ու կախյալ) ու ընկերակցության հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

10.7. Ընկերությունն իրավունք ունի ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ:

10.8. Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

11.Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը

11.1. Ընկերության կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների երեք քառորդով:

11.2. Մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները կարող են մտցվել Ընկերության կանոնադրության մեջ:

11.3. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարելը, ինչպես նաև նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից:

12. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

12.1. Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է Ժողովի որոշմամբ:

Ընկերության վերակազմակերպման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և արտադրական կոոպերատիվի:

12.2.Ընկերությունը լուծարվում է Օրենսգրքով, Օրենքով և Օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն կանոնադրության դրույթների համաձայն:

12.2.1.Ընկերության լուծարումը՝ Ընկերության դադարումն է՝ առանց նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

12.2.2.Ժողովը հաստատում է ամփոփիչ հաշվեկշիռը, ընդունում է որոշումներ՝ Ընկերության լուծարման կարգի և ժամկետների, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգի մասին:

Ընկերության լուծարային հանձնաժողովը լուծարումն իրականացնում է Ժողովում հաստատված ամփոփ հաշվեկշռի հիման վրա և լուծարման նախագծին համապատասխան:

Ընկերության լուծարման նախագիծն ընդգրկում է.

- Ընկերության ամփոփ հաշվեկշիռը.
- լուծարման կարգն ու ժամկետները.
- լուծարային հանձնաժողովի լիազորությունները.
- լուծարման ընթացքում Ընկերության գործունեության կարգը.
- այլ տեղեկություններ՝ Ժողովի հայեցողությամբ:

12.2.3.Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է Ժողովը՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

12.2.4.Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները :
Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

12.2.5.Լուծարման հանձնաժողովը պարտավոր է իրականացնել Ընկերության գույքի վերագնահատում, միջոցներ ձեռնարկել Ընկերության պարտատերերի հայտնաբերման, դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Ընկերության լուծարման մասին:

12.2.6.Լուծարվող Ընկերության գույքի օտարմանը կամ պարտքերի մարմանն ուղղված բոլոր գործողությունները կարող են իրականացվել միայն լուծարման հանձնաժողովի համաձայնությամբ:

12.2.7.Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում՝ լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

12.3.Լուծարման հանձնաժողովի անդամները կարող են վարձատրվել Ժողովի որոշմամբ սահմանված կարգով:

12.4.Լուծարման ընթացքում Ընկերությունն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն Ընկերության պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

12.5.Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած, պետական գրանցման պահից:

12.6.Լուծարման հանձնաժողովի ստեղծման պահի դրությամբ ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվել լուծարային հանձնաժողովի կազմում կամ նշանակել իրենց լիազոր ներկայացուցչին:

12.7.Պարտատերերի հանդեպ լուծարվող Ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը լուծարման հանձնաժողովը բաշխում է բաժնետերերի միջև՝ գործող Օրենսդրությամբ սահմանված կարգով :

12.8.Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 31.07.1995թ.
Գրանցման թիվ 39.120.00360
Վկայական 01Ա 015155
ՀՎՀՀ 02800538
21.07.2020թ. գրանցված կանոնադրության
Թիվ _ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
«20» 05 2021թ.
աշխատակից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի
«13» մայիսի 2021թ.
արտահերթ ընդհանուր ժողովի
որոշմամբ (արձ. թիվ 1)

Տնօրեն
Խ. ԱՆՏՈՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրությամբ)

ՔԱՐԵՆՑԱՎԱՆ, 2021թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)՝ հանդիսանում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնց տերերը (այսուհետ՝ Բաժնետերեր) իրավունք ունեն օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց Ընկերության մյուս բաժնետերերի համաձայնության:

Ընկերությունը (նախկինում «ԹՈՒՋԵՋՈՒԼ» ԲԲԸ) հիմնադրվել է ՀՀ Կառավարության 1998թ.-ի սեպտեմբերի 4-ի թիվ 550 որոշման համաձայն «ՀԱՅՋՈՒԼ» Ընդերքավանի «Ավտոճուլ») ՓԲԸ-ի (նախկինում «Ավտոճուլ» պետական Ձեռնարկության) պետական բաժնետոմսերը մրցույթով մասնավորեցման ճանապարհով բաց բաժնետիրական ընկերության վերակազմակերպման արդյունքում:

Ընկերությունը հանդիսանում է «Հայճուլ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) պահից և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցման) պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու ֆիրմային այլ ատրիբուտներ:

1.4. Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենքով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:

1.6. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

1.7. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.8. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.9. Ընկերության իրավական-կազմակերպչական ձևն է բաց բաժնետիրական ընկերություն:

1.10. Ընկերության ֆիրմային անվանումն է.

Հայերեն՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերություն

Կրճատ՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

Ռուսերեն՝ «АСКЕ ГРУП» Огкрыюе Акционерное Общество

Կրճատ՝ «АСКЕ ГРУП» ОАО

լրիվ «ASCE GROUP» Open Joint-stock Company
կրճատ «ASCE GROUP » Open J-S Company

1.11. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է ՀՀ Կոտայքի մարզ, 2501, ք. Չարենցավան, Երևանյան 2.

1.12. Օրենքով, Կանոնադրությամբ, ինչպես նաև Ընկերության ներքին փաստաթղթերով սահմանված ծանուցում պահանջող գործողությունների մասին Ընկերությունը ծանուցումները կատարում է www.azdarar.am և/կամ www.asce.am ինտերնետային կայքերում հրապարակելու միջոցով:

2. Ընկերության գործունեության նպատակը և առարկան

2.1. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն (այդ թվում ձեռնարկային) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ -
Ոսկի, արծաթ և գունավոր մետաղների ձուլում,

-Սև և գունավոր մետաղների, նրանց առաջնային արտադրանքի արտադրություն,

-Մետաղե շարդոնի առք ու վաճառք,

-Ոսկերիչների, մետաղահատ հաստոցների, սարքավորումների և օժանդակ նյութերի մեծածախ առևտուր,

-Տրանսպորտային սարքավորումների և հալման ինդուկտիվ վառարանների արտադրություն և մեծածախ առևտուր,

- Կենցաղային ապրանքների և պլաստմասայե իրերի արտադրություն և մեծածախ առևտուր.

- Միջնորդային գործունեություն (ոչ բորսայական):

Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության (առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից, այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.3. Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որոնք նրան անհրաժեշտ են օրենքով չարգելված ցանկացած գործունեություն իրականացնելու

համար: Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանված է ՀՀ Օրենսդրությամբ (այսուհետ՝ Օրենսդրություն) Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

3. Ընկերության իրավական վիճակը, իրավունքներն ու պարտականությունները

3.1. Ընկերությունը իրավաբանական անձ է, և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն իրավունք ունի՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.2. Ընկերությունը իրավունք ունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով և իրականացնել դրանց ազատ վաճառքը Օրենքի և այլ իրավական ակտերին համապատասխան:

3.3. Ընկերությունն իրավունք ունի.

- Ընկերությունը Օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքները,
- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, Օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ Հայաստանի Հանրապետության և այլ պետություններում՝ ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,
- ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին, կազմակերպություններին կամ քաղաքացիներին,
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար,

օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին,
- ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,
- օգտվել Օրենսդրությամբ, Օրենսգրքով,Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.4. Ընկերությունը պարտավոր է՝

- Օրենսդրությամբ,Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն,
- ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, կամ այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանում, Օրենսդրությամբ սահմանված կարգով,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկվող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին,
- կրել Օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. Ընկերության կանոնադրական կապիտալ

4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել բաց Ընկերության համար Ընկերության պետական գրանցման պահին գործող Օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1.179.822.000(մեկ միլիարդ հարյուր յոթանասունինը միլիոն ութ հարյուր քսաներկու հազար) դրամ, որը կազմում է

7.865.480հատ սովորական անվանական բաժնետոմսեր, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 150դրամ:

Բոլոր 7.865.480 հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի առավելագույն ծավալը կազմում է 996.834.900 (ինը հարյուր իննսունվեց միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ 150 (հարյուր հիսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով 6.645.566 (վեց միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր վաթսունվեց) հատ սովորական անվանական արժեքով:

4.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ կարող է փոփոխել իր կանոնադրական կապիտալի չափը, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց և ձեռնարկությունների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

4.3.1. Կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

.լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի

- լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) և յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի քանակը այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում,
- լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները,այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

- շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,

- Ընկերության կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (զուտ ակտիվները) կամ դրա մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով) կամ Խորհուրդը, եթե սույն կանոնադրությամբ կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդ իրավասությունը :

Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

4.3.2. Կանոնադրական կապիտալի չափի նվազեցում

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել.

.բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ,

- բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ այդ թվում օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում այդ նպատակով Ընկերությանն առաջարկված բաժնետոմսերի ձեռք բերումը ընկերության պարտականությունն է: Եթե ձեռք բերման առաջարկված բաժնետոմսերի քանակը գերազանցում է համապատասխան որոշմամբ սահմանված քանակը, ապա բաժնետերերից բաժնետոմսերը գնվում են նրանց առաջարկներին համամասնորեն:

Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը ավելի կփոքրանա Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն կանոնադրական կապիտալի չափից:

Կանոնադրական կապիտալի չափի նվազեցման դեպքում մեկ տարուց ոչ պակաս ժամկետում բաժնետոմսերի հավաստագիրը փոխանակելու նպատակով կամ համապատասխան գրառում կատարելու համար չդիմելու դեպքում հավաստագրերը համարվում են անվավեր:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված այլ խնդիրները կարգավորվում են Օրենսդրությամբ,Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

4.3.3. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ:

Ընկերության շահույթից մասնահանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն,հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում է շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

4.3.4. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

4.3.5. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, Ընկերությունը պարտավոր է ընդունել որոշում լուծարման մասին:

Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կամ Ընկերության լուծարման որոշումը չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:

5. Բաժնետոմսեր և այլ արժեթղթեր

5.1.Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային(տպագրական

եղանակով պատրաստված), որը կարող է թողարկել Օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր: Ընդ որում բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:

5.2. Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց և Ընկերության պետական գրանցումից հետո Ընկերությունը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում, ընդ որում Ընկերության կողմից փաստաթղթային ձևով բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու դեպքում բաժնետոմս ձեռք բերած անձին (բաժնետիրոջը) պետք է տրվի բաժնետոմսերի հավաստագիրը:

Բաժնետոմսերի հավաստագիրը անվանական արժեթուղթ է, որը հավաստում է ընկերության մեկ կամ մի քանի բաժնետոմսերի նկատմամբ դրանց տիրապետողի (տիրապետողների) սեփականության իրավունքը:

Բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի համար բաժնետիրոջը տրվում է առանձին հավաստագիր: Հավաստագիրը տրվում է բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո:

Բաժնետոմսերի հավաստագիրը պետք է պարունակի Օրենքով սահմանված ռեկվիզիտներ:

Բաժնետոմսերի հավաստագիրը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

Հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի փոխանցման կամ գրանցված բաժնետիրոջ անվանման (անվան) փոփոխման դեպքում, այդ բաժնետոմսերի հավաստագիրը վերադարձվում է և համարվում է չեղյալ: Նոր տիրապետողի անվանմամբ (անվամբ) տրվում է բաժնետոմսերի նոր հավաստագիր:

Բաժնետոմսերի նոր հավաստագրեր են տրվում նոր և նախկին տիրապետողների անվանումներով՝ հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի մասնակի փոխանցման դեպքում:

Հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի գրանցված բաժնետիրոջ անվանման (անվան) փոփոխման դեպքում բաժնետոմսերի նոր հավաստագիրը տրվում է գրանցված բաժնետիրոջ նոր անվանմամբ (անվամբ):

5.3. Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

5.4. Ընկերությունը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի ձևի արտոնյալ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսը ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել Օրենսդրությամբ, Օրենքով և այլ հանրային ակտերով սահմանված այլ արժեթղթեր :

5.5. Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

Ընկերության որոշակի տեսակի ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում թողարկում է հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով, կուտակման, փոխարկելի և այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսեր՝ Օրենքով սահմանված կարգով:

Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (բացառությամբ՝ Ընկերության լուծարման կամ վերակազմակերպման հարցերի մասին քվեարկությունից, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում):

Արտոնյալ բաժնետոմսերը կարող են փոխարկվել սովորական բաժնետոմսերի: Ընդ որում փոխարկելու ժամանակ Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:

5.6. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է լինել գույքը ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը, գույքային իրավունքները, մտավոր սեփականությունը:

Կրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռք բերման ժամանակ,որոնց դիմաց վճարումները նախատեսված է միայն դրամական միջոցներով, պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25 %-ը:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանք ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

Հրապարակային վաճառքի միջոցով տեղաբաշխվող արժեթղթերի դիմաց վճարումը կատարվում է միայն դրամական միջոցներով՝ լրիվ արժեքով:

Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է հիմնադիրների միջև համաձայնեցմամբ, իսկ բաժնետոմսերի և այլ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում Ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) որոշմամբ և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից (աուդիտի):

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ մասամբ վճարարծված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների

հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկում:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատում է բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և համապատասխան փոփոխություններ է կատարում կանոնադրությունում:

Ընկերության բաժնետոմսերին վերաբերվող այլ հարցերը կարգավորվում են Օրենսդրությամբ, Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ:

5.7. Ընկերության թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Խորհրդի որոշմամբ՝ Օրենքով սահմանված կարգով:

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Ընկերությունն իրավունք ունի թողարկել՝

- Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.
- երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.
- առանց ապահովման պարտատոմսեր:

Ընկերությունը կարող է թողարկել ինչպես անվանական, այնպես էլ ըստ ներկայացնողի պարտատոմսեր:

Ընկերությունը պարտավոր է վարել իր կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստր: Կորցրած անվանական պարտատոմսը վերականգնվում է Ընկերության կողմից՝ ողջամիտ վճարի դիմաց: Կորցրած ըստ ներկայացնողի պարտատոմսի սեփականատիրոջ իրավունքները վերականգնում է դատարանը:

Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր,որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Այն դեպքում, երբ Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերը Ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

Ընկերության պարտատոմսերին վերաբերվող այլ հարցերը կարգավորվում են Օրենսդրությամբ,Օրենքով և սույն կանոնադրությամբ:

6. Բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

6.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը Օրենքի և սույն Կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

- մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի վերաբերյալ ձայնի իրավունքով,
- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի
- հանդես գալ առաջարկություններով ժողովներում,
- ժողովներում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,
- հայցով դիմել դատարան ժողովի կողմից ընդունված և գործող Օրենսդրությանը և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
- Ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,
- Ընկերության միջոցների հաշվին կանոնադրական կապիտալի մեծացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակի սովորական բաժնետոմսեր,
- Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:
- Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի տերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում:
- Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 10% կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերվող

հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,

- օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
- օգտվել սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից: .

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

6.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերը իրավունք ունեն.

- մասնակցել ընկերության կառավարմանը,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- հայցով դիմել դատարան ժողովի կողմից ընդունված և գործող Օրենսդրությանը և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,
- մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- հանդես գալ առաջարկություններով ժողովում,
- ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:

Վերջին 3 ենթակետերով սահմանված իրենց իրավունքներից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը օգտվում են 5.5. և 7.2. կետերում սահմանված վերապահումներով:

6.3. Ընկերության բաժնետիրոջ բաժնետոմսերը անցնում են նրա ժառանգներին կամ իրավահաջորդներին:

6.4. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող սովորական բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

6.5. Բաժնետերերը պարտավոր են՝

- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

7. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը

7.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման

մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից): Որոշակի ղասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել հատուկ այդ նպատակով ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և ղասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Խորհրդի կողմից: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50%-ը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավել լինել Խորհրդի առաջարկածից և չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե Ընկերության ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Ժողովը իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ժողովի շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, որում պետք է ընդգրկվեն՝

.միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

.տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում

ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

7.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին շահութաբաժինների վճարման առանձնահատկությունները՝

7.2.1 .Յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը (որը վճարվում է ընկերության լուծարման ժամանակ) սահմանվում են ընդհանուր ժողովի կողմից դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույք արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ:

7.2.2. Եթե ժողովի որոշմամբ թողարկվում և տեղաբաշխվում են երկու կամ ավելի դասերի արտոնյալ բաժնետոմսեր, ապա պետք է սահմանվի նաև շահութաբաժինների և լուծարային արժեքի վճարման հերթականությունը յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմսի համար:

7.2.3. Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

7.3. Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,
- Ընկերության կողմից հետ չեն գնվել բոլոր այն բաժնետոմսերը, որոնք պետք է հետ գնվեն Օրենսդրությանը համապատասխան:
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է Օրենսդրությամբ սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
- Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված (հասարակ) սովորական բաժնետոմսերի և այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար սահմանված չէ շահութաբաժնի չափը, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնք նախորդող արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ շահութաբաժիններ ստանալու առաջնահերթության իրավունք են տալիս:

8. Ընկերության կառավարման մարմինները

8.1. Ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան Ժողով: Առաջին տարեկան Ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ընկերության տարեկան Ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Տարեկան Ժողովից բացի գումարվող Ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ Ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Արտահերթ Ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, ընկերության գործադիր մարմնի, վերաստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ(բաժնետերերի) պահանջով:

8.2. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը,

գ) Ընկերության լուծարումը.

դ) Ընկերության ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և անդամների լիազորության վաղաժամկետ դադարեցումը:

զ) Խորհրդի նախագահի կամ անդամի աշխատանքի վարձատրության

պայմանների որոշումը.

է) Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

ը) Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի

ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Հաստատել աշխատակցի բաժնետոմսերի տեղաբաշխումը, դրանց

բաժնետոմսերի համար վճարելու պայմանները և սեփականատերերի իրավունքները.

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժգ) Ընկերության բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

ժդ) ժողովի վարման կարգը և Խորհրդի անունակարգը ժե) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի

հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժէ) Բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժը) Շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում.

ժթ) Ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում.

Ժողովն իրավունք ունի քննարկել և որոշում ընդունել նաև Օրենքով ու սույն կանոնադրությամբ ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջը:

8.3. Ժողովում ձայնի իրավունքներից օգտվում են՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր

հանդիսացող բաժնետերերը:

բ) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող

բաժնետերերը Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

8.4. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք չեն սահմանվել որպես Ժողովի իրավասություն:

8.5. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7. կետում սահմանված դեպքերից:

8.6. Սույն կանոնադրության 8.2 կետի «ա», «բ», «գ», «դ»,«է», «ը» և «ժթ» ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, սակայն 8.2 կետի «գ» և «ը» ենթակետերով սահմանված հարցերի շուրջ նաև ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:
8.8. Սույն կանոնադրության 8.2 կետի «բ», «ժգ», «ժզ»,«ժէ» «ժը» և «ժթ» ենթակետերով թվարկված հարցերով որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր Ժողովը՝ միայն Խորհրդի ներկայացմամբ:

8.9. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ընդհանուր Ժողովի մասնակիցների

գրանցման ավարտի պահին Ժողովում մասնակցելու համար գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության նոր Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր Ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Ընկերության բաժնետերերի չկայացած Ժողովի փոխարեն գումարվող նոր Ժողովը իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:
8.10. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ Ժողովի կողմից ընդունած որոշումը: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել Ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, թույլ տված խախտումները էական չեն:

8.11. Ժողովի վարման կարգի և Խորհրդի կանոնակարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է Ժողովի կողմից հաստատված Ընկերության ներքին փաստաթղթերով:

8.12. Ժողովի որոշումները (բացի տարեկան ընդհանուր Ժողովի, ինչպես նաև 8.2 կետի «ժբ» ենթակետով նախատեսված հարցերով հրավիրված արտահերթ Ժողովը) կարող են ընդունվել առանց Ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելն

ավարտելու պահից 30 օր առաջ:

8.13. Ժողովն իրավունք չունի փոփոխել ընդհանուր ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

8.14. Արտահերթ ժողովը գումարվում են Խորհրդի որոշմամբ սեփական նախաձեռնությամբ, վերաստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

8.15. Հաշվիչ հանձնաժողովի կազմը չի կարող 3 հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Խորհրդի անդամները,Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները(վերստուգողը),Ընկերության տնօրենը կամ Ընկերության տնօրինության,վարչության անդամները,ինչպես նաև այն անձինք որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ:

Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը և անդամները, ինչպես նաև նրանց լիազորությունների ժամկետը սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Խորհրդի ներկայացմամբ:

8.16. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

- Ընկերության սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը), իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
- Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը(անվանատերերը), իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
- Ընկերության վերաստուգող հանձնաժողովի անդամները(վերստուգողը).
- Ընկերության աուդիտն իրականացնող անձը(եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում).

Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող՝ Խորհրդի և գործադիր մարմնի անդամները:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ին:

Ընկերությունը պարտավոր է Ժողովի գումարման մասին իր բաժնետերերին ծանուցել, Ժողովի գումարման օրվանից՝ առնվազն 21 օր առաջ՝ սույն կանոնադրության 1.12. կետով սահմանված կարգով:

Ժողովում քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների միջոցով, եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին քվեաթերթիկները տրվում են Ժողովին մասնակցելու համար գրանցված բաժնետիրոջը, Ժողովի քվորումի առկայության դեպքում,եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Քվեաթերթիկները բաժնետերերին են հանձնվում անձամբ,եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը հաստատվում է Խորհրդի որոշմամբ:

8.18. Բաժնետերերի մասնակցության կարգը Ժողովին՝

- Բաժնետերը Ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:
- Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է Օրենսգրքի, Օրենքի կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտերի, ինչպես նաև գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա:Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել Ժողովին միայն լիազորագրի առկայության դեպքում:
- Նույն բաժնետիրոջ կողմից տրված երկու և ավելի լիազորագրերի առկայության դեպքում ուժի մեջ է համարվում վերջին լիազորագիրը: Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել Ժողովին:

8.19. Քվեարկությունն Ընկերության բաժնետերերի ընդհանուր Ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

8.20. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Խորհուրդը:

Խորհրդի անդամները ընտրվում են տարեկան ընդհանուր Ժողովի կամ անդամների լիազորությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ընդհանուր Ժողովի կողմից: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր Ժողովներում կարող է քննարկվել, եթե արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3

անդամից պակաս լինել:

Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

Խորհրդի ընտրությունները իրականացվում են հասարակ քվերակությամբ:

Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին:

Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը: Յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը:

բ) Տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

գ) Ժողովի օրակարգի հաստատումը:

դ) Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը որոնք կապված են Ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը սույն կանոնադրության դրույթներին համապատասխան:

ե) Սույն կանոնադրության 8.2 կետի «բ», «ժգ», «ժզ» և «ժէ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ժողովների քննարկմանը.

զ) Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ

բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը:

է) Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը:

ը) Գույքի շուկայական արժեքի որոշումը, Օրենքով սահմանված կարգով:

թ) Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում և հետգնումը՝ Օրենքով և/կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

ժ) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրեն (գլխավոր տնօրենի), վարչության,

տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները.

ժա) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը:

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:

ժդ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը:

ժե) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը:

ժզ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը:

ժէ) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը: Ընկերության դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

ժը) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժթ) Այլ կազմակերպություններին մասնակցության մասին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

ի) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր

գործարքների կնքումը սույն կանոնադրությամբ և/կամ Օրենքով նախատեսված դեպքերում.

իա) շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը, Օրենքով

նախատեսված դեպքերում.

իբ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

իգ) Ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

իդ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իե) այլ կազմակերպությունների միությունների հիմնադրումը և/կամ մասնակցությունը.

իզ) Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ հարցերի լուծումը:

8.21. Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

8.22. Խորհրդի նախագահը՝

1. Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
2. Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
3. Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.
4. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ կնքում է պայմանագիր.
5. Նախագահում է ժողովներում:

Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կողմից Խորհրդի անդամների կազմից, Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների 2/3-ով:

8.23. Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում Խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել:

Բացառությամբ սույն կետում նախատեսված դեպքերից, Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

8.24. Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

8.25. Ժողովի որոշմամբ Խորհրդի անդամներին կարող է սահմանվել պարգևավճար կամ փոխհատուցվել նրանց ծախսերը, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ:

Պարգևավճարի կամ փոխհատուցման չափն ու պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ:

8.26. Խորհրդի նիստերը՝

1. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության միանձնյա գործադիր մարմնի, ինչպես նաև սույն կանոնադրությամբ սահմանված այլ անձանց պահանջով .
2. Խորհրդի նիստերի քվորումը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել.
3. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի.
4. Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ(հարցման միջոցով) ընդունել որոշումներ:

8.27. Խորհրդի նախագահը ձայների հավասարության դեպքում ունի որոշիչ ձայնի

[illegible]ությունք:

8.28. Խորհրդի անդամների թիվը ժողովի որոշված քանակի կեսից նվազելու դեպքում, Ընկերությունը գումարում է արտահերթ ժողով՝ Խորհրդի որոշմամբ, Խորհրդի կազմը լրացնելու նպատակով:

8.29. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում և արձանագրությունում նշվում են՝

- նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- նիստին ներկա անձինք.
- նիստի օրակարգը.
- քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.
- նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրվում է նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

8.30. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը՝

- լուծում է Ընկերության ընթացիկ գործունեության վերաբերվող բոլոր հարցերը, բացի սույն կանոնադրությամբ սահմանված ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից,
- կազմակերպում է ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և իրավունք չունի ինչպես ժողովի այնպես էլ Խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու,
- գործում է բարեխղճորեն և ողջամիտ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության բաժնետերերի պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը, անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով կամ պայմանագրով:

8.31. Խորհրդի նախագահը Տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Խորհրդի նախագահի և Տնօրենի պաշտոնների համատեղման դեպքում, Տնօրենի հետ պայմանագիրը կնքում է Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամներից մեկը :

Տնօրենը սույն կանոնադրությամբ և Խորհրդի նախագահի հետ կնքված պայմանագրով իրեն վերապահած լիազորությունների սահմաններում՝

1. Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
2. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
3. Գործում է առանց լիազորագրի.
4. Տալիս է լիազորագրեր.
5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
6. Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
7. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը,

Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

8. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

10. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

8.32. Խորհրդի անդամները, Ընկերության Տնօրենը ու Օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար Օրենքով սահմանված կարգով:

9. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկում և աուդիտ

9.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով

(վերստուգող):

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավասությունները և ստուգումների իրականացման կարգը սահմանվում են Օրենսդրությամբ, Օրենքով և սույն կանոնադրությամբ:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն Օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ, ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ օրենքի պահանջներին համապատասխան:

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են բացառապես տարեկան ժողովներում: Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցը արտահերթ

ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հաշվետու է ժողովին:

Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության և/կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 հոգուց պակաս լինել:

Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Վերստուգող հանձնաժողովն (վերստուգողն) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշիռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պարտադիր է:

9.2. Ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի իրավասությունը կարող է դրվել

վերստուգողի վրա:

Հիսունից ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունենալու դեպքում Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության կամ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցերի քվեարկությանը չեն մասնակցում Խորհրդի անդամներին, ինչպես նաև տնօրենին (գլխավոր տնօրենին) պատկանող բաժնետոմսերը:

9.3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպություն կամ ֆիզիկական անձի), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ:

Ընկերության գործունեության վերստուգումն այն բաժնետերերի պահանջով, որոնց հանրագումար բաժինը կազմում է տասը և ավելի տոկոս, պետք է անցկացվի ցանկացած ժամանակ:Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

9.4. Սույն կանոնադրության 9.3. կետի 2-րդ պարբերությամբ սահմանված դեպքում, Ընկերության աուդիտն իրականացնող անձը ընտրում և նրա հետ պայմանագիր են կնքում ստուգում պահանջող բաժնետերը (բաժնետերերը):

9.5. Ընկերությունում ձևավորվում է խորհրդին կից աուդիտի հանձնաժողով (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով), որը կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ:

9.6. Աուդիտի հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, որը ներգրավված է ընկերության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:

9.7. Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

9.8. Աուդիտի հանձնաժողովը՝

ա) իրականացնում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում).

բ) իրականացնում է Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և դրանց հաստատման վերաբերյալ խորհրդին առաջարկություններ է ներկայացնում.

գ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում.

դ) խորհրդին առաջարկություններ է ներկայացնում Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ.

ե) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն.

զ) տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտորի հետ.

է) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվություն է տրամադրում խորհրդին.

ը) հետևում է Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը.

թ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և հետևում է դրանց ներդրմանը:

10. Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ, հիմնարկներ, դուստր և կախյալ ընկերություններ

10.1. Ընկերությունը իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ) ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

10.2. Ընկերության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի ստեղծումը և ներկայացուցչությունների բացումն իրականացվում է մասնաճյուղերի և

ներկայացուցչությունների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան չի նախատեսված:

10.3. Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի

այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

10.4. Ընկերության կողմից օտարերկրյա պետություններում հիմնարկների ստեղծումը իրականացվում է հիմնարկների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

10.5. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրության հիման վրա, իսկ նրանց ղեկավարներին նշանակում է Ընկերությունը:

10.6. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության(այդ թվում՝ դուստր ու կախյալ) ու ընկերակցության հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

10.7. Ընկերությունն իրավունք ունի ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ

ունեցող դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ:

10.8. Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

11. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը

11.1. Ընկերության կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների երեք քառորդով:

11.2. Մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները կարող են մտցվել Ընկերության կանոնադրության մեջ:

11.3. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարելը, ինչպես նաև նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից:

12. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

12.1. Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է ժողովի որոշմամբ:

Ընկերության վերակազմակերպման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և արտադրական կոոպերատիվի:

12.2. Ընկերությունը լուծարվում է Օրենսգրքով, Օրենքով և Օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն կանոնադրության դրույթների համաձայն:

12.2.1 Ընկերության լուծարումը՝ Ընկերության դադարումն է՝ առանց նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

12.2.2. Ժողովը հաստատում է ամփոփիչ հաշվեկշիռը, ընդունում է որոշումներ՝ Ընկերության լուծարման կարգի և ժամկետների, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգի մասին:

Ընկերության լուծարային հանձնաժողովը լուծարումն իրականացնում է ժողովում հաստատված ամփոփ հաշվեկշռի հիման վրա և լուծարման նախագծին համապատասխան:

Ընկերության լուծարման նախագիծն ընդգրկում է.

- Ընկերության ամփոփ հաշվեկշիռը.
- լուծարման կարգն ու ժամկետները.
- լուծարային հանձնաժողովի լիազորությունները.
- լուծարման ընթացքում Ընկերության գործունեության կարգը.
- այլ տեղեկություններ՝ ժողովի հայեցողությամբ:

12.2.3. Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է ժողովը՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

12.2.4. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները :

Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

12.2.5. Լուծարման հանձնաժողովը պարտավոր է իրականացնել Ընկերության գույքի վերագնահատում, միջոցներ ձեռնարկել Ընկերության պարտատերերի հայտնաբերման, դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Ընկերության լուծարման մասին:

12.2.6. Լուծարվող Ընկերության գույքի օտարմանը կամ պարտքերի մարմանն ուղղված

բոլոր գործողությունները կարող են իրականացվել միայն լուծարման հանձնաժողովի համաձայնությամբ:

12.2.7. Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում՝ լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

12.3.Լուծարման հանձնաժողովի անդամները կարող են վարձատրվել ժողովի որոշմամբ սահմանված կարգով:

12.4. Լուծարման ընթացքում Ընկերությունն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ միայն Ընկերության պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

12.5. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած, պետական գրանցման պահից:

12.6. Լուծարման հանձնաժողովի ստեղծման պահի դրությամբ ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվել լուծարային հանձնաժողովի կազմում կամ նշանակել իրենց լիազոր ներկայացուցչին:

12.7. Պարտատերերի հանդեպ լուծարվող Ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը լուծարման հանձնաժողովը բաշխում է բաժնետերերի միջև գործող Օրենսդրությամբ սահմանված կարգով :

12.8. Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 31.07.1995թ.
Գրանցման թիվ 39.120.00360
Վկայական 01Ա 015155
ՀՎՀՀ 02800538
20.05.2021թ գրանցված կանոնադրության
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
«11» 08 2021թ.
աշխատակից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի
«03» օգոստոսի 2021թ.
արտահերթ ընդհանուր ժողովի
որոշմամբ (արձ. թիվ 3)

Տնօրեն
Խ. ԱՆՏՈՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրությամբ)

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, 2021թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1 .«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)՝ համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնց տերերը (այսուհետ՝ Բաժնետերեր) իրավունք ունեն օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց Ընկերության մյուս բաժնետերերի համաձայնության:

Ընկերությունը (նախկինում «ԹՈՒՋԵԶՈՒԼ» ԲԲԸ) հիմնադրվել է ՀՀ կառավարության 1998թ.-ի սեպտեմբերի 4-ի թիվ 550 որոշման համաձայն «ՀԱՅՁՈՒԼ» (Չարենցավանի «Ավտոձուլ») ՓԲԸ-ի (նախկինում «Ավտոձուլ» պետական ձեռնարկության) պետական բաժնետոմսերը մրցույթով մասնավորեցման ճանապարհով բաց բաժնետիրական ընկերության վերակազմակերպման արդյունքում:

Ընկերությունը հանդիսանում է «Հայձուլ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցման) պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու ֆիրմային այլ ռեկվիզիտներ:

1.4. Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենքով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:

1.6. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

1.7. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.8. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.9. Ընկերության իրավական-կազմակերպչական ձևն է բաց բաժնետիրական

ընկերություն:

1.10. Ընկերության ֆիրմային անվանումն է.

Հայերեն լրիվ՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

Ռուսերեն լրիվ՝ «АСКЕ ГРУП» Открыюе Акционерное Общество

կրճատ՝ «АСКЕ ГРУП» ОАО

Անգլերեն լրիվ «ASCE GROUP» Open Joint-stock Company

կրճատ՝ «ASCE GROUP » Open J-S Company

1.11. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, 2501, ք. Չարենցավան, Երևանյան 2.

1.12. Օրենքով, Կանոնադրությամբ, ինչպես նաև Ընկերության ներքին փաստաթղթերով սահմանված ծանուցում պահանջող գործողությունների մասին Ընկերությունը ծանուցումները կատարում է www.azdarar.am և/կամ www.asce.am ինտերնետային կայքերում հրապարակելու միջոցով:

2. Ընկերության գործունեության նպատակը և առարկան

2.1 .Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործնեություն (այդ թվում առևտրային) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

-Թուջե, պողպատե և գունավոր մետաղների ձուլում,

-Սև և գունավոր մետաղների, նրանց առաջնային արտադրանքի արտադրություն,

-Մետաղե ջարդոնի առք ու վաճառք,

-Մեքենաների, մետաղահատ հաստոցների, սարքավորումների և օժանդակ նյութերի մեծածախ առևտուր,

-Ձուլման սարքավորումների և հալման ինդուկտիվ վառարանների արտադրություն և մեծածախ առևտուր,

- Կենցաղային ապրանքների և պլաստմասայե իրերի արտադրություն և մեծածախ առևտուր,

- Առևտրամիջնորդային գործունեություն (ոչ բորսայական):

Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության (առկայության դեպքում՝ լիցենզիա

ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից, այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.3. Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որոնք նրան անհրաժեշտ են օրենքով չարգելված ցանկացած գործունեություն իրականացնելու համար: Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանված է ՀՀ Օրենսդրությամբ (այսուհետ՝ Օրենսդրություն) Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

3. Ընկերության իրավական վիճակը, իրավունքներն ու պարտականությունները

3.1. Ընկերությունը իրավաբանական անձ է, և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն իրավունք ունի՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.2. Ընկերությունը իրավունք ունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով և իրականացնել դրանց ազատ վաճառքը Օրենքի և այլ իրավական ակտերին համապատասխան:

3.3. Ընկերությունն իրավունք ունի.

- Ընկերությունը Օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքները,
- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, Օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ Հայաստանի Հանրապետության և այլ պետություններում՝ ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,

- Օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,
- ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին, կազմակերպություններին կամ քաղաքացիներին,
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին,
- ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,
- օգտվել Օրենսդրությամբ, Օրենսգրքով,Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.4. Ընկերությունը պարտավոր է՝

- Օրենսդրությամբ,Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն,
- ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, կամ այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական

գույքային պահանջները,

- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանում, Օրենսդրությամբ սահմանված կարգով,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկվող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին,
- կրել Օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. Ընկերության կանոնադրական կապիտալ

4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել բաց Ընկերության համար Ընկերության պետական գրանցման պահին գործող Օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 9,438,576,000 (ինը միլիարդ չորս հարյուր երեսունութ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 62.923.840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ սովորական անվանական բաժնետոմսեր, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Բոլոր 62.923.840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:
Ընկերության հայտարարված բաժնետոմսերի առավելագույն ծավալը կազմում է 7.974.679.200 (յոթ միլիարդ ինը հարյուր յոթանասունչորս միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով 53.164.528 (հիսուներեք միլիոն մեկ հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր քսանութ) հատ սովորական անվանական արժեքով:

4.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ կարող է փոփոխել իր կանոնադրական կապիտալի չափը, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց և ձեռնարկությունների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

4.3.1. Կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

.լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի

- լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) և յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի քանակը այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում,
- լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները,այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

- շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- Ընկերության կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (զուտ ակտիվները) կամ դրա մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող

ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով) կամ Խորհուրդը, եթե սույն կանոնադրությամբ կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդ իրավասությունը :

Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

4.3.2. Կանոնադրական կապիտալի չափի նվազեցում

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել.

.բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ,

- բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ այդ թվում օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում այդ նպատակով Ընկերությանն առաջարկված բաժնետոմսերի ձեռք բերումը ընկերության պարտականությունն է: Եթե ձեռք բերման առաջարկված բաժնետոմսերի քանակը գերազանցում է համապատասխան որոշմամբ սահմանված քանակը, ապա բաժնետերերից բաժնետոմսերը գնվում են նրանց առաջարկներին համամասնորեն:

Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը ավելի կփոքրանա Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն կանոնադրական կապիտալի չափից:

Կանոնադրական կապիտալի չափի նվազեցման դեպքում մեկ տարուց ոչ պակաս ժամկետում բաժնետոմսերի հավաստագիրը փոխանակելու նպատակով կամ համապատասխան գրառում կատարելու համար չդիմելու դեպքում հավաստագրերը համարվում են անվավեր:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված այլ խնդիրները կարգավորվում են Օրենսդրությամբ,Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

4.3.3. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ:

Ընկերության շահույթից մասնահանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն,հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում է շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

4.3.4. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

4.3.5. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, Ընկերությունը պարտավոր է ընդունել որոշում լուծարման մասին:

Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կամ Ընկերության լուծարման որոշումը չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության

լուծարում՝ դատական կարգով:

5. Բաժնետոմսեր և այլ արժեթղթեր

5.1.Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային(տպագրական եղանակով պատրաստված), որը կարող է թողարկել Օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր: Ընդ որում բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:

5.2. Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց և Ընկերության պետական գրանցումից հետո Ընկերությունը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում, ընդ որում Ընկերության կողմից փաստաթղթային ձևով բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու դեպքում բաժնետոմս ձեռք բերած անձին (բաժնետիրոջը) պետք է տրվի բաժնետոմսերի հավաստագիրը:

Բաժնետոմսերի հավաստագիրը անվանական արժեթուղթ է, որը հավաստում է ընկերության մեկ կամ մի քանի բաժնետոմսերի նկատմամբ դրանց տիրապետողի (տիրապետողների) սեփականության իրավունքը:

Բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի համար բաժնետիրոջը տրվում է առանձին հավաստագիր: Հավաստագիրը տրվում է բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո:

Բաժնետոմսերի հավաստագիրը պետք է պարունակի Օրենքով սահմանված ռեկվիզիտներ:

Բաժնետոմսերի հավաստագիրը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

Հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի փոխանցման կամ գրանցված բաժնետիրոջ անվանման (անվան) փոփոխման դեպքում, այդ բաժնետոմսերի հավաստագիրը վերադարձվում է և համարվում է չեղյալ: Նոր տիրապետողի անվանմամբ (անվամբ) տրվում է բաժնետոմսերի նոր հավաստագիր:

Բաժնետոմսերի նոր հավաստագրեր են տրվում նոր և նախկին տիրապետողների անվանումներով՝ հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի մասնակի փոխանցման դեպքում:

Հավաստագրով ներկայացվող բաժնետոմսերի գրանցված բաժնետիրոջ անվանման (անվան) փոփոխման դեպքում բաժնետոմսերի նոր հավաստագիրը տրվում է գրանցված բաժնետիրոջ նոր անվանմամբ (անվամբ):

5.3. Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

5.4. Ընկերությունը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի ձևի արտոնյալ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսը ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել Օրենսդրությամբ, Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր :

5.5. Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

Ընկերության որոշակի տեսակի ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում թողարկում է հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով, կուտակման, փոխարկելի և այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսեր՝ Օրենքով սահմանված կարգով:

Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (բացառությամբ՝ Ընկերության լուծարման կամ վերակազմակերպման հարցերի մասին քվեարկությունից, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում):

Արտոնյալ բաժնետոմսերը կարող են փոխարկվել սովորական բաժնետոմսերի: Ընդ որում փոխարկելու ժամանակ Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:

5.6. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է լինել գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը, գույքային իրավունքները, մտավոր սեփականությունը:

Լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռք բերման ժամանակ,որոնց դիմաց վճարումները նախատեսված է միայն դրամական միջոցներով, պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25 %-ը:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանք ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

Հրապարակային վաճառքի միջոցով տեղաբաշխվող արժեթղթերի դիմաց վճարումը կատարվում է միայն դրամական միջոցներով՝ լրիվ արժեքով:

Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է հիմնադիրների միջև համաձայնեցմամբ, իսկ բաժնետոմսերի և այլ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում՝ Ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) որոշմամբ և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից (աուդիտի):

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկում:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատում է բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և համապատասխան փոփոխություններ է կատարում կանոնադրությունում:

Ընկերության բաժնետոմսերին վերաբերվող այլ հարցերը կարգավորվում են Օրենադրությամբ, Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ:

5.7. Ընկերության թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Խորհրդի որոշմամբ՝ Օրենքով սահմանված կարգով:

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Ընկերությունն իրավունք ունի թողարկել՝

- Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.
- երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.
- առանց ապահովման պարտատոմսեր:

Ընկերությունը կարող է թողարկել ինչպես անվանական, այնպես էլ ըստ ներկայացնողի պարտատոմսեր:

Ընկերությունը պարտավոր է վարել իր կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստր: Կորցրած անվանական պարտատոմսը վերականգնվում է Ընկերության կողմից՝ ողջամիտ վճարի դիմաց: Կորցրած ըստ ներկայացնողի պարտատոմսի սեփականատիրոջ իրավունքները վերականգնում է դատարանը:

Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր,որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Ընդ որում Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերը Ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

Ընկերության պարտատոմսերին վերաբերվող այլ հարցերը կարգավորվում են Օրենսդրությամբ,Օրենքով և սույն կանոնադրությամբ:

6. Բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

6.1.Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը Օրենքի և սույն կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

- մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբշխվող բաժնետոմսերը,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի
- հանդես գալ առաջարկություններով ժողովներում,

- ժողովներում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,
- հայցով դիմել դատարան ժողովի կողմից ընդունված և գործող Օրենսդրությանը և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
- ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,
- Ընկերության միջոցների հաշվին կանոնադրական կապիտալի մեծացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակի սովորական բաժնետոմսեր,
- Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:
- Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի տերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում:
- Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 10% կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերվող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,
- օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
- օգտվել սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից: .

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

6.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերը իրավունք ունեն.

- մասնակցել ընկերության կառավարմանը,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,

- ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- հայցով դիմել դատարան ժողովի կողմից ընդունված և գործող Օրենադրությաը և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,
- մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- հանդես գալ առաջարկություններով ժողովում,
- ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:

Վերջին 3 ենթակետերով սահմանված իրենց իրավունքներից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը օգտվում են 5.5. և 7.2. կետերում սահմանված վերապահումներով:

6.3. Ընկերության բաժնետիրոջ բաժնետոմսերը անցնում են նրա ժառանգներին կամ իրավահաջորդներին:

6.4. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող սովորական բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

6.5. Բաժնետերերը պարտավոր են՝

- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

7. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը

7.1.Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից): Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել հատուկ այդ նպատակով ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Խորհրդի կողմից: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի

չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ժողովի կողմից՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50%-ը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավել լինել Խորհրդի առաջարկածից և չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Եթե Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե Ընկերության Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Ժողովը իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, որում պետք է ընդգրկվեն՝

.միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

.տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

7.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին շահութաբաժինների վճարման առանձնահատկությունները՝

7.2.1 .Յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը

և լուծարային արժեքը (որը վճարվում է ընկերության լուծարման ժամանակ) սահմանվում են ընդհանուր Ժողովի կողմից դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույք արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ:

7.2.2. Եթե ժողովի որոշմամբ թողարկվում և տեղաբաշխվում են երկու կամ ավելի դասերի արտոնյալ բաժնետոմսեր, ապա պետք է սահմանվի նաև շահութաբաժինների և լուծարային արժեքի վճարման հերթականությունը յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմսի համար:

7.2.3. Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

7.3. Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,
- Ընկերության կողմից հետ չեն գնվել բոլոր այն բաժնետոմսերը, որոնք պետք է հետ գնվեն Օրենսդրությանը համապատասխան:
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է Օրենսդրությամբ սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
- Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված (հասարակ) սովորական բաժնետոմսերի և այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար սահմանված չէ շահութաբաժնի չափը, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնք վերոհիշյալ արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ շահութաբաժիններ ստանալու առաջնահերթության իրավունք են տալիս:

8. Ընկերության կառավարման մարմինները

8.1. Ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը

պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան Ժողով: Առաջին տարեկան Ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ընկերության տարեկան Ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Տարեկան Ժողովից բացի գումարվող Ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ Ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Արտահերթ Ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, ընկերության գործադիր մարմնի, վերաստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ(բաժնետերերի) պահանջով:

8.2. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը,

գ) Ընկերության լուծարումը.

դ) Ընկերության ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և անդամների լիազորության վաղաժամկետ դադարեցումը:

զ) Խորհրդի նախագահի կամ անդամի աշխատանքի վարձատրության

պայմանների որոշումը.

է) Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

ը) Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի

ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Հաստատել աշխատակցի բաժնետոմսերի տեղաբաշխումը, դրանց

բաժնետոմսերի համար վճարելու պայմանները և սեփականատերերի իրավունքները.

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժգ) Ընկերության բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

ժդ) Ժողովի վարման կարգը և Խորհրդի անոնակարգը ժե) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի

հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժէ) Բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժը) Շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում.

ժթ) Ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը Օրենքով նախատեսված դեպքերում.

Ժողովն իրավունք ունի քննարկել և որոշում ընդունել նաև Օրենքով ու սույն կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջը:

8.3. Ժողովում ձայնի իրավունքներից օգտվում են՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր

հանդիսացող բաժնետերերը:

բ) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող

բաժնետերերը Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

8.4. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք չեն սահմանվել որպես Ժողովի իրավասություն:

8.5. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7. կետում սահմանված դեպքերից:

8.6. Սույն կանոնադրության 8.2 կետի «ա», «բ», «գ», «դ»,«է», «ը» և «ժթ» ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, սակայն 8.2 կետի «գ» և «ը» ենթակետերով սահմանված հարցերի շուրջ նաև ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:

8.8. Սույն կանոնադրության 8.2 կետի «բ», «ժգ», «ժզ»,«ժէ» «ժը» և «ժթ» ենթակետերով թվարկված հարցերով որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր Ժողովը՝ միայն Խորհրդի ներկայացմամբ:

8.9. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ընդհանուր Ժողովի մասնակիցների

գրանցման ավարտի պահին Ժողովում մասնակցելու համար գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության նոր Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր Ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Ընկերության բաժնետերերի չկայացած Ժողովի փոխարեն գումարվող նոր Ժողովը իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

8.10. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ Ժողովի կողմից ընդունած որոշումը: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել Ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, թույլ տված խախտումները էական չեն:

8.11. Ժողովի վարման կարգի և Խորհրդի կանոնակարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է Ժողովի կողմից հաստատված Ընկերության ներքին փաստաթղթերով:

8.12. Ժողովի որոշումները (բացի տարեկան ընդհանուր Ժողովի, ինչպես նաև 8.2 կետի «ժբ» ենթակետով նախատեսված հարցերով հրավիրված արտահերթ Ժողովը) կարող են ընդունվել առանց Ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելն ավարտելու պահից 30 օր առաջ:

8.13. Ժողովն իրավունք չունի փոփոխել ընդհանուր Ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

8.14. Արտահերթ Ժողովը գումարվում են Խորհրդի որոշմամբ սեփական նախաձեռնությամբ, վերաաուդող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Արտահերթ Ժողովի գումարման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ Ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

8.15. Հաշվիչ հանձնաժողովի կազմը չի կարող 3 հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Խորհրդի անդամները,Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները(վերստուգողը),Ընկերության տնօրենը կամ Ընկերության տնօրինության,վարչության անդամները,ինչպես նաև այն անձինք որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ:

Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը և անդամները, ինչպես նաև նրանց լիազորությունների ժամկետը սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր Ժողովի որոշմամբ՝ Խորհրդի ներկայացմամբ:

8.16. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

- Ընկերության սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը), իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
- Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող

բաժնետերերը(անվանատերերը), իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.

- Ընկերության վերաստուգող հանձնաժողովի անդամները(վերստուգողը).
- Ընկերության աուդիտն իրականացնող անձը(եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ժողովի նյութերում).

Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող՝ Խորհրդի և գործադիր մարմնի անդամները:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան Ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան Ժողովի գումարումից 60 օրից ավելի:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ին:

Ընկերությունը պարտավոր է Ժողովի գումարման մասին իր բաժնետերերին ծանուցել, Ժողովի գումարման օրվանից՝ առնվազն 21 օր առաջ՝ սույն կանոնադրության 1.12. կետով սահմանված կարգով:

Ժողովում քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների միջոցով, եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին քվեաթերթիկները տրվում են Ժողովին մասնակցելու համար գրանցված բաժնետիրոջը, Ժողովի քվորումի առկայության դեպքում,եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Քվեաթերթիկները բաժնետերերին են հանձնվում անձամբ,եթե Օրենքով այլ բան չի նախատեսված:

Քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը հաստատվում է Խորհրդի

որոշմամբ:

8.18. Բաժնետերերի մասնակցության կարգը Ժողովին՝

- Բաժնետերը Ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:
- Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է Օրենսգրքի, Օրենքի կամ

պետական և տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտերի, ինչպես նաև գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա:Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել Ժողովին միայն լիազորագրի առկայության դեպքում:

- Նույն բաժնետիրոջ կողմից տրված երկու և ավելի լիազորագրերի առկայության դեպքում ուժի մեջ է համարվում վերջին լիազորագիրը: Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել Ժողովին:

8.19. Քվեարկությունն Ընկերության բաժնետերերի ընդհանուր Ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

8.20. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Խորհուրդը:

Խորհրդի անդամները ընտրվում են տարեկան ընդհանուր Ժողովի կամ անդամների լիազորությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ընդհանուր Ժողովի կողմից: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր Ժողովներում կարող է քննարկվել, եթե արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 անդամից պակաս լինել:

Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

Խորհրդի ընտրությունները իրականացվում են հասարակ քվերակությամբ:

Ընկերության այն բաժնետերերը, որոնք Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին:

Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը: Յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը:

բ) Տարեկան և արտահերթ ընդհանուր Ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

գ) Ժողովի օրակարգի հաստատումը:

դ) Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը որոնք կապված են Ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը սույն կանոնադրության դրույթներին համապատասխան:

ե) Սույն կանոնադրության 8.2 կետի «բ», «ժգ», «ժզ» և «ժէ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ժողովների քննարկմանը.

զ) Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ

բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը:

է) Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը:

ը) Գույքի շուկայական արժեքի որոշումը, Օրենքով սահմանված կարգով:

թ) Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում և հետգնումը՝ Օրենքով և/կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

ժ) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրեն (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները.

ժա) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը:

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:

ժդ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը:

ժե) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը:

ժզ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը:

ժէ) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը: Ընկերության դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

ժը) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժթ) Այլ կազմակերպություններին մասնակցության մասին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

ի) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր

գործարքների կնքումը սույն կանոնադրությամբ և/կամ Օրենքով նախատեսված դեպքերում.

իա) շահագրգռվածություն ներառող գործարքների կնքումը, Օրենքով

նախատեսված դեպքերում.

իբ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

իգ) Ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

իդ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իե) այլ կազմակերպությունների միությունների հիմնադրումը և/կամ մասնակցությունը.

իզ) Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ հարցերի լուծումը:

8.21. Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

8.22. Խորհրդի նախագահը՝

1. Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
2. Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
3. Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.
4. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ կնքում է պայմանագիր.
5. Նախագահում է Ժողովներում:

Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կողմից Խորհրդի անդամների կազմից, Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների

մեծամասնությամբ:

Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների 2/3-ով:

8.23. Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում Խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են

համատեղվել:

Բացառությամբ սույն կետում նախատեսված դեպքերից, Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

8.24. Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

8.25. Ժողովի որոշմամբ Խորհրդի անդամներին կարող է սահմանվել պարգևավճար կամ փոխհատուցվել նրանց ծախսերը, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ:

Պարգևավճարի կամ փոխհատուցման չափն ու պայմանները սահմանվում են Ժողովի որոշմամբ:

8.26. Խորհրդի նիստերը՝

1. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության միանձնյա գործադիր մարմնի, ինչպես նաև սույն կանոնադրությամբ սահմանված այլ անձանց պահանջով .
2. Խորհրդի նիստերի քվորումը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել.
3. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի.
4. Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ(հարցման միջոցով) ընդունել որոշումներ:

8.27. Խորհրդի նախագահը ձայների հավասարության դեպքում ունի որոշիչ ձայնի իրավունք:

8.28. Խորհրդի անդամների թիվը Ժողովի որոշված քանակի կեսից նվազելու դեպքում, Ընկերությունը գումարում է արտահերթ Ժողով՝ Խորհրդի որոշմամբ, Խորհրդի կազմը լրացնելու նպատակով:

8.29. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում և արձանագրությունում նշվում են՝

- նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- նիստին ներկա անձինք.
- նիստի օրակարգը.
- քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.
- նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրվում է նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

8.30. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը՝

- լուծում է Ընկերության ընթացիկ գործունեության վերաբերվող բոլոր հարցերը, բացի սույն կանոնադրությամբ սահմանված Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից,
- կազմակերպում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և իրավունք չունի ինչպես Ժողովի այնպես էլ Խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու,
- գործում է բարեխղճորեն և ողջամիտ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության բաժնետերերի պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը, անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով կամ պայմանագրով:

8.31. Խորհրդի նախագահը Տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Խորհրդի նախագահի և Տնօրենի պաշտոնների համատեղման դեպքում, Տնօրենի հետ պայմանագիրը կնքում է Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամներից մեկը :

Տնօրենը սույն կանոնադրությամբ և Խորհրդի նախագահի հետ կնքված պայմանագրով իրեն վերապահած լիազորությունների սահմաններում՝

1. Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
2. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
3. Գործում է առանց լիազորագրի.
4. Տալիս է լիազորագրեր.
5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
6. Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

7. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
8. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
9. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
10. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

8.32. Խորհրդի անդամները, Ընկերության Տնօրենը ու Օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար Օրենքով սահմանված կարգով:

9. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկում և աուդիտ

9.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով

(վերստուգող):

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավասությունները և ստուգումների իրականացման կարգը սահմանվում են Օրենսդրությամբ, Օրենքով և սույն կանոնադրությամբ:

Վերստուգող հաձնաժողովը (վերստուգողը) հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն Օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի պահանջել արտահերթ Ժողովի գումարում՝ օրենքի պահանջներին համապատասխան:

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են բացառապես տարեկան Ժողովներում: Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցը արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ Ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են Ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հաշվետու է Ժողովին:

Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության և/կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր Ժողովի որոշմամբ: Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 հոգուց պակաս լինել:

Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Վերստուգող հանձնաժողովն (վերստուգողն) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան Ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշիռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պարտադիր է:

9.2. Ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի իրավասությունը կարող է դրվել

վերստուգողի վրա:

Հիսունից ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր)

ունենալու դեպքում Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության կամ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցերի քվեարկությանը չեն մասնակցում Խորհրդի անդամներին, ինչպես նաև տնօրենին (գլխավոր տնօրենին) պատկանող բաժնետոմսերը:

9.3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպություն կամ ֆիզիկական անձի), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ:

Ընկերության գործունեության վերստուգումն այն բաժնետերերի պահանջով, որոնց հանրագումար բաժինը կազմում է տասը և ավելի տոկոս, պետք է անցկացվի ցանկացած ժամանակ:Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

9.4. Սույն կանոնադրության 9.3. կետի 2-րդ պարբերությամբ սահմանված դեպքում, Ընկերության աուդիտն իրականացնող անձը ընտրում և նրա հետ պայմանագիր են կնքում ստուգում պահանջող բաժնետերը (բաժնետերերը):

9.5. Ընկերությունում ձևավորվում է խորհրդին կից աուդիտի հանձնաժողով (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով), որը կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ:

9.6. Աուդիտի հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, որը ներգրավված է ընկերության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:

9.7. Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

9.8. Աուդիտի հանձնաժողովը՝

ա) իրականացնում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում).

բ) իրականացնում է Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և դրանց հաստատման վերաբերյալ խորհրդին առաջարկություններ է ներկայացում.

գ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում.

դ) խորհրդին առաջարկություններ է ներկայացնում Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ.
ե) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն.
զ) տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտորի հետ.
է) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվություն է տրամադրում խորհրդին.
ը) հետևում է Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը.
թ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և հետևում է դրանց ներդրմանը:

10. Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ, հիմնարկներ, դուստր և կախյալ ընկերություններ

10.1. Ընկերությունը իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ) ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

10.2. Ընկերության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի ստեղծումը և ներկայացուցչությունների բացումն իրականացվում է մասնաճյուղերի և

ներկայացուցչությունների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան չի նախատեսված:

10.3. Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի

այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

10.4. Ընկերության կողմից օտարերկրյա պետություններում հիմնարկների ստեղծումը իրականացվում է հիմնարկների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

10.5. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրության հիման վրա, իսկ նրանց ղեկավարներին նշանակում է

Ընկերությունը:

10.6. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության(այդ թվում՝ դուստր ու կախյալ) ու ընկերակցության հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

10.7. Ընկերությունն իրավունք ունի ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ

ունեցող դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ:

10.8. Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

11. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը

11.1. Ընկերության կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների երեք քառորդով:

11.2. Մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները կարող են մտցվել Ընկերության կանոնադրության մեջ:

11.3. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարելը, ինչպես նաև նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից:

12. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

12.1. Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է Ժողովի որոշմամբ:

Ընկերության վերակազմակերպման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և արտադրական կոոպերատիվի:

12.2. Ընկերությունը լուծարվում է Օրենսգրքով, Օրենքով և Օրենադրությամբ սահմանված կարգով և սույն կանոնադրության դրույթների համաձայն:

12.2.1 Ընկերության լուծարումը՝ Ընկերության դադարումն է՝ առանց նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

12.2.2. Ժողովը հաստատում է ամփոփիչ հաշվեկշիռը, ընդունում է որոշումներ՝ Ընկերության լուծարման կարգի և ժամկետների, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգի մասին:

Ընկերության լուծարային հանձնաժողովը լուծարումն իրականացնում է Ժողովում հաստատված ամփոփ հաշվեկշռի հիման վրա և լուծարման նախագծին համապատասխան:

Ընկերության լուծարման նախագիծն ընդգրկում է.

- Ընկերության ամփոփ հաշվեկշիռը.
- լուծարման կարգն ու ժամկետները.
- լուծարային հանձնաժողովի լիազորությունները.
- լուծարման ընթացքում Ընկերության գործունեության կարգը.
- այլ տեղեկություններ՝ Ժողովի հայեցողությամբ:

12.2.3. Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է Ժողովը՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

12.2.4. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները :
Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

12.2.5. Լուծարման հանձնաժողովը պարտավոր է իրականացնել Ընկերության գույքի վերագնահատում, միջոցներ ձեռնարկել Ընկերության պարտատերերի հայտնաբերման, դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Ընկերության լուծարման մասին:

12.2.6. Լուծարվող Ընկերության գույքի օտարմանը կամ պարտքերի մարմանն ուղղված բոլոր գործողությունները կարող են իրականացվել միայն լուծարման հանձնաժողովի համաձայնությամբ:

12.2.7. Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում՝ լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝

լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

12.3.Լուծարման հանձնաժողովի անդամները կարող են վարձատրվել Ժողովի որոշմամբ սահմանված կարգով:

12.4. Լուծարման ընթացքում Ընկերությունն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ միայն Ընկերության պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

12.5. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած, պետական գրանցման պահից:

12.6. Լուծարման հանձնաժողովի ստեղծման պահի դրությամբ ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվել լուծարային հանձնաժողովի կազմում կամ նշանակել իրենց լիազոր ներկայացուցչին:

12.7. Պարտատերերի հանդեպ լուծարվող Ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը լուծարման հանձնաժողովը բաշխում է բաժնետերերի միջև գործող Օրենսդրությամբ սահմանված կարգով :

12.8. Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

կազրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ _1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 31.07.1995թ.
Գրանցման թիվ 39.120.00360
Վկայական 01Ա 015155
ՀՎՀՀ 02800538, 11.08.2021թ. վերակազմակերպում
Թիվ 0023 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
«31» 07 2023թ.
աշխատանքից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի
«28» հուլիսի 2023թ. արտահերթ
ժողովի որոշմամբ (արձ. թ. 28.07.2023)

Տնօրեն
Հրաչյա Սուրադյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն)

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, 2023թ.

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ընկերության կանոնադրության 4-րդ գլխի 4.2-րդ կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 9,753,195.200 (ինը միլիարդ յոթ հարյուր հիսուներեք միլիոն հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որը կազմում է 62.923.840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ սովորական անվանական բաժնետոմսեր, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 155 (հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ:

Բոլոր 62.923.840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի առավելագույն ծավալը կազմում է 8.240.501.840 (ութ միլիարդ երկու հարյուր քառասուն միլիոն հինգ հարյուր մեկ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ կազմված 155 (հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ անվանական արժեքով 53.164.528 (հիսուներեք միլիոն հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր քսանութ) հատ սովորական անվանական բաժնետոմսերից»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված նոր խմբագրությամբ 11.08.2021թ.) բաղկացուցիչ մասը և ուժի մեջ է կանոնդրության հետ միասին:

Տպագրված է բնագանցը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 2

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՋԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 31.07.1995թ.

Գրանցման թիվ 39.120.00360

Վկայական 01Ա 015155

ՀՎՀՀ 02800538

Թիվ _ փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի կողմից

«22» 02 2024թ.

ստորագրություն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական

ընկերության բաժնետերերի

«16» փետրվարի 2024թ. արտահերթ

ժողովի որոշմամբ (արձ. թ. 16.02.2024)

Տնօրեն

Հրաչյա Մուրադյան

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԱՑԻԱՅԻ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ

ԱՍԿԵ ԳՐՈՒՊ

ASCE GROUP

02800538

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

Ք. ՋԱՐԵՆՑԱՎԱՆ, 2024թ.

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ընկերության կանոնադրության 4-րդ գլխի 4.2-րդ կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10,067,814,400 (տասը միլիարդ վաթսունյոթ միլիոն ութ հարյուր տասնչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որը կազմում է 62.923.840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր հազարհինգ հազար ութ հարյուր հիսուն) հատ սովորական անվանական բաժնետոմսեր, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 160 (հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

Բոլոր 62.923.840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր հազարհինգ հազար ութ հարյուր հիսուն) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի առավելագույն ծավալը կազմում է 8.506.324.480 (ութ միլիարդ հինգ հարյուր վեց միլիոն երեք հարյուր հազարչորս հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ կազմված 160 (հարյուր վաթսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով 53.164.528 (հիսունհինգ միլիոն հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր հիսուն) հատ սովորական անվանական բաժնետոմսերից»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված նոր խմբագրությամբ 11.08.2021թ.) բաղկացուցիչ մասը և ուժի մեջ է կանոնդրության հետ միասին: